Հ. Լ. ԹԱՀԼԵԿԱՆՅԱՆ

ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ОТДЕЛ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ ЗАРУБЕЖНЫХ
АРМЯНСКИХ ОБЩИН

О. Л. ПАХЛЕВАНЯН

АРМЯНСКАЯ ОБЩИНА В ИРАНЕ (1941—1979)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1989

902.7
Օվ-16

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԺԻՆ

Հ. Լ. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ (1941—1979)

2688

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1989

ԳՄԴ 63.3 (2ՀՍ)
Փ 163

Տպագրվում է ՀԽՍՀ ԳԱ Սփյուռահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտ. դոկտոր Հ. Մ. Եգանյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտ. թեկնածու Հ. Հ. Մարտիրոսյաններ,
բանասիրական գիտ. թեկնածու Հ. Հ. Մովսիսյանը

Փահլևանյան Հ. Լ.

Փ 163 *Իրանահայ համայնքը (1941—1979 թթ.) / [Պատ. խմբ. Հ. Մ. Եգանյան]; ՀԽՍՀ ԳԱ Սփյուռքահայ համայնքների պատմ. և մշակույթի բաժին.— Եր.: ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989.—329 էջ.*

Աշխատության մեջ բազմալեզու սկզբնաղբյուրների հիման վրա լուսաբանվում են 1941—1979 թթ. իրանահայ համայնքի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի առանցքային հարցերը, հայ և պարսիկ ժողովուրդների պատմական կապերն ու փոխհարաբերությունները, իրանի ժողովրդական կուսակցության շարքերում հայ կոմունիստների գործունեությունը, համայնքի քաղաքական և գյուղական զանգվածների սոցիալ-տնտեսական դրությունը և ինքնավարական վիճակը:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, սփյուռքի հարցերով զբաղվող մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

0503020913
Փ ——— 27—89
703(02)—89

ԳՄԴ 63.3 (2ՀՍ)

ISBN 5—8080—0031—9

© Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1989

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Իրանահայ գաղութը հնագույն և ամենախոշոր գաղթօջախներից է: Վկայություններ կան դեռևս մ. թ. ա. VI դ. Աքեմենյան իշխանության շրջանում Իրանում վաստակական պարտականություններ կատարող հայկական զորամասերի, հայ վաճառականների ու արհեստավորների մասին:

Հայերի առաջին խոշոր բռնագաղթն իրականացվել է մ. թ. III դարում, սասանյան Արտաշիր թագավորի կողմից, այնուհետև IV դարում Շապուհ II-ի Հայաստան կատարած արշավանքներից հետո: Հայ պատմիչների վկայությամբ այդ շրջանում Իրան են գաղթեցվել մի քանի հարյուր հազար հայեր, որոնք ժամանակի ընթացքում ուծացվել են:

XI դ. թուրք-սելջուկների արշավանքներից հետո Իրանի հյուսիսային շրջաններում ստեղծվեցին հայկական նոր բնակավայրեր: Արդեն XI—XIV դդ. հայկական բնակավայրեր կային Թավրիզում, Սուլթանիեում, Մարաղայում և այլ քաղաքներում: Պատմական սկզբնաղբյուրները վկայում են, որ Պարսկաստանում միշտ էլ եղել են հայկական համայնքներ: Հայաբնակ այդ օջախները մասնատված, ցրված ու փոքրաթիվ էին, չունեին որոշակիորեն ձևավորված ազգագրություն ու մշակույթ, միասնական գաղութ չէին, չնայած 1247 թ. դրանք արդեն կազմում էին թեմ՝ կրելով Արտազ անվանումը: Իրանահայ գաղթօջախը ձևավորվեց Սեֆյանների իշխանության օրոք, երբ XVII դ. կատարված բռնագաղթի հետևանքով ստեղծվեցին Նոր Ջուղա կենտրոնով մնայուն թեմեր՝ իրենց ազգային և մշակութային բոլոր հատկանիշներով: Ներկայիս իրանահայերը հիմնականում

Սեֆյանների կողմից զանգվածաբար տեղահանված հայության հետնորդներն են։

Շահ Աբաս I-ը (1587—1629) Սեֆյան պետության համար կարևոր նշանակություն ունեցող ռազմական, տնտեսական և քաղաքական ծրագրեր իրականացնելու նպատակով ձգտում էր հայերի օգնությամբ զարգացնել արհեստները, պետության ներքին և արտաքին առևտուրը, ջուղայեցիների կապիտալը ծառայեցնել նաև իր նպատակներին, 1603 թ. սկսված իրանա-թուրքական պատերազմի ժամանակ հարձակվող թուրքական զորքերի առաջ «ամայացած շրջաններ ստեղծել» և այլն։ Նա հրամայեց բռնությամբ տեղահանել նաև ջուղայեցիներին ու «մինչև հիմքը այրել ու ավերել Ջուղան»[1]։

Գաղթված առևտրական և արհեստավոր հայերը հիմնականում բնակեցվեցին մայրաքաղաք Սպահանում և նրա շրջակա գավառներում, իսկ որոշ մասը տեղավորվեց հին Ջուղայից Սպահան ընկած ճանապարհին հարակից բնակավայրերում։ Հատուկ հրովարտակով Սպահանի հարավային մասում՝ Զայանդեռուդ գետի ափին, հիմնվեց Նոր Ջուղան։

Հայերին իր նպատակներին ծառայեցնելու համար շահ Աբասը առևտրական խավին և հոգևորականությանը մի շարք արտոնություններ և իրավունքներ տվեց։ Հայերին թույլատրվեց կառուցել եկեղեցիներ։ Նոր Ջուղան դարձավ մշակութային կարևոր օջախ ամբողջ գաղութի համար։ Այստեղ հիմնադրվեց տպարան, մեծ վերելք ապրեցին պարսկահայ գրչությունն ու մանրանկարչությունը։ Ջուղայեցի վաճառականները սկսեցին հանդես գալ որպես արևմտաեվրոպական երկրների, Հնդկաստանի ու Ռուսաստանի հետ Իրանի առևտրատնտեսական կապերի զարգացման ակտիվ գործիչներ։

XVII դ. թուրքական քարավանային ճանապարհով իրականացվող Իրանի արտաքին առևտուրը գերազանցապես կանվում էր ջուղայեցի խոջաների ձեռքին։ Նրանք առաջնակարգ դեր էին խաղում նաև եվրոպական երկրներից արդյունաբերական ապրանքների ներմուծման գործում։ Բացի այդ, Սեֆյան կառավարությունը հայ վաճառականներին օգտագործում էր եվրոպական պետությունների հետ իր դիվանագիտական կապերի ամրապնդման համար։ Հայաբնակ Նոր Ջուղան մեծ դեր էր խաղում Սեֆյան պետության տնտեսական և քաղաքական կյանքում։

Հայերի նկատմամբ շահ Աբասի կիրառած քաղաքականության մասին հանգամանորեն շարադրվել է Հարություն Տեր-Հովհաննիսյանցի[2] և Առաքել Դավրիժեցու[3] աշխատություններում։

XVI դ. ավարտվեց Իրանի քաղաքական միավորումը Սեֆյան պետության շրջանակներում, որի հետևանքով երկրի տնտեսական կյանքը մինչև XVII դ. վերջին երեսնամյակը զգալի վերելք ապրեց։ Սակայն դարավերջին և XVIII դարի սկզբներին Իրանում ծայր առան ֆեոդալական երկպառակությունները, և երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքը անկում ապրեց։ Իրանի ընդհանուր անկումը ծանր անդրադարձավ նաև հայ համայնքի վրա։ Նոր Ջուղայում շահական իշխանությունների հարստահարությունները սկսեցին կրել սովորական բնույթ։ Սրվեցին ազգային և կրոնական հալածանքները։

Շահ Աբաս I-ին հաջորդած շահ Սեֆիի (1629—1642) և շահ Աբաս II-ի (1642—1666) տիրապետության օրոք հայերի նկատմամբ վարած քաղաքականությունը հարաբերականորեն բարյացակամ էր։ Սակայն շահ Սուլեյմանի (1666—1694) և նրա հետնորդ շահ Սուլթան Հոսեյնի (1694—1722) տիրապետության շրջանում, երբ երկրի տնտեսական քայքայման հետևանքով հարկերը 2—3 անգամ ավելացան, ուժեղացավ հոգևորականության ազդեցությունը պետության կառավարման գործում ու սրվեցին դասակարգային հակասությունները, Նոր Ջուղայի բնակչության նկատմամբ իշխող շրջանների վերաբերմունքը կտրուկ փոխվեց։ Հայկական վանքերն ու եկեղեցիները, որոնք առաջ հարկերից ազատ էին, դարձան հարկատու։ Ծանր հարկերը, գյուղատնտեսական ու արհեստագործական արտադրանքի կրճատումը արագացրին երկրի տնտեսական անկումը՝ ազդելով նաև Նոր Ջուղայի կյանքի վրա։ Ստեղծված անհատ

և գույքային անապահովության հետևանքով Նոր Ջուղայի վաճառականները զանգվածաբար արտագաղթեցին Եվրոպա, Հնդկաստան և Ռուսաստան։

1722 թ. աֆղանների արշավանքների հետևանքով Նոր Ջուղան խոր անկում ապրեց։ Աֆղանների կողմից Սեֆյան պետության մայրաքաղաք Սպահանի պաշարման վեց ամիսների ընթացքում Նոր Ջուղան կողոպտվեց ու ավերվեց, իսկ բնակչության մի մասը կոտորվեց։ Աֆղանները Նոր Ջուղայի բնակչությանը ստիպեցին փրկագին վճարել 120 հազար թումանի[4], որը վերջնականապես քայքայեց երբեմնի հարուստ այդ գաղութը։ Սեֆյան պետության անկման այդ օրերին էր, որ բախտիարի և լոռ ավարառիչ լեռնականները, օգտվելով երկրի անկայուն վիճակից, ապստամբեցին ու հարձակվեցին Սպահանի և գավառաբնակ հայության վրա՝ մեծ վնասներ պատճառելով նրան[5]։ XVIII դ. կեսերին ծայր առան միջֆեոդալական արյունահեղ բախումներ, որոնց պատճառով Նոր Ջուղայի բնակչության և ունևոր խավի զգալի մասը տեղափոխվեց Հնդկաստան և այլ վայրեր։

Քերիմ խան Զանդի (1760—1779) տիրապետության առաջին տարիներին երկրի գյուղատնտեսությունը և արհեստները գտնվում էին կործանման եզրին, գրեթե դադարել էր ներքին ու արտաքին առևտուրը։ Երկրի անտեսական կյանքի աշխուժացման նպատակով նոր գահակալը ձեռնարկեց որոշ միջոցառումներ, որոնց շնորհիվ Իրանի տնտեսությունը զգալի աշխուժացում ապրեց։ Վերելքի ուղին բռնեց նաև Իրանի հայկական գաղթօջախը՝ արհեստների, առևտրի և այլ բնագավառներում ձեռք բերելով նախկին իրավունքները։

Քերիմ խանի մահից հետո Իրանը կրկին վերածվեց միջֆեոդալական կռիվների թատերաբեմի։

XIX դ. առաջին կեսին Իրանի ներքին կյանքի բնորոշ կողմը պետության սոցիալ-տնտեսական խոր ճգնաժամն էր։ 20—30-ական թվականներին Իրանի հայկական գաղթօջախի կյանքում տեղի ունեցան որոշ փոփոխություններ։ Երբ

Թուրքմենչայի պայմանագրով 1828 թ. Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, մոտ 45 հազար հայեր Իրանի հյուսիսային նահանգներից տեղափոխվեցին Ռուսաստանի տիրապետությանն անցած շրջանները։

Իրանում մնացած հայերը ցրված էին երկրի տարբեր մասերում, գլխավորապես նրա հարավային և հյուսիսային նահանգներում։ Կյանքի և գույքի անապահովությունը եղել է այդ շրջանի հայ գաղթօջախների մշտական չարիքը։ Հայ բնակչության հիմնական մասը գյուղացիությունն էր, որը գտնվում էր ծանր վիճակում։

Իրանահայ բնակչության դրությունը բարելավվեց միայն Նասեր էդ-Դին շահի տիրապետության շրջանում (1848—1896), երբ իրանական իշխանությունները երկիրը ամեսական լճացման վիճակից դուրս բերելու, արհեստներն ու առևտուրը խթանելու նպատակով հրապարակեցին մի շարք հրամանագրեր, որոնցով վերջ տրվեցին հայերի նկատմամբ կիրառվող սահմանափակումներին, արգելվեց բռնի դավանափոխությունը, որոշ չափով կանոնավորվեցին քաղաքային և գյուղական բնակչությունից գանձվող հարկերը, հայերին նորից վստահվեցին արքունական և պետական պաշտոններ։

XIX դ. վերջին և XX դարի սկզբին օտարերկրյա կապիտալը սկսեց արագորեն ներթափանցել Իրան, որի հետևանքով երկիրը վերածվեց կիսագաղութի, որն ավելի վատթարացրեց իրանական ժողովրդի, այդ թվում և հայերի առանց այն էլ ծանր վիճակը։ Դասակարգային շահագործման ուժեղացումը և այլ հանգամանքներ նախապայմաններ ստեղծեցին ռուսական առաջին հեղափոխության անմիջական ազդեցության տակ Իրանի 1905—1911 թթ. սահմանադրական հեղափոխության համար, որին ակտիվորեն մասնակցեցին նաև իրանահայերը։ Նրանցից շատերը փայլուն էջեր գրեցին այդ հեղափոխության պատմության մեջ։

* * *

Գաղութահայության պատմությունը լինելով հայ ժողո-

վրդի պատմության անբաժանելի մասը՝ հանդիսանում է խորհրդահայ պատմաբանների ու գրականագետների ուսումնասիրության կարևոր խնդիրներից մեկը։ Նրանք վերջին տասնամյակներում զգալի և բովանդակալից աշխատանք են կատարել հայ գաղութների պատմության, սոցիալ-տնտեսական, բաղաքական, մշակութային կյանքի և փիտության ուսումնասիրության ուղղությամբ։ Հրապարակի վրա են Լ. Ա. Խուրշուդյանի[6], Ս. Տ. Գասպարյանի[7], Ա. Գ. Աբրահամյանի[8], Կ. Լ. Դալլաքյանի[9], Հ. Խ. Թոփուզյանի[10], Ի. Հ. Խաչատրյանի[11], Զ. Մ. Ղասաբյանի[12], Հ. Ու. Մելիքսեթյանի[13], Ն. Հ. Հովհաննիսյանի[14], Տ. Ա. Դրամբյանի[15] և այլ հեղինակների աշխատությունները։ Իսկ վերջին տարիներին ՀԽՍՀ ԳԱ-ում ստեղծվեց համապատասխան բաժին, որը զբաղվում է սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի ուսումնասիրությամբ։

Սակայն մինչև օրս խորհրդահայ հեղինակները խորությամբ չեն ուսումնասիրել իրանահայ գաղութի պատմության առանցքային հարցերը։ Ուշագրավ են Վ. Ս. Բայբուրդյանի[16], Բ. Լ. Զուգասզյանի[17], Մ. Մ. Ղազարյանի[18] աշխատությունները ու այլ հեղինակների իրանահայ գաղութի պատմության առանձին ժամանակահատվածներին վերաբերող տարբեր հոդվածները։

Իրանահայության ժամանակակից պատմության հարցերին է նվիրված նաև Հ. Մարտիրոսյանի «Իրանահայ գաղութի պատմությունից» աշխատությունը, որտեղ չնայած նյութերի սակավությանը, հեղինակին հաջողվել է վեր հանել գաղութի պատմության հետ կապված տարբեր հարցեր[19]։

Ինչպես հայտնի է, գաղութահայության ամբողջական պատմությունը շարադրելու առաջին փորձը կատարել է Ա. Գ. Աբրահամյանը։ Բազմաթիվ աղբյուրների հիման վրա գրած «Համառոտ ուրվագիծ հայ գաղութավայրերի պատմության»[20] երկհատոր աշխատության մեջ հեղինակն անդրադարձել է նաև իրանահայ գաղութի առաջացման, ինչպես նաև միջնադարյան և նոր շրջանի պատմությանը։

Համայնքի մեզ հետաքրքրող շրջանի պատմության հետ

առնչվող սփյուռքահայության և հայրենիք-սփյուռք առնչությունների ուսումնասիրության բնագավառում ուշագրավ է Հ. Մելիքսեթյանի «Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը» ուսումնասիրությունը, որտեղ հեղինակը հիմնականում արխիվային նյութերի հիման վրա լուսաբանում է առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայում կազմակերպված հայկական ցեղասպանությունից փրկված ու աշխարհով մեկ սփռված տարագիր հայության ու խորհրդային Հայաստանի փոխհարաբերությունների և սփյուռքահայերի հայրենադարձության իրականացման պատմությունը։ Աշխատության էջերում ուսումնասիրության առարկա է դարձել նման պրոբլեմների լուսաբանումը՝ կապված իրանահայ համայնքի հետ[21]։

Մեծավաստակ հայագետ Հր. Աճառյանի «Կյանքիս հուշերից»[22] գրքի «Բաքվից Պարսկաստան» խորագրի երկրորդ մասում գիտնականը նկարագրում է Պարսկաստանի իր այցելած գավառներն ու քաղաքները, հայաբնակ վայրերը, որոշակի տեղեկություններ հաղորդում հայկական դպրոցների, բարեգործական ընկերությունների և այլ կազմակերպությունների մասին։

Հայ-պարսկական գրական կապերի արդի պատմության ուսումնասիրության առումով ուշագրավ է Հ. Մովսիսյանի «Հայ գրականությունը արդի պարսկական գրական մտքի գնահատմամբ» ծավալուն հոդվածը, որտեղ հեղինակը անդրադարձել է այն հարցին, որ պարսիկ անվանի գիտնականները և գրական գեմքերը Իրանի հին պատմությունը ճշմարտացիորեն վերականգնելու համար հույժ կարևոր են համարել հայ պատմության և հայ հին ու նոր լեզվի ուսումնասիրությունը։ Հեղինակը ցույց է տվել պարսիկ առաջադեմ մտքի հիացմունքը հայ դասական, արևմտահայ և խորհրդային շրջանի հարուստ գրականության հանդեպ։ Բացի այս, Հ. Մովսիսյանը «Հայ գրողները պարսկերեն»[23] մատենագիտական աշխատանքում ներկայացրել է 1910 թ. մինչև մեր օրերը ստեղծագործած հայ գրողների երկերի ոչ միայն պարսկերեն թարգմանությունները, այլև հայ գրողներին, գրականու-

թյանը, պատմությանն ու մշակույթին նվիրված պարսկերեն առանձին գրքերի և հոդվածների ցանկը։

Քննվող ժամանակաշրջանի և ընդհանրապես գաղութի առաջացման, զարգացման, տնտեսական, մշակութային և այլ հարցեր արտացոլվել են ժամանակակից իրանահայ հեղինակների մենագրություններում։

Դրանցում զգալի տեղ է հատկացված շահ Աբաս I-ի կազմակերպած բռնագաղթին։ Իրանահայ հեղինակները կանգ են առել նաև հայկական գյուղերի նկարագրության վրա, ավել դրանց ժողովրդագրական վիճակագրությունը, վեր հանել հայ գյուղացու առօրյան իր ամբողջության մեջ։ Բացի այդ, նրանք տեղեկություններ են ավել տոհմական կարգերի, օջախի, ծեսերի, ազգային բարքերի ու սովորությունների, նախապաշարմունքների, ժողովրդական տաղերի մասին, անդրադարձել հայկական դպրոցների և այլ հարցերի լուսաբանմանը։ Այդպիսին են Լ. Մինասյանի[24], Ա. Սարյանի[25], Ա. Եղգարյանի[26], Ն. Գորոյանի[27], Ա. Երեմյանի[28], Հ. Աճեմյանի[29], Տ. Արգարյանցի[30], Ա. Աթայանի[31] և այլ մենագրությունները։

Քննվող ժամանակաշրջանի իրանահայ գաղութի մշակույթի, հասարակական-քաղաքական հոսանքների, առանձին հասարակական գործիչների և այլ հարցերի մասին բազմաթիվ տեղեկություններ կարելի է գտնել գաղութի պատմությանը նվիրված իրանցի պատմաբանների, մտավորականների առանձին մենագրություններում, զանազան աշխատություններում և հոդվածներում։

Հայերի մշակույթի ու պատմության հարցերով է զբաղվել պատմաբան Էսմայիլ Ռայինը։ Ուշադրության արժանի է նրա իրանահայ համայնքի պատմությանը նվիրված «Հայ իրանցիներ»[32] աշխատությունը, սակայն, հեղինակն իր բուրժուական հայացքների պատճառով միշտ չէ, որ իրադարձություններին տվել է ճշմարտացի գնահատական։

Աբաս-Ալի Սալեհին հետազոտման նյութ է դարձրել իրանահայ նշանավոր քաղաքական գործիչների կյանքն ու գործունեությունը՝ բարձր գնահատելով Մալքում խանի, Եփրեմ խանի և Հովհաննես խան Մասեհյանի կատարած նշանակալից ծառայությունները[33]։

Իրանի հայ գաղութի պատմությամբ է զբաղվել նաև Ալի Ջավահերչյալամը։ Դեռևս 1934 թ. «Ջենգե-ռուզ» վերտառությամբ հրատարակված իր գրքում նա ուշագրավ տեղեկություններ է հաղորդում համայնքի, Նոր Ջուղայի բնակչության տնտեսական կյանքի վերաբերյալ[34]։

Իրանահայության պատմության տարբեր հարցերի ուսումնասիրության համար կարևոր տեղեկություններ են տալիս նաև պատմաբաններ Մեհդի Մալեքզադեն[35] («Իրանի սահմանադրության հեղափոխության պատմությունը»), Նազեմ օլ-իսլամ Քերմանին[36] («Իրանցիների զարթոնքի պատմությունը»)։ Իրանի ազգային փոքրամասնությունների, այդ թվում և հայերի մասին ուշագրավ տեղեկություններ են պարունակում նաև Հաբիբ Լևիի «Իրանի հրեաների պատմությունը»[37] եռահատոր աշխատությունը և Փիլեր Սերմեսի «Մարդու իրավունքները և իրանցի ասորիները»[38] մենագրությունները։

Իրանահայ մամուլի վերաբերյալ ուսումնասիրություններ են գրել պարսիկ հեղինակներ Ազիզ Դովլաթաբադին՝ «Իրանում հրատարակված հայ մամուլի պատմությունից»[39] և Մահմուդ Նաֆիսին՝ «Իրանի ոչ պարսկալեզու թերթերը»[40], իսկ Լոթֆոլլահ Հոնարվարը գրել է «Սպահանի Ջուղայի եկեղեցիները»[41] ուսումնասիրությունը։

Հայ համայնքի անցյալի և արդի պատմության վերաբերյալ հարուստ փաստեր կան Իրանում լույս տեսնող «Սրուշ» շաբաթաթերթում։ Հետաքրքրական է այդ թերթի 1979 թ. համարներում տպագրված «Հայերի դերը Իրանի հասարակական և քաղաքական պայքարներում»[42] ուսումնասիրությունը, որտեղ ըստ արժանվույն է գնահատվում իրանահայերի մասնակցությունը Իրանի 1905—1911 թթ. սահմանադրական հեղափոխությանն ու մյուս ազատագրական շարժումներին։

Մեր հետազոտության առարկա ժամանակաշրջանը պատմագրական հետազոտման տեսանկյունից իրանահայ

պատմության շատ կարևոր, սակայն սակավ ուսումնասիրված շրջանն է։ Ուսումնասիրությունը կատարված է իրանի պատմության ֆոնի վրա և ժամանակագրական կարգով ընդգրկում է իրանահայ պատմության նորագույն շրջանի առավել ուշագրավ հատվածը (1941—1979), երբ քաղաքական նոր հանգամանքների բերումով ստեղծվեցին առաջադիմական կուսակցություններ ու կազմակերպություններ, որոնք զգալի դեր խաղացին ոչ միայն երկրի, այլև համայնքի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում։ Այդ շրջանում տեղի հայերի տեղաշարժի հետևանքով խիստ փոխվել էր համայնքի քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը։ Հետազոտվող ժամանակաշրջանում տեղի է ունեցել հեղափոխական երեք շարժում (Ադրբեջանի և Քրդստանի դեմոկրատական շարժումը, Իրանի նավթային արդյունաբերության ազգայնացման համար մղվող պայքարը և 1978—1979 թթ. հեղափոխությունը)։ Դրանց ակտիվորեն մասնակցել են նաև հայկական համայնքի առաջադեմ խավերը։ Աշխատության մեջ որոշ տեղ է հատկացվել նաև Իրանի ազգային այլ փոքրամասնությունների սոցիալ-քաղաքական վիճակին։ Գրքում արծարծվող տարբեր հարցերի վերաբերյալ ընթերցողին ավելի սպառիչ ու ամփոփ պատկերացում տալու նպատակով երբեմն հեռու ենք մնացել ուսումնասիրության ժամանակագրական սահմաններին խստորեն հետևելուց։

Ներկա ուսումնասիրության համար հիմնական աղբյուր են ծառայել Հայկական ԽՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության կենտրոնական արխիվի, ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվի և Հայկական ԽՍՀ Կենտրոնական պետական պատմության արխիվի մի շարք ֆոնդերում եղած նյութերը։

Աշխատության մեջ պատշաճ չափով օգտագործել ենք ՀԽՍՀ ԳԱ հիմնարար գրադարանում պահվող իրանահայ մրատավորական Հովիկ Էդգարյանի, Արշակ Ալպոյաճյանի, Բենիամին Ժամկոչյանի, Գրիգոր Պողարյանի և ուրիշների

արխիվային ֆոնդերը, ինչպես նաև Մաշտոցի անվան Մատենադարանի և մամուլի նյութերը։

Կարևոր տեղեկություններ ենք քաղել նաև Թեհրանի հայոց թեմի թեմական խորհրդի հաշվետվության նյութերից, նրա կանոնադրությունից և այլն։

Մեր կողմից ուսումնասիրության առարկա դարձած իրանում մարքսիզմ-լենինիզմի գաղափարախոսությունը տարածող առաջին հայ մտավորականների գործունեության և ժողովրդական կուսակցության («Թուդե») շարքերում ակտիվ մասնակցություն ցուցաբերած հայ կոմունիստների կյանքն ու գործունեությունը հետազոտելու սկզբնաղբյուրներ են եղել հիշյալ կուսակցության օրգաններ «Դոնյա» (Աշխարհ) տեսական հանդեսը, «Մարդոմ» (Ժողովուրդ) օրաթերթը, վերը նշված կուսակցության համագումարների և Կոմինտերնի նյութերը։

Թավրիզի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության գործունեության մասին հավաստի տեղեկություններ է պարունակում այդ կազմակերպության նախկին անդամ Տ. Հակոբյանի տպագրված հուշերը[43]։

Իրանի ժողովրդական կուսակցության պատմության հետազոտման համար առանձնահատուկ տեղ ունեն այդ կուսակցության Կենտրոնական կոմիտեի անդամներ Ա. Հովհաննիսյանի[44] հուշերը և Ա. Քամբախշի «Իրանում բանվորական և կոմունիստական շարժումների ակնարկներ»[45] աշխատությունը։

Ժողովրդական կուսակցության զոհված անդամներին նվիրված Ռահիմ Նամվարի վերջին տարիներին լույս տեսած «Զոհվածների հուշամատյան»[46] և «Նահատակ թուդեականներ»[47] ուսումնասիրությունները նոր լույս են սփռում իրանցի և հայ կոմունիստների գործունեության վրա։

Այսպիսով, գիտական շրջանառության մեջ են դրվել տվարաբաններ, սակայն ցարդ շրջանառության մեջ չմտած կամ խիստ սահմանափակ օգտագործված հարուստ նյութեր։

Աշխատանքում մեզ հաջողվել է գիտական հետազոտման ենթարկել մինչև այժմ համայնքի պատմության մեջ թուլ-

ցիկ ուսումնասիրված բազմաթիվ հարցեր։ Դրանցից են Իրանի ժողովրդական կուսակցության շարքերում հայ կոմունիստների գործունեությունը, համայնքի երկու բեկորների՝ քաղաքաբնակ և գյուղաբնակ զանգվածների սոցիալ-տնտեսական դրությունը, նրանց ինքնավարության իրավական վիճակը, ինչպես նաև մի շարք այլ կարևոր խնդիրներ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԻՐԱՆՈՒՄ

Իրանը բազմազգ պետություն է, որտեղ բնակվում են երկրի ողջ տարածքում ցրված ավելի քան 40 ազգեր ու ազգություններ։

1956 թ. Իրանում անցկացված առաջին մարդահամարի ժամանակ անտեսվել էր բնակչության էթնիկական կազմը։ Ըստ այդ մարդահամարի իրանահայության քանակը կազմում էր 115 հազար[1], իսկ 1978 թ. Ս. Բրուքի կազմած աղյուսակի համաձայն նրանց թիվը 260 հազար էր։ Բերենք նրա կազմած Իրանի բնակչության էթնիկական կազմը (տե՛ս աղյուսակ 1)։

2688

Այսպիսով, երկրի բնակչության մոտ 75 տոկոսը պատկանում է իրանական, ավելի քան 20 տոկոսը՝ թուրքական, իսկ մնացածը՝ սեմական և այլ լեզվախմբերին։

Հայերը Իրանում ամենախոշոր կրոնական փոքրամասնություն են։ Նրանք կազմում են երկրի ամբողջ բնակչության 0,8%-ը, այսինքն՝ կրկնակի ավել են Իրանի մյուս կրոնական փոքրամասնություններից՝ ասորիներից, հրեաներից և զրադաշտականներից, որոնք միասին վերցրած կազմում են բնակչության ընդամենը 0,4%-ը։

Իրանահայությունը հոգու զարմանալի տոկունությամբ և համառությամբ կարողացել է գոյատևել՝ պահպանելով իր մայրենի լեզուն, մշակույթը, ազգային սովորություններն ու ավանդույթները՝ մոտ 400 տարի անընդհատ պայքարելով իր նկատմամբ կիրառվող ճնշման քաղաքականության, ճնշումների ու կեղեքումների դեմ։

Աղյուսակ 1

Ազգություններ	Բնակչ. հգ.	%	Ազգություններ	Բնակչ. հգ.	%
Իրանական խումբ	26190	74,4	Գալեշներ	30	0,1
Պարսիկներ	16000	45,4	Թուրքական խումբ	7770	22,1
Քրդեր	3200	9.1	Ադրբեջանցիներ	580[1]	16,15
Դիլանցիներ	2000	5,6	Թուրքմեններ	550	1,5
Լուռեր	1500	4,3	Ղաշղաիներ[2]	450	1,3
Մազանդարան-ցիներ	1300	3,7	Աֆշարներ	400	1,1
Բելուջներ	800	2,3	Իրանի հարավային և արևելյան թուր-քական ցեղեր	280	0,8
Բախտիարներ	600	1,7	Շահսևեններ	220	0,6
Թաթեր	230	0,8	Ջաղջարներ	25	0,1
Քազարներ	130	0,4	Ղարափափախներ	25	0,1
Թեյմուրներ	110	0,3	Սեմական խումբ	710	2.0
Թալիշներ	90	0,3	Արաբներ	650	1,8
Աֆղաններ (փուշ-տու)	60	0,2	Ասորիներ	60	0,2
Ջամշիդներ	50	0,1	Աֆրիկացիներ	10	0,0
Տաջիկներ	40	0.1	Զերքեզներ	5	0,0
Հայեր	250	0,8	Ուրիշներ և անհայտ-ներ	33	0,1
Հրեաներ	80	0,2			
Գնչուներ	80	0,2	Ընդամենը՝	35213	100,0[3]
Հնդկաստանից և Պակիստանից ներգաղթյալներ	30	0,1			
Բրահուիներ	30	0,1			
Վրացիներ	15	0,0			

Թեհրանում պարսկերեն հրատարակվող «Սորուշ» հանդեսը անդրադառնալով իրանահայության պատմությանը՝ գրում է. «Արտաշիր Առաջինի (Սասանյան դինաստիայի թագավոր, մ. թ. III դ. հայերի առաջին մեծ բռնագաղթի իրագործողը — Հ. Փ.) տիրապետությունից մինչև Սեֆյան պետությունը (1502—1722 թթ. —Հ. Փ.) Հայաստանից մինչև Իրան ընկած ճանապարհներին զոհվել են մոտ երեք միլիոն հայ, այսինքն, Հայաստանի 15 միլիոն բնակչությունից այսօր մնացել է 5—6 միլիոն, որոնք ցրված են աշխարհի տարբեր անկյուններում։ Եթե Իրան եկած հայերը և նրանց լեզուն ու դավանությունը զերծ մնային ձուլումից ու բռնությունից, ապա բնակչության աճը հազար տարվա ընթացքում պետք է եռապատկվեր՝ հասնելով մոտ վեց միլիոնի։ ...Այսօրվա Իրանը իր տարածքում կունենար առնվազն հինգ միլիոն հայ, մինչդեռ այժմ Իրանում հայերի թիվը հազիվ հասնում է 200 հազարի, որը շատ ցավալի երևույթ է»[3]։ Հայաստանի 15 միլիոն բնակչության մասին հանդեսի տվյալը վերապահելի է, սակայն հարյուրամյակների ընթացքում հայ բնակչության կրած կորստի պատկերը ընդհանուր առմամբ հանդեսը ճիշտ է արտացոլել։ «Իշխող կարգերը, սոցիալական չարիքը, հոգևորականության կողմից հայերի նկատմամբ կիրառվող դասակարգային, ազգային ու կրոնական ճնշումը, հայերի բռնի դավանափոխությունն իրենց անջնջելի հետքն են թողել իրանահայության պատմության վրա»[4],— գրել է «Սորուշ» հանդեսը։

Դարերի ընթացքում իրանահայության նկատմամբ կիրառված ճնշումների, կեղեքումների, անհատական և զանգվածային բռնի ձուլման փաստերի կարելի է հանդիպել բազմաթիվ հայ ու իրանցի առաջադեմ հեղինակների աշխատություններում։

Միջֆեոդալական կռիվները, ավերածությունները, ծանր հարկերը, հայ բնակչության նկատմամբ կիրառվող ազգաձուլման քաղաքականությունը և բազմաթիվ այլ հանգամանքներ պարսկահայ բնակչությանը ստիպում էին գաղթել ապահով երկրներ՝ Հնդկաստան և Ռուսաստան։ Գաղթում էր հիմնականում քաղաքային բնակչության այն հատվածը, որը դրա հնարավորությունն ուներ։

Մինչև XX դ. 40-ական թվականների կեսերը իրանահայ համայնքը բաժանված էր երկու հատվածի՝ հյուսիսային (Թավրիզ կենտրոնով) և հարավային (Նոր Ջուղա կենտրոնով)։ Այս բաժանումով իրանահայության խոշորագույն հատվածը Կասպից ծովի ափերից մինչև Պարսից ծոցը ենթարկվում էր Նոր Ջուղայի թեմին[5]։

Սակայն 1940-ական թվականների կեսերին երկրի քաղաքական կյանքում ծայր առած բազմաթիվ դժվարությունները, Թեհրանի և շրջակայքի հայությանը վերաբերող մշակութային, կալվածքային և այլ հարցեր լուծելու խնդիրը պահանջում էր ստեղծել նոր շրջան։ 1946 թ. մյուս հայաբնակ հա-

մայնքներից, որոնք Թեհրանի, նրա կենտրոնական մասերի և գաղութի հարավային շրջանի մի մասն էին կազմում, բաժանվեց նոր շրջան՝ Թեհրան կենտրոնով։ Նորաստեղծ շրջանն իր նշանակությամբ, բնակչության թվով ու կազմակերպվածության տեսակետից ներկայումս առաջատար դեր ունի և կազմում է իրանահայ համայնքի կորիզը։ Այդ իսկ պատճառով նպատակահարմար է այդ շրջանները բնութագրել հետևյալ հերթականությամբ՝ կենտրոնական, հյուսիսային և հարավային։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Շրջանը բաղկացած է հետևյալ համայնքներից. 1. Թեհրան (շրջանի կենտրոն), 2. Վանակ գյուղ, 3. Համադան, 4. Մեշհեդ, 5. Դորգան, 6. Սարի, 7. Իեշտ, 8. Էնզելի (Փեհլևի), 9. Ղազվին, 10. Արաք, 11. Բախթարան (Քերմանշահ)։

Թեհրան—Վկայություն կա, որ Թեհրանում հայերը բնակություն են հաստատել Քերիմ խան Զանդի օրոք։ Վերջինիս կարգադրությամբ Ջուղայից տասը հայ բնտանիք տեղափոխվում է Թեհրան և բնակություն հաստատում Դուլաբ թաղամասում։ Հ. Ղուկասյանի վկայությամբ, այժմ գոյություն ունեցող հին Դուլաբի հայկական գերեզմանոցը պահպանվել է դեռևս վերը հիշատակված ժամանակվանից[6]։

Հիշատակություն կա այն մասին, որ Ղաջարական դինաստիայի հիմնադիր Աղա Մահմեդ խանը (1796—1797) դեռևս 1795 թ. կովկասյան արշավանքներից Իրան վերադառնալով, իր հետ բերել էր հայ գերիներ, որոնք հաստատվել են Թեհրանում։ Նրա կարգադրությամբ 5—7 բնտանիք Ղարաբաղից տեղափոխվել է Թեհրան և բնակություն հաստատել Դարվազե Ղազվին թաղամասում։ 1798 թ., Ֆաթհալի շահի գահ բարձրանալուց հետո, Իրանի տարբեր շրջաններից հայեր են գալիս Թեհրան և բնակություն հաստատում

քաղաքի զանազան թաղերում։ Նրա կարգադրությամբ շատ հայ արվեստագետներ ու արհեստավորներ նոր Ջուղայից և Թավրիզից տեղափոխվում են Թեհրան ու հաստատվում քաղաքի հայաբնակ շրջաններում։

Թեհրանի առաջին հայ բնակիչների մասին գոյություն ունեցող մի այլ տեղեկության մեջ հիշատակվում է, որ նրանք այն 10 հայ ապակեգործներն էին, որոնք Ֆաթհալի շահի կարգադրությամբ նոր Ջուղայից Թեհրան էին բերվել նոր մայրաքաղաքի արքունական շենքերի լուսամուտներին ապակի գցելու նպատակով։ Նրանք բնակվում էին քաղաքի Շահ-Աբդոլ-Ազիմ ծայրամասային թաղում[7]։ Հիշյալ ժամանակներում հայերի մեծամասնությունն ապրում էր քաղաքի Դարվազե Ղազվին և Շահ-Աբդոլ-Ազիմ թաղամասերում։ 1870 թ. սկզբներին Թեհրանահայ համայնքի 200 բնտանիքի մեծամասնությունը բնակվում էր Դարվազե Ղազվին թաղում[8]։ Իսկ 1939 թ. Շահ-Աբդոլ-Ազիմ թաղամասում շուրջ 100 հայ բնտանիք էր ապրում[9]։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հայերը բնակվում էին քաղաքի Նադերի, Ղավամ-էս-Սալթանե, Շահ, Յուսեֆաբադ, Մանուչեհրի և այլ կենտրոնական փողոցներում։ Հետպատերազմյան շրջանում երկրի տարբեր վայրերից Թեհրան տեղափոխված հայերը բնակություն հաստատեցին քաղաքի հյուսիսային՝ Հեշմաթիե (Սարդարաբադ), Բահար (Խանասար), Մաջիդիե (Զեյթուն), Սեյդ Խանդան և այլ թաղամասերում։ Վերջին տարիներին Թեհրանահայության կենտրոն է դարձել Սասուն թաղամասը՝ իր մի քանի հազար հայ բնակիչներով։

Թեհրանի հայ բնակչության բուռն աճը սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ Իրանի հայաբնակ հին կենտրոնների հաշվին։ Եթե դարասկզբին Թեհրանում և նրա շրջակա գյուղերում բնակվում էր ընդամենը 2200 հայ[10], ապա 1940-ական թվականների կեսերին արդեն քաղաքի և նրա շրջակայքի հայ բնակչության թիվը հասավ 40000-ի, որից 25000-ը բնակվում էր Թեհրանում[11]։

Հետպատերազմյան շրջանում հայերի հոսքը գնալով ուժեղացավ։ Հայրենադարձության դադարեցման հետևանքով գավառներից Թեհրան եկած գյուղացիները բնակություն հաստատեցին քաղաքի հյուսիսային մասում։ Մոտավոր հաշվումներով այդ տարիներին Թեհրան տեղափոխված հայ գյուղացիների թիվը հասնում էր 4000—5000-ի[12], իսկ Հ. Մարտիրոսյանի տվյալներով՝ 10000-ի[13]։ Հայ բնակչության հոսքը Թեհրան աճեց հատկապես 1960-ական թվականներից հետո։

Թեհրանի հայկական թեմական խորհրդի տվյալների համաձայն քաղաքի հայ բնակչության թվաքանակը հետպատերազմյան շրջանում ունեցել է հետևյալ պատկերը.

Աղյուսակ 2

Թվական	ծն.	մահաց.	տարբ.	ամուսնություն	աճ %-ով	ընդհ. թվքնկ.
1947	480	280	191	208	0,53	36000
1948	501	439	62	232	0,16	38250
1949	523	427	96	208	0,24	39150
1950	498	362	136	252	0,36	37350
1951	500	380	120	277	0,32	37800
1952	448	326	122	280	0,36	33750
1953	557	371	186	310	0,44	41850
1954	590	398	192	336	0,44	43100
1955	719	387	332	384	0,62	54000
1956	765	424	341	415	0,60	57000
1957	825	432	393	432	0,65	61000
1958	876	442	434	460	0,65	65000[14]

Ինչպես երևում է աղյուսակից, 11 տարվա ընթացքում Թեհրանի հայ բնակչության թվաքանակը աճել է 65%-ով։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Թեհրանի հայաշատ համայնքի բնակչության մասին տարբեր աղբյուրներում բերված վիճակագրական տվյալներն իրարամերժ են։ Վերը բերված աղյուսակի տվյալների կողքին առկա են 1958 թ. հրատարակված «Ամենուն տարեգրքի» տվյալները, որոնց համաձայն 1958 թ. Թեհրանի հայ ազգաբնակչության թիվը կազմել է 50000[15]։ Իսկ Հ. Մարտիրոսյանի ուսումնասիրության մեջ նշված է, որ 1958 թ. Թեհրանում բնակվել է 75000 հայ[16]։ 1967 թ. Թեհրանն ունեցել է 85000 հայ բնակչություն[17], իսկ 1973 թ. այդ թիվը արդեն հասել է 100 հազարի[18]։ «Մոնդ» թերթի տվյալներով Թեհրանահայ բնակչության թիվը 1979 թ. եղել է 120000[19]։ Մինչ 1978—79 թթ. հեղափոխությունը Թեհրանում բնակվում էր 150 հազար հայ[20], որը կազմում է երկրի ամբողջ հայ բնակչության 75 %-ը։

Վանագ—Թեհրանի մերձակա շրջաններում են գտնվում հայաբնակ չորս գյուղեր՝ Վանագ, Խարթուն, Դարուս և Մանսուրաբադ։ Դրանցից գլխավորը Վանագն էր, որն ընկած էր Թեհրանից դեպի հյուսիս՝ 8—9 կմ հեռավորության վրա։ Վանագը, այդ թվում և վերը հիշված գյուղերը, հիմնվել են XIX դ. սկզբներին։ Դրանց բնակիչները հիմնականում Ղարաղանի, Քյազագի և այլ շրջաններից եկած հայերն են։ Թեհրանի սահմանները դեպի հյուսիս ընդլայնվելու հետևանքով Վանագ գյուղը մտել է մայրաքաղաքի վարչական շրջանի մեջ։

1935 թ. Վանագն ուներ 127, Խարթունը՝ 48, Դարուսը՝ 80, Մանսուրաբադը՝ 112 հայ բնակիչ[21]։ 1960-ական թվականներին Վանագում կար 35, Խարթունում՝ 22, Դարուսում՝ 12 հայկական տնտեսություն[22]։ Վանագի և թվարկված գյուղերի հայ բնակչության թիվը հասնում էր 500-ի[23]։

Համադան — Համադանը ամենահին հայկական համայնքներից է։ Շահ-Աբասի բռնագաղթից հետո, 1650-ական թվականներին ոչ մեծ թվով գաղթեցված հայեր բնակություն հաստատեցին քաղաքի Ղալա թաղամասում, ինչպես նաև քաղաքին կից Շավարին գյուղում։ Սակայն մինչ այդ ևս այստեղ բնակվել են Ռուսաստանից և այլ վայրերից գաղթած հայեր։ Հետագայում Համադանը համալրվել է երկրի մյուս գավառներից եկած հայերով, ինչպես նաև արևմտահայերով, որոնց թիվը հասնում էր 820-ի[24]։

Վերջին տասնամյակներում տեղացի հայերի հոսքը Թեհրան զգալիորեն աճել է։ 1950-ական թվականներին Համադանում բնակվում էր 500 հայ[25]։ 1970-ական թվականների

վերջերին քաղաքում բնակվում էր ընդամենը 16 ընտանիք՝ 50 շնչով[26]։

Մեշհեդ — *Մեշհեդը Խորասան նահանգի կենտրոնն է։ Խորասանում ապրող հայերն այստեղ են տեղափոխվել Պարսկաստանի կենտրոնական քաղաքներից։ Անցած դարի 90-ական թվականներին այստեղ հաստատվեցին նաև Կովկասի զանազան վայրերից եկած մեծ թվով հայ առևտրականներ։*

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Խորասանի Մեշհեդ, Սարզևար, Նիշաբուր, Թորբաթ, Շիրվան և այլ քաղաքներում գործում էին բազմաթիվ հայ առևտրական տներ, որոնք գլխավորապես զբաղվում էին բրդի, բամբակի, չորացրած մրգերի և այլ ապրանքների արտահանությամբ դեպի Ռուսաստան և այնտեղից արդյունաբերական ապրանքների ներմուծմամբ։

Ռուսաստանից եկած հայերը բամբակազտիչ գործարաններ էին հիմնել Սարզևար քաղաքում, որը դարձել էր երկրում բամբակի մշակման գլխավոր կենտրոնը։

1933 թ., երբ բամբակի առևտուրը դարձավ պետական մենաշնորհ, Սարզևարի գործարանները փակվեցին՝ սնանկացնելով հայ առևտրական տներից շատերին[27]։ Պատերազմի հետևանքով Խորասանի հայ բնակչությունը տնտեսական ծանր կացության մեջ ընկավ։

Վերոհիշյալ քաղաքներում բնակվող հայ ընտանիքներից շատերն աստիճանաբար ցրվեցին երկրի զանազան շրջաններ։ Դրա հետևանքով Խորասան նահանգի 10 քաղաքներից և գյուղաքաղաքներից 1960-ական թվականներին հայաբնակ էին միայն Մեշհեդը, Ղուչանը և Նիշաբուրը։ Մեշհեդի համայնքը բաղկացած էր 62 ընտանիքից՝ 310 շնչով, որից 165-ը տղամարդ էր, իսկ 155-ը՝ կին[28]։ Ղուչանի հայերի թիվը հասնում էր 12-ի՝ 7 տղամարդ և 5 կին, իսկ Նիշաբուրի 31 հայերից 19-ը տղամարդ էր, 12-ը՝ կին։ Խորասանի շրջանի հայ բնակչության ընդհանուր թիվը 353 էր (191 տղամարդ և 162 կին)[29]։

Մեշհեդի համայնքին են պատկանում Մազանդարան նահանգի յոթ քաղաքներում և գյուղերում բնակվող հայ համայնքները։ Շահրուդի հայ համայնքը 1958 թ. ավյալներով բաղկացած էր 26 մարդուց, որից 15-ը տղամարդ էր, 11-ը՝ կին, Բանդարշահինը՝ 40, 18-ը՝ տղամարդ, 22-ը՝ կին, Գյուլիստանինը (քաղաք)՝ 143, 77-ը՝ տղամարդ, 66-ը՝ կին, Գյուլիստանինը (գյուղ)՝ 84, 40-ը՝ տղամարդ, 44-ը՝ կին, Ղորուղ գյուղինը՝ 155, 78-ը՝ տղամարդ, 77-ը՝ կին, Գոնբաթ Քաբուս գյուղաքաղաքինը՝ 75, 54-ը՝ տղամարդ, 21-ը՝ կին[30]։

Այսպիսով, 1950-ական թվականների վերջերին Մեշհեդի համայնքին ենթարկվող Մազանդարանի շրջանի հայ բնակչության թիվը 595 էր, որից 317-ը տղամարդ էր, իսկ 278-ը՝ կին։

Ըստ 1982 թ. ավյալների Մեշհեդում բնակվում էր ընդամենը 200 հայ[31]։

Ղորուղի շրջանում հայերն ապրում են արդեն 60 տարի։ Նրանք մեծ մասամբ բնիկ տրապիզոնցի են, որոնք անցել են Ռուսաստան, այնտեղից փոխադրվել Պարսկաստան և բնակություն հաստատել Ղորուղի շրջանում։ Նրանք մեծ ղրժվարություններով տեղի անտառաշատ շրջանը մշակելի են դարձրել ծխախոտի համար։ Այժմ այդ շրջանը կազմում է առանձին համայնք։ Այնտեղ ապրում էր շուրջ հիսուն հայ ընտանիք, որոնք զբաղվում էին հողագործությամբ (Ղորուղում կա 18, Գյուլիստանում՝ 6, Ալիաբադում՝ 6, Բանդար-Թորբմանում՝ 4 և Գոնբադում՝ 6 տնտեսություն)[32]։

Գուրգան — *Այս քաղաքում և նրա շրջակա ավաններում նախկինում մեծ թվով հայեր են բնակվել։ 1980 թ. այստեղ մնացել էր 59 ընտանիք՝ շուրջ 200 շնչով[33]։*

Սարի — *Այստեղ նույնպես վերջին տասնամյակներում հայ ընտանիքները մշտական բնակություն են հաստատել։ 1980 թ. այդ քաղաքի հայ ընտանիքների թիվը հասնում էր 50-ի՝ 160 շնչով[34]։*

Ռեշտ — *Ռեշտը Գիլան գավառի կենտրոնն է, Իրանի ամենահին հայաբնակ համայնքներից մեկը, որը, իբրև բնակավայր, գոյություն է ունեցել դեռևս XVII դարում։ XVII—XIX դդ. կեսերը մետաքսի առևտրով զբաղվող հայ*

վաճառականներից շատերը բնակվել են այստեղ[35]։ Այդ համայնքում մեր դարի 50-ական թվականներին հաշվվում էր շուրջ 800 հայ, իսկ շրջակա փոքր քաղաքներում և գյուղերում՝ Լահիջանում, Լանգերուդում, Ֆումենում, Շահսևարում և այլուր հայերի թիվը հասնում էր 400-ի[36]։ 1980 թ. տվյալներով Ռեշտում բնակվում էին 62 հայ ընտանիքներ՝ թվով 248 մարդ[37]։ Իսկ արդեն 1981 թ. հայ տնտեսությունների թիվը նվազելով՝ հասել էր 35-ի[38]։

Էնզելի — Կասպից ծովի ափին, Ռեշտից 40 կմ հեռավորության վրա ընկած հին, սակայն Ռեշտից ավելի երիտասարդ այդ քաղաքում ևս բնակվել են հայ ընտանիքներ, որոնք մեծ մասամբ ծագումով Կովկասից էին։ Դարիս 50-ական թվականներին Էնզելիում բնակվում էր 400 հայ[39]։ 1980 թ. Էնզելիի և նրա շրջանի հայ ընտանիքների թիվը 45 էր՝ 200 շնչով[40]։

Ղազվին — Քաղաքը հայերի կողմից բնակեցվել է XIX դ. 80-ական թվականներից սկսած, երբ Սպահանից, Համադանից և Թավրիզից այնտեղ տեղափոխվեցին հայ ընտանիքներ։ Սկզբնական շրջանում Ղազվինն ուներ 25—30 հայ ընտանիք։ Իսկ համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին նրանց թիվը հասավ 300-ի[41]։ Ընդհուպ մինչև 1950-ական թվականները քաղաքի հայ բնակչությունը շարունակ ավելանում էր։ Պատերազմից հետո այնտեղ բնակվում էր 1500—2000 հայ[42]։ 1970-ական թվականների վերջերին Ղազվինն ուներ 450—500 հայ ընտանիք[43]։

Ղազվինահայ համայնքի անդամների թվաքանակը ևս հետզհետե նվազում է։ Վերջին տարիներին համայնքի շատ ընտանիքներ փոխադրվել են Թեհրան։ 1981 թ. տվյալների համաձայն Ղազվինն ուներ ընդամենը 30 հայ տնտեսություն[44]։

Աբադ — Իրանի կենտրոնական նահանգն է՝ Արաք վարչական կենտրոնով։ Արաքը (նախկին՝ Սուլթանաբադ) XIX դ. սկզբին հիմնել է հայազգի Հովսեփ խանը, որը տեղի զորակայանի պահակագնդի հրամանատարն էր[45]։

Հայերն այստեղ հաստատվել են 1902—1903 թթ.։ Ժամանակի ընթացքում հայ վաճառականները Արաքում հիմնել են գորգագործական ֆաբրիկաներ և առևտրական տներ։ Արաքի շրջանի չորս հայաբնակ գավառների գյուղերից, ինչպես նաև նոր Ջուղայից և նրա հարևան շրջաններից հայերը հայ ձեռնարկատերերի մոտ աշխատանք գտնելու նպատակով փոխադրվում էին Արաք, որի հետևանքով տեղի հայ բնակչության թիվը զգալիորեն ավելանում էր։ Արդեն XIX դ. առաջին տասնամյակում, իբրև հայկական հոծ համայնք, Արաքը վերածվեց հարակից չորս հայաբնակ շրջանների՝ Քյազազի, Քյամարայի, Գյափլայի ու Բուրվարիի վարչական կենտրոնի։

1950-ական թվականներին Արաքում բնակվում էր 801 հայ՝ 374 տղամարդ և 427 կին[46]։ 1980 թ. վերջերին Արաքն ուներ ընդամենը 150 տնտեսություն[47]։

Արաքի շրջանի Բուրվարի, Գյափլա, Քյազազ և Քյամարա գավառներում ևս շահաբաշյան բռնագաղթի ժամանակ հայեր են հաստատվել։

Բուրվարի — Անցյալում Սպահանի նահանգի մի մասն էր կազմում։ Գտնվում է Սպահանի արևմտյան կողմում, Արաքի շրջանում, հարավից սահմանակից է Փերիային և կազմում է նրա շարունակությունը[48]։

1933 թ. Բուրվարին ուներ հայաբնակ 22 գյուղ, որոնցում ապրում էր 937 ընտանիք՝ 5870 շնչով։ Այդ գյուղերն են՝ Աբբարիք, Ազնա, Անավշ, Բարդյալա, Բուրգ, Գայիքան, Գովզ, Գուրան, Դարիչա, Դեհնով, Խորզենթ, Հընդա, Ղարաքյահրիզ, Մուղանակ, Նասրաբադ, Շավրավա, Ջարբազ, Ջանխոշ, Սանգսֆիդ, Փահրա, Քոնսոր, Ֆարաջաբադ[49]։ Հայերն այդ գյուղերում ապրում էին պարսիկ գյուղացիների հետ միասին[50]։

1946 թ. հայրենադարձության ժամանակ Բուրվարին ուներ 19 գյուղ, որոնցից 7-ի՝ Անավշի, Բուրգի, Շավրավայի, Վերին Ջարբազի, Ջանխոշի, Փահրայի, Քոնսորի (Քուհսոր) բնակիչները տեղափոխվեցին Խորհրդային Հայաստան։ Մնացած 12 գյուղերի՝ Աբբարիքի, Ազնայի, Գայիքանի, Գովզի, Գուրանի, Դեհնովի, Խորզենթի, Ղարաքյահրիզի, Մուղանա-

կի, Նասրաբադի, Սանգսֆիդի և Ֆարաջաբադի հայ բնակիչները 1947 թ. նախապատրաստվել էին ներգաղթել Հայրենիք, սակայն ներգաղթի հետաձգման պատճառով երկու տարի անց լքեցին գավառը։ Նրանց մեծ մասը տեղափոխվեց Թեհրան, իսկ մյուսները՝ տարբեր վայրեր։

1952 թ. գավառն ուներ 8 գյուղ, 1132 բնակչով[51]։ Հետագա տարիներին գավառն աստիճանաբար դատարկվեց հայերից։ Մնաց երկու գյուղ, որոնց բնակչության թիվը նույնպես նվազեց։ 1967 թ. Խորգենքը ուներ 18, Ֆարաջարադը՝ 4 տնտեսություն։ 1969 թ. առաջինն ուներ միայն 4, իսկ երկրորդը՝ 1 ընտանիք, որոնք նույնպես ժամանակի ընթացքում լքեցին այդ գյուղերը[52]։

Գյափլա (կամ Ջամփլադ)—Բուրվարիի հարևան Գյափլա շրջանը մի քանի հայկական գյուղ ուներ։ 1946 թ. շրջանի բնակչության մեծ մասը հայրենադարձվեց Խորհրդային Հայաստան[53], իսկ մնացածները, որոնք փոքր թիվ էին կազմում, չկարողանալով ներգաղթել Հայրենիք, հեռացան շրջանից և բնակություն հաստատեցին Թեհրանի հյուսիսային արվարձաններում։

Քյամարա — Քյամարա գավառը գտնվում է Բուրվարի և Գյափլա գավառների հյուսիսային մասում։

1932 թ. հայեր էին բնակվում գավառի հետևյալ յոթ գյուղերում՝ Լիլիհան, Ղուրչիբաշի, Ջարթաղ (Ջարրաղ), Ռուբաթ-Քյանդլներ, Սաթի, Մազրա-Դարաշուր և Ղանիան-Մաշիան։ Շրջանի հայաբնակ ամենամեծ գյուղում՝ Լիլիհանում, բնակվում էր 1400 մարդ, իսկ մյուս գյուղերում՝ 355 հայ ընտանիք[54]։

1946 թ. Քյամարայից համեմատաբար քիչ թվով հայեր հայրենադարձվեցին։ Բնակչության զգալի մասը տեղափոխվեց քաղաքները, մեծ մասամբ Թեհրան։ Այնուհանդերձ, 1952 թ. տվյալներով գավառն ունեցել է 2158 հայ բնակիչ[55]։

1962 թ. միայն Լիլիհանն ուներ շուրջ 60 հայ բնակիչ, իսկ 1967 թ. այնտեղ մնացել էր ընդամենը 4 հայ տնտեսություն։ Բնակիչների մեծ մասը տեղափոխվել էր Թեհրան[56]։

Քյազազ — Քյազազ գավառը գտնվում է Գյափլա և Քյամարա գավառներին կից, նրանց հյուսիսարևմտյան կողմում, Արաքից 30 կմ հեռավորության վրա։

1932 թ. գավառն ուներ 15 հայաբնակ գյուղ՝ 4156 բնակչությամբ[57]։ Այդ գավառից 1946 թ. հայրենադարձվողներ քիչ են եղել, սակայն գյուղերից 10-ում հայ բնակչությունն աստիճանաբար նոսրացել է։ Մինչև 1962 թ. հայերը բնակվում էին հետևյալ հինգ գյուղում՝ Դոու ղալա՝ 2 տնտեսություն, Հոսեյնաբադ՝ 8, Մարանդ՝ 5, Ուրմիան՝ 8, Քյալավա՝ 20 (ընդամենը 44 տնտեսություն)։ 1967 թ. արդեն հայաբնակ էին մնացել ընդամենը երկու գյուղ՝ Աբբասաբադը և Քյալավան, ընդ որում, առաջինում կար 3, իսկ երկրորդում՝ 28 ընտանիք[58]։ 1970-ական թվականների սկզբներին հայերն ապրում են միայն Քյավալա ու Աբբասաբադ գյուղերում (ընդամենը 10 ընտանիք) և աշխատում Շահզադի շաքարի գործարանում[59]։

Ղարաղան — Ղարաղան գավառն ընկած է Համադան քաղաքի հյուսիսարևելյան և Ղազվինի հարավարևմտյան կողմում՝ վերջինից 40—50 կմ հեռավորության վրա։ Այժմ այն Ղազվինի շրջանի մի մասն է կազմում։ Ղարաղանը Սպահանից մինչև Համադան ընկած տարածքում հայաբնակ ամենավերջին գավառներից է։

Մինչև 1927 թ. գավառն ուներ 350 հայ տնտեսություն՝ 1750 շնչով[60]։ 1957 թ. տվյալներով Ղարաղանում կար շուրջ 1400 հայ[61], որոնք ապրում էին Ենկիղալա, Լաո, Ներքին Ջանախչի և Վերին Ջանախչի գյուղերում։

1962 թ. սեպտեմբերի 1-ին Ղարաղանում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով Ներքին Ջանախչին ամբողջությամբ ավերվեց, վնասվեցին նաև մյուս գյուղերը։ Ենկիղալայում զոհվեց 2, Վերին Ջանախչիում՝ 11, Ներքին Ջանախչիում՝ 32 մարդ[62]։

Պատերազմից հետո գավառի պարսկախառն գյուղերում ապրում էր 95—100 հայ ընտանիք, իսկ բնակչության ընդհանուր թիվը հասնում էր 500—550-ի։

1969 թ. հիշյալ չորս գյուղը միասին ունեին շուրջ 70

տնտեսություն (ենկիզալան՝ 5, Լաոը՝ 20, Ներքին Ջանախչին՝ 10, Վերին Ջանախչին՝ 50 ընտանիք)[63]։ Հետագայում գավառն աստիճանաբար դատարկվեց հայ բնակչությունից։ 1980 թ. բացի Լաոից, որտեղ երեք հայ ընտանիք էր բնակվում, մնացած գյուղերում հայեր չկային։

Բախթարան — Բախթարան գավառի վարչական կենտրոնն է։ Սահմանակից լինելով Իրաքին՝ հանդիսանում է առևտրական խոշոր կենտրոն, ուր 1980 թ. բնակվում էր 40 հայ[65]։

Մալայեր — Մալայեր գավառը գտնվում է Քյազազից հյուսիսարևմուտք՝ Համադանի հարավարևելյան մասում։ 1946 թ. ուներ միայն մեկ հայաբնակ գյուղ՝ Շավարինը, որի բնակիչները նույն տարում հայրենադարձվեցին Խորհրդային Հայաստան[66]։

Այսպիսով Իրանի կենտրոնական շրջանի հայ բնակչության թիվը հասնում էր մոտ 153100-ի, որից 780-ը բնակվում էր տարբեր գյուղերում։

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՇՐՋԱՆ

Հյուսիսային կամ Ատրպատականի շրջանը վարչական առումով բաժանվել է երկու օստանի (նահանգի)՝ Արևելյան Ատրպատական՝ Թավրիզ կենտրոնով և Արևմտյան Ատրպատական՝ Ուրմիա (Ռեզայիե) կենտրոնով։

Թավրիզ — Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Արևելյան Ատրպատականում հայերն ապրում էին Թավրիզում, որը Իրանի ամենահին և ամենանշանավոր քաղաքներից է։ Դեռևս հնագույն ժամանակներից այն եղել է Ատրպատականի առևտրական կենտրոնը։ Ատրպատականի բերքառատ գավառների, ինչպես նաև Իրանի մյուս նահանգների արտադրանքը արտահանվել է Թավրիզի միջով։ Այդ քաղաքում ապրող հայերի մասին հիշատակություններ կան դեռևս 13-րդ դարից։

Անցյալում Թավրիզի շրջակայքում գոյություն ունեցող հայաբնակ բազմաթիվ գյուղերից (մինչև Գյունե, Մարանդ

և նրանց շրջանում ընկած տարածքը) դարասկզբին պահպանվել էին երեքը՝ Սահլուրը, Ալչամուղքը և Մուժամբարը։ Իրանի սահմանադրական հեղափոխության նախօրյակին վերոհիշյալ առաջին երկու գյուղերը, իսկ 1946 թ. հայրենադարձությունից հետո նաև Մուժամբարը, դատարկվում են հայ բնակչությունից։

Դարասկզբին Թավրիզում և նրա շրջակա գյուղերում կար 6000 հայ բնակչով 948 տնտեսություն[67], իսկ 1922—1923 թթ. Թավրիզն ուներ 5500 հայ բնակիչ[68]։ 9 տարի անց Թավրիզում արդեն ապրում էր ավելի քան 6,5 հազար հայ[69]։ 50-ական թվականների վերջերին քաղաքի հայ բնակչության թիվը հասել էր 8000-ի[70]։ 70-ական թվականների վերջերին Թավրիզում բնակվում էր 10000 հայ[71]։ Քաղաքի հայ բնակչության աճը արդյունք է Ատրպատականի նահանգից, գավառներից և Արևմտյան Հայաստանից պարբերաբար Թավրիզ կատարվող գաղթի։

Ինչպես անցյալում, այնպես էլ այժմ հայերի մեծամասնությունը բնակվում է Թավրիզի Ղալա (Բերդաթաղ) և Էլլավա թաղամասերում։ Ղալան ավելի հին է. այստեղ 1872 թ. կառուցվել է ս. Աստվածածին եկեղեցին, որը հետագայում ենթարկվել է հիմնական վերանորոգման։ Եկեղեցու տարածքով անցնող նոր մայրուղի բացելու հետևանքով քանդվեց Առաջնորդարանի տպարանի շենքը։ Այդ պողոտայի վրա կառուցվեցին մի շարք վարձաբեր խանութներ, տպարանի նոր շենք և մի բնդարձակ սրահ, որը հատկացվեց նորաստեղծ Մելիք-Թանգյան թանգարանին։ Եկեղեցու բակում գտնվող նախկին Առաջնորդարանի և Արամյան դպրոցի կանգուն մնացած շենքը (կառուցված 1851—1852 թթ.) տարիներ առաջ քանդվեց և միացվեց բակին։ Նույն բախտին արժանացավ նաև 1916 թ. կառուցված «Արամյան» թատրոնի շենքը։

Վերջին տասնամյակում պարսիկները գնելով Թավրիզից հեռացող հայերի տները՝ բնակություն են հաստատել հայաբնակ Էլլավա թաղամասում։

Սալմաստ (Շահփուր) — Սալմաստը գտնվում է Ատրբ-

պատականի հյուսիսարևմտյան շրջանում, սահմանակից է Թուրքիային։

Գավառի Մահլամ, Խոսրովա, Ղալասար գյուղերում հայերն ապրում են ադրբեջանցիների՝ Մահլամում, Ղալասարում՝ քրդերի և Խոսրովայում՝ ասորիների հետ։

XX դ. 50-ական թվականների կեսերին Մահլամում կար 40—50, իսկ Խոսրովայում՝ հազիվ 10 հայ ընտանիք։ Դրեթե նույն պատկերն ուներ Ղալասարը[72], Բաֆֆու ծննդավայր Փայաջուկը եթե դարասկզբին ուներ 2000 բնակիչ (350 ընտանիք), ապա 1960 թ. այնտեղ ապրում էր ընդամենը 9 հայ ընտանիք, իսկ Շահփուրի (նախկին՝ Դիլիման) վարչական կենտրոնում՝ 25 հայ ընտանիք[73] (այլ տվյալներով՝ 15)[74]։

1946 թ. Սալմաստից բազմաթիվ հայեր հայրենադարձվեցին Խորհրդային Հայաստան, իսկ մի մասն էլ տեղափոխվեց Թավրիզ և Թեհրան։ Ներկայումս այդ գավառում ապրում է շուրջ 80 ընտանիք (Շահփուր քաղաքում, Հավթվան, Փայաջուկ և Մահլամ գյուղերում), պարսիկների և քրդերի հետ միասին։

Ուրմիա (նախկին՝ Ռեզայիե) — Հայերը հիմնականում կենտրոնացած էին քաղաքում և նրա շրջանի 22 գյուղերում (որոշ գյուղերում՝ ասորիների և պարսիկների հետ միասին), Սալմաստ քաղաքում և Հավթվան, Մահլամ, Փայաջուկ ու Խոսրովա գյուղերում (քրդերի և պարսիկների հետ միասին), Մարաղայում (քիչ թվով նաև Մահաբադում, Միանդոաբում և Թազիաբադում) և Ղարադաղի հինգ գյուղերում՝ Վինայում, Քարագլուխում, Հյուժում, Նորաշենում և Ջիագայում[75]։

Ուրմիայում և նրա շրջակայքում դարասկզբին կար 5600 հայ (1000 ընտանիք)[76]։ 1960-ական թվականների վերջերին Ուրմիա քաղաքում և նրա 22 գյուղերում ապրում էր շուրջ 4000 հայ[77] (որոշ գյուղերում՝ պարսիկների և ասորիների հետ միասին)։

Ղարադաղ — Գտնվում է Ատրպատականի հյուսիսային՝ Արաքսի ափամերձ մասում, անտառապատ է ու լեռնային։

Հնում հայաշատ այս պատմական գավառում XX դարի սկզբին կար ավելի քան 7000 հայ[78]։

1930 թ. Ղարադաղի 22 հայաբնակ գյուղերում (նախկին 29-ի փոխարեն) ապրում էր 505 հայ ընտանիք, 2792 հայերից 1506-ը արական, իսկ մնացածը իգական սեռի էին[79]։

1955 թ. Ղարադաղում մնացել էր 1200 հայ[80]։ Տարիների ընթացքում զանազան պատճառներով Ղարադաղի հայ բնակչությունն աստիճանաբար նվազել է։ 1970-ական թվականների վերջերին միայն հինգ գյուղում կային հայեր, որոնց թիվը հասնում էր 800-ի։ Մնացած գյուղերում բնակվող հայերը 1946 թ. հայրենադարձվել են Խորհրդային Հայաստան[81]։ Վ. Միրզայանի տվյալներով 1970 թ. հայաբնակ էին միայն Մնջուանի շրջանի Վինա և Քարագլուխ գյուղերը[82]։

Մարաղա — Հնում հայաշատ կենտրոն էր, սակայն վերջին տասնամյակներում տեղի հայ բնակչությունը ևս նվազել է։ Եթե դարի սկզբներին քաղաքն ուներ 600 հայ բնակիչ[83], ապա 1950-ական թվականների կեսերին մնացել էր 80 ընտանիք՝ 430 շնչով (մինչև 1946 թ. հայրենադարձությունը Մարաղայում կար 200 տնտեսություն)[84]։

Մարաղայի շրջանի մեջ մտնող Միանդոաբ և Մահաբադ (նախկին՝ Սոուջբուլաղ) քաղաքների, ինչպես նաև Միանդոաբի մոտ գտնվող Թազիաբադ հայաբնակ գյուղի հայերի թիվը խիստ նվազել է։ 1969 թ. այնտեղ կար ընդամենը 20 ընտանիք[85]։

Մակու — XX դարի սկզբին Մակուն ուներ շուրջ 240 հայ ընտանիք (1400 մարդ), որոնցից շատերը 1918 թ. գաղթեցին ուրիշ վայրեր։ Այժմ այստեղ ընդամենը մի քանի հայ կա։

Աբդաբիլ — Ռուսաստանին և Պարսկաստանին սահմանամերձ երբեմնի առևտրական կենտրոնն էր։ Դարասկզբին այստեղ ապրող մի քանի տասնյակի հասնող ունևոր հայ ընտանիքներից մնացել էր միայն մեկը։

Այսպիսով, Իրանի հյուսիսային շրջանում 1970-ական

Թվականների վերջերին բնակվում էր 17080 հայ, որոնցից 2580-ը՝ գյուղերում։

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՇՐՋԱՆ

Հարավային շրջանում ապրողների ճնշող մեծամասնությունը Արևելյան, իսկ մի մասն էլ Հայաստանից Պարսկաստան գերեվարված հայերի բեկորներն են։

Հարավային շրջանի հայաբնակ գլխավոր օջախներն են Նոր Ջուղայի, Փերիայի և Ջարմահալի շրջանի գյուղերը, ինչպես նաև Խուզիստանի, Ֆարսի գավառներում ու Բախտիարի գիներալ-նահանգապետությունում գտնվող Աբադան, Խորամշահր, Մասջեդ Սուլեյման, Ազաջարի, Ահվազ և Շիրազ քաղաքները։

Նոր Ջուղա (Նոր Ջուլֆա) — Հայերը հաստատվել են Նոր Ջուղայի հետևյալ ութ թաղերում՝ Մեծ Մեյդան, Փոքր Մեյդան, Ջարսու, Հակոբջան, Ղարագյոլ, Քոչեր (Սանգբրաշ), Դավրեժ (Մահալա՞) և Երևան։

Նոր Ջուղան ներկայումս համարվում է Սպահան քաղաքի 5-րդ թաղամասը։

XIX դ. 30-ական թվականներին Նոր Ջուղայում ապրում էր 4000 հայ[86]։ Հետպատերազմյան շրջանում հարակից հայաբնակ գավառների հաշվին Նոր Ջուղայի հայ բնակչության թիվը աստիճանաբար ավելանում է։ 1952 թ. այն ուներ 4675 հայ բնակիչ, 2394-ը՝ արական և 2281-ը՝ իգական սեռի[87]։ 1958 թ. Նոր Ջուղայի բնակչության թիվը հասավ 5000-ի, որը պահպանվեց ընդհուպ մինչև 1965 թ.[88]։ Ամիր Թահերիի տվյալների համաձայն 1969 թ. Նոր Ջուղայում բնակվում էր 8000 հայ[89]։ Իսկ «Մոնդ» թերթի տվյալներով 1979 թ. Նոր Ջուղան ուներ 10000 հայ բնակիչ[90]։

Քյարվանդ — Գտնվում է Սպահանից 90 կմ դեպի արևմուտք։ Հայերն այստեղ հաստատվել են շահ Աբասի ժամանակներից[91]։ Քյարվանդում մինչև XIX դարի կեսերը կար մեկ հայաբնակ գյուղ՝ Վերին Քրդերը։ Հետագայում հայերը հաստատվում են նաև Դովլաթաբադ գյուղում։

1946 թ. Դովլաթաբադի և Վերին Քրդերի ողջ հայ բնակ-

չությունը հայրենադարձվեց Խորհրդային Հայաստան։ Հայրենադարձության օրերին Դովլաթաբադն ուներ 101 ընտանիք՝ 721 անձով (365 տղամարդ, 356 կին)։ Չհայրենադարձվեցին միայն երկու ընտանիք, որոնք շուտով լքեցին գյուղը և հաստատվեցին Նոր Ջուղայում[92]։

Հայաբնակ Վերին Քրդեր գյուղը մինչև 1946 թ. ուներ 96 ընտանիք, որոնցից 95-ը հայրենադարձվեց Խորհրդային Հայաստան[93]։

Փերիա (Ֆարիդան-Ֆեռեյդան) — Սպահան նահանգի գավառներից և Իրանի հայաշատ շրջաններից էր։ Դարիս 40-ական թվականներին այն Իրանի ամենամեծ հայաբնակ գավառն էր, որը մինչև 1946 թ. հայրենադարձությունը ուներ 24 հայաբնակ գյուղ՝ շուրջ 16000 բնակչությամբ[94]։

Սպահանի նահանգը բացի Փերիայի գավառից ունեցել է հայաշատ այլ գավառներ, որոնցից մի քանիսը դեռևս վաղ ժամանակներից, որոշ մասն էլ վերջին տասնամյակներում, դադարել են հայաբնակ լինելուց։ Իրանի աշխարհագրական ու վարչական բաժանման հետևանքով գավառներից մի քանիսը անջատվել են Սպահանի նահանգից և միացել Արաքի շրջանին կամ դարձել անկախ։

Փերիան բաղկացած է Դարանի և Ախոռայի շրջաններից։ Միայն 17 գյուղում են հայեր բնակվում։ Փերիան բաժանված է երկու մասի՝ Վերին Փերիա և Ներքին Փերիա։ Ներկայիս հայաբնակ 17 գյուղերից Վերին Փերիայի մեջ են մտնում Բոլորան, Դաջան, Խոյգան, Խունդ, Հադան, Հազարջրիբ, Շահբուլաղ, Շուրիշկան, Սանգիբարան գյուղերը, որոնք 1952 թ. վիճակագրության համաձայն ունեին 12000 բնակիչ՝ 6500 արական և 5500 իգական սեռի[95]։

Ներքին Փերիայի մեջ են մտնում Դրախտակ, Ղալամելիք, Ղաբղուն, Միլակերտ, Նամակերտ, Ջիգան, Սնկերտ, Սվարան գյուղերը։

Ստորև բերում ենք այդ գյուղերի հայ բնակչության վերաբերյալ աղյուսակը, որի տվյալները վերցրել ենք Լ. Մինասյանի կազմած ընդարձակ վիճակագրությունից (տե՛ս աղյուսակ 3)։

Աղյուսակ 3

Փերիայի բնակչության վիճակագրական տվյալներ

Գյուղի անունը	1938				1946				1950			
	տուն	տղամ.	էգեմ.	շունչ	տուն	տղամ.	էգեմ.	շունչ	տուն	տղամ.	էգեմ.	շունչ
Բոլորան	163	506	504	1010	172	577	530	1107	171	609	553	1162
Դաջան*	40	111	100	211	44	121	114	235	10	36	26	62
Դրախտաձոր*	39	145	139	284	48	167	163	330	29	96	116	212
Վերին Խոյգան	215	795	769	1564	227	769	722	1491	230	672	692	1454
Խունդ	74	242	264	506	72	248	257	505	63	258	283	441
Հոգան	96	318	314	632	93	331	309	640	91	347	342	689
Հազարջրիր	112	403	411	814	136	457	474	931	134	423	412	835
Ղալամհիք	28	94	96	190	34	101	94	195	23	89	66	155
Ղարգուն	140	512	481	993	151	533	459	992	132	493	452	551
Միլակերտ	112	398	365	763	112	421	349	770	103	389	305	685
Նամակերտ	264	975	972	1947	270	912	897	1809	218	713	714	1427
Շահբուլաղ	40	138	138	276	42	170	165	335	46	162	162	324
Շուբիչկան	96	310	331	641	115	371	362	733	115	386	372	758
Զիդան*	28	98	78	176	28	125	70	195	32	138	93	231
Մանգիբաբան	243	896	814	1719	234	808	770	1578	228	791	720	1511
Մակերտ*	121	355	391	746	118	426	372	798	72	250	238	488
Սվարան	96	337	335	672	104	368	321	689	92	320	274	594
Ընդամենը	2081	7345	7137	13144	2010	6905	6428	13333	1789	6259	5720	11979

* Ադաղանիշով գյուղերը պարսկախոս են:

Բերված տվյալներից երևում է, որ 29 տարվա ընթացքում՝ 1938—1967 թթ., Փերիայի հայ գյուղացիության թիվը 29%-ով նվազել է՝ 14872-ից հասնելով 10288-ի:

Ջարմահալ գավառ — *Ջարմահալը Սպահանի շրջանի բարեբեր ու ջրառատ գավառներից է: Գտնվում է Սպահանից դեպի հարավարևմուտք, 144 կմ հեռավորության վրա: Փերիայից հետո եղել է Իրանի հայաշատ խոշոր գավառը:*

Առաջին համաշխարհային պատերազմը և հետպատերազմյան շրջանը ծանր անդրադարձան Ջարմահալի հայ բնակչության տնտեսական դրության վրա: Հատկապես 1918 թ. երաշտի ու համաճարակի հետևանքով գավառում մահացավ մոտ 400 մարդ[96]:

1956				1960				1965		1967	
տուն	տղամ.	էգեմ.	շունչ	տուն	տղամ.	էգեմ.	շունչ	տուն	շունչ	տուն	շունչ
164	599	519	1118	190	616	584	1200	194	1270	135	970
12	41	39	80	8	22	33	55	7	52	8	57
15	50	58	108	11	47	43	90	5	24	3	15
220	721	649	1370	191	641	693	1334	195	1400	172	1162
65	255	215	470	61	194	238	432	76	520	86	585
102	323	334	657	97	317	308	625	91	560	68	470
117	478	482	960	165	521	480	1001	172	1090	146	990
20	84	62	146	19	62	80	142	24	178	22	134
29	531	469	1000	113	401	490	891	136	1115	126	840
91	361	311	672	75	270	362	632	92	770	114	760
154	463	510	973	130	478	467	945	154	1093	145	980
35	128	124	252	35	107	117	224	61	495	34	210
104	338	318	356	89	284	346	630	105	815	110	750
26	115	98	213	25	94	109	203	41	352	43	250
221	708	684	1392	221	676	791	1447	228	1410	175	1170
73	232	223	455	70	220	231	451	94	560	51	345
87	316	302	618	84	299	341	640	102	751	92	600
1635	5743	5397	11140	1584	5229	5713	10942	1777	12365	1530	10288

Հայ գյուղացիությունն իր գոյությունը պահպանելու նպատակով մաս-մաս հեռանում էր գավառից: Մեծ թվով ընտանիքներ մեկնեցին հարավի նավթարդյունաբերական շրջաններըՙ մոտ 250 երիտասարդներ աշխատանքի անցան Բասրայի անգլիական ճամբարներում իբրև բանվոր: Սակայն նրանք չկարողացան համակերպվել Բասրայի շոգ եղանակին ու աշխատանքային ծանր պայմաններին և մոտ 60%-ը զոհվեց: Դրա հետևանքով Ջարմահալի հայ կանանցից 110-ը այրիացավ, իսկ 250 երեխաներ մնացին անհայր[97]:

1946 թ. հունվարի տվյալներով Ջարմահալի հայ ազգաբնակչության թիվը հասնում էր 2750-ի[98]:

1946 թ. օգոստոսին գավառի ինը գյուղերից վեցում՝

Վերին Քոնարքում, Յածի Քոնարքում, Լիվասյանում, Մամուռանում, Աղբուլաղում և Սինագանում ապրող հայերից 1276-ը հայրենադարձվեց[99]։

Հաջորդ տարիներին հայրենադարձության հետաձգման պատճառով գավառի հայերը արագ թափով սկսեցին տեղահան լինել և մեկնել քաղաքներ, հատկապես արդյունաբերական կենտրոնները՝ Աբադան, Մասջեդ Սուլեյման, Ահվազ, Աղաջարի և Բանդար-Մաշհուր, Թեհրան ու Նոր Ջուղա։

Ստորև բերում ենք երեք հայաբնակ գյուղի՝ Սիրաքի, Հաջիաբադի և Մամուքայի բնակչության կազմի վերաբերյալ Ա. Սարյանի վիճակագրական տվյալների հիման վրա կազմված աղյուսակը.

Աղյուսակ 4

Անվանում	1953		1960		1962		1965	
	տուն	շունչ	տուն	շունչ	տուն	շունչ	տուն	շունչ
Սիրաք	38	143	18	71	8	36	8	31
Հաջիաբադ	55	175	13	60	9	32	5	13
Մամուքա	75	375	39	156	26	103	11	42
Ընդամենը	168	693	70	287	43	171	24	86[100]

Գյուղացիներից շատերը ամռանը աշխատում էին գյուղերում, իսկ ձմռանը մեկնում քաղաք։

1967 թ. հուլիսի 27-ին Ջարմահալի հայությունը հայրենադարձվեց Խորհրդային Հայաստան։

Մասջեդ Սուլեյման — Լեռների մեջ գտնվող այս քաղաքում կենտրոնացված են նավթարդյունաբերությանն սպասարկող հաստատությունները։

Հայերը Մասջեդ Սուլեյմանում հաստատվել են դեռևս 1914 թ.։ Հիշյալ համայնքի բնակչության մեծամասնությունը գաղթել է Նոր Ջուղայի շրջանից[101]։ 1930 թ. տեղի հայ համայնքը ունեցել է 500, իսկ 1955 թ.՝ 2000 բնակիչ[102]։

Մասջեդ Սուլեյմանում 1968 թ. ապրել է 966 հայ, 1969 թ.՝ 646, 1970 թ.՝ 546, 1971 թ.՝ 530, 1972 թ.՝ 371, իսկ 1973 թ.՝ 294 հայ[103]։

Աղաջարի — Խուզիստանի ամենամեծ նավթարդյունաբերական կենտրոնն է, որի բնակչությունը շարունակ ավելանում էր Խուզիստանի այլ շրջաններից եկողների, այդ թվում նաև հայերի հաշվին։ 1950-ական թվականների վերջերին այստեղ բնակվում էր 1000 հայ[104]։

Աբադան — Իրանի նավթարդյունաբերության խոշորագույն կենտրոնն է։ 1922 թ. սկսած հայ բնակչության թիվն այստեղ աստիճանաբար ավելացել է Իրանի հայաբնակ շրջանների, հատկապես Նոր Ջուղայի, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի և Ատրպատականի փախստականների համար Իրաքի Նայր-օլ-Օմար վայրում անգլիացիների հիմնած գաղութի բնակչության հաշվին։

Աբադանում 1958 թ. բնակվում էր 4000—5000 հայ[105]։

Խորամշահր (նախկին՝ Մոհամարա) — Իրանի հարավի կարևոր նավահանգիստներից է։ Գտնվում է Աբադանից 14 կմ հեռավորության վրա։ Հայ բնակչության թիվը 1960 թ. այստեղ հասնում էր 200-ի[106]։

Ահվազ — Խուզիստան նահանգի վարչական կենտրոն Ահվազում հայերն սկսել են բնակվել XX դ. սկզբներից։ Քաղաքում կար շուրջ 700 հայ։ Նրանց կեսից ավելին նավթային բնկերության պաշտոնյաներ էին[107]։ 1980 թ. Ահվազում բնակվող հայերի թիվը հասնում էր շուրջ 2000-ի[108]։

Շիրազ — Շիրազի հայերը հիմնականում շահ Աբասի բռնագաղթած այն 3000 հայերի սերունդներն են, որոնց որպես «նվեր» շահը 1605 թ. հանձնել էր իր զորավարներից մեկին։ Այդ համայնքի հնության վկայությունն է 1662 թ. Շիրազում կառուցված հայ եկեղեցին։ Այն գտնվում է քաղաքի հին թաղերից մեկում, որը ժամանակին բնակեցված է եղել հազարից ավելի հայերով։ Այժմ այդ թաղում ոչ մի հայ չկա։ Շիրազում 1980 թ. բնակվում էր մոտ 250 հայ[109]։

Փոքր խմբերով հայեր են բնակվում նաև Բանդար-Մաշհուրում, Նավթ-Սեֆիդում և Խուզիստանի այլ վայրերում։

Սպահանից դեպի հյուսիս՝ մոտ 30 կմ հեռավորության վրա, վերջին տարիներին կառուցվել է Շահինշահր քաղաքը։

Դրա հիմնադրման առաջին իսկ օրերից, գլխավորապես Նոր Ջուղայից, մասամբ էլ Փերիայի գավառից և Թեհրանից շատ հայեր են տեղափոխվել և հաստատվել այստեղ[110]։

Շահինշահր նորաստեղծ հայկական համայնքը 1979 թ. ուներ շուրջ 350 հայ ընտանիք[111]։

Վերը շարադրվածից հետևում է, որ հարավային շրջանի հայ բնակչության ընդհանուր թիվը հետպատերազմյան շրջանում 21910 էր, որից 20910-ը բնակվում է քաղաքներում, իսկ 1000-ը՝ գյուղերում։

Այժմյան իրանահայերի մասին բազմաթիվ տեղեկություններ են արձանագրվել զանազան աղբյուրներում։ Ինչպես նշել ենք, Ս. Բրուքի տվյալներով Իրանում 1979 թ. բնակվում էր 260 հազար հայ[112], իսկ «Սորուշ» հանդեսի[113] և «Մոնդ» թերթի[114] տվյալներով այդ ժամանակ Իրանում բնակվող հայերի թիվը մոտ 200 հազար էր։ Ամիր Թահերին հայտնում է, որ 1969 թ. Իրանը ունեցել է 200 հազար հայ բնակչություն[115]։

Մեր ունեցած տվյալների համաձայն մինչև 1978—1979 թթ. հեղափոխությունը Իրանում բնակվում էր շուրջ 191730 հայ։ Որոշ աղբյուրներ երկրի հայ բնակչության թիվը հաշվում են մոտ 200 հազար։

Ելնելով մեր բերած տվյալներից, Իրանում մինչև 1979 թ. բնակվող 200 հազար հայերի 78,5 %-ը բնակվում էր երկրի կենտրոնական, 9%-ը՝ հյուսիսայինն, իսկ 12,5%-ը՝ հարավային շրջաններում։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում իրանահայ բնակչության ամենախոշոր տեղաշարժը 1946 թ. հայրենադարձությունն էր, որի ժամանակ 20700 մարդ վերադարձավ Խորհրդային Հայաստան և համայնքում մնաց մոտ 90 հազար հայ բնակչություն։

1960-ական թվականներից սկսած Մերձավոր Արևելքի երկրներից մեծ թվով հայեր են ներգաղթել Իրան[116]։

Ելնելով վերը բերված տվյալներից՝ 1941—1979 թթ. իրանահայ բնակչությունը ավելի քան կրկնապատկվել է,

որը և գրեթե հավասար է 1950—1978 թթ. ամբողջ երկրի բնակչության աճի 112 %-ին։

Գյուղական վայրերից և գավառական քաղաքներից դեպի երկրի կենտրոնական և արդյունաբերական քաղաքները հայերի տեղաշարժերի հետևանքով վիճակագրական տվյալները շարունակ տատանվում են։ Փոխվել է համայնքի քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը։ Եթե 1944—1945 թթ. շուրջ 110 հազար իրանահայերի մեծամասնությունը գյուղի բնակիչներ էին, ապա հետագայում 200 հազար իրանահայերից մոտ 190 հազարը բնակվում է քաղաքներում։ Տոկոսային արտահայտությամբ քաղաքային բնակչությունը կազմում էր 95, գյուղականը՝ 5 տոկոս։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ա. ՔԱՂԱՔԱԲՆԱԿ ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Իրանում բուրժուական հարաբերությունները սկսեցին զարգանալ դարիս 20-ական թվականներից սկսած, Ղաջարական դինաստիայի անկումից և Ռեզա շահի իշխանության գլուխ անցնելուց հետո, երբ երկրում հաստատվեց կալվածատիրական-բուրժուական դիկտատուրա։

Այդ շրջանում սահմանված օրենքները մեծ դեր խաղացին կապիտալիստական հասարակարգ թևակոխած պետության և բուրժուազիայի փոխհարաբերությունների կարգավորման գործում։

Ջեղյալ հայտարարվեցին սեննֆերի (գիլդիա) վերաբերյալ բոլոր հարկերը, ինչպես և 40-ից ավելի ֆեոդալական հարկեր[1], որոնք գանձվում էին մանր արտադրողներից, առևտրականներից, սպասարկման բնագավառի աշխատողներից։

Քաղաքներում բնակվող հասարակական միջին խավերից գանձվող ֆեոդալական հարկերի վերացման մասին օրենքը կենսական մեծ նշանակություն ունեցավ ինչպես պարսիկ, այնպես էլ հայ մանր ձեռնարկատերերի համար՝ նպաստելով երկրի տնտեսական և քաղաքական կյանքում նրանց դիրքերի ամրապնդմանը։

Քաղաքներում կապիտալիստական հարաբերությունների զարգացնելու նպատակով պետությունը XX դ. 20—30-ական թվականներին անցկացրեց մի շարք պրոտեկցիոնիստական

միջոցառումներ։ Այդ տարիներին սկսեց զարգանալ արդյունաբերությունը։ Հենց այս շրջանում էր, որ օրենքներում առաջին անգամ հիշատակվեցին այն արհեստավորների կատեգորիաները, որոնք իրենց աշխատանքի դիմաց ստանում էին միայն աշխատավարձ։ Դրանք կիսապրոլետարներն էին[2]։

Իրանահայերի գերակշռող մասը տնայնագործ արհեստավորներ էին, բանվորներ, ծառայողներ, մանր առևտրականներ ու ձեռնարկատերեր։ Համեմատաբար փոքր տոկոս էր կազմում արդյունաբերական ու առևտրական խոշոր բուրժուազիան։ Զգալի էր մտավորականների թիվը, որոնց մեջ կային դասախոսներ, բժիշկներ, իրավաբաններ, նկարիչներ, գրողներ, լրագրողներ և ուսուցիչներ։

Քանի որ Իրանի քաղաքային հայ բնակչության մեծերը խավերի տնտեսական դրության մասին պաշտոնական վիճակագրական տվյալներ չկան, և ուսումնասիրվող շրջանի քաղաքաբնակ հայերի սոցիալ-տնտեսական դրությունը հիմնականում համապատասխանել է երկրի բնիկ ժողովուրդների սոցիալ-տնտեսական վիճակին և գոյություն ունեցող դասակարգային շերտավորումներին, մենք նպատակահարմար ենք գտել քաղաքաբնակ հայերի սոցիալ-տնտեսական դրությունը քննել կոմպլեքսային ձևով՝ երկրի սոցիալ-քաղաքական կառուցվածքի ընդհանուր ֆոնի վրա։

Դարեր շարունակ ապրելով հայրենիքից դուրս, օտարության մեջ, ճաշակելով տարագիր հայերին վիճակված բոլոր զրկանքությունները՝ իրանահայերն ապրուստի նվազագույն միջոցներ հայթայթելու համար իրենց ընդունակությունների ու աշխատասիրության շնորհիվ աշխատում էին տնտեսության բոլոր ճյուղերում՝ իրրև հմուտ մասնագետներ։

Անժխտելի է հայ ժողովրդի մեծ ներդրումը Իրանի արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման, առևտրի ծավալման, գիտության, արվեստի, մշակութային կյանքի բարգավաճման գործում։

Ինչպես նշեցինք, պարսկահայ բնակչության մեջ զգալի թիվ էին կազմում արհեստավորները։ Ժամանակակից պար-

սիկ պատմաբան Էմայիլ Ռայինը իր «Հայ իրանցիներ» աշխատության մեջ թվարկում է 49 զանազան արհեստներ ու մասնագիտություններ, որոնք հայերը բերել էին իրենց բնաշխարհից և տարածել Սպահանում ու շրջակա գավառներում[3]։

Էմայիլ Ռայինը բարձր է գնահատում քաղաքաբնակ հայերի ներդրումը Իրանի բարգավաճման գործում։ Նա երկրի արդյունաբերության ծավալման, ինչպես նաև արվեստի տարածման մենաշնորհը վերապահում է հայերին։ «Համարձակորեն կարելի է ասել,— գրում է Ռայինը,— որ երկրում բնակվող մյուս փոքրամասնությունների և ազգությունների համեմատ աննախադեպ է հայերի ձգտումը և առաջադիմությունը ժամանակակից արդյունաբերության համար մասնագետների և արվեստի գործիչների պատրաստման գործում։ ...Օրինակ՝ երկրի տարբեր նահանգներում լավագույն ինժեներներ, հմուտ մեխանիկներ, ամենալավ արհեստավորներ, բանվորներ, ծանր արդյունաբերության մեջ և էներգետիկայի բնագավառում լավորակ մասնագետներ պետք է որոնել հայերի միջավայրում...»։ «Այսպիսով,—շարունակում է նա,—հայերը ոչ միայն իրենց աշխատանքով և ջանքերով, արվեստով ու արհեստով բարելավեցին իրենց կյանքը ժամանակակից քաղաքներում, այլև նրանց պետք է համարել Իրանում արհեստների, արվեստի և քաղաքակրթության հիմնական տարածողները։ Հակառակ ազգային մյուս փոքրամասնությունների, որոնք զբաղվում էին դյուրին ու եկամտաբեր (սակայն արտադրանք չտվող) գործերով, ինչպես, օրինակ, սարրաֆությունը, մակլերությունը, հողամասերի առուծախը, հնարժեք և այլ գործարքները, հայերը ձեռնամուխ էին եղել ստեղծագործական և շինարարական աշխատանքի։ Բնական է, որ նրանց արհեստների և արվեստի աշխատանքային ուղին արագությամբ հասարակության մեջ թողեց իր ազդեցությունը, և իրանցիները հետևելով նրանց՝ հակվեցին դեպի արդյունաբերությունն ու արհեստները, որոնց զարգացնողները հայերն էին»[4]։

Դոկտոր Բասթանը գրում է, որ հայերը «գիտության, հատկապես արհեստների բնագավառում իրենց ունեցած բ-

նածին հարուստ ընդունակությունը մեծ սիրով գործադրել և գործադրում են Իրանի գիտության և արդյունաբերության զարգացման համար»[5]։

Մեծ է եղել քաղաքային հայ բնակչության ներդրումը արդյունաբերության և սպասարկման բնագավառում նորությունների տարածման ուղղությամբ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին մայրաքաղաքում և ընդհանրապես երկրի հյուսիսային շրջաններում նորագույն պարենային ու հրուշակեղենի խանութների, հաշարանների, սրճարանների մեծ մասը պատկանում էր հայ ձեռնարկատերերին։ Հայ բնակչության մոտ 3%-ը կազմող խոշոր ձեռնարկատերերի մեծամասնությունը իր կապիտալները ներդրել էր մսամթերքների, ոգելից խմիչքների, գարեջրի, լիմոնադի և այլ ապրանքների արտադրության մեջ։

Ունևոր Թեհրանահայերն իրենց կապիտալները ներդրում էին նաև շինարարական նպատակների համար։ Թեհրանի հայերն ունեին կինոթատրոններ, թատրոններ, ավտովերանորոգման արհեստանոցներ, կենցաղսպասարկման տաղավարներ և այլն։

Կապիտալիզմի զարգացման ընթացքում խոշոր արդյունաբերությունը ավելի մեծ չափերով է իրեն ենթարկում մանր տնտեսությունները, որոնք գնալով ավելի են կորցնում իրենց «ինքնուրույնությունը»։

Մանր կապիտալիստական կացութաձևին է պատկանում Իրանի քաղաքային հայ բնակչության շուրջ 55%-ը։ Դա հարաբերականորեն մանր «ունևոր» դասակարգն է, որի ներկայացուցիչները դասվում են բանվորական ուժ վարձող կատեգորիայի մեջ, այսինքն, նրանք իրենց կապիտալի օգնությամբ զբաղվում են տնտեսական գործունեությամբ և միևնույն ժամանակ շահագործում մեկ կամ մի քանի վարձու բանվորների աշխատանքը[6]։

Քաղաքաբնակ այդ միջին խավին պատկանող ձեռնարկությունները հիմնականում տալիս են նոր տեսակի արտադրանք կամ Իրանի առևտրի մեջ ներդնում սպասարկ-

ման նոր ձևեր։ Այդ կատեգորիային են պատկանում նաև ոչ մեծ եկամուտներով ապրող մասնագետները՝ բժիշկներ, դեղագործներ, փաստաբաններ և այլն, որոնք, ի տարբերություն նույն կատեգորիային պատկանող արհեստավոր ձեռնարկատերերի, վարձու աշխատողներ չունեն։

Հետպատերազմյան շրջանում, հատկապես 1960-ական թվականներից հետո, Իրանի քաղաքներում գնալով ընդլայնվեցին մանր ձեռնարկատերերի գործունեության շրջանակները։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին երկրի արդյունաբերությունը որոշակի վերելք ապրեց։ Իրանական ապրանքների արտահանումը գաղութային և կախյալ երկրներ զգալիորեն սահմանափակվեց։ Դադարեց նաև արտասահմանյան երկրներից ապրանքների ներմուծումը։ Մյուս կողմից դաշնակիցների կողմից ռազմական և մանածագործական ապրանքների պատվերները խթանեցին ազգային արտադրության զարգացումը։ Բազմաթիվ պարսիկ և հայ գյուղացիներ հեռանալով գյուղերից՝ աշխատանքի էին անցնում դաշնակիցների ապրանքափոխադրիչ կամ այլ ձեռնարկություններում՝ վերածվելով վարձու բնակավորների։

Հայ հողազուրկ գյուղացիները աշխատանք որոնելու նպատակով հաստատվելով քաղաքներում ու արդյունաբերական կենտրոններում՝ մեծապես նպաստեցին հայ բանվորության աճին։ Աբադանի նավթարդյունաբերության մեջ 1950-ական թվականների վերջերին աշխատում էր մոտ 1200 հայ բանվոր[7]։

Քաղաքային հայ բնակչության մոտ 28%-ը 60—70-ական թվականներին աշխատում էր երկրի տարբեր արդյունաբերական կենտրոններում։

Իրանական կառավարության համաձայնությամբ ամերիկյան, անգլիական, հոլանդական և ֆրանսիական ընկերությունների կողմից համաշխարհային նավթային կոնսորցիումի ստեղծումը հանդիսացավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո իմպերիալիստական պետությունների առաջին խոշոր կոլեկտիվ գործարքը, որի նպատակն էր զար-

գացող երկրների բնական հարստությունների զավթումն ու գաղութային տիրապետության ամրապնդումը։

1978 թ. արդեն Իրանի տնտեսության մեջ գործում էր ավելի քան 500 ամերիկյան ձեռնարկություն՝ 700 միլիոն դոլար ընդհանուր կապիտալով[8]։

Եթե 1958 թ. Իրանում կային մոտ 120 ամերիկացի ռազմական մասնագետներ, ապա հետագա տարիներին այդ թիվը նշանակալիորեն աճեց։ Համաձայն ամերիկյան «Ուոլ սթրիթ ջորնալ» ամսագրի, 70-ական թվականների սկզբներին այն հասել էր 4600-ի[9]։

Մինչև ժամանակակից արդյունաբերության զարգացումը Իրանում աշխատանքային հարցերի կարգավորման, բանվորների աշխատաժամանակի և նրանց վարձատրման վերաբերյալ բնդհանրապես ոչ մի օրենք գոյություն չուներ։

Արդեն երկրորդ համաշխարհային պատերազմի և հետպատերազմյան տարիներին Իրանի բանվորների համառ պայքարի շնորհիվ սահմանվեց 8-ժամյա աշխատանքային օր, իսկ 1946—1949 թթ. պետությունը պարտավորվեց օրենք ընդունել աշխատանքային օրվա նորմավորման վերաբերյալ։ Սակայն իրանական կառավարության աշխատանքային օրենքները չէին տարածվում արդյունաբերական բոլոր ձեռնարկությունների վրա։ Օրինակ՝ 1947 թ. ընդունված վերոհիշյալ օրենքը տարածվեց միայն ֆաբրիկագործարանային բանվորների վրա, իսկ շինարարության մեջ աշխատող բանվորները, որոնց համար սահմանված էր 9-ժամյա աշխատանքային օր, չօգտվեցին դրանից։ Որոշ ձեռնարկություններում բանվորներն աշխատում էին 9—10 ժամ։ 1976 թ. Ռեշտի նորակառույց կանեփի գործարանում, որն ուներ մոտ 500 բանվոր, աշխատանքային օրվա տևողությունը 10 ժամ էր[10]։

Ավելի ծանր էր մասնավոր հատվածի տարբեր ձեռնարկություններում աշխատող հայ և պարսիկ վարձու բանվորների վիճակը, որոնց աշխատանքային օրվա տևողությունը հասնում էր 17—18 ժամվա, առանց հանգստյան օրվա և տոնական արձակուրդի։ Ինչպես «Քաղաքական տնտեսու-

թյուն» աշխատության հեղինակ Ֆ. Ջավանշիրն է հաղորդում, 1976 թ. դեկտեմբերին սննդերի աշխատանքի տևողության վերաբերյալ օրենքի նախագծի մեջ խոսվում էր սոսկ սպասարկման ոլորտի և խանութների աշխատանքային ժամերի մասին, մինչդեռ բանվորների աշխատաժամերի վերաբերյալ ոչինչ չկար, այն դեպքում, երբ որոշ սննդերի բանվորները, օրինակ՝ հացթուխները, աշխատանքը սովորաբար սկսում էին առավոտյան ժամը 4-ին կամ 5-ին և ավարտում երեկոյան ժամը 10-ին[11]։

Ա. Շամիդեն հաղորդում է, որ Իրանի տնայնագործական արհեստանոցներում աշխատանքի տևողությունը 12 ժամ էր[12]։ 1945 թ. «Հակաֆաշիստ» թերթը նշում է, որ Թաղիարադում բանվորները 12-ժամյա աշխատանքի համար ստանում էին օրական 20, իսկ կանայք՝ 10 ռիալ[13]։

1940 թ. Աբադանի և նրա շրջակայքի նավթազտիչ արդյունաբերության բանվորների աշխատավարձը օրական 40 ռիալ էր, որը 1946 թ. պետության կողմից հարավային շրջանների նավթարդյունաբերության բանվորների համար սահմանված աշխատավարձի նվազագույնն էր։ Իսկ նշված ժամանակաշրջանում (1946—1949) ապրանքների մանրածախ գների ինդեքսը բարձրացել էր 31%-ով[14]։

Իրանական բուրժուազիայի և ձեռնարկատերերի կողմից դաժան շահագործման էր ենթարկվում կանանց և երեխաների աշխատանքը։ 1962 թ. տվյալներով հավասար աշխատանքի պայմաններում կանայք սովորաբար ստանում էին տղամարդկանց աշխատավարձի 40—50 %-ը, իսկ երեխաները՝ 30 %-ից պակաս[15]։

1954/55—1961/62 թթ. Իրանում կենսաժեքը բարձրացել էր 42,5%-ով, բնակարանային վարձը՝ 70,4%-ով, պարենամթերքների միջին գինը՝ 36,7%-ով[16]։ Եթե 1945 թ. մսի մեկ կիլոգրամն արժեր 25 ռիալ, ապա 60-ական թվականներին միջին որակի մեկ կիլոգրամ միսն արժեր 80 ռիալ։ Հացի գինը բարձրացել էր 2—3 անգամ։ Միայն 1960—1963 թթ. ընկած ժամանակաշրջանում քաղաքային տրանսպորտի վարձը բարձրացել էր երկու անգամ[17]։

Փաստերը վկայում են, որ աշխատավոր ժողովուրդը զրկված էր գոյության ամենաանհրաժեշտ միջոցներից՝ աշխատանքից, սննդից, բնակարանից, բժշկական օգնությունից ու կրթությունից։ Բանվորն իր աշխատավարձի կեսը կամ 1/3 մասը հատկացնում էր բնակարանի վարձին։ Վարչակարգի գյուղատնտեսական քայքայիչ քաղաքականության հետևանքով շրջակա գյուղերից, հատկապես Փերիայի գավառից Նոր Ջուղա եկան և այնտեղ բնակություն հաստատեցին մեծ թվով ընչազուրկ հայ ընտանիքներ, որոնց մեծամասնությունը բնակարանի խիստ կարիք ուներ։ 7—8 անձից բաղկացած ընտանիքն ապրում էր մեկ սենյակում և ամառական ատանում չնչին եկամուտ[18]։

Պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն 1960-ական թվականների կեսերին Իրանում մեկ և կես միլիոն գործազուրկ կար[19]։

Իրանում գործազրկությունը չափազանց ծանր է անդրադարձել տարբեր զբաղմունքի տեր հայերի վրա։ Օրվա վաստակի համար նրանք պատահական աշխատանք էին կատարում՝ հաճախ փոխելով իրենց մասնագիտությունը։

Հազարավոր «ավելորդ» իրանցիների հեռացումը աշխատանքից, ինչպես նաև փոքրաթիվ բանվորների փոխարինումը երիտասարդ անփորձ կադրերով, Միջազգային նավթային կոնսորցիումին հնարավորություն տվեց բանվորների աշխատավարձի ֆոնդից մեծ գումարներ տնտեսել և այդ խնայողության հաշվին 60-ական թվականների կեսերին 5—10 ռիալով ավելացնել բանվորների աշխատավարձը[20]։

1967—1968 թթ. ծառայողների և արդյունաբերության բանվորների աշխատավարձի պատկերը հետևյալն էր.

(հազար ռիալով)

Աղյուսակ 5

Ձեռնարկություններ՝ ըստ աշխատողների թվի	Ոչ արտադրական ծառայողների ամսական միջին աշխատավ.	Արտադրության բանվորների ամսական միջին աշխատավարձը
10-ից ավելի աշխատողներ	10,2	4,2
50 աշխատողներ և ավելի	11,1	4,6
10-ից պակաս աշխատողներ	3,5	2,05[21]

Բերված աղյուսակի տվյալները ցույց են տալիս հիշյալ տարիներին արդյունաբերության մեջ աշխատող բանվորների աշխատավարձի մակարդակը։ Ցենզային այն ձեռնարկություններում, որոնք ունեին 10-ից ավելի աշխատողներ, յուրաքանչյուր ծառայող ապրուստի համար անհրաժեշտ միջոցների մոտավոր նվազագույն գումարից քիչ ավելի էր ստանում։ Արտադրական և ոչ արտադրական, մանր և միջին ձեռնարկությունների բանվորների աշխատավարձը անհամեմատ ավելի ցածր էր մինիմումից։ Նրանք ստանում էին աշխատավարձի 1/3—1/5 մասը։ Խոշոր ձեռնարկություններում ծառայողները 2,5 անգամ ավելի շատ էին ստանում, քան փոքր արտադրական կազմակերպությունների բանվորները։ Որքան մեծ էր ձեռնարկությունը, այնքան ավելի շատ էր աշխատավարձի տարբերությունը մանր արտադրողական բանվորների և ծառայողների միջև։

1965—1972 թթ. արդյունաբերական բանվորների աշխատավարձը կրկնապատկվեց։ Գների 18% ընդհանուր աճի դիմաց նրանց աշխատավարձը բարձրացավ 50%-ով[22]։

Պետությունը ձգտում էր հսկել աշխատավարձերի չափերը այն նկատառումով, որ պետական և մասնավոր ձեռնարկությունների վարձատրման միջև մեծ տարբերություն չլինի, որովհետև վերջիններս բարձր աշխատավարձով գրավում էին որակյալ աշխատողներին[23]։

1966 թ. հաստատված օրենքը վերաբերում էր մասնավոր սեկտորի (բանկերի, գործարանների, հիվանդանոցների, առևտրագրասենյակային, տրանսպորտի, դպրոցների և այլն) տասնյակ հազարավոր ծառայողներին, որոնց թվում էր իրանահայության ծառայողների մեծամասնությունը։ Սակայն մասնավոր սեկտորի ձեռնարկություններում աշխատողների հարաբերությունները կարգավորող օրենք գոյություն չուներ, չնայած նրանք էին երկրի ամենամեծ հարկատուները։ 1964—1965 թթ. այդ սեկտորի աշխատողներից գանձված ուղղակի հարկերը կազմել են մոտ 900 միլիոն ռիալ[24]։

1972 թ. կիսապաշտոնական «Քեյհան» թերթն իր էջերում պետեղել էր մասնավոր շատ ֆիրմաների և հիմնարկների ծառայողների բողոքները։ Ահա դրանցից մեկը. «Ես մասնավոր ձեռնարկության ծառայող եմ։ Յուրաքանչյուր ամիս պետությունն իմ ռոճիկի 10 տոկոսը գանձում է որպես նկամտահարկ, սակայն ես նյութապես ապահովված չեմ, վաղվա օրվա համար ոչ մի երաշխիք չունեմ։ Պետական հիմնարկություններում աշխատում են 7 ժամ։ Իսկ մենք պետք է աշխատենք ամբողջ օրը։ Մեր աշխատավարձը չի բավարարում ապրուստի համար»[25]։

Իրանում արդյունաբերության ու տեխնիկայի զարգացման պայմաններում հայ բանվորները, ելնելով իրենց սոցիալ-տնտեսական վիճակից՝ սահպված ձեռք բերեցին այնպիսի մասնագիտություններ, որոնք զարգացման արդի փուլում նպաստում են նրանց որակավորման բարձրացմանը։

Երկրում որակյալ կադրերի պատրաստման գործում մեծ դեր է խաղացել հայ բանվորությունը։ Ունենալով բարձր որակավորում՝ հայ վարպետներն իրենց աշխատանքային փորձն ու գիտելիքները փոխանցել են սկսնակներին։ Այդպիսի ուսուցման գերապատվությունը վերապահվում էր մասնավոր սեկտորին, սակայն լայնորեն կիրառվում էր նաև պետական ձեռնարկություններում։

Հետպատերազմյան շրջանում աճել է հայ մտավորականության, որը կազմում է համայնքի բնակչության շուրջ 10%-ը։

1930-ական թվականներից սկսած իրանական վարչակարգը, ելնելով իր ազգայնամոլ քաղաքականությունից, երկրի ազգային փոքրամասնություններին, հատկապես հայերի նկատմամբ կիրառեց որոշ սահմանափակումներ, որոնք ծանրը անդրադարձան հայ բնակչության սոցիալ-տնտեսական դրության վրա։ Նրանց չէին ընդունում պետական ծառայության և, ընդհանրապես, աշխատանք գտնելը կապվեց մեծ դժվարությունների հետ։ Դրա հետևանքով հիշյալ ժամանակաշրջանում և երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին քաղաքային հայ մտավորականները աշխատան-

րի էին ընդունվում տեղի արտասահմանյան ֆիրմաների և բնակարությունների մասնաճյուղերում։

Հայ մտավորականները սովորաբար ձեռք էին բերում, այսպես կոչված, «ազատ» մասնագիտություններ՝ գոնանալով բժիշկ, իրավաբան, ուսուցիչ, ինժեներ և այլն։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թեհրանի բժիշկների մեծ մասը հայեր էին։

1960-ական թվականներին՝ բարեփոխումների ժամանակաշրջանում, ազգային փոքրամասնությունների նկատմամբ պետության կիրառած սահմանափակումները որոշ չափով վերացան։ Պետական հիմնարկություններում աշխատանքի անցան մեծ թվով հայեր։ Բազմաթիվ հայ երիտասարդներ անձնական միջոցներով կամ պետության հաշվին Եվրոպայում և ԱՄՆ-ում մասնագիտական բարձրագույն կրթություն ստանալուց հետո վերադառնալով Իրան՝ մտնում էին պետական ծառայության[26]։ Քանի որ պետական ծառայությունը կրթություն ունեցողների համար խոստանում էր հասարակական որոշակի դիրք, ուստի քաղաքաբնակ հայ միջին խավը ամեն կերպ ձգտում էր դրան։ Պարսիկ հեղինակ Ղասեմին հայտնում է, որ բուրժուական միջին խավերի շրջանում տիրում էր այն կարծիքը, թե պետական բարձր պաշտոններ զբաղեցնելու համար անհրաժեշտ է ունենալ ֆինանսական միջոցներ կամ բարձրագույն կրթություն։ Եվ որովհետև մանր գործատերերը զրկված էին առաջինից, ուստի նրանց երեխաները ձգտում էին ձեռք բերել երկրորդը[27]։

Ըստ «Ով է նա» տեղեկատուի՝ 1960-ական թվականներին Իրանի բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդում էին 65 հայեր, առողջապահական հիմնարկներում աշխատում էր գիտական կոչում ունեցող 170 հայ բժիշկ։ Տոհոսային հարաբերությամբ շատ էին նաև արվեստի հայ գործիչները՝ դերասաններ և ռեժիսորներ, որոնց թիվը հասնում էր 53-ի[28]։ Բավական մեծ էր հայ պաշտոնյաների թիվը։ Սահմանադրության համաձայն Սենատի անդամներից մեկը և մեջլիսի դեպուտատներից երկուսը հայեր էին։ «Մոնդ» թերթի տվյալներով հայեր էին նաև մինիստրների տեղակալներից հինգը[29]։

Քաղաքային բնակչության բարձր և միջին խավի կրթված ծառայողները, որոնք մտավորականության մեծամասնությունն էին կազմում, հասարակական բարձր դիրք էին զբաղեցնում։ Որոշակի դիրքի հասած միջին խավի մտավորականները նոր ապրելակերպի պայմաններում հեշտությամբ էին փոխում իրենց հոգեբանությունն ու աշխարհայացքը։

Իշխող շրջանները բարյացակամ էին քաղաքաբնակ միջին խավի մտավորականների այն ներկայացուցիչների նկատմամբ, որոնք վարչակարգի հանդեպ առավել օրինապահ էին։

Կապիտալիզմի զարգացման հետևանքով կանայք արագորեն ներգրավվեցին հասարակական-տնտեսական աշխատանքի մեջ։ Նշված ժամանակաշրջանում զգալի թիվ էին կազմում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հիմնարկ-ձեռնարկություններում աշխատող միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեցող հայուհիները։

Վիճակագրական տվյալներ չլինելու պատճառով մենք օգտվել ենք քաղաքներում բնակվող ընտանիքների տարեկան եկամուտների մասին տվյալներից, որոնք հավասար չափով վերաբերում են նաև հայերին։

1966 թ. քաղաքաբնակ ընտանիքի տարեկան միջին եկամուտը 109,8 հազար ռիալ է (1438 դոլար)[30]։ Այդ գումարի մեջ էին մտնում բոլոր դրամական (ընդհանուր բյուջեի 75%-ը) և ոչ դրամական (ընդհանուր բյուջեի 25%-ը) եկամուտները։

Քաղաքաբնակ ընտանիքները կարելի է դասել երեք կարգի՝ սակավ (տարեկան մինչև 75 հազար ռիալ), միջակ (75 հազարից 150 հազար ռիալ) և բարձր (150 հազար ռիալից բարձր) եկամուտ ունեցողներ։

Այս պատկերն ավելի ցայտուն դարձնելու համար բերենք 1967/68 թթ. քաղաքաբնակ ընտանիքների դրամական եկամուտների չափերը (տե՛ս աղյուսակ 6)։

Ունևոր ընտանիքների պարենամթերքների ծախսը կազ-

մում է 27346 ռիալ, իսկ միջին կարգի ընտանիքներում այդ ծախսերը 6 անգամ ավելի քիչ են[32]։

Իրանում բանվորների և ծառայողների ապահովագրությունը փաստացի սկսել է գործել 1972 թվականից։ Սոցիալական ապահովագրության օրենքի համաձայն բանվորների և ծառայողների ապահովագրությունը կազմում է նրանց ամսական աշխատավարձի 18%-ը։ Այդ գումարի 5%-ը վճարում է ինքը՝ ծառայողը, իսկ 13%-ը՝ ձեռնարկատերը։

Աղյուսակ 6

Տարեկան եկամուտների չափը հազ. ռիալով	Քաղաքաբնակ ընտանիքի ընդհանուրը թիվը %-ով	Քաղաքային ընտանեկան եկամուտը ընդհանուրը %-ով
Մինչև 30	19,9	4,1
30 40	10,7	3,9
40—50	9,3	4,4
50—75	19,3	12,5
75—100	13,8	12,7
100—150	12,5	16,0
150 և բարձր	14,6	46,4[31]

Տղամարդկանց կենսաթոշակի անցնելու նվազագույն տարիքը 60 էր, իսկ կանանցը՝ 55։

Մասնավոր սեկտորի ծառայողների համար ծերության կենսաթոշակի չափը սահմանվում է նրա վերջին երկու տարվա ամսական միջին աշխատավարձի 1/40-ը բազմապատկած այն տարիներով, որոնց ընթացքում նա ապահովագրական մուծումներ է կատարել։ Բնականաբար, այդ գումարը ավելի քիչ է, քան պետական ծառայողների կենսաթոշակի չափերը։ 1972 թ. քաղաքապետարանի ծառայողների կենսաթոշակների վճարման օրենքի համաձայն կենսաթոշակի համար գանձվող գումարը կազմել է նրանց ամսական միջին աշխատավարձի 7%-ը[33]։

Ըստ պետական կենսաթոշակի մասին օրենքի՝ հայկական համայնքային կազմակերպությունների ծառայողները և հայերեն դասավանդող ուսուցիչները զրկված են կենսաթոշակից։ Հայ ուսուցիչների մի մասը, որն ունի երկարամյա մանկավարժական ստաժ, Առաջնորդարանից ստանում է որոշ նպաստ։

1971 թ. ծառայողների ամենացածր վարձատրվող խավը տարրական և միջնակարգ դպրոցների ուսուցիչներն էին։ Ծառայության սկզբում նրանց ամսական աշխատավարձը 344 հազար ռիալ է, 5 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում Թեհրանում ստանում են 5 հազար ռիալ, և միայն 20 տարվա աշխատանքային ստաժ ունեցողներն են ամսական ստանում 12 հազար ռիալ։

1972 թ. փետրվարին ապրուստի նվազագույնը կազմում էր 9,65 հազար ռիալ[34]։ «Թեհրան էկոնոմիստ» հանդեսի հաղորդման համաձայն միջնակարգ դպրոցների ուսուցիչները աշխատավարձի բարձրացումից հետո ամսական ստանում էին 9,4 հազար ռիալ, այսինքն, պաշտոնական մինիմումից 250 ռիալ պակաս[35]։

Հայկական դպրոցներում պետական ծրագրով նախատեսված առարկաների դասավանդման համար ուսուցիչներն իրենց աշխատավարձը ստանում էին պետությունից, իսկ ծրագրից դուրս առարկաներ (մայրենի լեզու և կրոն) դասավանդողները, որոնք կազմում էին հայկական դպրոցների ուսուցիչների ընդհանուր թվի 1/5-ը, պետության կողմից չէին վարձատրվում։ Նրանց վճարում էր Առաջնորդարանը։ Այդ գումարը հայթայթվում էր սովորողների ծնողներից որպես նվիրատվություն։ Օրինակ՝ 1951 թ. յուրաքանչյուր աշակերտի համար դպրոցը տարեկան գանձել է 850 ռիալ[36], իսկ հետագայում յուրաքանչյուր աշակերտի համար Առաջնորդարան է մուծվել 100-ից մինչև 7000 ռիալ[37]։ Գանձված այդ գումարները, սակայն, հազիվ էին բավարարում հայերեն դասավանդող ուսուցիչներին աշխատավարձ տալու համար։

Արտաքին պարտքերի աճը և վճարման հաշվեկշռի դեֆիցիտը, գործառման ակտիվության անկումը, բանվորների, գյուղացիության և մանրբուրժուական խավերի տնտեսական վիճակի վատթարացումը, գործազրկության և թերի զբաղվածության, անանկացման աճը, ինչպես նաև վարչական ապարատին բնորոշ բյուրոկրատիզմը, պետական ունեցվածքի թալանը, կորուպցիան և սոցիալ-տնտեսական բնույթի այլ սովերոտ երևույթները ազգային բուրժուազիայի և ժո-

դովրդի շրջանում դժգոհություն առաջացրին իշխող շրջանների քաղաքականության դեմ։

Բ. ԴՅՈՒՂԱԲՆԱԿ ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Արևելյան հողատիրության մասին Կ. Մարքսը գրել է. «Պետությունն այստեղ գերագույն հողատեր է։ Գերիշխանությունն այստեղ ազգային մասշտաբով համակենտրոնացված հողային սեփականությունն է։ Բայց այս դեպքում ոչ մի մասնավոր հողային սեփականություն չկա, թեև կա հողի ինչպես մասնավոր, այնպես էլ համայնական տիրում և օգտագործում»[38]։

Իրանում արտաքուստ չէր կարող մասնավոր հողատիրություն լինել, քանի որ շարիաթի համաձայն հողը պատկանում էր շահին, որին էլ իրավունք էր վերապահվում այն վարձով տալ և դրա դիմաց սահման համապատասխան հարկ։ Սակայն այդ բոլորը մնում էր շարիաթի սահմաններում, իսկ իրականում դրությունը միանգամայն այլ էր։

XIX դ. վերջին քառորդում, ապրանքադրամական հարաբերությունների զարգացման հետևանքով հողագործության մեջ կապիտալի ներդրումը դառնում էր շահավետ, որի հետևանքով հողային գնումները մեծ ծավալ են ստանում։

Կենտրոնական իշխանության թուլության պատճառով նահանգներում իշխանությունն աստիճանաբար անցնում էր տեղական ղեկավար պաշտոնյաներին ու հողի խոշոր վարձակալներին։ Նրանք, փաստորեն, չենթարկվելով կենտրոնական կառավարությանը՝ զավթում էին իրենց տրամադրության տակ գտնվող հողերը և դառնում ժառանգական կալվածատեր։

Մասնավոր հողատիրության զարգացումը և խոշոր կալվածատիրության առեղծումը իր հետ բերեց հողատիրության մի նոր ձև, այսպես կոչված, մուլքադարային (կամ արբաբի) հողատիրություն, որը մեծապես տարբերվում էր հողատիրության նախկին ձևերից։ Նոր կազմավորված հողատիրության ձևն իր ոլորտը ներգրավեց երկրի ողջ ֆեոդալա-

ազնվականական դասակարգը, որը ձգտում էր հողային սեփականություն ձեռք բերել։ Իրանում մուլքադարության ձևավավորումը զարկ տվեց կոմպրադորական բուրժուազիայի առաջացմանը, որը միջնորդ հանդիսացավ մուլքադարների և գյուղատնտեսական արտադրանքը սպառող կապիտալիստական երկրների միջև։

Կառավարության ագրարային քաղաքականությունը կոչված էր ծառայելու նոր հողատերերին, որոնց թիվը Ռեզա շահի իշխանության առաջին տարիներին վարչակարգի հակառակորդ ֆեոդալական արիստոկրատային ու քոչվոր ցեղերի խաներին պատկանող կալվածքների բռնագրավման և նոր վարչակարգի հենարան հանդիսացող սպաներին, պետական պաշտոնյաներին, վաճառականներին ու կալվածատերերին հողեր բաշխելու հետևանքով զգալիորեն ավելացել էր։ Ռեզա շահի ագրարային օրենսդրությամբ հողի նկատմամբ մասնավոր սեփականության ավատական իրավունքները փոխարինվեցին բուրժուազիային վերապահող իրավունքով՝ միաժամանակ ամրապնդելով գյուղացիության հարաբատահարման ֆեոդալական ձևերը։ Բազմիցս տեղի ունեցող գյուղացիական հուզումներին մասնակցողները խոշտանգվում էին[39]։

Իրանահայ բուրժուազիան և առանձին անհատներ ևս մինչև առաջին համաշխարհային պատերազմը հսկայական հողային տարածություններ էին ձեռք բերել[40]։ Ղարադաղի շրջանում, «Թումանյան եղբայրներ» առևտրական տան կողմից գնվեցին մեծ հողատարածություններ։ Նրանց էին պատկանում այդ շրջանի 28 գյուղերը[41]։ Միշափարա գավառից Մելիք Ղարագյոզը հիմնել էր մի նոր գյուղ՝ Մեքիդի անունով։ Ատրպատականի առաջնորդարանին էին պատկանում Ջիազա, Ներքին Հյուժ (Նորաշեն) և Վերին Հյուժ գյուղերը[42], որոնք գրանցվել էին որպես վակֆային հողեր[43]։

Թավրիզի Արամյան դպրոցի միջոցներով գնվեցին այդ գավառի գյուղերից երեքը, որոնց տարեկան հասույթը հատկացվում էր այդ դպրոցին[44]։ Ավելանում էր Փերիայում նոր Ջուղայի ազգապատկան կալվածքների թիվը. «Թումանյան»

առևտրական տան ներկայացուցիչների միջնորդությամբ գնվեցին գավառի երեք մեծ, զուտ հայաբնակ Բոլորան, Խոյգան ու Սանգիբարան գյուղերը և վաճառվեցին հայ գյուղացիներին։ Նոր Ջուղայի վանքի և առանձին անհատների կողմից Փերիայում գնվեցին մեծ քանակությամբ կալվածքներ՝ Ղարղուն, Միլակերտ, Նամակերտ, Չիգան և Սվարան գյուղերը։

Հայրենադարձության կապակցությամբ Փերիայի շրջանում մնացած 16 գյուղերից 9-ի հողատարածություններն անցան Նոր Ջուղայի հայկական եկեղեցիներին, դպրոցներին ու մյուս կազմակերպություններին։ Փերիայի շրջանում դրբանց արժեքը կազմում էր Նոր Ջուղայի եկեղեցիներին և այլ հիմնարկներին պատկանող բոլոր հողատարածությունների արժեքի գրեթե 1/3-ը[45]։

1963 թ. Իրանում անցկացված ագրարային ռեֆորմը տարածվեց նաև մզկիթապատկան (վակֆային) հողատարածությունների վրա։ Դրանք վաճառվեցին գյուղացիներին։ Օրինակ՝ Փերիայի գավառի զուտ հայաբնակ Բոլորան գյուղը ավելի քան 15 տարի ամբողջությամբ պատկանում էր Նոր Ջուղայի ազգային դպրոցների հոգաբարձությանը։ Շահի ագրարային ռեֆորմից հետո նրա կալվածքները վաճառվեցին գյուղացիներին[46]։

Տարիներ առաջ վակֆային գույքի վարչությունը՝ «Օզաֆը», իր իրավասության տակ էր առել Ատրպատականի նախկին հայաբնակ լքյալ ազգային ու եկեղեցական կալվածքների հովանավորման գործը։ Ատրպատականի թեմական խորհրդին հաջողվեց 1966 թ. մարտ ամսի պաշտոնագրով Արևմտյան Ատրպատականի նախկին բոլոր հայկական լքյալ գյուղերի իրավական տերը ճանաչվել, այն պայմանով, որ Առաջնորդարանն ընդունի «օզաֆի» հսկողությունը այդ կալվածքների նյութական գործունեության վրա։ Այս որոշման հետևանքով թեմական խորհրդին հաջողվեց հետ ստանալ իշխանությունների կողմից բռնագրավված Խոյ, Մակուի, Նաղադեի, Սալմաստի (Շահփուր), Սոհլուրի, ինչպես նաև այլ շրջանների լքյալ եկեղեցիների կալվածքները։

Քննվող ժամանակաշրջանում Ատրպատականի վարձակալվածքներն էին՝

1. Ստեփաննոս Նախավկայի վանքի գյուղի վարելահողերն ու արոտավայրերը, որոնք տարեկան շուրջ 40.000 ռիալի եկամուտ էին բերում Թավրիզի Առաջնորդարանին։

2. Ղարադաղի Հյուժ, Նորաշեն և Ջիադա գյուղերը, որոնց բնակիչները 1946 թ. հայրենադարձվեցին Խորհրդային Հայաստան, իսկ այդ գյուղերը տարեկան 17.000 ռիալ վարձագնով տրվեցին այդտեղ բնակվող պարսիկ գյուղացիներին։

3. Նախկին «Աղքատախնամ բնակարության» շենքը, որը վերածվեց ավտոմեքենաների հավաքակայանի։ Եկամուտը տարեկան կազմում էր 6000 ռիալ և այլն[47]։

Երկրի առանձին նահանգներն ու շրջաններն ունեին իրենց ընդունած օրենքն ու կարգը, որոնք փոփոխության էին ենթարկվում նահանգապետի, խաների ու կալվածատերերի հայեցողությամբ։ Խոշոր կալվածատիրությունը գոյատևեց մինչև XX դ. 60-ական թվականները, չնայած այն բանին, որ երկրում տեղի էին ունեցել հսկայական սոցիալ-քաղաքական բնույթի փոփոխություններ։

Իրանում մշակվող հողերի 56%-ը պատկանում էր կալվածատերերին, որոնք կազմում էին գյուղական բնակչության 1%-ը։ Խոշոր հողային սեփականատերերի 10,2%-ը գյուղական բնտանիքներ էին, որոնցից յուրաքանչյուրն ուներ ավելի քան 100 հեկտար տարածություն, նրանց ձեռքում էր գտնվում մշակվող հողերի 33,8%[48]։ Ենթադրվում է, որ իրանական ցեղերին էր պատկանում մշակվող հողամասերի մոտ 13 %-ը, սակայն այդ հողամասերը միայն ձևականորեն էին համարվում հանրային սեփականություն, քանի որ իրականում գտնվում էին ցեղապետերի ու խաների տրամադրության տակ[49]։

Ինչպես Շ. Բադին է նշում, եթե դրանց գումարվեն նաև կալվածատիրական հողատարածությունները, ապա կատարվի, որ ամբողջ մշակվող հողերի 70%-ը պատկանում է ֆեոդալակալվածատիրական դասակարգին։ Իսկ Իրանի 14 մի-

լիոն գյուղացիների մշակվող հողերի բաժինը կազմում էր միայն 10—12%[50]։

Մինչև 1946 թ. իրանահայ բնակչության ճնշող մեծամասնությունը գյուղացիությունն էր, որի մեծ հատվածը պատմական ճակատագրի բերումով բնակություն էր հաստատել իրանական այն գավառներում, որտեղ քոչվոր ցեղերը մեծ թիվ էին կազմում։ Արդիական կյանքին անհաղորդ այդ լեռնաբնակ ցեղերը մշտապես հսկողության տակ էին պահում իրենց բնակության գոտում գտնվող Ջարմահալ, Փերիա, Բուրվարի, Գյափլա և ուրիշ հայաբնակ ստվար շրջանները, նրանց ենթարկելով անընդմեջ ասպատակություններ և ավարառության։

Իրանական, ինչպես նաև հայկական գյուղերում քեդխոդաներին կամ քալանթարներին (գյուղի ավագը) նշանակում էին կալվածատերերը։

Նրանք հանդիսանում էին կալվածատիրոջ ամենավըստահելի անձինք։ Քեդխոդայից պահանջվում էր հյու հնազանդություն և հավատարիմ ծառայություն։ Հանդիսանալով գյուղի ավագը՝ քեդխոդաները կարևոր դեր էին խաղում հարկերի հավաքման ու գանձման ժամանակ։ Իրենք էլ հողատերեր էին և զբաղվում էին հողագործությամբ։

Քեդխոդան կալվածատերերից աշխատավարձ էր ստանում դրամական վարձատրությամբ և բնամթերքով։ Նրան էր հասնում նաև գյուղացու ստացած բերքի մի մասը։ Բացի այդ, նա հաճախակի անվճար օգտագործում էր գյուղացու աշխատանքը։

Երբեմն աշխատավարձի փոխարեն քեդխոդան կալվածատիրոջից ստանում էր որևէ հողամաս, որից ստացված կալվածատիրոջ բաժինը իրեն էր վերցնում։ Սովորաբար այդ հողամասերը մշակում էին գյուղացիները՝ իբրև աշխատանքային պարհակ[51]։ «Ազգաբնակչությունը չունենալով քաղաքացիական հաստատուն օրենսդրություն՝ շարունակ ենթարկվում էր կալվածատերերի, քեդխոդաների և խաների կամայականություններին»[52],— գրում է Ա. Երեմյանը։

1960-ական թվականներից գյուղը սկսեց կառավարվել գյուղական խորհրդի (անջոմանե դեհ) և գյուղապետի (քեթխոդայի) միջոցով։ Գոյություն ուներ նաև եկեղեցական վարչություն, որը վերահսկում էր ազգային խնդիրներին[53]։

Իրանի բոլոր, այդ թվում նաև հայաբնակ գյուղերում, տիրում էր պարտապանության ստրկական ու վաշխառուական վիճակը։ Բնակչության ճնշող մեծամասնությունը կազմված էր չքավոր ու միջակ գյուղացիներից։ Հասարակության մի բևեռում կենտրոնացել էին ունևորները, որոնք սակավահող և հողազուրկ համագյուղացիներին շահագործելու միջոցով վարում էին տնտեսությունը. մյուս կողմում գյուղատնտեսության մեջ աշխատող ընչազուրկ բանվորներն ու բատրակներն էին։ Իրանահայերը, որպես ազգային փոքրամասնություն, զուրկ էին սեփականության հիմնական միջոցներից, ենթարկվում էին կալվածատիրական և խանական կամայականություններին։

Իրանահայ գյուղացիությունը բավական խայտաբղետ էր։ Հողազուրկ վարձկանները կազմում էին գյուղացիության մեծ մասը, սակայն նրանք միմյանցից տարբերվում էին ինչպես իրենց ունեցած արտադրամիջոցներով (գյուղատնտեսական գործիքներ և բանող անասուններ), այնպես էլ վարձով վերցրած հողամասերի չափերով։

Իրանի հայկական գյուղերում գոյություն ունեցող դասակարգային շերտավորումը հետևյալ պատկերն ուներ. 1) ենթավարձակալներ (մշակներ), 2) վարձակալներ, 3) միջակ և, վերջապես, 4) ունևոր գյուղացիներ։ Գոյություն ունեին նաև՝ 5) խոշնեշինները, որոնք հողագործությամբ չէին զբաղվում (դարբիններ, հյուսներ, ջրաղացպաններ և այլն) այլն)։

1) Առաջին շերտի մեջ էին մտնում ընչազուրկ գյուղացիները, որոնք վարձով աշխատում էին տիրոջ մոտ։ Աշխատանքի վարձատրման չափը որոշվում էր երկուսի փոխադարձ համաձայնությամբ։

2) Գյուղական մյուս խավը գյուղացի վարձակալներն էին։ Նրանք Ջարմահալ, Քյազազ, Քյամարա, Ղարաղան և Ռեզայիի շրջանների համեմատ ավելի շատ էին Փերիայում։

Ինչպես Լ. Մինասյանն է նշում, հակառակ Քյարվանդ, Ջարմահալ, Բուրվարի և այլ հայաբնակ գավառների, Փերիայի գյուղերից քչերն էին պատկանում խոշոր կալվածատերերին։ Այստեղի գյուղերի մեծ մասում տիրում էր մանր կալվածատիրական սեփականությունը և գյուղացիները համեմատաբար զերծ էին խոշոր կալվածատերերի ճնշումներից[54]։

3) Խորդեմալեք (մանր հողատեր) գյուղացիները, որոնք չունեին հող, բանող անասուններ և գյուղատնտեսական գործիքներ, պարտավոր էին կալվածատիրոջից վերցնել այդ բոլորը և փոխարենը նրան տալ բերքի 75—85%-ը։ Լծկան անասունների սակավության պատճառով (սովորաբար երկու եզ) գյուղացիները չէին կարող մեծ հողատարածություն վարձել։ Նրանք սովորաբար կարողանում էին մշակել մեկ ջուֆթ[55] հողակտոր։

Կալվածատերերին ենթակա այդ երկրագործները որպես աշխատանքի վարձատրություն գոյացած բերքից ստանում էին իրենց համար սահմանված բաժինը, մնացածը մնում էր հողատիրոջը։ Սակայն պետք է նկատել, որ միջակ գյուղացու ապրուստի հիմնական միջոցը անասնապահությունն էր, որի եկամուտներով նա պահում էր իր ընտանիքը։

Ապրանքադրամական և կապիտալիստական հարաբերությունների զարգացման, և, հատկապես, օտարերկրյա կապիտալի ներթափանցման հետևանքով միջակ գյուղացիությունը հետզհետե քայքայվում էր՝ վերածվելով չքավոր գյուղացիության։

4) Գյուղի կուլակային դասակարգը կազմված էր ունեվոր հողատերերից, որոնք ունեին իրենց անասուններն ու գյուղատնտեսական գործիքները։ Նրանք կալվածատեր-խաների հետ միասին գրեթե ամբողջությամբ իրենց ձեռքն էին վերցրել հայաբնակ գյուղերի ցանքատարածությունները։ Կուլակները միաժամանակ զբաղվում էին գյուղացու արտադրանքի գնումով, վաշխառությամբ և առևտրով։

Իրանահայ գյուղացիության մեջ ունևորներն աննշան տոկոս էին կազմում և, հիմնականում, հանդիպում էին միայն Փերիայի շրջանում։ Ա. Լամբթոնը սեփականատեր

գյուղացիների մասին հետևյալ միտքն է հայտնում, որը շատ բնորոշ է նաև հայ հողատերերի համար. «Մեծամասնություն կազմող գյուղերում,— գրում է նա,— որտեղ գոյություն ունի գյուղացիական հողային սեփականություն, սովորաբար կան մեկ-երկու ընտանիքներ, որոնք տիրում են ավելի մեծ հողատարածության, քան մյուսները, և մշակում են վարձու աշխատանքի օգտագործման միջոցով։ Հողային սեփականատերերի այդ կատեգորիան հիշեցնում է խոշոր հողատերերին, սակայն նրանց սոցիալական, քաղաքական և տնտեսական վիճակը զգալիորեն տարբերվում է խոշոր հողային սեփականատերերի վիճակից, նրանք չունեն ոչ այն ուժը, ոչ այն ազդեցությունը, ինչ խոշոր հողատերերը։ Հենց այդ պատճառով նրանք մոտ են մանր գյուղացիական սեփականատերերի կատեգորիային»[56]։

5) Խոշնեչինները, ինչպես նշեցինք վերը, այն գյուղացիներն են, որոնք հող չունեն և չեն վարձակալում. դրանք են՝ գյուղական արհեստավորները, գառնարածը, հանդապահը, հովիվը, նախրապանը և գյուղի խանութպանը։ Նրանցից շատերն ունեն փոքրիկ այգի, կով, ոչխար և այլն։

Հայ գյուղացիության ունեցվածքային անհավասարության մասին բավական հարուստ փաստեր կան։ 1938 թ. Փերիայի գավառն ուներ 16101 բնակիչ, այդ թվում 168 արհեստավոր, 723 չքավոր։ Իսկ արդեն 1950 թ. գավառն ուներ 11979 բնակիչ, այդ թվում՝ 259 ունևոր, 692 միջակ, 838 չքավոր[57]։

Իրանի Ջարմահալ գավառի պատմության հեղինակ Ավ. Եղպարյանը նույնպես բավական հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում այդ շրջանի բնակչության սոցիալական խավերի և նրանց ունեցվածքային անհավասարության մասին, նշելով, որ հայաբնակ Մամուքա, Հաջիաբադ և Սիրաք գյուղերի բնակչությունը 1949 թ. ուներ 187 տուն, որոնցից 81-ը չքավոր էր, 67-ը՝ միջակ և 39-ը՝ բարեկեցիկ։ Այդ երեք գյուղերը միասին ունեին 1818 այծ ու ոչխար, 135 եզ, 124 կով, 164 գրաստ, 9 ձի և 102 մեղվի փեթակ[58]։ «Հարուստ գյուղա-

ցին ունի 50—60 ոչխար,— գրում է Ավ. Եդգարյանը,—1—2 ձի, երկու զույգ եզ, 3—4 կով, 5—6 էշ, 8—10 հավ, 2—3 ջրիր[59] այգի, 2—3 հաբբա[60] վարելահող, 300—400 ծառ, 6—7 գորգ, 10—12 լիտր[61] պղնձեղեն, տարեկան 250—300 լիտր ցորենի շահ (տոկոս), 200—250 թուման տոկոս, հողագործության գործիքներ և չնչին զարդեղեն: Իսկ աղքատը,— շեշտում է նա,— երկու կտոր փալաս կամ թաղիք և մի քանի մերկ երեխաներ, որոնց պահում է ամբողջ տարին կիսաբաց գրության մեջ»[62]:

Այսպիսով, գյուղական բնակչության վերաբերյալ վերը նշված տվյալները ցույց են տալիս, որ հայկական գյուղերի բնակչության գերակշռող մասը աղքատ գյուղացիությունն էր: Որոշ շրջաններում նրանց թիվը գերազանցում էր միջակ և ունևոր բնակչության ընդհանուր թվին:

Որոշ աղբյուրների համաձայն գյուղական բանվորի վարձատրությունը կատարվում էր բնամթերքով:

Գարնան սկզբին քալանթարի կամ քեղխոդայի գլխավորությամբ գյուղի ծերերը հավաքվում էին և որոշում յուրաքանչյուր բանվորի տարեկան ստանալիք վարձը: Նրան տրվում էր պայմանաթուղթ՝ սարխաթ, որը ենթակա էր բեկման կամ մասնակի փոփոխության:

Հայ ընչազուրկ վարձկան մշակի տնտեսական ծանր վիճակը ցույց տալու նպատակով բերենք աղբյուրներում արձանագրված վարձատրման չափերը (տե՛ս աղյուսակ 7):

Ջարմահալում հանդապահը յուրաքանչյուր հաբբա ցանքամշակությունից ստանում էր մեկ լիտր ցորեն և մեկ լիտր գարի, հովիվը յուրաքանչյուր ոչխարի համար՝ 3/4 լիտր ցորեն և նույնքան էլ գարի, նախրապանը յուրաքանչյուր եզան ու կովի համար ստանում էր երկու լիտր ցորեն ու նույնքան էլ գարի, բաղնիսպանը մի անձի համար՝ մեկ լիտր ցորեն, մեկ լիտր գարի: Իսկ բանվորը գարնան և աշնան եղանակներին ստանում էր օրական մեկ, ամռանը՝ երկու լիտր ցորեն: Այգեպանի վարձատրությունը կապված էր այգիների տարածքի հետ: Երկաթագործի տուրքը տրվում էր հողատիրոջ կողմից[63]:

Լ. Մինասյանը բավական հետաքրքիր տեղեկություններ է տալիս տարբեր տարիներին գյուղատնտեսական ապրանքների արժեքների և դրանց համապատասխան՝ գյուղական բանվորի օրավարձի մասին, որոնցից ստորև բերում ենք մեզ հետաքրքրող տարիներին վերաբերող թվական տվյալները[64]:

Աղյուսակ 7

Ապրանքների անունը	1942 թ.	1946 թ.	1956 թ.
Ցորենի բեռը[65]	25 ռուբլի	600 ռուբլի	600 ռուբլի
Գարու բեռը	125 „	350 „	300 „
Հարդի բեռը[66]	60 „	200 „	120 „
Ճաքարի լիտրը*	26 „	300 „	180 „
Ցուղի լիտրը	25 „	600 „	80 „
Ոչխարի մսի լիտրը	90 „	300 „	400 „
Կովի մսի լիտրը	60 „	180 „	240 „
Բանվորի օրավարձը	10 „	60 „	70 „

Այդ տվյալներից երևում է, որ 1942 թ. համեմատությամբ 1956 թ. ցորենը թանկացել է 24 անգամ, յուղը՝ 32, իսկ շաքարը՝ 7, այն դեպքում, երբ այդ ընթացքում գյուղական բանվորի օրավարձը աճել է միայն 6 անգամ:

Այսպիսով, գյուղական բանվորի տնտեսական վիճակը գնալով վատանում էր: Իրանահայ գյուղացիությունը հիմնականում զբաղվում էր հողագործությամբ և անասնապահությամբ, մասամբ էլ, ելնելով բնակլիմայական պայմաններից, այգեգործությամբ, խաղողագործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և այլն:

Փերիայի չոր հայաբնակ գյուղերի բնակչությունը մշակում էր ցորեն, գարի, հաճար և, հատկապես, կարտոֆիլ, ինչպես նաև զբաղվում խաղողագործությամբ:

Մինչև վերջերս հայաբնակ գյուղերի կենցաղում համարյա ոչ մի նկատելի բարեփոխում տեղի չէր ունեցել: Գյուղերը զրկված էին բժշկական անմիջական օգնությունից, չունեին ապահով ճանապարհներ: 1970-ական թվականների վերջերին Փերիայի միայն հայաբնակ Բոլորան գյուղը բաց ացավ էլեկտրաարտադրիչ մեքենա[67]:

Փերիայի, Քյամարայի, Քյազազի, Բուրվարի, Ջարմա-

հալի հայ գյուղացիությունը առավելապես զբաղվում էր անասնապահությամբ։ Այն գյուղատնտեսության ամենակարևոր ճյուղերից էր։ Շատ գյուղերում այն ապրուստի հիմնական միջոց էր։ Անասուններին արածացնելու համար գոյություն ուներ «հասատաված կարգի» իրավունքը, որի համաձայն արոտն ազատ էր բոլվորական ցեղերին պատկանող արոտավայրերում[68]։

Դաշտային և լեռնային արոտավայրերն իրենց հարուստ բուսականությամբ անասնապահության զարգացման լայն հնարավորություններ են տալիս։ Սակայն հայերը հարևան պարսիկ գյուղացիների համեմատությամբ ավելի քիչ էին ոչխար, կով ու այծ պահում, քանի որ մշտապես գտնվում էին կողոպտվելու վտանգի տակ։

Հայաբնակ գյուղերի բոլոր շրջաններում հողը մշակվում էր պարզունակ ձևով. այն ակոսվում էր նահապետական գութանով, բերքահավաքը կատարվում էր ձեռքով՝ մանգաղի և գերանդու օգնությամբ։

Գյուղատնտեսության մեջ գոյություն ուներ աշխատանքի բաժանում՝ ըստ տարիքային տարբերության։ Հողագործությամբ առավելապես զբաղվում էին տղամարդիկ, իսկ կանանց աշխատանքը սահմանափակվում էր միայն կալատեղիներում ցորեն մաքրելով։

Դեռևս գաղթականության վաղ շրջանից հայ գյուղերում տարածված էր գորգագործությունը։ Չնայած ժամանակի ընթացքում պարսկական գորգագործությունն իր ազդեցությունն է թողել հայկական գորգագործության վրա, սակայն նրա ազգային հիմնական ոճը չի փոխվել։ Հայ կանանց ու աղջիկների հյուսած գորգերի ինքնատիպության ու որակի շնորհիվ դրանք բարձր են գնահատվում տեղական շուկայում։ Իրրև գորգագործական արհեստի բարձր գնահատական՝ տեղացիները և առհասարակ գորգի առևտրով զբաղվողները հայկական գորգերին տվել են «Արմանի բաֆ» (հայկական գործվածք) բարձր որակումը։

Հայ գյուղական ընտանիքներում ապրուստի միջոց հայթայթելու նպատակով գեղջկուհիները յոթ-ութ տարեկանից

սկսած տնային առօրյա գործերից հետո նստում էին գորգագործական դազգահի առջև ու աշխատում[69]։

Հետպատերազմյան շրջանում Իրանում գոյություն ունեին հողային սեփականության հետևյալ ձևերը. ամլաքե արբաբի (խոշոր և միջին կալվածատերերին պատկանող հողեր), ամլաքե խորդեմալեքի (մանր հողատերերի կալվածքներ), ամլաքե խալիսե (պետությանը պատկանող հողեր), ամլաքե վակֆի (մզկիթապատկան և այլ նվիրատվական հողեր)։ Բացի այս չորս հիմնական ձևերից առկա է նաև վաշկատուն ցեղերին պատկանող ամլաքե իլյաթին, որը կարելի է դասել խոշոր կալվածատիրական հողերի շարքը և, վերջապես, այդ ժամանակաշրջանում աննշան տարածություն կազմող ամլաքե ռամռամին, որը հին համայնական հողատիրության ձև էր[70]։

Պետական եկամուտների գլխավոր աղբյուրը հողային հարկն էր։ «Մալիաթի», այսինքն՝ սահմանված կամ կանոնավոր հարկի բնամթերքով գանձվող մասը կոչվում էր «ջինս», կանխիկ դրամով գանձվողը՝ «նադդ»։ Երբեմն հարկի մի մասը գանձվում էր բնամթերքով, իսկ մյուս մասը՝ դրամով։ Կային նաև բազմաթիվ անկանոն հարկեր։

Կալվածատերերն իրենց պատկանող վարելահողերը վարձով էին տալիս ենթավարձակալներին կամ գյուղացիներին։ Հարկերը գանձվում էին մերթ հողատիրոջից, մերթ հողը մշակողից։ Դա կապված էր տեղի սովորությունների և ընդունված կարգի հետ, իսկ հաճախ էլ պայմանավորված էր կալվածատիրոջ կամքով և շահագրգռվածությամբ[71]։

Հողի վարձակալման պայմանների հիմքում ընկած էին գյուղատնտեսության բաղկացուցիչ հինգ տարրերը՝ հողը, ջուրը, սերմացուն, քարշուժը և աշխատուժը։ Այս տարրերի պատկանելությունից էին բխում բերքի բաշխման չափերը։ Հարկ է նշել, որ հողօգտագործման եղանակները երկրի տարբեր շրջաններում այլ էին։ Գյուղացին մուլքադարին տալիս էր բերքի 1/3-ը, եթե հողից բացի մնացած անհրաժեշտ բոլոր տարրերն իր սեփականն էին։ Իսկ եթե կալվածատերը գյուղացուն տալիս էր նաև սերմացու, քարշուժ և գյուղա-

անտեսական գործիքներ, ապա նա սառնում էր բերքի 85%-ը[72]։

Գյուղացիներին վարձով տրված հողերը չափվում էին երկու վարելահողի կամ ջրի բաժնի չափով։ Վարելահողի չափը երկրի տարբեր վայրերում փոփոխական էր, սակայն հիմնականում հիմք էր ընդունվում ջուֆթը։

Վարելահողերի բաժինները որոշելիս բացի հողային տաբաժանությունից հաշվի էր առնվում նաև հողի բերքատվության աստիճանը։ Գյուղացու կողմից մշակվող հողի քանակը միջին հաշվով լինում էր 1—4 կամ 5 ջուֆթ։ Հինգ ջուֆթ մշակող գյուղացին համարվում էր բարեկեցիկ։ Ընդհանուր առմամբ գյուղացիների վարելահողերի մեծ մասը 1—3 ջուֆթ էր[73]։

Գյուղացիները կալվածատիրոջից հողը վարձակալում էին սահմանված կամ չսահմանված ժամկետով, առանց որևէ գրավոր փաստաթղթերի։ Գյուղացու վարձակալական իրավունքն ապահովված չէր։ Կալվածատերը կամ ենթավարձակալը վարձակալ գյուղացուն ցանկացած ժամանակ կարող էին վտարել[74]։

Մյուսը բաշխման դանգային[75] ձևն էր, երբ հիմք էր ընդունվում գյուղից վեց դանգը, ըստ որում յուրաքանչյուր դանգը բաժանվում էր 16 հարթաչի։ Այդ դանգերի կամ հարթաների որոշ մասը կարող էր պատկանել որևէ կալվածատիրոջ, որը, բնականաբար, ստանում էր համապատասխան բերքաբաժինը[76]։

Վարձու տրվող ոռոգվող հողերի բերքը ավելի շատ մասերի էր բաժանվում, քան անջրդի հողերինը[77]։

Հաշվումները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական արտադրության բոլոր միջոցների՝ հողի, ջրի, սերմացուի և քարշուժի սեփականատերը ստանում էր բերքի 4/5-ը, իսկ բանուժի տերը՝ գյուղացին, միայն բերքի 1/5-ը։

Փերիա, Չարմահալ, Քյարվանդ, Բուրվարի և այլ հայաբնակ գավառներում տարածված էին հողամասերի վարձակալման սեքու, չարքու, փանջքու և որոշ փոփոխված ձևերը։

Սեքուն վարձակալման այն ձևն էր, երբ հողատարածությունը ջրովի էր և մշակվում էր վարձակալին պատկանող երկրագործական միջոցներով (սերմացու, քարշուժ, գյուղատնտեսական գործիքներ)։ Բերքի երեք բաժնից երկուսը պատկանում էր գյուղացուն, մեկը՝ հողատիրոջը։

Որոշ վայրերում այդ ձևը որոշակի փոփոխության էր ենթարկվում և կոչվում էր «սեքու վարունե» (հակադարձ սեքու)։ Այս դեպքում սերմը տալիս էր հողատերը, որի փոխարեն ստանում էր բերքի 2/3-ը։ Որոշ տեղերում 2,5 բաժինը հասնում էր վարձակալին, մեկը՝ հողատիրոջը, որը կոչվում էր սե-օ-նիմ (երեք ու կես), իսկ այն դեպքում, երբ բերքի երեք բաժինը հասնում էր գյուղացուն, իսկ 2-ը՝ հողատիրոջը, կոչվում էր փանջ-օ-դո (հինգ ու երկու)։ Այն դեպքում, երբ հողատերը տրամադրում էր սերմացուն և գյուղատնտեսական բոլոր միջոցները, նրան էր պատկանում բերքի 3/4 մասը, հողագործին՝ 1/4-ը[78], որը կոչվում էր չարքու։ Ա. Սարյանը հետևյալ ձևով է ներկայացնում չարքու վարձակալման ձևը. «Բաջղի կամ անջրդի հողերից ստացած բերքի չորս բաժնից երեքը հասնում էր գյուղացուն, մեկը՝ հողատիրոջը»[79]։ Շատ գյուղերում հողատերը վերցնում էր նաև հավելյալ մեկ լիտր, որը կոչվում էր փոշթե-սանգ։ Փանջքուն սովորաբար վերաբերում էր անջրդի գյուղերին։ Հողը վարում էր հողագործը և բերքի հինգից մեկը կամ «դահդո»-ն (տասից երկուսը) տալիս հողատիրոջը[80]։ Ըստ Ա. Սարյանի, դարասկզբին չարմահալցիները հողատիրոջը տալիս էին ստացված բերքի 1/3-ը, իսկ որոշ տեղերում՝ 1/4-ը[81]։

Ա. Սարյանը կալվածատիրական հողերի հարկատվության վերաբերյալ բերում է Չարմահալի հայաբնակ երկու փոքր գյուղերի՝ Սինագանի և Մամուռանի օրինակը։ Նրա վկայությամբ 1927 թ. Սինագանը 160 բնակչությամբ 38 տնտեսություն ուներ։ Հարկատվությունը սահմանված էր չարքու, սադիսե և փոշթե-սանգ ձևով։ Գյուղը հողատիրոջը տալիս էր տարեկան 6000 լիտր ցորեն ու գարի, 72 բեռ վառելիք, 72 հավ, 144 բեռ հարդ, իսկ անասունների համար

սահմանված տուրքը կազմում էր 400 դրան։ Մամուռանն ուներ 40 տնտեսություն՝ 216 շնչով։ Գյուղը կալվածատիրոջը տալիս էր տարեկան 6000—7000 լիտր հացահատիկ, յուրաքանչյուր հաբբայից՝ 80 լիտր հարդ, 80 լիտր չոր խոտ։ Գյուղի հարկատվության ձևը չարքուն էր։ Կալվածատիրոջն ըստ պահանջի տրվում էին բանվորներ, ինչպես նաև հավելյալ եկամուտ՝ շավդառ ու հավկիթ[82]։

Միանդոաբի շրջանի պետական գյուղերի (խալիսեջաթ) թիվը հասնում էր 12-ի, որոնց բնակիչները բերքի 1/3-ը իբրև հարկ տալիս էին պետությանը՝ հացահատիկի փոխարեն[83]։

Հայաբնակ Մամուքա գյուղի ցանքատարածությունը վեց դանգ էր՝ 72 հաբբա, որի ջրովի տարածքից ստացված բերքի երկու բաժինը պատկանում էր հողագործին, մեկը՝ կառավարությանը, իսկ անջրդի հողերի բերքի 1/4-ը տրվում էր կալվածատիրոջը[84]։

Ա. Աբրահամյանը իրանահայ գյուղերի մասին գրում է. «Հողը և տները բոլոր գյուղերում պատկանում են կալվածատիրոջը, բացառությամբ 4—5 գյուղի, որտեղ տունը պատկանում է գյուղացուն և, ի հարկի, կարող է ծախել։ Կալվածատերը գյուղացուց ստանում է հարկ 2—5 թումանի յուրաքանչյուր զույգ եզ ունեցողից և ջրովի բերքի մեկ երրորդը, իսկ անջրդի բերքի՝ մեկ հինգերորդ մասը»[85]։

Հարկահան պաշտոնյաները, ինչպես վկայում է «Իրանի գյուղտնտեսության պատմություն» գրքի հեղինակ Թաղի Բահրամին, որևէ գավառ կամ նահանգ մեկնելուց առաջ նախապես վճարում էին սահմանված չափի գումար, այնուհետև հարկերը կարող էին հավաքել իրենց ցանկացած ձևով։ Գյուղացուց վերցնում էին, ինչքան կարող էին[86]։ Օրինակ՝ Զարմահալ գավառի հարկահանման գործը, որտեղ հայաբնակ գյուղերի թիվը շատ էր, կապալով տրվել էր բախտիարների խանին՝ տարեկան 20000 թումանի դիմաց[87]։

Զարադաղի հայաբնակ գավառի կալվածատիրական հողերում աշխատող գյուղացիները արհեստական ոռոգման կա-

րիք չունեցող հողերից կալվածատիրոջը վճարում էին ավելի պակաս բերքաբաժին։

Գյուղացիները պարտավոր էին հարկ վճարել նաև անասունների, ծառերի ու այգիների համար։ Այդ հարկը նույնպես ուներ տարբեր ձևեր ու չափեր՝ նայած տեղում ընդունված կարգին։ Բոլոր գյուղերի անասունները ամեն տարի գարնանը հաշվվում էին։ Յուրաքանչյուր կովի համար տարեկան գանձվում էր 10, ոչխարի ու այծի համար՝ 5-ական, ձիու համար՝ 10 ռիալ։ Եզան և էշի համար հարկ չէր պահանջվում սոսկ այն պատճառով, որ դրանք համարվում էին վար ու ցանքի համար անհրաժեշտ բանող կենդանիներ[88]։

Իրանի որոշ շրջաններում անասնահարկը գանձվում էր բնամթերքով (հալած յուղով), իսկ Համադանի շրջանի գյուղերում յուրաքանչյուր անասունի դիմաց գանձվում էր 10—20 ռիալ[89]։

Զարմահալ գավառի Մամուքա գյուղը վերջին շրջանում յուրաքանչյուր կովի և մատակի համար վճարել է 6-ական ռիալ, իսկ ոչխարի համար՝ 3 ռիալ[90]։

Աղբյուրներում նշված է, որ այգիների հարկերի չափերը նույնպես տարբեր էին։ Բ. Բիշոփն անդրադարձել է նաև Ատրպատականում բնակվող ազգային փոքրամասնությունների՝ հայերի և ասորիների սոցիալ-տնտեսական վիճակին։ Նա նշում է, որ Ուրմիայի շրջանի գյուղերում հիմնականում զբաղվում էին խաղողագործությամբ։ Հողը վարձելու համար հարկ էին տալիս։ Եթե խաղողի այգին վարձով էր տրվում մեկ տարով, ապա յուրաքանչյուր թանաբից գանձվում էր 10—12 դրան[91]։ Ա. Սարյանի տվյալներով այգիների յուրաքանչյուր ջրիբի դիմաց գանձվում էր 100 ռիալ, իսկ ծառերի 1/3-ը պատկանում էր կալվածատերերին[92]։

Այգու և անտառի համար Միանդոաբի շրջանի գյուղերը յուրաքանչյուր 3 հեկտարի համար տարեկան վճարում էին 55 ռիալ։

Ատրպատականի Թաղիաբադ գյուղում բնակվում էր 700 հայ, որոնք, երկրագործությունից բացի, զբաղվում էին նաև

այգեգործությամբ։ Խոշոր այգիների տարածքը հասնում էր 150 հեկտարի։ Ամեն տարի այգու և անտառի յուրաքանչյուր 3 հեկտարի համար որպես հարկ պետությանն էր վճարվում 55 ռիալ։ Այն տնտեսություններից, որոնք միայն այգեգործությամբ էին զբաղվում, 3 հեկտարի համար գանձվում էր 231 ռիալ ու 90 դինար[93]։

Ջրաղացը նույնպես ուներ իր տուրքը. ստացված արդյունքի 1/6-ը բաժին էր հասնում կալվածատիրոջը[94]։

Իրանում գոյություն ուներ նաև գլխահարկ։ Գլխահարկի տարածված չափը հավասար էր 3—5 ռիալի։ Օրինակ՝ Սիրաք գյուղի խոշնեշիններից գանձվում էր 3 ռիալ[95] գլխահարկ։ Իսկ Ավ. Եղգարյանի հաղորդած տվյալներով գլխահարկը գանձվում էր 5 ռիալի չափով[96]։ Ատրպատականում 1945 թ. յուրաքանչյուր գյուղացուց գանձվում էր 10 ռիալ գլխահարկ[97]։

Բերված տվյալները ցույց են տալիս, որ գլխահարկը նույնպես երկրի զանազան շրջաններում տարբեր չափեր է ունեցել։ Նոր Ջուղայի գավառում միայն խոշնեշիններն են գլխահարկ տվել, իսկ Ատրպատականում գլխահարկ է գանձվել յուրաքանչյուր գյուղացուց, այն էլ կրկնակի չափով։

Կալվածատերերը, իրենց հասանելիքից բացի, բազմաթիվ ուրիշ տուրքեր էին պարտադրում գյուղացիներին։ Իրանի նահանգներում ու շրջաններում գոյություն ունեին պարհակների տարբեր ձևեր։ Պարսիկ, հայ և օտարերկրյա հեղինակները բազմաթիվ տվյալներ են հաղորդում գյուղացիներին պարտադրվող զանազան, երբեմն տարօրինակ ու զավեշտական տուրքերի մասին։

Գյուղացիներին պարտադրվող տուրք-հարկից էր «դասթանգազը» կամ «ավարեզը»։ Դրա էությունն այն էր, որ գյուղի յուրաքանչյուր ընտանիք պարտավոր էր սննդամթերք մատակարարել կալվածատիրոջը։

Իրանական Ադրբեջանը Իրանի գյուղատնտեսական գլխավոր նահանգն է, որտեղ բնակվում էին մեծ թվով հայ հողագործներ։

Բացի պետական հարկերից և բերքից կալվածատիրոջ

բաժինը տալուց Ատրպատականի որոշ շրջանների գյուղացիները պարտավոր էին յուրաքանչյուր ծխից տալ երեք հավ, երկու բեռ վառելափայտ, հինգ բեռ քակոր, երեք ֆունտ յուղ, երեք ֆունտ ոչխարի պանիր, 50 կոպեկից մինչև մեկ ռուբլի դրամ, երկու բեռ հարդ, տասը կապ խոտ, հինգ ձու, 1—3 բեռ միրգ։ Յուրաքանչյուր ծուխ պարտավոր էր նաև տարեկան 3 օր բեգարությունն անել[98]։

Մինչև 1945 թ. Իրանական Ադրբեջանում ժամանակավոր դեմոկրատական կարգերի հաստատումը կալվածատերերի և խանների կամայականությունները մասսայական բնույթ էին կրում։ Կալվածատերերը չէին բավարարվում պարտքերի և պարհակների ընդունված ձևերով։ Նրանք գյուղացիներից պահանջում էին ոչ թե հավ, այլ ոչխար և կով։ Ինչպես 1945 թ. հոկտեմբերին «Հակաֆաշիստ» թերթն էր գրում, «Ոչ մի չափ ու հաշիվ չկա գյուղացիներից գանձվող հարկերի մեջ։ Մի տեղ ու մի շրջանում գյուղացին վճարում է 3-ից մեկ, մի ուրիշ տեղ և նույն շրջանում՝ 4-ից մեկ և 4,5-ից մեկ։ Բացի այդ, վճարում են (դոշակ փուլի), կատարում են ձրի աշխատանքներ և բեռնակրություն»։ Թերթը, այնուհետև հայտնում էր, որ Ղարադաղում սկսված վայրագությունների մասին այդ շրջանի բնակիչները դիմել են տեղական կազմակերպություններին և խնդրել նրանց միջամտությունը։ «Մի քանի հայկական գյուղերի գյուղացիները պատրաստվել են գաղթել։ Ղուլուլի գյուղացիներն իրենց տները թողնելով՝ գնացել են Արաքսի ափերը, մյուս կողմ անցնելու համար»[99]։

Գյուղացիներից անօրինական տուրքերի, պարհակների, «բեդաթների» գանձման մասին 1945 թ. «Հակաֆաշիստ» թերթը գրում էր. «Չնայած համաձայն նեքին գործող մինիստրության տարիներ առաջ կայացրած որոշման և Արևելյան Ադրբեջանի նահանգապետության եղած հրահանգի, որով միանգամայն արգելվել է «բեդաթ» կոչվող անօրինական տուրքերի գանձումը, այդուհանդերձ, որոշ գյուղատերեր ուղում են ուժի և խոշտանգումների միջոցով միջնա-

դարյան անօրինական տուրքերը գյուղացիներից առնելով՝ նրանց մինչև իսկ հացի կարոտ թողնել»[100]։

Գյուղացու նկատմամբ դաժան վերաբերմունքի ու նրա շահագործման լավագույն ապացույց է միջնադարյան կոռ ու բեգարային աշխատանքի պահպանումն իրանական գյուղերում։ Բեգարը լայն տարածում ուներ գրեթե ամբողջ Իրանում։ Գյուղացին պարտավոր էր անհատույց հողի ոռոգման աշխատանքներ կատարել, կալվածատիրոջ կարգադրությամբ մասնակցել ճանապարհների և տարբեր շինությունների կառուցմանը, անտառ հատել, փայտ կոտրել և դրանք տեղափոխել հողատիրոջ տնտեսություն։ Այդ կարգի համաձայն 16—50 տարեկան բոլոր տղամարդիկ պարտավոր էին տարեկան մի քանի օր աշխատել ճանապարհների վրա։ Չաշխատելու դեպքում նրանք ստիպված էին որոշակի կանխիկ գումար մուծել՝ իրենց փոխարեն աշխատողներ վարձելու համար։ Ավելի մոտ վայրերում պետք է աշխատեին 5-ական, իսկ հեռու տեղերում՝ 4-ական օր[101]։

Բեգարային աշխատանքների վերաբերյալ ահա թե ինչ է գրում Ավ. Եղդարյանը. «Անպակաս է եղել նույնպես արքաբերների (կալվածատերերի—Հ. Փ.) բեգարը. ինչ բանի կարիք որ ունեցել է գյուղատերը՝ պահանջել է գյուղացիներից, զանազան մարդիկ հուքումաթի անունը շահագործելով՝ կեզեքել են գյուղացիներին»[102]։

Ըստ «Ռահբար» թերթի տվյալների, յուրաքանչյուր գյուղական ընտանիք պարտավոր էր երեք բեռ փայտ կոտրել, մեկ բեռ խոտ հավաքել, երեք կգ բամբակ և բուրդ մանել, կալվածատիրոջ տանիքի ձյունը մաքրել և այլն[103]։

Կալվածատեր-գյուղատերերը սովորաբար հայաբնակ գյուղերի բնակիչներից բեգարային աշխատանքներ էին պահանջում կիրակի օրը, որը հայերի հանգստյան օրն էր։ Հարյուրավոր մարդիկ ձրիաբար աշխատում էին խանի համար՝ ոչգի բրում, հունձ անում և այլն[104]։

Ահմադաբադ հայաբնակ գյուղի յուրաքանչյուր տարի ավելի քան քսան հողագործ 20 օր կալվածատիրոջ համար բեգարային աշխատանք էր կատարում[105]։

Կալվածատերերը գյուղացիներին հաճախակի օգտագործում էին նաև այն գործերում, որոնք պայմանագրով իրենք պետք է կատարեին պետության համար։ Օրինակ, անցյալներում ֆեոդալը կարող էր համայնքներին կարգադրել ճանապարհներ կառուցել, և նրանք անվճար կատարում էին այդ կարգադրությունը։ Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում կալվածատերը չէր վարձատրում գյուղացուն կամ տալիս էր մի չնչին գումար, չնայած երբ նա պետությունից ճանապարհների կառուցման կամ ջրանցքների մաքրման կապալ էր վերցնում, վերջինս նրան խոշոր գումար էր հատկացնում։ Այս պարագայում ակնհայտ էր դառնում, թե ինչպես էին միջնադարյան շահագործման բարբարոսական ձևերը միահյուսվում ժամանակակից կապիտալիստական ձևերին։

Գյուղատնտեսական մթերքները շուկա դուրս բերելու նպատակով գործում էր «բարքարդե» տուրքը, որը բեգարային աշխատանք էր և գյուղացիներին պարտադրում էր իրենց միջոցներով այնտեղ տեղափոխել կալվածատիրոջ բաժինը։

Կալվածատիրոջը հասանելիք գյուղատնտեսական արտադրանքի հետ կապված տեղափոխման աշխատանքային պարհակը ևս (դաշտից գյուղ և կալատեղից մինչև կալվածատիրոջ պահեստը) գյուղացու ամենածանր պարտականություններից մեկն էր[106]։

1952 թ. հոկտեմբերի 11-ի օրենքի համաձայն Իրանի գյուղերում գոյություն ունեցող բոլոր տեսակի կոռ ու բեգարային անօրինական տուրքերը գրեթե վերացվում էին։ Սակայն 1953 թ. օգոստոսին Իրանում տեղի ունեցած հակադեմոկրատական հեղաշրջման հետևանքով այդ օրենքը անվավեր հայտարարվեց։

Ինչպես երևում է վերը բերված փաստերից, 1940—1970-ական թվականներին Իրանի գյուղերում դեռևս պահպանվում էին հողերի մշակման միջնադարյան ձևերը, բեգարային աշխատանքներն ու զանազան անօրինական տուրքերը։

Գյուղացիության սնանկացման պատճառներից էր նաև

«սուրսաթ» կոչվող արտառոց հարկը, որի էությունն այն էր, որ գյուղ այցելող կամ այնտեղով անցնող խանի, պետական չինովնիկների և այլ պաշտոնյաների ննդամթերքն ամբողջությամբ ապահովում էր գյուղացիությունը։ Այդ հարկի մասին շատ նյութեր կան նաև հայկական աղբյուրներում. «Գյուղի ավագը պիտի տեղ ու ուտելիք հայթայթեր խանին, խանի մոքաշերին, պաշտոնական ճամփորդներին, պետական ժանդարմին և իրենց ձիերին, երբ գյուղ իջնեին։ Նման դեպքերում, երբ ճամփորդների թիվը շատ էր լինում, նա համարյա ամբողջ գյուղն էր դնում պարենի հայթայթողի ու սպասարկողի դերի մեջ։ Ճամփորդների թիվը լինում էր այնքան շատ, պահանջն ու ընչաքաղցությունը այնքան ծանր, որ ոչ միայն տանուտերը, այլև գյուղական համայնքը մխրճվում էր անդարմանելի պարտքի տակ»[107],— գրում է Ա. Սարյանը։ Յուրաքանչյուր տուն, ըստ քալանթարի պահանջի, հարկադրված էր նրանց մատակարարել միս, հավ, հավկիթ, թան, հաճախ նաև ափիոն և անկողին։

Լինում էին դեպքեր, երբ խանների գործակալները կամ ուղեկցողները օրերով հայաբնակ գյուղերում ապրելուց ու սնվելուց հետո վերջում դիմում էին թալանի։ Օրինակ, 1943 թ. բախտիարցի Աբուլ-Ղասիմ խանի ենթակաները 200 հոգով տեղավորվում և 11 օր ապրում են Զարմահալ գավառի հայ գյուղացիների հաշվին, իսկ վերջում թալանում են նրանց՝ տանելով 200 լիտր ցորեն և 500 թուման դրամ[108]։

Թալանն ավելի սոսկալի էր դառնում այն ժամանակ, երբ պետական չինովնիկներ և ժանդարմներ էին այցելում գյուղերը։ Նրանք պահանջում էին ամեն ինչ, անհիմն պատճառներով դրամ կորզում։ Հետո, ինչպես Ա. Սարյանն է նշում, «կուշտ ու լեցուն տոպրակներով հեռանում էին՝ շուտով վերադառնալու հույսով»[109]։

Երբ իլխանները և իլբեգերը 4—5 ամիս շարունակ իրենց աբբանյակներով ամռանն ապրում էին իրենց յայլաղում (ամառանոց), նրանց ծախսերը հոգում էին Մամուքա և Օվրիգան գյուղերի բնակիչները, տալով տարվա գրեթե ամբողջ հասույթը՝ շուրջ 45000 լիտր ցորեն, գարի և այլ հացահատիկ. սրան ավելանում էին այլ հարկեր, որոնք կազմում էին տարեկան 4000—5000 թուման։ Հիշյալ երկու գյուղերից նրանք ձրիաբար ստանում էին իրենց ամենօրյա վառելիքը, ձիերի համար խոտ, շաբաթական մի քանի հավ, հավկիթ և այլն, որոնք տեղափոխում էր հողագործը՝ կրելով մոտ երկու տասնյակ կիլոմետր։ Որպես հատուցում խանները վերոհիշյալ երկու գյուղերի բերքից տարեկան կես «բու» պակաս էին վերցնում, այսինքն՝ եթե ուրիշ գյուղերի արդյունքից 1/3-ն էին ստանում, ապա այս գյուղերից՝ 2/7-ը[110]։

Հարկերի գանձման ժամանակ անբերրիությունը, մրեխի պատճառած վնասները կամ կլիմայական անբարենպաստ պայմաններն իշխող վերնախավը երբեք հաշվի չէր առնում։ Բոլոր դեպքերում հարկերը բռնի կերպով գանձվում էին գյուղացիներից՝ նրանց գառատպարտելով սովի ու թշվառության։ Այսպես, չնայած 1946 թ. Զարմահալի բերքը ցրտահարվեց, կալվածատերերը հաստատված 10 թուման հարկը հայաբնակ մի քանի գյուղերից գանձեցին[111]։

Գյուղացու տնտեսական դրությունն ավելի էր ծանրանում, երբ ընտանիքում պակասում էր բանվորական ուժը։ Գյուղերում բռնկվում էր արդարացի բողոք զինծառայության դեմ։ Տեզական ժանդարմերիան, օգտվելով շրջաններում օրենքի բացակայությունից և տիրող անիշխանությունից, յուրաքանչյուր զինակոչիկի համար պահանջում էին 50—100 թուման՝ խոստանալով ազատել զինծառայությունից, սակայն մի քանի ամիս անց կրկին գալիս էին դրամ կորզելու։ Ըստ աղբյուրների վկայության, հաճախ էր պատահում, որ ժանդարմները մի զինակոչիկի համար տարվա ընթացքում 3—4 անգամ դրամ էին կորզում[112]։

Գյուղացին մշակում էր խաներին պատկանող ցանքատարածությունները, բայց զինակոչիկները հավաքագրվում էին պետության կողմից։ «Այդ դժվարին տարիներին,— գրում է Սարյանը,— խանին տրված չէր, թե ինչպես է ապրում, կամ ի՞նչ միջոցներով է ապրուստ ձեռք բերում զինվորագիր գյուղացու ընտանիքը։ Այս վիճակում անգամ՝ խա-

նր անխախտ օրենքի համաձայն ստանում է իր հարկաբա-ժինը»[113]։

Պարսկահայ գյուղացիությունը պետական հարկերից բացի պարտավոր էր Թեմի Առաջնորդարանին վճարել նաև, այսպես կոչված, «հոգևոր» հարկ։ Հողազուրկ գյուղացիներից այդ հարկը գանձվում էր գլխավորապես բնամթերքով, դրա-մով և մսացու կենդանիներով։

Պատմագրության մեջ չի հիշատակվում, թե Պարսկաս-տանում ընդհանրապես որ ժամանակներից է գանձվել այդ հարկը, բայց Փերիայի հայերի պատմության գրքի հեղինակ Լ. Մինասյանը հայտնում է, որ այն Փերիայում գանձվել է դեռ գավառի հաստատման օրից[114]։

Ջարմահալցիները Նոր Ջուղայի վանքին վճարում էին 15 բեռ ալյուր, 3 լիտր յուղ, 40 լիտր պանիր, 50 լիտր չորթան և 4 ոչխար[115]։ Իսկ Ադրբեջանի Ղարադաղ գավառի Ջիռգա, Հյուժ և Նորաշեն գյուղերն Առաջնորդարանին էին վճարում իրենց բերքի տասանորդը[116]։

Բացի ինքնակամ նվերներից ու եկեղեցական տուրքերից, ամեն տարի Թեմական իշխանության կարգադրությամբ գյու-ղերից «պաղի» անվան տակ վանքի համար նվիրահավա-քում էր կատարվում ուղղակիորեն կամ գավառի քահանայի միջոցով։ Այդ նվերները ուտեստներ էին. ալյուր, յուղ, չոր-թան, պանիր, ոսպ, սիսեռ, հաճար և այլն, ինչպես նաև մսացու կենդանիներ՝ կով, ոչխար, այծ, հորթ։

Նոր Ջուղայի վանքի արխիվային նյութերի տվյալների համաձայն, որոնցից օգտվել է Լ. Մինասյանը, Փերիայի և Քյարվանդի 16 գյուղերը 1882 թ. Պարսկաստանի հարավա-յին Թեմին են նվիրել ալյուր, ոսպ, պանիր, յուղ, չորթան։

Բացի «պաղի» նվիրատվությունից, դեռևս վաղ ժամա-նակներից ընդունված էր «մեհրանեի» հարկը (որոշակի գու-մարի վճարում՝ ամուսնության արտոնագիր ստանալու հա-մար)։

Այսպիսով, իրանահայ համայնքում համեմատաբար խոշոր սեփականատեր հանդիսացող հայկական եկեղեցի-ները նույնպես, իրենց հերթին, կրոնական տարբեր անվա-

նումների տակ հողազուրկ գյուղացիներից տուրք էին վերց-նում։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո շարու-նակվում էր Իրանի գյուղացիության կեղեքումը ինչպես կալ-վածատերերի, այնպես էլ առևտրավաշխառուական կապի-տալի միջոցով։ «Քանի դեռ առևտրային կապիտալն անզար-գացած հասարակությունների արդյունքների փոխանակու-թյան գործում միջնորդի դեր է կատարում, առևտրային շա-հույթը երևան է գալիս ոչ միայն իրրև օգտաշորթում և խա-բեբայություն, այլ մեծ մասամբ հենց նրանից է ծա-գում»[117],—գրել է Կ. Մարքսը։

Գյուղի առևտրականները, չարչիները և խանութպաններն անմիջական արտադրողին մեկուսացրին շուկայից՝ զրկելով նրան իր արտադրանքը շուկայական գներով վաճառելու հնարավորությունից։ Նրանք գյուղացուն մշտական կախման մեջ էին պահում իրենցից։ Կալվածատերերը լայնորեն կիրա-ռում էին պարտք տալու միջոցով գյուղացիությանը վերջ-նական կախման մեջ գցելու պրակտիկան։

Պատմական աղբյուրներից հայտնի է, որ նախկինում Փերիայի գյուղացիներն իրենց բերքի ավելցուկը վաճառում էին Սպահանի շուկաներում։

Գյուղացին հաճախ իր բաժին բերքի մի մասը փոխա-նակում էր շաքարի, թեյի կամ կտորեղենի հետ։ Այդպիսի փոխանակությունը սովորաբար կատարվում էր մոտակա քաղաքներից գյուղ եկած չարչիների, մանր առևտրականնե-րի միջոցով, կամ էլ ուղղակի գյուղի խանութպանի հետ։ Գյուղացու ապրանքը իսկական գներից շատ ցածր էր գնա-հատվում։

«Էթթելաաթ» թերթը գրում էր, որ երկրի բոլոր շրջան-ներում «...չարչիները և առևտրականները գյուղացիների ար-տադրանքը ցածր գնով նրանց ձեռքից դուրս էին կորզում և փոխարենը արտակարգ թանկ գնով նրանց վաճառում շա-քար, թեյ, ծխախոտ և այլն։ Այդ դժբախտ գյուղացիները ոչ իրենց մթերքների գնի մասին էին տեղյակ, և ոչ էլ առևտրա-կանների ապրանքների։ Եթե ոմանք էլ տեղյակ էին, ապա

հնարավորություն ու միջոցներ չունեին ֆարաախների համապարհ կարել, որևէ քաղաք գնալ և իրենց ապրանքները փոխանակել»[118]։

Ըստ «Մարդամ» թերթի, վաշխառուության զարգացումը Իրանում բացատրվում էր նրանով, որ «մեծ մասամբ իրանական գյուղացին հավաքած բերքով իր և իր ընտանիքի գոյությունը պահպանում էր ընդամենը վեց ամիս»[119]։

Որպես օրենք հատկապես գյուղատնտեսական վնասարարների կողմից բերքի ոչնչացման տարիներին (որը հաճախ էր պատահում), ոչ միայն չքավորները, այլև միջակները ստիպված դիմում էին կալվածատիրոջը, վաշխառուներին, գյուղի խանութպանին կամ էլ համեմատաբար բարենպաստ պայմաններում ապրող համագյուղացուն։ 1953 թ. «Էթթելաաթ» թերթը գրում էր. «Գյուղացիները աղքատ են. բերքահավաքից 2—3 ամիս հետո նրանց պաշարները ըսպառվում են, նրանք կալվածատիրոջ դուռն են ծեծում պարտք վերցնելու համար։ Կալվածատերերը, օրինակ, 50—100 ման ցորեն են տալիս, գինը որոշում, և բարձր արժեքով դրամական մուրհակ վերցնում։ Խալվարը 100 թուման կամ ավելի գնահատված մի խալվար ցորենի դիմաց բերքահավաքի ժամանակ, երբ գինը, բնականաբար, ցածր էր, 2—3 խալվար ցորեն էին հետ ստանում»[120]։

1954 թ. ծանր հարկերի ու վաշխառուությունների պատճառով Ղարադաղի հայ բնակչությունն իր գոյությունը հազիվ էր պահպանում։ «Բնակչության կեսից ավելին տարվա մեջ միայն վեց ամսվա հաց ունի,—գրել է Հ. Մարտիրոսյանը,—մնացած ամիսներին ապրում է պարտքով կամ մի կերպ քարշ է տալիս իր օրը։ Մուրն ընկնելուն պես քնում են, որովհետև քարյուղը ծախվում է եռապատիկ արժեքով. շատերը օջախում վառված փայտի լույսով են բավարարվում։ Թեյ չեն խմում, որովհետև չարաշահող ձեռքերը շաքարի կիլոն ծախում են 60 ռիալով»[121]։

Հայ հողազուրկ գյուղացու (Չարմահալի գյուղացիության 95%-ը հողազուրկ էր) տնտեսական ծանր վիճակը նրան ստիպում էր պարտքերի տակ ընկնել։ Իսկ պարտք

ունեցող ընտանիքն այլևս չէր կարողանում ազատվել դրանից։ Ծանր տոկոսներն ամբողջովին քայքայում էին նրան։

Աղբյուրները վկայում են, որ 1920-ական թվականներին Չարմահալի աղգարնակչության մեծամասնությունը տնքում էր ծանր պարտքերի տակ, որոնց գումարը կազմում էր 58671 թուման[122]։

Այդ տարիներին Փերիայի գյուղացիության վիճակը քիչ էր տարբերվում Չարմահալի և Հայաբնակ այլ վայրերի գյուղացիների վիճակից։ Նրանց գրեթե 90%-ը պարտքերի տակ էր։ Դրանք մարելու համար սակավահող գյուղացիները տարեցտարի վաճառում էին իրենց հողակտորները։ «Հաճախ 50 թուման պարտքը վճարելու համար գյուղացին վաճառում էր ունեցվածքը ու մեկնում քաղաք»,— գրում է Հ. Մարտիրոսյանը[123]։

Այսպիսով, կալվածատերերի, մոբաշիների, քեդխոդաների թալանչիական հսկա բանակին ավելանում էին նաև գյուղի առևտրականները, չարչիները և հատկապես վաշխառուները, որոնք իրենց հերթին արագացնում էին գյուղացիության տնտեսական քայքայման պրոցեսը։

Իրանում ուղղակի և անուղղակի հարկային լուծը, հարկադիր աշխատանքները, բռնությունները, պետական պաշտոնյաների կաշառակերությունը և կողոպուտն իրանահայ գյուղացիությանը հասցրել էին ծայրահեղ թշվառության։ Իշխանությունները ցանկացած ժամանակ կարող էին նրան ղրկել թե՛ գույքից և թե՛ կյանքից, ստիպել գյուղատնտեսական աշխատանքների հետ մեկտեղ բնամթերք և դրամական հարկեր վճարել։

Խոշոր կալվածատերերի կողմից աղքատ ու մանր հողատեր գյուղացիների շահագործումը ահռելի չափեր էին ընդունել։ Գյուղացու անձը և ունեցվածքը ապահովող օրենքների բացակայությունը կալվածատերերին մեծ հնարավորություններ էր տալիս գյուղացիների հետ վարվել իրրև ստրուկների։ Ստեղծված վիճակը գյուղացիներին ստիպում էր զանգվածաբար թողնել գյուղը։

Իրանի իշխող շրջանների և կալվածատերերի կողմից

շահագործման էր ենթարկվում ինչպես մահմեդական, այնպես էլ ոչ մահմեդական գյուղացիությունը։ Անդրադառնալով Ադրբեջանի քրիստոնյա գյուղացիության վիճակին, Բիշոփը գրում է, որ նրանց նկատմամբ վերաբերմունքը գրեթե նույնն էր, ինչ նրանց հարևան մահմեդական գյուղացիների։ Վկայակոչելով դոկտոր Լաբարին, որը մոտ երեսուն տարի աշխատել էր այդ շրջաններում և տեղյակ էր Ատրպատականում իրանական իշխանությունների լծի ներքո ապրող տարբեր ազգությունների կյանքի պայմաններին, Բիշոփը գրում է. «Իրանում ապրող ասորիները և հայերն իրենց հարևան մահմեդական գյուղացիների հետ միասին տառապում էին նեխած հասարակարգից և կառավարման արատավոր ձևերից, որոնք նրանց վզին էին փաթաթված ավելի վաղ ժամանակներից։ Այստեղ իշխում էին հողատիրության վաղեմի ձևերը։ Խեղճ ռայաթը կամ վարձակալը պարտավոր էր կալվածատիրոջը վճարել իր ամբողջ արտադրանքի կեսը կամ երկու երրորդը։ Գլխահարկից բացի նա վճարում էր հարկ իր տան, խոտի, արտերի, պտղատու ծառերի և անասունների համար։ Բայց դա դեռ բոլորը չէր։ Նրա գոյությունն ամբողջովին կախված էր կալվածատիրոջ խղճից։ Օրենքով կալվածատերն իր ռայաթներից պահանջում էր երեք օրվա անվճար բեգարություն։ Իրականում նա ստիպում էր նրանց աշխատել այնքան, որքան ինքը հարմար էր գտնում։ Երբ կալվածատերն այցելում էր իր գյուղերը, վերցնում էր ինչ ցանկանում էր։ Եթե գյուղացիները հացի կարիք էին զգում, ապա կալվածատերը նրանց հացահատիկ և ալյուր էր վաճառում շուկայական գնից բարձր։ Ամենաչնչին զանցանքի համար նա ծեծում և խոշտանգում էր իր գյուղացիներին։ Եվ եթե խեղճ գյուղացին այս ամենի համար համարձակվեր գանգատվել, ապա նա ենթարկվում էր խիստ հետապնդումների։ Ահա այս տեսակետից մուսուլմանները, քրիստոնյաները և հրեաները տառապում էին միատեսակ»[124]։

Հայ գյուղական բնակչության նկատմամբ վերը նշված անիրավություններին և բռնություններին ավելանում էին նաև

տեղական ցեղապետերի և խաների անընդմեջ թալանը և կողոպուտը, որոնք, օգտվելով տեղական իշխանությունների թուլությունից՝ պարբերաբար հարձակվում էին հայկական գյուղերի վրա։

Սպահանի շրջանում ապրող հայ գյուղացիության տընտեսական քայքայման պատճառներից մեկը մոտակա լեռնային մասերում ապրող լոռ և բախտիարի ցեղախմբերի թալանն էր։

1945 թ. չարմահալցի հայ գյուղացիության վիճակը Ա. Սարյանի նկարագրությամբ հետևյալ պատկերն էր ներկայացնում. «Չարքաշ գյուղացին,— գրում է նա,— օրն ի բուն աշխատում, քրտինք է թափում, բայց անպաշտպան, միշտ սարսափի ու բռնության տակ, ենթակա է հարստահարության և կողոպուտի թե՛ օրը ցերեկով ու թե՛ գիշերով։ Ճնշումը միշտ կանգնած է խեղճ ու կրակ գյուղացու գլխին։ Ցերեկը, որպես կթան կով մաշվում է ուժեղների ձեռքին, իսկ գիշերներն էլ կողոպտվում է զինված, պատրաստ գողերի միջոցով»[125]։

Իրանցի և հայ չքավոր գյուղացիները լքում էին իրենց գյուղերը, մեկընդմիշտ գնում քաղաք՝ ապրուստի որևէ միջոց գտնելու համար, դառնում էին ազատավարձու բանվոր։ Մեծ էր և այն չքավոր գյուղացիների թիվը, որոնք ձմռան ամիսներին գնում էին քաղաք՝ աշխատանք որոնելու։

«Բեսույն Այենգե» թերթը գրում է. «Սպահանի գյուղացին մի ամբողջ կյանք չարչարանքով ու տառապանքով ապրելուց հետո, այսօր Սպահանի փողոցներում անգործ թափառում է, իսկ նրանք, ովքեր նրա աշխատանքով միլիոնների տեր են դարձել, ցոփ կյանք են վարում»[126]։

«Իրանական գյուղացու միջին եկամուտը,— գրում էր անգլիական «Քարնեթ Հիստրի» ամսագիրը,— կազմում է տարեկան մոտ 110 դոլար, իսկ անբերրի տարիներին, ինչպես 1948—1949 թթ., գյուղական բնակչության աղքատությունը դառնում է անտանելի։ Այդ տարիներին ամբողջ գյուղեր ամայացան, քանի որ բնակիչները առաջիկա տարվա համար պահած իրենց սերմացուն և անասուններն ուտելուց

հետո լքեցին գյուղերը և գնացին քաղաքներ՝ ապրուստի որևէ միջոց գտնելու համար»[127]։

Խոշոր կալվածատերերը ամեն տեսակ մեքենայությունների էին դիմում մանր կալվածատերերի հողերին տիրանալու համար։ Պատահում էին դեպքեր, երբ նրանք, պետական պաշտոնյաներին կաշառելով, մանր հողատերերի հողերն իրենց անունով էին գրանցում, և երբ տերերը տեղեկանում ու գանգատվում էին, ապա դատարանը, բնականաբար, խնդիրը վճռում էր հօգուտ խոշոր կալվածատերերի։ Երբեմն կալվածատերերը ջուրը կտրելով կամ սահմանային ջրանցքները չնորոգելով, մանր հողատերերին երաշտի էին դատապարտում և այդպիսով նրանց ստիպում իրենց հողերն էժան գնով վաճառել։

Ժամանակի ընթացքում քաղաքական ու տնտեսական պայմանների հետևանքով հսկայական հողատարածություններ խլվեցին գյուղացիներից։ Հողազրկության, ծանր հարկերի և հարստահարության հետևանքով քայքայվեցին ու ամայացան նաև հայաբնակ շատ գյուղեր։

Հողատերերի ու խանների մի մասը, ականատես լինելով այդ գյուղերի բնակչության արտագաղթին, իր շահերից ելնելով, այն կասեցնելու նպատակով խոստացավ նրանց համար ստեղծել նպաստավոր պայմաններ։ Ըստ Ա. Սարյանի հաղորդման՝ «Այս, ինչպես և բոնի արգելքները չկարողացան պատնեշ կանգնել Ջարմահալի հայերի վարարած գաղթին դեպի քաղաքներն ու Խուզիստան, դեպի Հայաստան ու Հնդկաստան»[128]։

Հիշատակված փաստերն ապացուցելու համար հեղինակը բերում է հայաբնակ երեք գյուղերի բնակչության մասին վիճակագրական տվյալներ, որոնց համաձայն Լիվասյանը 1903 թ. ուներ 150 տնտեսություն, իսկ 1945 թ. ընդամենը 42, Մամուռանը՝ 1903 թ. 75 տնտեսության փոխարեն 1945 թ. ուներ 31, իսկ Մամուքայում, որը դարասկզբին բարեշեն մի գյուղ էր և 1917 թ. ուներ 140 տնտեսություն, 1945 թ. մնացել էր միայն 108-ը[129]։

Պատահական չէր, որ տնտեսական անկման հետևանքով գավառն ամայանում էր։ 1920—1960 թթ. Իրանի նավթարդյունաբերական շրջանների հայերի մեծամասնությունը եկել էր Ջարմահալ գավառից։

Ինչպես արդեն նշել ենք, 1946 թ. Ջարմահալի իր գյուղերից վեցի բնակիչները՝ 1144 ընտանիք, հայրենադարձվեցին Խորհրդային Հայաստան։ Հայրենադարձության հետաձգվելու և ընդհանրապես երիտասարդ աշխատող ուժերի սակավության հետևանքով մնացած երեք գյուղերի փոքրաթիվ բնակչությունը ևս սկսեց արագորեն հեռանալ գավառից։

1963 թ. հողային ռեֆորմի ընթացքում գավառում ժամանակավոր բնակություն հաստատած հայ ընտանիքների թիվը չէր հասնում նույնիսկ տասի։

Նույն պատկերն ուներ նաև Փերիան, որը Իրանի ամենամեծ հայաբնակ գավառն էր։ Նախքան հայրենադարձությունն այն ուներ հայաբնակ 24 գյուղ՝ շուրջ 16000 բնակչությամբ։ 1946 թ. Խորհրդային Հայաստան են հայրենադարձվել 2395-ը[130]։ Մնացածները հալածանքների, ծանր հարկերի ու անօրինական տուրքերի հետևանքով աստիճանաբար լքեցին գյուղերը և ապրուստի միջոցներ հայթայթելու նպատակով հաստատվեցին քաղաքներում։ 1970-ական թվականների վերջին Փերիա գավառի բնակչության թիվը հասնում էր շուրջ 1000-ի։

1968—1969 թթ. բոլորովին դատարկվեցին Դրախտակ և Հազարջրիբ գյուղերը, Դաջանում մնաց հազիվ 3—4 տնտեսություն, իսկ մյուս գյուղերում՝ բնակչության գրեթե կեսը[131]։

Ծանր էր Քրգստանի գյուղերում բնակվող հայերի վիճակը։ Նրանք երկրի իշխանությունների գոյության մասին աղոտ պատկերացում ունեին, արտաքին աշխարհի հետ կապված էին քարավանների միջոցով, որոնք հաճախակի ենթարկվում էին հարձակումների ու թալանի[132]։

Ինչպես նշում էր «Հակաֆաշիստ» թերթը 1945 թ. համարներից մեկում, Թաղիաբադ համայնքը, ուր այդ տարիներին բնակվում էր 700 հայ հողագործ, ուներ անչափ ծանր ու անապահով կյանք։ Բավական է հիշել,— գրում էր

Թերթը,— որ իր հիմնավորվելուց մինչև այժմ, մի հիանամյակի ընթացքում, գյուղը գաղթել է երեք անգամ։ Գյուղացիների անտեսությունը տեղի շեյխերի պատճառով մի քանի անգամ ավերվել է»[133]։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Ղարադաղի բնակիչներից շատերը հայրենադարձվեցին Խորհրդային Հայաստան, իսկ մնացածներն աստիճանաբար ցրվեցին՝ հաստատվելով Իրանի զանազան քաղաքներում, մեծ մասամբ Թավրիզում և Թեհրանում, ավելացնելով այնտեղի գործազուրկների բանակը։

Ղարադաղի Առաջնորդարանին պատկանող Ջիագա, Հյուժ, Նորաշեն գյուղերը գաղարկվեցին հայերից։ Հետագայում այդ երեք գյուղերում բնակվեցին ադրբեջանցիներ։ 1958 թ. արգեն այդտեղ բնակվում էր միայն 15—20 հայ ընտանիք[134]։ «Րաֆֆի տարեգրքի» համաձայն Ղարադաղից հայերի արտագաղթի հիմնական պատճառը տեղական խաների ստեղծած անելանելի վիճակն էր[135]։

Ատրպատականի շրջաններից քաղաքներ գաղթած գյուղացիների թշվառ վիճակի մասին իտալացի լրագրող, «Ռևնիտա» թերթի հատուկ թղթակից Մ. Մալոկկին գրում է. «Ես ի վիճակի չեմ նկարագրել այդ որջերը, որտեղ ապրում են նրանք։ Անգամ գերեզմանատունը ավելի ուրախ տեսարան է ներկայացնում, քան այդ նեխող աղբի կույտերը, որոնց մեջ վխտում են երեխաները։ Որքան իրանցի ադրբեջանցիներ, ուժեղ և ամուր գյուղացիներ սովից մահացան այս տարիների ընթացքում։ Նրանք ամբողջ ընտանիքներով թափառում էին փողոցներում ու մուրացկանություն անում, իսկ երբ նրանցից որևէ մեկը սովամահ էր լինում և ընկնում գետին, հարազատները լռակյաց տանում էին նրան»[136]։

Իրանահայ հեղինակների մոտ շատ են այնպիսի դեպքերի նկարագրությունները, երբ չարքաշ հայ հողագործը այլևս չկարողանալով հանդուրժել հողատեր խանների ճնշումներն ու շահագործումը, գիշերով թողել է իր տունն ու ընտանիքը և փախուստի դիմել։ Պատահել են դեպքեր, երբ

կալվածատերն ինքն է գրավել գյուղացու ունեցվածքն ու տունը և նրան բռնի ուժով վտարել գյուղից։

Այսպիսով, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում գյուղերում ֆեոդալա-կալվածատիրական հարաբերությունների պահպանման հետևանքով առևտրական և վաշխառուական կապիտալը միանալով հողատիրական սեփականության հետ՝ գյուղացու համար ստեղծել էր կիսատրկական վիճակ։ Վարչակարգի ազգարային անխոհեմ քաղաքականության հետևանքով երկրում ավելացել էին անիրավությունները, հարկահանությունն ու բռնությունները, կողոպուտը, վաշխառությունը, որոնք վերջնականապես տնտեսապես բայքայելով հայ գյուղացիներին՝ պատճառ դարձան նրանց զանգվածային գաղթի դեպի քաղաք, որը և բազմաթիվ գյուղերի հայ բնակչության նոսրացման և որոշ գավառների վերացման պատճառ հանդիսացավ։ Եվ պատահական չէր, որ Իրանում տեղի ունեցող ազատագրական շարժումներին մասնակցում էին նաև հայերը, որոնք փայլուն էջեր գրեցին Իրանի պատմության մեջ։

Գ. ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԱՑՄՔԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Իրանահայ համայնքի իրավական կարգը հիմնված է Արևմտաեկեղեցականինքնավարության վրա՝ հանձինս գոյություն ունեցող թեմերի։ Դեռ XI դարից սկսած, երբ Պարսկաստանում հիմնադրվեցին հայկական առաջին բնակավայրերը, թեմական առաջնորդներն իրենց ձեռքը վերցրին համայնքի տնօրինությունը։

Աղբյուրների վկայությամբ համայնքներին միահեծան տիրելու հայ հոգևոր առաջնորդների ձգտումների դեմ ժողովուրդը մշտապես բողոքել է։ Հետևելով հայկական մյուս գաղթօջախների օրինակին՝ իրանահայ համայնքը դարասկզբին ձեռնամուխ եղավ իր իրավունքների պաշտպանությանը՝ թեմակալ եպիսկոպոսներին պարտադրելով սահմանափակել իրենց գործունեությունը և հաշվի առնել համայնքի կարծիքն ու ցանկությունները[137]։

Այսպիսով, Իրանի հայկական երկու կենտրոններում՝ Թավրիզում ու Նոր Ջուղայում իշխող հոգևորականներն իրարից անկախ միաժամանակ ստիպված եղան համայնքի անդամներին ևս մասնակից դարձնել համայնքի գործերին։

Արդեն XX դարի սկզբին մշակվեցին թեմական կանոնադրություններ, հիմնվեցին ընտրովի թեմական խորհուրդներ, որի հետևանքով թեմական առաջնորդների իշխանությունը որոշ չափով սահմանափակվեց։

Իրանի հայկական երեք թեմերն իրենց կրոնական գործերը վարում են համաձայն Հայոց Առաքելական եկեղեցու կանոնների և ավանդույթների, ինչպես նաև յուրաքանչյուր թեմի կողմից ներկայացված կանոնադրության և դրանց հիման վրա գործող ժողովրդական մարմինների որոշումների։

Ընդհուպ մինչև 1967 թ. այդ թեմերը պետության կողմից իրավական ճանաչում չունեին, թեև հնուց ի վեր Ադրբպատականի և Նոր Ջուղայի թեմերն ընդունվել են իբրև հայոց ազգային-կրոնական հաստատություններ։ 1967 թվականից դրանք որպես կրոնամշակութային, բարեգործական ընկերություններ և իրավական մարմիններ՝ ճանաչվեցին պետությանը պատկանող վարչության (Սաբթե քոլի) կողմից։

Ատրպատականի հայության Առաջնորդարանը երկար ժամանակ գտնվում էր Արտազի ս. Թադևոսի վանքում։ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, երբ հայրենադարձության հետևանքով այդ գավառը հայությունից դատարկվեց, Առաջնորդարանը 1833 թ. ս. Թադևոսի վանքից տեղափոխվեց Թավրիզ։ Թեմը, որը 1969 թ. անջատվեց Կիլիկիայի կաթողիկոսությունից, 1833—1960 թթ. ընթացքում ունեցել է 20 առաջնորդ։ Սկսած 1960 թ. թեմի առաջնորդներ է նշանակում Կիլիկիայի կաթողիկոսությունը։

Թեմը ղեկավարում են չորս տարին մեկ անգամ ընտրվող մարմինները։ Նրա բարձրագույն ժողովը՝ 17 անդամներից բաղկացած, թեմական պատգամավորական օրենսդիր ժողովն է։ Թեմական խորհուրդը որպես գործադիր մարմին կազմված է 6 անդամից, իսկ նախագահը թեմակալ

առաջնորդն է։ Պատգամավորական ժողովն ու թեմական խորհուրդն ունեն իրենց մնայուն դիվանները[138]։

Թավրիզի թեմական խորհուրդը կատարում էր նաև Թավրիզի քաղաքային գործադիր ժողովի և հարակից մարմինների ֆունկցիաները[139]։

1606 թ. Նոր Ջուղայի ստեղծման հետ հիմնվում է այս տեղի թեմը։ Հետագայում քաղաքական և տնտեսական հանգամանքների բերումով հայ բնակչության մի մասը գաղթում է Հնդկաստան և Հեռավոր Արևելքի երկրներ, որի հետևանքով Նոր Ջուղայի թեմը փոխում է իր անվանումը և սկսում կոչվել իրանահնդկական թեմ։ XX դ. առաջին տասնամյակում թեմը մշակում է իր կանոնադրությունը։ 1923 թ. կազմվում է Նոր Ջուղայի համայնական խորհուրդը, որը կրոնական խորհրդի անդամների և թեմակալ առաջնորդի հետ և վերջինիս նախագահությամբ վարում էր Ջուղայի և գավառների գործերը[140]։ Այն հարատևեց մինչև 1930-ական թվականների սկիզբը, որից հետո համայնքի կազմակերպչական կառուցվածքի բացակայության հետևանքով հարավային շրջանների համայնքները, ի հակադրություն կենտրոնական և հյուսիսային թեմերի, իրենց վարչահասարակական գործունեությամբ դարձան անկախ՝ չհնթարկվելով Նոր Ջուղայի թեմին։ Եթե Նոր Ջուղայում համայնքի ժողովը և խորհուրդը համարվում էին համայնքի վարչությունը, ապա Ահվազում համայնքը ղեկավարում էր համայնքի վարչությունը, Արադանում և Խորամշահրում՝ սկզբում եկեղեցիների և դպրոցների միացյալ հոգաբարձությունը, իսկ հետագայում յուրաքանչյուր առանձին քաղաքի հոգևոր մարմինները[141]։

1930—1945 թթ. Նոր Ջուղայի թեմի առաջնորդի պաշտոնը մնացել էր թափուր։ Շուտով որպես թեմակալ էջմիածնից ուղարկվեց եպիսկոպոս Վահան Կոստանյանը, որն այդ պաշտոնում մնաց մինչև 1949 թվականը։

Իրանահայ համայնքի կենտրոնական, ամենահայահոծն ու գործունը Թեհրանի թեմն է, որի թեմակալ Արտաք արք. Մանուկյանը Իրանի միջեկեղեցական խորհրդի նախագահն է։

Թեհրանի հայոց թեմը հայ եկեղեցու վարչական գործունեությունն իրականացնում է իր մշակած կանոնադրության համաձայն, որը բաղկացած է 70 հոդվածից[142] և 1973 թ. պաշտոնագրով կիրառության է տացել։

Թեհրանի հայոց թեմի կանոնադրության 1—16 հոդվածներն ընդգրկում են թեմի հիմնական սկզբունքները և ընդհանուր կանոնները։ Կանոնադրության համաձայն վերոհիշյալ թեմի գերագույն իշխանությունը համարվում է պատգամավորական ժողովը, որի անդամներին ընտրում է ժողովուրդը։ Թեմի եկեղեցական, վարչակրթական ողջ գործունեությունն իրականացվում է վերը նշված կանոնադրության և ընդունված որոշումների հիման վրա։

Կանոնադրության համաձայն իրանահայության ազգային Առաջնորդարանի խորհուրդը համարվում է պետությանը պատկանող իրավաբանական հաստատություն, որն իրականացնում է «ազգային դպրոցների արտոնագրերը և բանկային ընթացիկ և ավանդատու հաշիվները»։ Այդ խորհրդի նախագահը ղեկավարում է խորհրդին ենթակա վարչական մարմինը։ Վերջինիս անդամներն ընտրվում են ազգային Առաջնորդարանի խորհրդի ընդհանուր ժողովի կողմից՝ թեմական խորհրդի առաջարկությամբ։

Թեմի հոգևոր պետը համարվում է թեմակալ առաջնորդը, որն առանց պաշտոնավարության ժամկետը սահմանելու ընտրվում է պատգամավորական ժողովի կողմից և իր պաշտոնեն ղեկավարում պատգամավորական ժողովը, թեմական խորհուրդը և նրանց ենթակա բոլոր վարչական մարմինները՝ ընդունված որոշումների սահմաններում վարելով թեմական խորհրդի գործադիր իշխանությունը և ընթացիկ գործերը։

Թեմի կանոնադրությամբ պատգամավորական ժողովի ժամանակաշրջանը չորս տարի է, անդամների 6/7-ը աշխարհական է, իսկ 1/7-ը՝ հոգևորական։ Ընտրելու իրավունք ունեն 20 տարին լրացած երկսեռ այն քաղաքացիները, ովքեր առնվազն վեց ամիս բնակվում են տվյալ ընտրական շրջանում և վճարել են ծխական տուրքը։

Ընտրվելու իրավունք ունեն երկսեռ այն քաղաքացիները, ովքեր քվեարկության մեկ տարի առաջ բնակվում են թեմի տարածքի մեջ մտնող շրջանում։

Պատգամավորական ժողովն իրավունք ունի ընտրել թեմական առաջնորդին կամ առաջնորդական տեղապահին, ընդունել նրանց հրաժարականը, ընտրել թեմական խորհուրդ, հաստատել թեմական-եկեղեցական տուրքերը, սահմանել նրանց գանձման և բաշխման ձևերը, վարչական մարմինները և լուծել այլ կարգի հարցեր։

Թեհրանի հայոց թեմի թեմական խորհրդի կազմում ընդգրկված են պատգամավորական ժողովի կողմից երկու տարի ժամկետով ընտրված 7—11 անդամներ։ Որպես թեմի բարձրագույն գործադիր մարմին թեմական խորհուրդն ունի բազմաթիվ իրավական պարտականություններ։

Կենտրոնական հոգաբարձությունը բաղկացած է թեմական խորհրդի կողմից նշանակված 7—9 անդամներից՝ երկու տարի ժամկետով։ Նրանց պարտականությունն է հսկել ազգային դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքներն ու այլ գործերը։

Թեհրանի ազգային յուրաքանչյուր դպրոցի համար դպրոցական հոգաբարձությունը ստեղծում է 5—7 անդամներից կազմված առանձին հոգաբարձություն։ Մնացած շրջաններում հոգաբարձությունն ստեղծվում է թեմական խորհրդի կողմից՝ համայնքի պահանջով։

Թեմական խորհուրդը 2 տարի ժամկետով կազմում է 7—11 անդամներից բաղկացած ծխական տուրքի վարչական մարմին։ Կանոնադրության համաձայն յուրաքանչյուր քաղաքացուց պարտադիր հարկը գանձվում է ըստ նրա նյութական կարողության չափի։

Թեմական խորհուրդը Թեհրանի նահանգի տարածքում գտնվող առաքելական ամեն մի եկեղեցու համար ստեղծում է 5—7 անդամներից բաղկացած եկեղեցական խորհուրդ, իսկ շրջաններում այն ընտրվում է համայնքի կողմից։

Թեհրանի նահանգում պսակադրության թույլտվությու-

նը տալիս են թեմական առաջնորդը, իսկ մյուս շրջաններում՝ եկեղեցական խորհուրդները, եթե պետական հիմնարկի հատուկ հրահանգով տրված է ամուսնության թույլտվություն։

Թեմական խորհուրդն ունի 5—7 անդամներից բաղկացած հատուկ դատական մարմին։

Ընտանեկան հարցերը լուծվում են պետությանը ենթակա հիմնարկներում։

Հատկանշական է, որ թեմական խորհրդի (որը հանդիսանում է թեմերի բարձրագույն գործադիր իշխանությունը) ընտրություններին մասնակցում են միայն այն հայերը, որոնք առաքելական եկեղեցու անդամներ են։ Այլադավան հայերը ոչ միայն ընտրության իրավունք չունեն, այլև զրկված են թեմական խորհրդում կամ եկեղեցական այլ մարմիններում ընտրվելու իրավունքից։ Այսպիսով, թեմական խորհուրդը չի կարող բոլոր հայերի համար վարչական գլխավոր մարմին լինել։

Կանոնադրության համաձայն, քահանաներին, ինչպես նաև եկեղեցական խորհրդին իրավունք է վերապահվում հսկել եկեղեցական և աշխարհական պաշտոնյաների գործունեությունը։ Նրանց է վերապահվում նաև քաղաքաբնակ հայերից պարտադիր հարկերի գանձման կամ այդ հարկերից նրանց ազատելու իրավունքը։

Այսպիսով, կանոնադրության համաձայն, բոլոր հայաբնակ վայրերի եկեղեցական և հասարակական աշխատանքների հսկողությունն իրականացվում է եկեղեցական խորհրդի և նրան ենթակա մարմինների կողմից։

Իրանահայ բնակչության առաջադեմ խավը ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս ձգտում է գաղութի հասարակական կազմակերպությունների գործունեությունը դուրս բերել հոգևոր մարմինների հսկողությունից՝ առաջարկելով ստեղծել թաղային խորհուրդներ, որոնք կզբաղվեն աշխարհիկ գործերով, իսկ թեմական խորհրդին թողնել զուտ եկեղեցուն վերաբերող խնդիրները։

Դ. ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԱԶԳԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային հարցը ժամանակակից Իրանի հասարակական-քաղաքական չլուծված խնդիրներից է։

Իրանի բնակչության խայտաբղետ կազմում անորոշ է քոչվոր վաչկատունների ստույգ թիվը, քանի որ առայսօր նրանց մասին ճշգրիտ վիճակագրական տվյալներ գոյություն չունեն։ Քոչվոր ցեղերից շատերը կողոպուտի նպատակով սիստեմատիկաբար հարձակվում էին հարևան ցեղերի վրա՝ ստիպելով նրանց դառնալ հարկատու։

Որոշ տվյալներով, եթե XX դ. սկզբներին քոչվոր և կիսաքոչվոր ցեղերը կազմում էին Իրանի բնակչության մոտ 30%-ը, ապա դարի կեսերին նրանց թիվը աստիճանաբար նվազեց մինչև 10—12%-ի, այսինքն, մոտավորապես 2—2,5 միլիոնի։ Դրանք հիմնականում կիսաքոչվորներ էին, իսկ քոչվորների թիվը հասնում էր 700 հազարի[143]։

Մինչև Իսլամական Հանրապետության հռչակումն Իրանում գործող սահմանադրությունը հաստատվել է 1906 թ.։ Այն կազմելիս նկատի էր առնվել միայն դավանանքը, իսկ երկրի բնակչության լեզվական և էթնիկական առանձնահատկություններին ոչ մի նշանակություն չէր տրվել։ Երկրի արտոնյալ ազգը համարվում էին պարսիկները։ Մյուս մահմեդական ազգերն ու ցեղերը հայտարարվեցին լոկ իրանցիներ։

Բազմազգ պետության ներսում միայն պարսկերենը հայտարարվեց պետական լեզու։ Այն պրոպագանդա էր տարվում իրանցի մահմեդականների միատարրության ոգղությամբ, պայմաններ էին ստեղծվում մահմեդական փոքրամասնություններին ձուլելու և «պարսկացնելու» համար։

Ռեզա շահի իշխանության օրոք պանիրանիզմի սկզբունքը դրվեց ներքին ու արտաքին քաղաքականության հիմքում։ Իրանական ազգայնամոլությունը և նրա ծայրահեղ պանիրանական ձևը դարձան ազգային հարցում կառավարության հիմնական գաղափարախոսությունը։ Միաանական

պարակախոս ազգ ստեղծելու նպատակով իրականացվում էր ազգաձուլման քաղաքականություն, ինչպես նաև ընված պայքար էր ծավալվում ճնշելու այն ցեղերին, որոնք հրաժարվում էին հնազանդվել կենտրոնական իշխանությանը:

1930-ական թվականներին թուրքմենների, արաբների, քրդերի, բելուջների և այլ ցեղերի ապստամբությունները ճնշվում էին ամենախիստ կերպով: Այդ թվականների կեսերին փակվեցին այն դպրոցները, որտեղ դասավանդումը տարվում էր ազգային փոքրամասնությունների լեզուներով: Դադարեցվեց ադրբեջաներեն, հայերեն և այլ լեզուներով թերթերի հրատարակումը[144]:

Ֆաշիստական Գերմանիան, որը սերտ կապեր էր հաստատել Ռեզա շահի կառավարության հետ, մեծ նշանակություն էր տալիս Իրանում ծավալված պանիրանիզմի քաղաքականությանը, քանի որ վերջինս համահնչուն էր Գերմանիայի ազգայնամոլական գաղափարախոսությանը:

1936 թ. հիտլերյան ռայխի հատուկ դեկրետով իրանցիները հայտարարվեցին «մաքուր արիացիներ»[145]:

Ազգային փոքրամասնությունների համախմբումը կասեցնելու, նրանց ռազմական և տնտեսական զորությունը թուլացնելու և բռնի ձուլման ենթարկելու նպատակով անվանափոխվեցին 1937 թ. Իրանի վարչական և էթնիկական շրջանները: Երկիրը բաժանվեց տասնմեկ օստանի (գավառի): Ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջանները մասնատվեցին և ընդգրկվեցին տարբեր մարզերի ու շրջանների կազմի մեջ[146]:

Ռեզա շահի կողմից ազգությունների վերաբնակեցման քաղաքականությունը կիրառվում էր քրդերի, բելուջների, բախտիարների, լուռերի և այլ ցեղերի նկատմամբ: Վերաբնակեցված ցեղերը պարտադիր կերպով անցնում էին նստակյաց ապրելակերպի, իսկ նրանց բնակավայրերը վերցվում էին զինվորական հսկողության տակ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Իրանի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցան զգալի փոփոխություններ: Հարավային ցեղերի առաջնորդները պետական ապարատի կազմալուծման ու տեղական մարմինների թուլացման հետևանքով կրկին վերականգնեցին իրենց իշխանությունը: Բախտիարների և լուռերի խանները պահանջում էին վերադարձնել պետության կողմից վաճառված իրենց հողերը, հրաժարվում էին կառավարությանը հարկեր մուծելուց և այլն[147]: Նրանք պահանջում էին նաև քաղաքական լայն իրավունքներ, ձգտում դեպուտատներ ունենալ իրանական մեջլիսում:

Շատ կարճ ժամանակամիջոցում տարբեր ցեղերի առաջնորդները միավորեցին զաղղայիններին, բախտիարներին, բոերահմադիներին և այլ ցեղերի ու կարողացան զինաթափ անել տեղական կայազորները[148]:

Իրանում դաշնակից զորքերի դեմ քայքայիչ գործունեություն ծավալելու, հատկապես Իրանի վրայով Խորհրդային Միությունն զինամթերք փոխադրող ճանապարհը փակելու նպատակով գերմանական գործակալները զաղղայի և բախտիար ցեղերի շրջաններում փորձում էին զինված ելույթներ հրահրել: Ստեղծվեց նաև «Մելիյունե Իրան» («Իրանական ազգայնականներ») գաղտնի ընդհատակյա կազմակերպությունը, որի մեջ մտան նաև Իրանի հարավային և հարավարևմտյան ցեղերի առաջնորդները[149]:

1942 թ. հիտլերյան գործակալներին հաջողվեց Ուրմիայի շրջանում քրդերին ևս մասնակից դարձնել դաշնակիցների դեմ ուղղված այդ գործողություններին: 1942—1943 թթ. Իրանի հարավային ցեղերի զինված ելույթներն ուղղված էին ինչպես իրանական իշխանությունների, այնպես էլ անգլիացիների դեմ: 1946 թ. հունիսին ստեղծվեց «Խուզիստանի արաբական ցեղերի միությունն» կազմակերպությունը, որի նպատակն էր Խուզիստանն անջատել Իրանից: Արաբական ցեղերի մի խումբ առաջնորդներ պետական իշխանությունների կողմից կիրառվող ազգաձուլման քաղաքականության դեմ բողոքով դիմեցին արաբական պետությունների լիգային: Նրանք առաջ էին քաշում Խուզիստանը Իրաքին միացնելու պահանջը[150]:

Պատերազմի վերջում երկրում առաջադիմական տեղա-

շարժերը վերացնելու նպատակով Իրանի հարավային շրջանների ցեղապետերը սկսեցին համագործակցել երկրի հետադիմական ուժերի և օտարերկրյա պետությունների հետ։ Իրանի հարավում ստեղծվեցին հետադիմական կուսակցություններ ու միություններ։ Խուզիստանում, Ֆարսում և Սպահանում ստեղծված արհմիությունները ոչնչացնելու համար անգլիացիները ձգտում էին կրկին կյանքի կոչել «Հարավային ցեղերի միությունը» և նրա «Կապույտ բանակ» ռազմական կազմակերպությունը։ Սակայն անգլիացիների այդ մտահղացումներն արձագանք չգտան ցեղերի առաջնորդների շրջանում։

1945 թ. դեկտեմբերին հիմնվեց Իրանական Ադրբեջանի ինքնավար հանրապետությունը։ Ադրբեջաներենը դարձավ պետական լեզու, այնտեղ բնակվող ազգությունների շնորհվեց իրավահավասարություն։

1945 թ. վերջերին Հյուսիսային Քրդստանում ստեղծվեց Քրդական Դեմոկրատական Հանրապետությունը՝ Մեհաբադ կենտրոնով։ Սակայն ազգային շարժումները ճնշելու նպատակով երկրի հետադիմական ուժերը «Իրանական միասնական ազգի» գաղափարախոսությունը պրոպագանդելով, արևմտյան պետությունների հետ համագործակցած, Իրանի հարավային նահանգներում բնակվող ղաշղայի, բախտիար և արաբական ցեղերի միջոցով վերացրին այդ հանրապետությունը։

Ազգային փոքրամասնությունների համախմբման վառ օրինակ հանդիսացավ 1951—1953 թթ. նավթի ազգայնացման համար ծավալված ժողովրդական շարժումը։ Խուզիստանի արաբներին Մ. Մոսադեղի քաղաքականության դեմ հրահրելու անգլիական գործակալների ջանքերը կատարյալ ձախողման մատնվեցին։

1956 թ. տեղի ունեցավ Իրանի բնակչության առաջին ընդհանուր մարդահամարը, որի պաշտոնական տվյալներով տեղական լեզուների առկայության փաստը լուրջ հարված հասցրեց երկրի «միասնական իրանական ազգի» գաղափարախոսներին։ Բանն այն է, որ մինչև 1956 թ. մարդահամարը իրանական պետական վիճակագրությունը սովորաբար Իրանում բնակվող ազգերի գոյության մասին լռում էր. լավագույն դեպքում առանձնացվում էին միայն բնակչության թուրքալեզու կամ արաբալեզու խմբերը։

1960 թ. վերջերին ելույթ ունենալով Թեհրանի «Մեհրեգան» ակումբում՝ ազգային հարցի գծով սենատի նախկին նախագահ Սեիդ Հասան Թաղիզադեն հայտարարեց. «Երբեմն ծայրահեղ ազգայնամոլները կարականապես ժխտում են Իրանում գոյություն ունեցող տարբեր ազգությունների, էթնիկական տարրերի ու լեզուների գոյությունը, ենթադրելով, որ կեղծ ու համառ քաղաքականությամբ կարելի է ոչընչացնել այդ տարրերին։ Նրանք չեն ընդունում ազգային փոքրամասնությունների պահանջները։ Միայն արդարացի, համբերատար ու եղբայրական ուշադիր վերաբերմունքը կարող է իրականացնել կենտրոնական իշխանությունների ազգաձուլման քաղաքականությունը, և ոչ թե բռնությունը, ծաղրանքը և խստությունը»[151]։

Այդ թվականներին մի շարք էթնիկական շրջանների վարչատարածքային բաժանումներ կատարվեցին. առաջացան Բախտիար, Չարմահալ, Բոերահմադի և Քոհգիլու շրջանները։ Սկսեցին ռադիոհաղորդումներ տրվել քրդերեն, արաբերեն և բելուջերեն լեզուներով։

Ուսումնական հաստատություններում դասավանդումը տարվում էր պարսկերենով։ Ելնելով ազգային փոքրամասնություններին պարսկերենի միջոցով «պարսկացնելու» քաղաքականությունից՝ Իրանի կառավարությունն ընդարձակում էր պարսկական դպրոցների ցանցը։ Եթե 1953 թ. երկրում գոյություն ուներ մոտ 6 հազար տարրական դպրոց՝ 746 հազար աշակերտով, ապա 1966 թ. այդ դպրոցների թիվը անցնում էր 15 հազարից։ 1953 թ. միջնակարգ դպրոցների թիվը 572 էր, որտեղ սովորում էր 121,7 հազար աշակերտ, իսկ 1964 թ. դրանց թիվը հասավ 1269-ի՝ 369 հազար աշակերտով[152]։ Աճում էին արհեստակցական և բարձրագույն ուսումնական հաստատությունները։ Արդեն 1970-ական թվականներին գավառական քաղաքներում գոյություն ուներ 9 բարձ-

բացառիկ ուսումնական հաստատություն[153]: Միայն Թավրիզի համալսարանը 1975 թ. պատրաստել է ավելի քան 10 հազար մասնագետ[154]: Անգրագիտության ամենամեծ տոկոսը բաժին էր ընկնում ազգային փոքրամասնություններին, քանի որ նրանց ապրած տարածքներում ընդհանրապես դպրոցներ չկային: Քրդստանի տարրական դպրոցներում սովորում էր 6—12 տարեկան երեխաների միայն 6, իսկ Բելուջիստանում՝ 20%-ը[155]: 1966 թ. մարդահամարի տվյալների համաձայն երկրում գրագետների թիվը հասնում էր 5 միլիոնի, որից 3,8 միլիոնը բնակվում էր քաղաքներում, իսկ 1,7 միլիոնը՝ գյուղերում[156]:

Երկրի ծայրամասերում բնակվող նատակեցության անցած քոչվորներին տարրական կրթության ոլորտը ներգրավելու նպատակով 1960-ական թվականների կեսերից հիմնվում է «Մեփահե դանեշ» («Լուսավորության բանակ») հաստատությունը, ստեղծվում են վրանային շրջիկ դպրոցներ, որոնց մանկավարժական կադրերի մեծամասնությունը հիշյալ ցեղերի ներկայացուցիչներից էր և իր որակավորումը ստացել էր դեռևս 1957 թ. Շիրազ քաղաքում գործող ուսումնարանում: 1969—1970 թթ. նշված ուսումնարանի շրջանավարտները դասավանդում էին 370 վրանային դպրոցներում, որտեղ սովորում էր 29384 աշակերտ: Նման դպրոցների գերակշռող մասը Շիրազում գործող ուսումնարանի շնորհիվ գտնվում էր Ֆարս նահանգում[157]: Պարսկերենը տարածելու նպատակով ուսումնարանի շրջանավարտներն աշխատանքի էին նշանակվում ոչ թե իրենց, այլ ուրիշ ցեղերի բնակավայրերում:

Սակայն վրանային դպրոցների առկայությունը հանդիպում էր տարբեր ցեղերի ներկայացուցիչների դիմադրությանը, որոնք դեմ էին պարսկերեն լեզվով դասավանդմանը: Տեղեկություններ կան, որ Իրանի թուրքմենական տափաստանների բնակիչները դեռևս 30-ական թվականներին արգելում էին իրենց երեխաներին հաճախել այն դպրոցները, որտեղ դասավանդումը տարվում էր միայն պարսկերեն լեզվով[158]: 1974 թ. պետությունը որոշում է ընդունում տուգանել այն ծնողներին, որոնք իրենց երեխաներին թույլ չէին տալիս հաճախել նորաստեղծ վրանային շրջիկ դպրոցները[159]:

Իրանում ԱՄՆ-ի դեսպանատան կողմից պարսկերենով հրատարակվող «Մարզհայե նո» հանդեսը, պաշտպանելով Իրանի վարչակարգի ազգալուծման քաղաքականությունը, գրում էր. «Լուսավորության բանակը մաքուր լեզու է տարածում այն վայրերում, որտեղ խոսում են տեղական բարբառներով, դա մեծ ու ողջունելի գործ է: Այդ առաջընթացը հատկապես արևմտյան շրջաններում (այսինքն՝ Քրդստանում— Հ. Փ.) բոլոր տեսակետներից խիստ կարևոր է, որովհետև այդ շրջանների երեխաները «լուսավորության բանակի» շնորհիվ սովորում են խոսել պարսկերեն: Վերջինս օգտագործելով տանն ու դպրոցում՝ աստիճանաբար մոռանում են իրենց մայրենի բարբառները»[160]:

Պարսկերեն լեզուն ավելի հաստատուն դարձնելու նպատակով պարտադրվում էր երկրի բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում օգտագործել պարսկերեն գրական լեզուն:

Դպրոցական լայն ցանցի միջոցով պարսկերեն լեզվի տարածումը թեպետ բարձրացրեց միջնորդ լեզու լինելու նրա դերը, սակայն էական ազդեցություն չունեցավ երկրի լեզվական կացության վրա: Պարսկերենի միջոցով գրագիտության տարածումը համեմատաբար հաջող էր ընթանում քաղաքային միջավայրում[161]: Սակայն գյուղական բնակչության շրջանում, որը կազմում էր երկրի բնակչության մոտ 80%-ը, այս ուղղությամբ փոփոխություններն աննշան էին: Գյուղացիությունը համարյա անգրագետ էր: Իսկ երկրի ծայրամասերում բնակվող ազգային փոքրամասնությունների գյուղական հատվածը նույնիսկ 1960-ական թվականներին շատ բիչ էր տիրապետում պարսկերենին[162]:

Ա. Սարյանը արձանագրում է, որ «Զարմահալում հատատված քրդերը առայսօր էլ պահում են իրենց խոսակցական լեզուն»[163]:

Ազգալուծման քաղաքականությունն Իրանում իրակա-

նայվում էր ոչ միայն ուսումնական հաստատությունների, այլև պետական հիմնարկ-ձեռնարկություններում աշխատելու, զինվորական ծառայության, ռադիոյի, հեռուստատեսության ու կինոյի միջոցով: Բնորոշ է այն հանգամանքը, որ ազգալուծման էին ենթարկվում առաջին հերթին պարսիկներին ազգակից այն ցեղերը, որոնց խոսակցական լեզուն պատկանում էր իրանական լեզվախմբին: Դա հատկանշական է նաև ազգային բնդհանրություն ունեցող փոքրամասնությունների համար, որոնց շրջանում ձուլման էին ենթարկվում նաև էթնիկապես իրենց մոտ կանգնած ցեղային խմբերը:

Իրանի ազգային փոքրամասնությունների ու ցեղերի լեզուների վերացման հարցն իր գագաթնակետին հասավ 1960-ական թվականներին, երբ պարբերականների էջերում այդ կապակցությամբ հանդես եկան պետական բարձրաստիճան պաշտոնյաներ: Նրանց հրապարակային ելույթներում մահմեդական կրոն դավանող ազգերի ու ցեղերի լեզուները համարվում էին պարսկերենի բարբառները:

Իշխող ազգի պրոպագանդիստներն իրենց ազգայնամոլ գաղափարները տարբեր ձևով էին արտահայտում: «Մասայելե Իրան» հանդեսն իր «Ազգային միասնության և հասարակական շարժումների ապահովումը Իրանում» հոդվածում գրում էր, որ պետությունը առաջարկում էր պարսիկներով չբնակեցված տարածքները, ինչպես՝ Քրդստանը, Ադրբեջանը և այլն, ձուլել տնտեսական ճնշման միջոցներով, վերացնել այդ լեզուները և աշխատանքի ընդունել այն բանվորներին, որոնք տիրապետում են պարսկերենին[164]:

«Թեհրանե մոսավար» հանդեսը ոմն դոկտ. Խորասանիի ստորագրությամբ տպագրել էր մի ընդարձակ հոդված, որտեղ հեղինակն արհամարհելով ադրբեջանցի, քուրդ, թուրքմեն և ազգային այլ փոքրամասնությունների իրավունքները, առաջարկում էր բռնությամբ պարտադրել նրանց խոսել պարսկերեն, որպեսզի Ադրբեջանում, Քրդստանում և Խուզիստանում բնակվող ազգությունները մոռանան իրենց մայրենի լեզուները և ըստ հոդվածագրի՝ «Իրանում միասնություն առաջանա»[165]:

1960-ական թվականներին բուրժուական ռեֆորմների իրականացման ժամանակ Իրանի կառավարությունը ձգտում էր հսկողությունն ուժեղացնել երկրի ծայրամասերում բնակվող ազգությունների վրա: 1975 թ. մարտին ստեղծված «Ռաստախիզե մելլիե Իրան» («Իրանի ազգային վերածնունդ») ազգայնական կուսակցությունը սկսեց հետապնդել այն կազմակերպություններին, որոնք գործում էին «Ռաստախիզ» կուսակցական ծրագրից դուրս: Երկրի ազգային և քաղաքական միասնությունը ապահովելու նպատակով կուսակցության ղեկավար, Իրանի վարչապետ Ա. Հովեյդան հայտարարեց, որ «Ռաստախիզը» պետք է հանդիսանա մասսաների մեջ իրանական նացիոնալիզմի տարածման ակտիվ գործոն: Այս կապակցությամբ Հովեյդան գրել է. «Մտածել Իրանի մասին, Իրանի համար և իրանական ձևով՝ ահա երկրի յուրաքանչյուր բնակչի պարտականությունը»[166]:

Դեռևս Ռեզա շահի տիրապետության ժամանակներից «աստված, թագավոր, հայրենիք» արտահայտությունն իր ուրույն տեղն էր գրավել իրանական նացիոնալիզմի սոցիալ-տնտեսական և քաղաքական գծի մեջ:

1960-ական թվականների ռեֆորմները խթանեցին գյուղական շրջանների բնակիչների հոսքը դեպի քաղաքներ: Գյուղական բնակչության 41%-ը լքեց հայրենի բնակավայրերը և աշխատանք որոնելու նպատակով ներխուժեց քաղաք: 1950—1978 թթ. Իրանի քաղաքային բնակչության թիվը խիստ աճեց: Միայն Թեհրանում կենտրոնացվել էր քաղաքային բնակչության 28 %-ը[167]:

Բուրժուական ռեֆորմների իրականացման հետ մեկտեղ ռազմականացվում էին ազգային փոքրամասնությունների և ցեղերի բնակավայրերը: Բնակչությունը դիմադրում էր վարչակարգի «պարսկացնելու» քաղաքականությանը: Ազգային փոքրամասնությունների դեմ պետության կողմից ուժի գոր-

ծագրումն ավելի էր բարձրացնում այդ ժողովուրդների ազգային ինքնագիտակցությունը։ Ռեֆորմների իրականացումն ուղեկցվում էր Ադրբեջանում, Խուզիստանում, Քրդստանում, մասամբ նաև Գորգանում և Բելուջիստանում արդյունաբերական համալիրների ստեղծումով[168], որը, բնականաբար, նպաստեց ազգային կադրերի ստեղծմանը։

Արտաահմանում սովորող 70 հազար իրանցի ուսանողների մեջ կային նաև ազգային փոքրամասնությունների բավական մեծ թվով ներկայացուցիչներ, որոնցից շատերը, ելնելով հայրենասիրական զգացմունքներից՝ միավորվում էին վարչակարգի դեմ հանդես եկող քաղաքական և ազգային միություններում, որոնք մեծ մասամբ վերածվում էին ազգային փոքրամասնությունների գաղափարախոսական հիմնական կենտրոնների[169]։

Այսպիսով, թեև էթնիկական փոքրամասնություններով բնակեցված տարածքներում ուսումնական հաստատությունների և արդյունաբերական օբյեկտների ստեղծումը նպաստեց ազգայնական գաղափարախոսության տարածմանը, սակայն, մյուս կողմից, այդ միջոցառումները և բանակի դինված գործողությունները նպաստեցին հիշյալ ազգերի և ցեղերի ինքնագիտակցության զարթոնքին։

Հարկ է նշել, որ մինչև սահմանադրության հաստատումը Իրանում փոքրամասնություն կազմող ժողովուրդները կոչվում էին իրենց ազգությամբ և նրանց իրավունքները պահպանվում էին ժամանակի թագավորների, խանների և իշխանների հրովարտակներով։ 1906 թ. Իրանի սահմանադրության մեջ փոփոխություն մտցնելու նպատակով ազգային փոքրամասնությունները ստեղծել էին էնջումեններ։ Հայերը 1908 թ. հիմնեցին այսպես կոչված «Ազգային խորհուրդ»։ Սակայն այդ, ինչպես պարսիկներն են անվանում, «էնջոմանե արամանե»-ն («հայկական էնջոմանը») պետության կողմից պաշտոնական ճանաչում չգտավ։

Քանի որ Իրանի սահմանադրական հիմնական օրենքը կազմված էր մահմեդական կրոնի սկզբունքներով, ուստի երկրում բնակվող ոչ մահմեդական ազգերը՝ հայերը, հրեաները և զրադաշտականներն անվանվեցին կրոնական փոքրամասնություններ։

Կրոնապետների իրավասությանը հանձնվեց համայնքի դիստիարակության, ամուսնության, ապահարզանի, ժառանգության, բարեգործական և այլ հարցերի լուծումը, այսինքն՝ մահմեդական կրոնապետերի իրավունքները նույնությամբ տարածվեցին ոչ մահմեդական կրոնապետերի վրա։ «Կրոնական փոքրամասնություն» հասկացությունը ինքնըստինքյան վերացնում էր ազգային վարչություններ ունենալու հնարավորությունը, և ազգությունների ղեկավարությունը հանձնվում էր հոգևորականությանը։ Ազգային փոքրամասնությունների իրավունքների այդպիսի սահմանափակումը, փաստորեն, արգելք հանդիսացավ նրանց մշակույթի զարգացման, ազգային դպրոցների ինքնուրույնությունը պահպանելու և այլ խնդիրների լուծման համար։

Ընդհանրապես, սահմանադրական օրենքների ոչ մի հոդվածով ազգային փոքրամասնությունների իրավունքները չէին որոշվում։ Միայն լրացուցիչ օրենքի 8-րդ հոդվածի մեջ նշվում էր, որ «Իրանի պետության բնակիչները պետական օրենքի առջև հավասար են»[170]։

Սահմանադրական կարգերի հաստատման շրջանում ռեակցիոն հոգևորականները դեմ դուրս եկան լրացուցիչ օրենքի 8-րդ հոդվածին։ Ինչպես դոկտոր Ադամիյաթն է նշում, նրանք պահանջում էին տարբերություն դնել մահմեդականների և անհավատների, այսինքն՝ ոչ մահմեդականների միջև[117]։ Ռեակցիոն հոգևորականները և նրանց կողմնակիցները դեմ էին սահմանադրության այն բոլոր հոդվածներին, որոնցում անտեսվում էր հոգևորականության դերը. այդպիսիք էին 19-րդ (պարտադիր ուսուցման մասին) և 20-րդ (մամուլի ազատության մասին) հոդվածները։

Դոկտոր Մեհդի Մալեքզադեն իր «Իրանի սահմանադրության պատմություն» գրքում գրում է. «Բնական է, որ այն երկրներում, որտեղ տնօրինություն է տիրում, կրոնական փոքրամասնություններն ամբոխների կողմից ենթարկվում են ճնշման, կշտամբանքի ու նզովքի, հատկապես արե-

վելյան մահմեդական երկրներում, ուր ժողովուրդն ավելի հակված է դավանապաշտության, քան հայրենիքին։ Հաճախ ամբոխի կրոնական ֆանատիզմն ավարտվում էր դաժանությամբ ու անգթությամբ։ Իրանում հրեաները, հայերը, զրադաշտականները և նոր դավանանքի կողմնակիցները (Հեղինակն ի նկատի ունի բահայիներին—Հ. Փ.) նույնպես զերծ չեն մնացել ճնշումներից ու կեղեքումից»[172]։

Եթե սահմանադրության լրացուցիչ օրենքի 8-րդ հոդվածը բոլոր իրանցիներին առանց սեռի ու դավանանքի խտրության օրենքով համարում էր իրավահավասար, ապա հենց նույն օրենքի 58-րդ հոդվածում նշվում էր, որ «Ոչ ոք չի կարող նշանակվել մինիստր, եթե նա չի հանդիսանում մահմեդական, ծագումով իրանցի և իրանահպատակ»[173]։

Ազգային փոքրամասնությունների իրավունքները սահմանափակվելին նաև դատավորների ընտրության ժամանակ. սահմանադրությամբ միայն մահմեդականները կարող էին դատավորի պաշտոն ստանձնել։ Ըստ դոկտոր Լևիի՝ Իրանի սահմանադրության մեջ նախատեսվել էր ևս մի հոդված, որով սահմանափակվում էր այլազգիներին ոստիկանության վարչություններում և մի շարք մինիստրություններում աշխատանքի ընդունելը, ինչպես նաև պատասխանատու պաշտոններ գրավելը[174]։

Հայերին, ասորիներին և հրեաներին արգելվում էր իրանական բանակում ծառայել որպես կազրային սպաներ, սովորել զինվորական ակադեմիայում։ Կային ամենաշատը գնդապետի աստիճան ունեցող մի քանի հայ սպաներ, որոնք կամ զրասենյակային ծառայողներ էին, կամ զինվորական հիվանդանոցների բժիշկներ։ Բացառություն էին կազմում զրադաշտականները, որոնք որպես «իսկական իրանցի» աշխատանքի էին ընդունվում պետական ապարատում, բանակում, Թեհրանի ուսումնական հաստատություններում և որպես կազրային սպա[175]։

Համաձայն մեջլիսի հաստատած օրենքների, ամուսնության, ապահարզանի, ժառանգության, կտակի և որդեգրության հարցերը լուծում էին արդարադատության մի-

նիստրության կողմից պաշտոնական ճանաչում գտած զրասենյակները, որոնք ղեկավարվում էին Իրանի «Ղանունե մադանի» քաղաքացիական օրենքով։ Վերջինս հիմնված էր մահմեդական կրոնի շիա ուղղության օրենքների վրա։

Միայն 1933 թ. ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին հաջողվեց մեջլիսում վավերացնել մի հատուկ օրենք, որով ոչ շիա իրանցիներին՝ սուննիներին, քրիստոնյաներին, զրադաշտականներին և հրեաներին իրավունք տրվեց անձնական և ընտանեկան հարցերը քննարկելիս հիմնվել իրենց կրոնական օրենքների ու ազգային սովորությունների վրա[176], այն պայմանով, որ այդ օրենքներն ու սովորությունները չհակադրվեն երկրի ընդհանուր կարգին՝ «Նազմե օմումի»-ին։

Իրանահայերի ամուսնության ծեսն ու արարողությունը կատարվում էր հայկական կրոնական օրենքներով, իսկ ամուսնությունը վավերացնելիս նրանք նույնպես, բոլոր իրանցիների նման, ենթարկվում էին 1931 թ. հաստատված և 1937 թ. բարեփոխված «Ամուսնական օրենքին», ըստ որի ամուսնությունը պետք է գրանցվեր պետական արձանագրությունների գրքում։ Այս խնդրում իրանահայերը բացառություն էին կազմում։ Նրանց գրանցումը տեղի էր ունենում Առաջնորդարանում գտնվող պետական արձանագրող գրասենյակում[177]։

Նախքան ընտանիքը հովանավորող օրենքի (Ղանունե հմայաթե խանևադե) հաստատումը 1967 թ. իրանահայերը ապահարզանի հարցը լուծում էին հայկական կրոնական օրենքներով՝ Առաջնորդարանի կողմից ստեղծված դատական և վերաքննիչ հանձնախմբերի միջոցով, որից հետո այն հաստատվում էր պետական օրենքով, Առաջնորդարանի պետական արձանագրության գրասենյակում։

1967 թ. հետո վերը նշված օրենքի համաձայն պետական դատական մարմինները ապահարզանը համարելով երկրի ընդհանուր կարգի խնդիրներից մեկը՝ այն վերցրին իրենց իրավասության տակ։ Ապահարզանի հարցը քննարկվում էր դատական ատյաններում և միայն վերջիններիս որոշումից և

Թույլտվությունից հետո հնարավոր էր այն արձանագրել[178]։

Հակառակ այն իրողությանը, որ հայերը գործնական մեծ մասնակցություն էին ցուցաբերել սահմանադրական հեղափոխությանը, մեծ հույսեր էին կապում սահմանադրական կարգերի հետ և ստացել էին մեջլիսում իրենց ներկայացուցիչներն ունենալու իրավունքը, արգելվեց նրանց մասնակցությունը մեջլիսի ընտրություններին։ Այդ կապակցությամբ Իրանի առաջին մեջլիսի ընտրությունների մասնակից, պատմաբան Քերմանին գրում է. «... ընտրություններն սկսվելու օրերին պարզվեց, որ հրեաները, հայերը և զրադաշտականները պահանջում էին, որ իրենք էլ ընտրեն իրենց պատգամավորներին, և որովհետև Նաջաֆի և Սպահանի բարձրաստիճան հոգևորականությունը կառարկեր, անսպասելի մեծ հակասություններ առիթ կտար, հետևաբար, բացառված չէ, որ նպատակի իրականացման (առաջին մեջլիսի գումարման — Հ. Փ.) արգելք հանդիսանար։ Որոշվեց հանդիսել այդ պարոններին (ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին — Հ. Փ.) և համոզել նրանց հրաժարվել պատգամավոր առաջադրելու մտքից։ Մեծ ջանքերից հետո հայ համայնքը բարյացակամությամբ ու խելամտությամբ իր ընտրական իրավունքները հանձնեց հարգարժան պարոն Թաբաթաբայիին։ Այդ լուսապայծառ պարոնը կամ պետք է բեկաներ այդ իրավունքը ընտրություններում, կամ ինքը հանդես գար որպես նրանց կողմից պատգամավոր»[179]։ Իրականացավ երկրորդը, և ճանաչված մոջթահիդ Սեյիդ Մոհամմադ Թաբաթաբայիին մեջլիսում գրանցվեց որպես տեղի հայերի պատգամավոր։ Հրեաները նույնպես իրենց ձայնը տվեցին մի այլ հոգևոր առաջնորդի՝ Սեյիդ Աբդոլլահ Բհբահանիին[180]։

Իրանի 1907 թ. սահմանադրության լրացուցիչ օրենքով ազգային փոքրամասնություններից պաշտոնական ճանաչում գտած զրադաշտականներին համառ պայքարից հետո, ի տարբերություն հայ և հրեա համայնքների, հաջողվում է Իրանի առաջին մեջլիսի գումարմանը ունենալ իրենց ներկայացուցիչները։ Նրանց առաջին պատգամավորը՝ վաճառական Արբաբ Ջամշիդը, մեջլիսում մեծ վստահություն էր վայելում[181]։

Այսպիսով, հետադիմական հոգևորականության ջանքերի հետևանքով մեջլիսի առաջին գումարման նստաշրջանում հայերից և հրեաներից պատգամավորներ ընտրելու իրավունքն ի չիք դարձվեց։

Երկարատև պայքարից հետո, վերջապես, 1909 թ. սեպտեմբերին Իրանի ներքին գործերի մինիստրության հրամանով ազգային փոքրամասնություններին իրավունք էր վերապահվում մեջլիսի երկրորդ նստաշրջանում ունենալ մեկական պատգամավոր[182]։

Ելնելով 1909 թ. մեջլիսի երկրորդ գումարման ընդունված օրենքի՝ ընտրական իրավունքի մասին համապատասխան հոդվածից (այն է՝ յուրաքանչյուր 50000 հոգուց ընտրվում է մեկ պատգամավոր) հայերը պահանջեցին, որ իրենց թույլատրվի մեջլիսում մեկի փոխարեն երկու պատգամավոր ունենալ, քանի որ այդ տարիներին իրանահայերի թիվը հասնում էր մոտ 100 հազարի։ Սակայն հայ բռնակչության այդ օրինական պահանջն ընտրական հանձնաժողովը մերժեց, պատճառաբանելով, որ նման իրավունքի թույլտվությունն իր իրավասությունից վեր է և առաջարկեց այդ հարցը քննարկել մեջլիսի երկրորդ գումարման ժամանակ[183]։

1909 թ. նոյեմբերի 15-ին իր աշխատանքներն սկսեց մեջլիսի նստաշրջանը, որտեղ հայերն ունեցան միայն մեկ պատգամավոր՝ ի դեմս նշանավոր գրականագետ Հովսեփ Միրզայանի։

Մինչև 5-րդ նստաշրջանը (1925—1927) իրանահայերը մեջլիսում ունեցել են մեկ պատգամավոր։ Հետագայում այդ հարցը կրկին քննության առարկա դարձավ, և համայնքին իրավունք տրվեց ունենալ նաև երկրորդ պատգամավորը[184]։

Որպես կանոն երկու պատգամավորներից մեկին ընտրում էին հնարավային շրջանների, իսկ մյուսին՝ հյուսիսային շրջանների հայերը։

Մեջլիսի ընտրական կանոնադրության համաձայն ազ-

գային փոքրամասնություններն իրավունք չունեին մասնակցել երկրի ընդհանուր ընտրություններին։ Նրանց իրավունք էր վերապահվում ընտրել միայն իրենց ներկայացուցիչներին։ Համապատասխան հոդվածով նրանք դասվում էին հատուկ կուրիաների (ընտրախավերի) շարքը և, նկատի ունենալով ազգային ու կրոնական պատկանելությունը, կազմում էին առանձնացված ընտրաշրջաններ[185]։ Դրա հետևանքով հայերի և ազգային մյուս փոքրամասնությունների պատգամավորները մեջլիսի մյուս ներկայացուցիչների նման լայն իրավունքներ չունեին։

Ընդամենը 1907 թ. լրացուցիչ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն սահմանադրական կարգերի մեջ որևէ խախտում չլիներ թույլատրվեր, սակայն, ինչ-ինչ պատճառներով, անդրանիկ սենատը գումարվեց միայն 1949 թ. օգոստոսին։

Մեջլիսում ազգային փոքրամասնությունների պատգամավորներն ի վիճակի չեղան պաշտպանել իրենց համայնքների ընտրական իրավունքները, և իրանական հետադիմական պատգամավորների ներկայացուցիչ դոկտոր Մալեքզադեի առաջարկով վավերացվեց սենատի ընտրությունների համար մեջլիսի կողմից ընդունված ընտրական օրինագծի 9-րդ կետը, որով այդ ընտրություններին կարող էին մասնակցել միայն մահմեդականները[186]։

Այսպիսով, ազգային փոքրամասնությունները, այդ թվում նաև հայերը, զրկվում էին, ինչպես արդեն մեր կողմից նշվեց, մեջլիսի առաջին նստաշրջանին և սենատի անդրանիկ գումարմանը մասնակցելու իրավունքից՝ չնայած, որ հիմնական օրենքով երկրի բոլոր բնակիչներն ունեին հավասար իրավունքներ։

Միայն երկրում 1960-ական թվականներին, բուրժուական ռեֆորմների անցկացման տարիներին, երբ որոշակի իրավունքներ էր վերապահվում Իրանում ապրող ազգային փոքրամասնություններին, հայերին հաջողվում է սենատում ունենալ իրենց ներկայացուցիչը։

Սենատի այդ օրենսդիր ժողովում բոլոր փոքր ազգու-

թյունները հավասարապես ունեին մեկ ներկայացուցիչ (դա վերաբերում էր միայն ընտրովի սենատներին)։

Առաջին անգամ 1967 թ. Իրանի հայությունը սենատի պատգամավոր ընտրեց վարչակարգին մոտ կանգնած դոկտոր Ալիք Աղայանի անդրանիկ որդուն՝ Ֆելիքս Աղայանին[187], որն անընդմեջ ընտրվում էր՝ մինչև Իսլամական Հանրապետության հաստատումը։ Այդ տարիներին իրագործվում է արդեն հիշված 1907 թ. լրացուցիչ օրենքի 58-րդ հոդվածը, որով ոչ մահմեդականներին իրավունք էր վերապահվում առանձնել միայն մինիստրի օգնականի պաշտոնը[188]։

1968 թ. սեպտեմբերին, երբ Իրանի բոլոր քաղաքներում տեղի ունեցան քաղաքային խորհուրդների («Անջուման շահրդարի») նոր կազմի ընտրությունները, Աբադանում, Թավրիզում, Ռեշտում, Սպահանում և Բախթարանում իրենց հասարակական գործունեությամբ աչքի ընկնող և համաքաղաքացիների ընդհանուր համակրանքը վայելող հայերին թույլատրվեց ընտրվել քաղաքային խորհրդի կազմում[189]։

Այդ տարիներին Թեհրանի և Սպահանի պետական համալսարանների գրականության ֆակուլտետներին կից բացվեցին հայագիտական ամբիոններ։

Հետպատերազմյան շրջանում Թավրիզահայերի համար թույլատրվել էր հայերեն ամենօրյա ռադիոհաղորդում՝ տասնհինգ րոպե տևողությամբ։ Որոշ ժամանակ անց այն դարձավ կեսժամյա, իսկ 1979 թ. փետրվարյան հեղափոխությունից մեկ տարի առաջ՝ մեկժամյա հաղորդում[190]։ Պետության կողմից հայկական եկեղեցական վարչություններին թույլատրվում էր կրոնական տոներն ու արարողությունները հաղորդել հեռուստատեսությամբ և ռադիոյով (որոշակի սահմանված կարգով և երկարատև ընդմիջումներով տրվող այդ հաղորդումները կարելի էր համարել ազգային փոքրամասնությունների, հատկապես հայերի նկատմամբ իշխանության վարած բարյացակամ քաղաքականության արդյունք)։

Իրանի ազգային փոքրամասնությունների, ինչպես նաև

երկրում բնակվող մյուս էթնիկական փոքրամասնությունների համար սահմանված և սահմանադրական հիմնական օրենքում վավերացված որոշակի, ձևական արտոնությունների ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց այն եզրակացության, որ դրանք հետապնդում էին միմիայն մի նպատակ, իրականում իրավազուրկ վիճակում թողնելով իրանի միլիոնավոր այլազգի մահմեդականներին՝ ցույց տալ, որ իբր Իրանում կրոնական և ազգային հարցերը դեմոկրատական լուծում են ստացել:

Ազգային փոքրամասնությունների սահմանադրությամբ հռչակված իրավունքներն անընդհատ ոտնահարվում էին: Չնայած պառլամենտական կարգերը պահպանվում էին, սակայն, փաստորեն, 1925—1941 թթ. ընկած ժամանակաշրջանում երկրում տիրում էր ոզաշահյան բռնապետությունը: 1941—1946 թթ., ինչպես նաև 1951—1953 թթ. ազգային շարժումների վերելքի ժամանակաշրջանը քիչ թե շատ քաղաքական ազատությունների և մեջլիսի դերի բարձրացման շրջանն էր:

1953 թ. պետական հեղաշրջումից հետո միապետի քաղաքական դերը բարձրացավ: Քաղաքական ազատություն հռչակող սահմանադրական հոդվածները, փաստորեն, չէին տարածվում դեմոկրատական կազմակերպությունների և ուժերի վրա: Նման ճակատագիր ունեին նաև ազգային փոքրամասնությունները:

1936 թ. պետության «պարսկացման» քաղաքականության իրագործման տարիներին հայկական դպրոցների ինքնավարության իրավունքը վերացավ: Իշխանությունների հրամանով փակվեցին հայկական բոլոր դպրոցները, բռնագրավվեցին նրանց շենքերն ու նրանց պատկանող սեփականությունները: Միայն 1943 թ. թույլատրվեց վերաբացել հայկական դպրոցները:

Հայկական դպրոցների վրա պետական ուսուցման ծրագրի տարածմամբ փոխվում է նաև վերջիններիս ուսուցման հիմքը, հայերենին փոխարինում է պետական լեզուն՝ պարսկերենը: Թեմական մարմինները, որպես համայնքի սե-

փականություն, իրենց վրա էին կրում, այսպես կոչված, «հայկական դպրոցների» ծախսերը և նոր դպրոցների կառուցման բոլոր հոգսերը:

Արգելվել էր նաև մի քանի հայկական թերթերի, ամսագրերի և այլ պարբերականների հրատարակությունը[191]: 1938 թ. «էթթելաաթ» կիսապաշտոնական օրաթերթը ազգային փոքրամասնությունների դեմ հալածանք սկսեց՝ տպագրելով մի շարք հոդվածներ «վտանգավոր հանցագործների» դեմ, որոնց մեջ հիշվում էին հայկական և ասորական ազգանուններ[192]:

Ռեզա շահի կարգադրությամբ արգելվեց առևտրական կենտրոններում օտար՝ ֆրանսերեն, ռուսերեն, հայերեն և այլ լեզուներով ցուցանակների օգտագործումը[193]: Էլվել Սաթոնը նշում է, որ ազգային փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող սահմանափակումներն ամենից շատ վնասում էին հայերին. «Հայերը բոլորից շատ տուժեցին ... Նրանց մերժում էին պետական ծառայության ընդունել, և նրանք դժվարանում էին որևէ տեղ աշխատանք գտնել»[194],— գրում է նա:

1937—1938 թթ. Խորհրդային Միությունից Իրան վերադարձած մոտ ութ հազար իրանահպատակները՝[195] պարսիկներ, ադրբեջանցիներ և հայեր, կոչվեցին «մոհաջիր»[196], որ նշանակում է «տարագիր»: Իրանի կառավարության կողմից նրանցից շատերը ենթարկվեցին հետապնդումների: «էթթելաաթ» թերթն այդ առթիվ գրում է. «Մոհաջիրների գործով զբաղվող մինիստրությունների կողմից նշանակված հանձնաժողովը, նկատի ունենալով նրանց վիճակը, վերջիններիս ուղարկում է երկրի համապատասխան վայրերը»[197]:

«Մոհաջիր» հայերի վրա ճնշում գործադրելով՝ իրանական իշխանությունները պահանջում էին հայկական ազգանունների «յան» վերջավորությունը կրճատել, որի հետևանքով բազմաթիվ հայերի ազգանուններ աղավաղվեցին կամ փոխարինվեցին ոչ հայկականով: Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը նրանք գտնվում էին գաղտնի ոստիկանության հսկողության տակ:

Այսպիսով, եթե սահմանադրական կարգերի հաստատմանը հաջորդող առաջին տասնամյակում հայերը և մյուս փոքր ազգերը հետապնդվում էին կրոնի տարբերության համար, ապա դրանից հետո ընկած ժամանակաշրջանում, հատկապես մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը, որպես ձուլման նպատակով իշխող վարչակարգերի կողմից մշտապես ենթարկվում էին հալածանքի։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Ա. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1930-ական թվականների վերջերին Իրանում ուժեղացավ ֆաշիստական Գերմանիայի ազդեցությունը։ Հենվելով կալվածատերերի, կոմպրադորական բուրժուազիայի և հետադիմական ուժերի վրա՝ իրանական իշխանություններն անողոքաբար հալածում էին երկրում գոյություն ունեցող դեմոկրատական բոլոր տարրերին։ Ֆաշիստական Գերմանիան, որը սերտ կապեր էր հաստատել Ռեզա շահի կառավարության հետ, մեծ նշանակություն էր տալիս Իրանում պանիրանիզմի քաղաքականության իրականացմանը։ Գերմանիան միջամտում էր երկրի բազմաթիվ պետական ձեռնարկությունների գործունեությանը։ Արդեն 1941 թ. նախօրյակին գերմանացիներն Իրանի պետական մոտ 50 հիմնարկներում զբաղեցնում էին բազմաթիվ պաշտոններ։ Ներքանց ձեռքում էին գտնվում ջրատեխնիկական արդյունաբերության կառույցները, նավահանգիստները, հեռախոսային և հեռագրական գործակալությունը, երկաթուղային ձեռնարկությունները։ Իրանի մեջլիսի մի շարք դեպուտատներ և մինիստրներ սերտորեն համագործակցում էին գերմանացիների հետ[1]։

Այդ տարիներին հակախորհրդային պրոպագանդան համատարած բնույթ ստացավ։ Արգելվեցին անգամ նախքան հեղափոխությունը հրատարակված ռուսերեն գրքերը, իսկ

ռուսաց լեզվին տիրապետողները համարվելով «վտանգավոր տարրեր»՝ գտնվում էին գաղտնի ոստիկանության հրահսկողության տակ[2]։

1938 թ. Իրանը հրաժարվեց երկարաձգել 1935 թ. երկու երկրների միջև կնքված առևտրական պայմանագրի ժամկետը։

1941 թ. գարնանից Գերմանիան նախապատրաստվում էր Իրանում ֆաշիստական հեղաշրջում կատարել։ Խորհրդային Միության վրա հարձակվելու ծրագրի իրականացման գործում Գերմանիայի համար չափազանց կարևոր էր Իրանի ռազմաստրատեգիական դիրքը։ Նախապատրաստական աշխատանքներ էին տարվում բուն Իրանից ԽՍՀՄ-ի վրա հարձակման ուղղությամբ[3]։ Դիվերսիոն ու տեռորիստական ակտեր կազմակերպելու նպատակով Գերմանիան Իրանում կազմակերպել էր համապատասխան խմբեր, կառուցվել էին գինապահեստներ։ ԽՍՀՄ-ի սահմանում կատարվում էին տեղագրական լուսանկարումներ[4]։

Իրանի հետադիմական վարչակարգը թշնամական քաղաքականություն էր վարում Խորհրդային Միության նկատմամբ, որն իր կազմավորման առաջին իսկ տարիներից ձգտել էր նրա հետ բարիդրացիական, իրավահավասար հարաբերությունների հաստատման։

Ռեզա շահի և վարչապետ Ալի Մանսուրի կառավարության պրոֆաշիստական քաղաքականությունը կանխելու համար ԽՍՀՄ-ը 1941 թ. հունիսի 26-ին, հուլիսի 19-ին և օգոստոսի 16-ին նախազգուշացրեց Իրանին, իսկ օգոստոսի 25-ին՝ համաձայն 1921 թվականի խորհրդաիրանական պայմանագրի 6-րդ հոդվածի, հարկադրված իր զորքերը ժամանակավորապես մտցրեց Իրան։ Այդ նույն ժամանակ անգլիական զորքերը մտան Իրանի հարավային շրջանները։ Ռեզա շահը սեպտեմբերի 16-ին հրաժարական տվեց՝ գահը հանձնելով որդուն՝ Մոհամմադ Ռեզա Փեհլևիին։

1942 թ. հունվարի 29-ին ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի և Իրանի միջև կնքվեց պայմանագիր, որով դաշնակիցները

պարտավորվում էին հարգել Իրանի տերիտորիալ ամբողջականությունը, սուվերենությունը և քաղաքական անկախությունը[5]։

Իրանի բնակչության, հատկապես իրանահայ համայնքի առաջադիմական զանգվածները մեծ հրճվանքով դիմավորեցին խորհրդային զորքերի մուտքն Իրան[6]։ «Մանուկներն ու ծերերը, տղամարդիկ ու կանայք մեծ խմբերով դուրս էին գալիս ճանապարհի վրա, կանգնում գյուղերի և քաղաքների փողոցներում, սիրալիր թափահարում ձեռքերը։ Իրանի բնակչությունը դիմավորում էր կարմիր բանակի մարտիկներին ինչպես բարեկամների»[7]։

Խորհրդային բանակի մուտքն Իրան խորտակեց Ռեզա շահի միապետական կարգերը։ Երկրում ստեղծվեցին քաղաքական կուսակցություններ, դեմոկրատական կազմակերպություններ, կրկին սկսեցին հրատարակվել առաջադիմական թերթերն ու պարբերականները։ 1941 թ. հոկտեմբերին ստեղծվեց Իրանի ժողովրդական կուսակցությունը («Թուդե»)։

Իրանում խորհրդային զորքերի տեղակայությունը նպաստեց երկրի նորմալ կյանքի վերականգնմանը և երկու երկրների միջև բարեկամական ու մշակութային սերտ կապերի հաստատմանը։

Խորհրդաիրանական համագործակցությունը ընդլայնելու նպատակով Իրանի առաջադիմական ուժերի միջամտությամբ 1943 թ. հոկտեմբերի 30-ին ստեղծվեց Իրանի և ԽՍՀՄ-ի մշակութային կապերի ընկերություն (ՎՕԿՏ-ը)[8]։ Նրա հիմնական նպատակը Իրանի և Խորհրդային Միության միջև գիտության, մշակույթի, գրականության ու արվեստի բնագավառում բարեկամական կապերի ամրապնդումն ու մշակութային օջախների ստեղծումն էր։

Թեհրանում, Թավրիզում, Մեշհեդում, Ուրմիայում, Ռեշտում և այլ մեծ քաղաքներում ստեղծվել էին Խորհրդային մշակութային տներ, որտեղ կազմակերպվում էին կինոֆիլմերի դիտումներ և համերգներ։

Հատկապես մեծ տպավորություն էին թողնում Հայաս-

տանի, Վրաստանի, Միջին Ասիայի և Ադրբեջանի հանրապետությունների մշակութային գործիչների հյուրախաղերը։

1942 թ. փետրվարին Ա. Այվազյանի ղեկավարությամբ առաջին անգամ Իրան այցելեց Հայաստանի պետական էստրադային նվագախումբը, որի համերգները շարունակվեցին մինչև մարտ ամիսը։ Նվագախումբը Իրանում համերգներ տվեց նաև մեկ տարի անց՝ 1943 թ. հունիս-օգոստոս ամիսներին։ Նրա հետ Իրան են այցելել նաև Կոմիտասի անվան կվարտետը, օպերայի և բալետի թատրոնի մեներգիչ Պավել Լիսիցյանը։ 1944 թ. փետրվար-մայիսին Իրանում հյուրընկալվեց Հայաստանի երգի-պարի պետական անսամբլը, որի հետ էր հայ նշանավոր երգիչ Շարա Տալյանը։ Իրանի հայաշատ քաղաքներում ինչպես էստրադային նվագախմբի, երգի-պարի պետական անսամբլի, այնպես էլ անհատ կատարողների համերգներն անցան մեծ հաջողությամբ։ Իրանահայերը գրկաբաց ընդունեցին իրենց հարազատ եղբայրներին ու քույրերին։ Տասնյակ հազարավոր հայեր ականատես եղան հայրենիքի մեծատաղանդ արվեստագետների բարձր ու անզուգական կատարողական արվեստին։ «Մարդոմ» թերթը Միջին Ասիայի և անդրկովկասյան հանրապետությունների մշակույթին նվիրված հոդվածում գրել է. «Ապատատենք իրանցիները, երբ իրենց աչքերով Թեհրանի, Թավրիզի, Ռեշտի, Մեշհեդի թատրոններում տեսան տաջիկ, հայ և ռուս դերասանների ելույթները, թախիծով խորհում էին այն մասին, որ քսան տարվա ընթացքում մեր հարևան ժողովուրդները զեղեցիկ արվեստների բնագավառում շատ են առաջադիմել, իսկ իրանական ժողովուրդը արվեստի ասպարեզում մնացել է նույն մակարդակին»[9]։

Իրանի և ԽՍՀՄ-ի ժողովուրդների միջև բարեկամական, մշակութային նման կապերի ամրապնդումը միանգամայն հակառակ էր Իրանի հետադիմական շրջանների տրամադրություններին, որոնք դեմ էին ԽՍՀՄ-ի հետ բարիդրացիական հարաբերություններին։ Այդ իսկ պատճառով ընկերության գործունեությունն ընթանում էր երկրի դեմոկրատական և հետադիմական տարրերի լարված պայքարի պայմաններում։

1944 թ. նոյեմբերի 7-ին Իրանի զինվորական իշխանությունները և ոստիկանությունը բանտարկեցին առաջադիմական կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք Հոկտեմբերյան հեղափոխության 27-ամյակի կապակցությամբ Թեհրանում կազմակերպել էին մասսայական միտինգ[10]։ Վարչապետ Սայեդի հրահանգով կատարված այդ հակադեմոկրատական ակն առաջադեմ շրջաններում զայրույթ առաջացրեց։ Նրանք մեջլիսի դեպուտատներին կոչ արեցին անվստահություն հայտնել Սայեդի կառավարությանը և վերջ դնել նրա վտանգավոր քաղաքականությանը[11]։

Առաջադիմական կազմակերպությունները ժողովրդական կուսակցության գլխավորությամբ պայքարում էին ազգային և դեմոկրատական իրավունքների հաստատման ու ամրապնդման համար։ Իսկ երկրի իշխող շրջանները, վախենալով ժողովրդական հուգումներից, դաշնակցում էին օտարերկրյա կապիտալիստների, հատկապես ամերիկացիների հետ, որոնց խորհրդատու-վարդապետները Միլիսպոյի գլխավորությամբ միջամտում էին երկրի ներքին գործերին[12]։

Իրանի դեմոկրատական և հետադիմական կազմակերպությունների միջև ծավալված անհնդմեջ պայքարն անդրադառնում էր Իրանի և Խորհրդային Միության մշակութային հարաբերությունների վրա։

Պատերազմի ծանր տարիներին, երբ հաշվառման մեջ էր յուրաքանչյուր բուժաշխատող, նկատի ունենալով Իրանում բուժսպասարկման ցածր մակարդակը և միաժամանակ ընդառաջելով Իրանի առողջապահական հաստատությունների ցանկություններին՝ խորհրդային կառավարությունը որոշում է Թեհրանում բացել կարմիր խաչի հիվանդանոց, որը 1943 թ. մայիսին սկսեց իր աշխատանքները։ Նրա տնօրեն էր դոցենտ (հետագայում՝ ակադեմիկոս) Հովհաննես Բարոյանը։ Իրանի բնակչության խնդրանքով շուտով հիվանդանոցն ընդլայնում է իր գործունեությունը։ Մասնաճյուղեր են բացվում երկրի խոշոր քաղաքներում՝ Թավրիզում, Մեշհեդում, Ռեշտում և Ուրմիայում։ Հիվանդանոցի ծառայություններից օգտվում էին ոչ միայն Իրանի, այլև

Իրաքի, Սիրիայի, Աֆղանստանի և Հնդկաստանի քնակիչները[13]։

Հիվանդանոցի բժշկական անձնակազմում ներգրավված էին ականավոր գիտնականներ՝ պրոֆ. Ֆ. Տալիզինը, Ռ. Մալիկինը, դոկտոր Բ. Ֆեոդորովան, դոցենտ Աննա Բարոյանը, Թերապևտ Հովհ. Հովհաննիսյանը, վիրաբույժ Ս. Մկրտումյանը և ուրիշներ։ Հիվանդանոցի բժշկական անձնակազմի մեջ ներգրավված էին նաև Թեհրանահայ լավագույն բժիշկներն ու բուժքույրերը, որոնցից հայտնի էր անատոմ-ախտաբան Հ. Հովհաննիսյանը։ Հիվանդանոցին կից գործում էր հմուտ և հայրենասեր դեղագործ Ս. Մինքայելյանի դեղատունը։

1945 թ. մայիսի 24-ին հիշյալ հիվանդանոցի երկու տարվա գործունեության մասին «Վերածնունդ» թերթը տպագրել է հիվանդանոցի անօրեն Հովհ. Բարոյանի հոդվածը, որտեղ նշված էր, որ մայրաքաղաքում և մյուս քաղաքներում գործող հիվանդանոցներում ամեն օր 600 իրանցիներ են բուժվում։ Երկու տարվա ընթացքում հիվանդանոցներից օգտվել են 200.000 հիվանդներ, 93 քաղաքներից և բնակելի վայրերից բազմաթիվ դիմումներ են ստացվել խորհրդային հիվանդանոցից բժշկական օգնություն ստանալու համար[14]։

Թեհրանում խորհրդային Կարմիր խաչի հիվանդանոցի կոլեկտիվը Հովհ. Բարոյանի անմիջական ղեկավարությամբ մեծ աշխատանք է տարել նաև իրանցի երիտասարդներից միջին բժշկական կադրեր պատրաստելու գործում։ Այդ նպատակով 1945 թ. հիվանդանոցին կից բացվում է բուժակուհյան-մանկաբարձության դպրոց՝ ուսման երկու տարվա ժամկետով։ Առաջին տարում այնտեղ սովորում էին 33, իսկ հաջորդ տարում՝ նույնքան իրանցի և հայ երիտասարդներ[15]։ Դպրոցում ուսումն անվճար էր, իսկ շրջաններից եկած ուսանողները նաև ձրի սնունդ էին ստանում։ Կարիքավորներն ստանում էին նյութական օգնություն։

Պատերազմի տարիներին ֆաշիստական Գերմանիայի հետախուզական կենտրոնների առջև խնդիր էր դրված ամեն

կերպ արգելել ռազմական ապրանքների փոխադրումը Պարսից ծոցից ԽՍՀՄ։ Գերմանիայի դիվերսիոն խմբերին հանձնարարված էր պայթեցնել կամուրջներն ու թունելները[16]։ Այդ օրերին հազարավոր վարորդներ, որոնց մեծ մասը հայեր էին, հոժարակամ, շատ հաճախ առանց վարձատրության ռազմական օգնությունը Իրանի հարավային նավահանգիստներից տեղափոխում էին հյուսիս՝ խորհրդային սահմաններ։ Դեպի խորհրդային Միություն 4 միլիոն տոննա բեռնափոխադրումներին ակտիվորեն մասնակցելու համար բազմաթիվ հայ և պարսիկ տրանսպորտային աշխատողներ պարգևատրվում են Խորհրդային Միության շքանշաններով ու մեդալներով[17]։

1946 թ. հոկտեմբերի 1-ին Թեհրանի խորհրդային դեսպանատունը, որտեղ տեղի էր ունեցել պարգևատրության արարողությունը, քաղաքական գծով վարչապետին փոխարինող Մոզաֆար Ֆիրուզը պարգևատրվածների կողմից հայտարարեց. «Այս օրը երկու ժողովուրդների միջև ստեղծված բարեկամության անհերքելի ապացույցն է։ Մենք չպետք է մոռանանք, որ փառապանծ կարմիր բանակը խորտակիչ հարված հասցրեց ֆաշիստական հորդաներին և ջախջախեց նրանց վերջնականապես։ Հատկապես մենք պետք է հիշենք Ստալինգրադի պատմական մարտերը, որ փրկեցին Իրանը մեծ չարիքից»[18]։

Պատերազմի տարիներին խորհրդային Միությունը Իրանի նկատմամբ իր վարած քաղաքականությամբ ձեռք բերեց իրանական ժողովրդի հարգանքն ու համակրանքը։ Դրա արտահայտություններից էին Իրանում Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձի հանդիսավոր տոնակատարությունները։

Իրանի ժողովրդական կուսակցության և դեմոկրատական կազմակերպությունների նախաձեռնությամբ գործարաններում, դպրոցներում, մշակութային հաստատություններում կազմակերպվում էին զեկուցումներ, դասախոսություններ, ասուլիսներ։ Հոկտեմբերյան օրերին Իրա-

նի մեծ քաղաքներում տեղի էին ունենում միտինգներ, ժողովներ, խորհրդային ժողովրդի հետ համերաշխության քայլարշավներ։ Երկրի առաջադիմական թերթերն իրենց էջերում լուսաբանում էին Խորհրդային Միության, Հոկտեմբերյան հեղափոխությունը, Հայրենական պատերազմը, Խորհրդային Միության արտաքին և ներքին քաղաքականությունը, նրա ժողովրդական տնտեսության և մշակույթի նվաճումները։

1945 թ. նոյեմբերի 29-ին Թեհրանի հայկական ակումբում մեծ շուքով նշվեց Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 25-րդ տարեդարձը, որը կազմակերպվել էր իրանախորհրդային բարեկամության ընկերության և հոբելյանական հանձնաժողովի կողմից։ Վահանակներում ցուցադրվում էին Խորհրդային Հայաստանից ստացված լուսանկարները, դիագրամմաները, մակագրությունները, որոնք վառ կերպով լուսաբանում էին տնտեսության, մշակույթի և գիտության բոլոր բնագավառներում Խորհրդային Հայաստանի ձեռք բերած նվաճումները։ Սրահի ճակատին ամրացված էր Խորհրդային Հայաստանի գերբը։ Բեմում կախված էր հազվագյուտ ու թանկարժեք մի գորգ, որը Թեհրանի հայերի կողմից այս մեծ տոնի առթիվ նվեր էր ուղարկվում մայր հայրենիքին[19]։

Հանդիսավոր նիստին բացման խոսքով հանդես եկավ իրանախորհրդային բարեկամության ընկերության նախագահ գեներալ Ջահանբանին։ Նա շնորհավորեց Խորհրդային Հայաստանի 25-ամյակը և հույս հայտնեց, որ ՀԽՍՀ-ի և Իրանի հարաբերությունները հիմնված կլինեն սերտ բարեկամության վրա։

Ժողովը ողջույնի նամակ հղեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը։ Հանդիսավոր մասից հետո տեղի հայերի ուժերով տրվեց ճոխ համերգ, իսկ «Կոմիտաս» երգչախումբը կատարեց Խորհրդային Հայաստանի պետական հիմնը[20]։

Այդ պանծալի հոբելյանին իր էջերն էր նվիրել «Փայամե նով» ամսագիրը, որտեղ լույս տեսավ Իրանի ժողովրդական

կուսակցության գործիչ Ղազար Սիմոնյանի «Խորհրդային Հայաստան» հոդվածը[21]։

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման տարեդարձը նույնպիսի հանդիսավորությամբ նշվեց նաև Իրանի հայաշատ այլ քաղաքներում։ Թավրիզում մեծ շուքով են տոնվել Խորհրդային Հայաստանի 23, 24, 25-րդ տարեդարձը։ Նոյեմբերի 29-ին Թավրիզի «ВОКС»-ի սրահում «Խորհրդաիրանական մշակութային կապի ընկերության» և «Հայ կուլտուրական միության» նախաձեռնությամբ մեծ հանդիսավորությամբ տոնվեց Խորհրդային Հայաստանի 25-ամյակը։ Իսկ նոյեմբերի 30-ին Ֆիրդուսի պարոցի սրահում դարձյալ «Հայ կուլտուրական միության» և «Մեքենավարների միության» կողմից տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 25-ամյակին, որին ներկա էին Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ներսես արք. Մելիք-Թանգյանը, խորհրդային հյուպատոսարանի քարտուղար Կ. Առուշանյանը և ուրիշներ[22]։

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման տարեդարձի նման շքեղ տոնակատարություն աննախընթաց երևույթ էր իրանահայ ամբողջ համայնքի համար։ Իրանահայությունն իրավացիորեն հոգեկան մեծ վերելք էր ապրում, ականատես էր լինում մայր հայրենիքի վերածնմանը, տեսնում նրա պետական գերբը, լսում նրա հիմնը։

Նույն ժամանակաշրջանում ստեղծվեցին մի քանի առաջադիմական միություններ ու կազմակերպություններ, որոնցից հայտնի են հայ երիտասարդական մշակութային «Վերելք» միությունը, «Մշակույթ» միությունը, Խորհրդային Հայաստանի հետ մշակութային կապեր պահպանող Նոր Ջուղայի հայկական ընկերությունը և իրանահայ ազգային խորհուրդը։ Նոր զարթոնք ապրեցին Թավրիզի հայ կուլտուրական միությունը և այլ կազմակերպություններ։ Ստեղծված միությունների նպատակն էր համախմբել Իրանի հայ երիտասարդությանը, կուլտուրապես զարգացնել ու բարձրացնել նրա մտավոր մակարդակը, հաղորդակից դարձնել Խորհրդային Հայաստանի առաջադեմ մշակույթին։

1942 թ. հունիսի 1-ին Թեհրանում մի խումբ ազատասիրտ երիտասարդների նախաձեռնությամբ հիմնվում է հայ երիտասարդական մշակութային «Վերելք» միությունը, որն իրանահայ երիտասարդական կուլտուրական շարժման մեջ մի եղակի և աննախընթաց երևույթ էր։

Կարճատև, մոտ երեք ամսվա գործունեության ընթացքում միության շուրջը համախմբվեց շուրջ 700 երիտասարդ։ Այդ մշակութային կազմակերպության ունեցած հարատևուն հաջողությունը լուրջ անհանգստություն պատճառեց հակադիր ուժերին, որոնց դրդմամբ շուտով վարչական միջոցներով մշակութային այդ օջախը փակվեց[23]։

1944 թ. մայիսի 1-ին մի խումբ մտավորականների նախաձեռնությամբ ստեղծվեց «Մշակույթ» միությունը։ Նրա նպատակն էր մասսայականացնել ժամանակակից մշակույթը, առաջին հերթին՝ հայկականը, նպաստել հայ-պարսկական կապերի մերձեցմանը և մշակութային համագործակցությանը, կապ հաստատել Իրանի և արտասահմանի մշակութային հիմնարկների և անհատ գործիչների հետ, միության անդամների մեջ ստեղծել մշակութային և տնտեսական համագործակցություն[24]։ Միության գործունեությունը հատկապես ընդլայնվեց այն բանից հետո, երբ մի քանի ազատատենչ երիտասարդների՝ Ավագ Մելիք-Հակոբյանի, Ազատ Վեհունու, Երվանդ Մանարյանի, Լիզա Հովհաննիսյանի, Համլետ Եգանյանի ու Բարկեն Չուգասզյանի ջանքերով ստեղծվեց 16—25 տարեկան պատանիներից ու աղջիկներից կազմված երիտասարդական խումբ։ Նրա մեջ ընդգրկված 60 երիտասարդների ջանքերով շատ կարճ ժամանակամիջոցում զարկ տրվեց դասընթացների աշխատանքներին, կազմվեցին գրական, երաժշտական, թատերական և մարզական բաժանմունքներ, ստեղծվեց գրադարան-ընթերցարան, կազմակերպվեցին շաբաթական դասախոսություններ և այլն[25]։ Սակայն Միության հիմնական գործունեությունը ծավալվեց «Կուլտուրական կապի հայկական ընկերության» (ԿԿՀԸ), (1958 թ.՝ «Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերություն») ստեղծումից հետո, երբ այն ստացավ վերջինիս աջակցությունը։

Միության կազմակերպած դասընթացները, որի ժամանակ սովորում էին հայերեն, պարսկերեն, ռուսերեն և անգլերեն, ծրագրված էր անցկացնել փոքր ծավալով։ Այդ կրթական խմբում մեծ էր հատկապես բնակչության չքավոր խավերի երիտասարդության թիվը։

«Մշակույթ» միությունը չունևոր հայրենակիցներին նյութապես օգնելու համար հաճախ կազմակերպում էր երեկույթներ և զանազան միջոցառումներ[26]։ Միության շուրջը համախմբվել էին իրանահայ համայնքի այն առաջադիմական մտավորականները, որոնք անվերապահորեն հետևում էին վերածնվող մայր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի մշակութային նվաճումներին։

Իրանի նորաստեղծ մշակութային կապի ընկերության կազմակերպություններն օգտվում էին իրանախորհրդային մշակութային կապի ընկերության կանոնադրությունից, որը հաստատվել էր 1944 թ. փետրվարի 29-ին՝ Իրանի կառավարության և իրանախորհրդային բարեկամության միության կողմից։ Այդ կանոնադրությունն իր հիմնական սկզբունքներով համընդհանուր էր իրանահայ մշակութային գրեթե բոլոր կազմակերպությունների և ընկերությունների համար։

Կանոնադրության հենց առաջին մասում նշված են ընկերությունների խնդիրները, այն է՝ ծանոթանալ Խորհրդային Հայաստանի գիտության, գրականության, մշակույթի և տեխնիկատնտեսական նվաճումների հետ, հրապարակել թերթ, պրոպագանդել Խորհրդային Հայաստանի նվաճումները։ Կարևոր խնդիր էր համարվում հայ բնակչության մշակութային մակարդակի բարձրացումը, որի համար նախատեսվում էր կազմակերպել թատերական գործը՝ նրան թատերական և օպերային արվեստին ծանոթացնելու, հայրենիքից ստացված պիեսները բեմադրելու նպատակով։ Նախատեսվում էր կազմակերպել երաժշտական հանդեսներ, համերգներ, երեկույթներ՝ մասնակից դարձնելով հայրենիքի դերասաններին և այդպիսով հաստատել փոխադարձ կապ, ստեղծել

գրադարան-ընթերցարան և գրքափոխանակություն կատարել հայրենիքի գրադարանների հետ, զբոսաշրջիկների խմբերի միջոցով այցելել հայրենիք, ծանոթանալ նրա գրական կյանքին, գիտական հիմնարկների, մշակութային կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների հետ, մասնակցել հայրենիքի գիտական, գրական և գեղարվեստական կազմակերպությունների համագումարներին, ուսումնասիրել Իրանի և Խորհրդային Հայաստանի դարավոր մշակույթը: Կանոնադրությամբ նախատեսվում էր կազմակերպել հայոց, ռուսաց և պարսկերեն լեզուների ուսումնասիրության մասնավոր խմբակներ և այդ ճանապարհով պայքարել անգրագիտության դեմ: Ելնելով կանոնադրության այդ սկզբունքներից՝ 1945 թ. մայիսի 11-ին ստեղծվեց Խորհրդային Հայաստանի հետ մշակութային կապի Նոր Ջուղայի հայկական ընկերությունը: Նրա հիմնադիր ժողովը բազմամարդ էր և անցավ մեծ խանդավառությամբ: Ընկերության անդամ կարող էին լինել նրանք, ովքեր իրենց ակտիվ գործունեությամբ կնպաստեին այս կամ այն սեկցիայի աշխատանքներին: Նոր անդամների ընդունելությունը կատարվում էր ընկերության երկու անդամների երաշխավորությամբ, որը հաստատվում էր վարչության կողմից: Աղջիկներն ընդունվում էին 17, իսկ տղաները՝ 18 տարեկանից:

Վարչությունն ընտրվում էր ընկերության ընդհանուր ժողովում՝ մեկ տարի ժամկետով և բաղկացած էր 14 անդամից՝ նախագահ, փոխնախագահ, քարտուղար, գանձապահ, 7 խորհրդատու անդամներ, 3 անձնափոխանորդ: Վարչության անդամներն ընտրվում էին հիմնադիր անդամներից: Սպահանի նահանգապետը և խորհրդային հյուպատոսը համարվում էին վարչության պատվավոր նախագահներ: Խորհրդային Միության հետ Իրանի մշակութային կապերի միության («ВОКС») Իրանի լիազորը համարվում էր վարչության անդամ: Ընկերության առջև դրված նպատակների իրագործման համար կազմակերպվում էին սեկցիաներ, որոնք իրենց անդամներից ընտրում էին սեկցիայի վարչություն, որը հաստատվում էր ընկերության վարչության կողմից: Ընկերությունը ստեղծել էր չորս սեկցիա՝ թատերական, երաժշտական, գրական և մարզական: Նոր Ջուղայի եկեղեցուն կից գործում էին թանգարանը, ակումբը և գրադարանը, որոնք մտան ընկերության իրավասության տակ: Կարճ ժամանակում ընկերությունն իր գործունեությամբ ընդգրկեց ամբողջ հայ համայնքը[27]:

1944 թ. նոյեմբերին Երևանում ԿԿՀՀ-ն ստեղծումից հետո հայրենիքի և սփյուռքի փոխհարաբերությունները թևակոխեցին զարգացման նոր փուլ: Սերտ կապ հաստատվեց արտասահմանյան երկրներում գործող հայկական առաջադիմական կազմակերպությունների և անհատ գործիչների հետ:

ԿԿՀՀ-ն ստեղծումից հետո, 1945 թ. հունվարին, «Թավրիզի հայ կուլտուրական միությունը» ստեղծեց մի նոր վարչություն, որի նախագահ ընտրվեց Սիմոն Մկրտչյանը: Այդ միությունը պատերազմի ընթացքում հայրենասիրական մեծ աշխատանք էր կատարում՝ բոլոր հայերի ջանքերն ուղղելով խորհրդային բանակի հաղթանակի օգտին: ԿԿՀՀ-ը նրա հետ պահպանում էր անմիջական նամակագրական կապ, բավարարում նրա անհրաժեշտ պահանջները[28]:

«Թավրիզի հայ կուլտուրական միության» շուրջը համախմբվեց քաղաքի և Ատրպատականի հայ մտավորականությունը, որը մեծ աշխատանք ծավալեց: Նրա կողմից կազմակերպվեցին հետևյալ սեկցիաները. երիտասարդական, կանանց, գրական, թատերական, երաժշտական, որն ուներ իր սիմֆոնիկ նվագախումբը և Ալ. Սպենդիարյանի անվան քառաձայն երգչախումբը: Միությունը կազմակերպում էր դասախոսություններ, երեկույթներ, հանդեսներ, հոբելյանական երեկոներ, համերգներ, ներկայացումներ, կինոցուցադրումներ, ցուցահանդեսներ և այլն:

1945 թ. փետրվարի 15-ին միության նախագահ Սիմոն Մկրտչյանը մի նամակով դիմեց ԿԿՀՀ-ին, որի մեջ շարադրվել էին ընկերության նպատակները, առաջիկա անելիքները: «Այս տարվա ընտրված վարչությունը,— գրում էր նա,— սույն գրությամբ դիմում է ձեզ և խնդրում սերտ կապ

ստեղծել միության հետ, որպեսզի ձեր միջոցով մենք կարողանանք օգտվել կուլտուրական այն բոլոր բարիքներից, որոնցով օժտված են Հայաստանի նման կազմակերպություններ»[29]։

ԿԿՀԸ-ն հետ սերտ կապ էր պահպանում նաև Թավրիզի հայկական դպրոցը, որը 1944—1966 թթ. ղեկավարվում էր Խորհրդային Հայաստանի դպրոցական ծրագրերով ու ձեռնարկներով, որոնք ստացվում էին ԿԿՀԸ-ն միջոցով։

Իրանի հակաֆաշիստական միությունը Դ. Գևորգյանի նախագահությամբ նույնպես ջերմ հարաբերություններ ուներ ԿԿՀԸ-ն հետ՝ նրանից ստանում էր գրականություն ու թերթեր, ինչպես նաև նյութեր՝ իր օրգան «Հակաֆաշիստ» թերթում տպագրելու համար։

Սպահանի հյուպատոսի տեղապահ Ս. Վարդանյանը 1945 թ. հունվարի 21-ին Սպահանից ԿԿՀԸ-ը գրում էր այն կարիքների մասին, որ ուներ հայ համայնքը։ Նա խնդրում էր ուղարկել թերթեր, գրականություն և ցուցադրական այնպիսի նյութեր, որոնք կենդանի պատկերացում տային Խորհրդային Հայաստանի մասին, որովհետև մասնավորապես հարավային Իրանի հայությունը գրեթե ոչինչ չգիտեր Հայաստանի վերաբերյալ, իսկ ինչ էլ որ գիտեր, աղավաղված էր դաշնակցության գաղափարներով և թերի[30]։ Արդեն օգոստոսին Ս. Վարդանյանին ուղղած գրության մեջ թվարկվում էր գրականության և նյութերի քանակը, որ ուղարկվել էր Նոր Ջուղայի ընկերությանը։ Այնտեղ նշված էր 12 գրքի անուն։ Ինչպես երևում է գրությունից, ԿԿՀԸ-ը Նոր Ջուղայի համար դուրս էր գրել մի շարք թերթեր ու ամսագրեր. նախատեսվում էր առաջիկայում դպրոցի համար ուղարկել պահանջվող դասագրքերը[31]։

Պատերազմի տարիներին Իրանի հայ աշխատավորությանը մայր հայրենիքի հաջողություններին հաղորդակից դարձնելու նպատակով Թեհրանում և Թավրիզում ցուցադրելու համար ուղարկվել է «Խորհրդային Հայաստան» հոբելյանական ցուցահանդեսը՝ բաղկացած 430 լուսանկարից, որոնց հետ նաև 12 հոդված, որոնք նախատեսվել էին տպագրել Թեհրանի, Թավրիզի, Սպահանի և Ղազվինի հայկական առաջադիմական թերթերում։ ԿԿՀԸ-ը Թեհրան, Թավրիզ, Ղազվին, Սպահան է ուղարկել հարյուր օրինակ Խորհրդային Հայաստանի պետական հիմնի տեքստը։

Իրանի հայկական մշակութային կազմակերպություններին «Խորհրդային Հայաստան» ամսագրի յուրաքանչյուր համարից ուղարկվել է 200-ական օրինակ։

«ВОКС»-ի կուլտուրայի տան դիրեկտոր Գ. Քալաշյանը հայտնում է, որ այդ համարները ուղղակի թոցրին, իսկ հետո մարդիկ անընդհատ խնդրում էին գոնե համարն իրենց ցույց տալ։ Նամակում նա խնդրում էր ավելացնել թերթերի և ամսագրերի քանակը, որպեսզի գեթ չնչին չափով կարողանան բավարարել այն համընդհանուր հետաքրքրությունը, որ առաջացել էր ողջ իրանահայության մեջ սիրելի հայրենիքի հանդեպ։ ԿԿՀԸ-ը ամուր կապեր էր հաստատել նաև «Վերածնունդ» թերթի խմբագրության հետ։

Այդ թերթի խմբագիր Հայկ Գարագաշը խնդրում էր ուղարկել Խորհրդային Միության հայ հերոսների մասին հոդվածներ և նկարներ՝ իրանահայությանը ծանոթացնելու համար, ինչպես նաև հայ խոշոր գրողների, գիտնականների, արվեստագետների կենսագրությունները, նկարները և, առհասարակ, մայր հայրենիքի մշակութային կյանքի նորանոր նվաճումների վերաբերյալ նյութեր[32]։

Պատերազմի տարիներին սփյուռքահայ բոլոր առաջադիմական կուսակցությունների ու միությունների առաջ հրատապ խնդիր էր ծառացել ստեղծելու միասնական ճակատ, որը ճանաչելու էր Հայկական ԽՍՀ կառավարությունը՝ համարելով այն արտասահմանի հայության ազգային բոլոր ցանկությունների լավագույն «թարգմանը և իրագործողը»։ Քաղաքական մեծ նշանակություն ունեցող այս խնդրի իրականացման ուղղությամբ առաջին գործնական քայլը կատարվեց 1944 թ. սկզբներին՝ ամերիկահայ առաջադիմական կուսակցությունների ջանքերով[33]։ Իսկ Իրանում արդեն գործող իրանահայերի մի շարք մշակութային կազմակերպություններ 1945 թ. ամռանը համաիրանական ազգային խոր-

հարգ հիմնելու նպատակով մեծ աշխատանք ծավալեցին։ 1945 թ. հուլիսի 2-ին Իրանի առաջադիմական ուժերի և հայ հեղինակության աջակցությամբ Թավրիզում կայացավ Ազգային խորհրդի հիմնադիր ժողովը։ Խորհրդի նախագահ ընտրվեց Սիմոն Մկրտչյանը, իսկ պատվավոր նախագահ՝ արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը։ Այդ ժողովի որոշմամբ Ս. Մկրտչյանը լիազորվեց առաջադիմական կուսակցությունների և կազմակերպությունների հետ համատեղ Թեհրանում ստեղծել համաիրանական ազգային խորհուրդ։ Թեհրանի համատեղ ժողովի մասնակիցները մեծ խանդավառությամբ լսեցին Ս. Մկրտչյանի զեկուցումը՝ նոր հոգուց բաղկացած համաիրանական ազգային խորհուրդ ստեղծելու մասին։ Կարճ ժամանակում ազգային խորհուրդներ ստեղծվեցին նաև Սպահանում և հայաշատ այլ քաղաքներում[34]։

Երիտասարդության շրջանում կուլտուր-դաստիարակչական աշխատանք ծավալելու նպատակով Թավրիզում կազմակերպվել էր նաև իրանահայ ազգային խորհրդի երիտասարդական մասնաճյուղ[35]։

Համաիրանական ազգային խորհուրդը ձախողեց առաջադիմական կազմակերպությունների կողմից Ազգային միասնական ճակատ ստեղծելու գործին խանգարողների ծրագրերը և մեծ աշխատանք ծավալեց հայրենադարձության կազմակերպման ուղղությամբ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին իրանական հասարակայնությունը, այդ թվում և իրանահայությունը, մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում խորհրդային քաղաքական, գեղարվեստական և գիտական գրականության նկատմամբ։ Մարքսիզմ-լենինիզմի դասականների աշխատությունները թարգմանվում ու հրատարակվում էին մեծ տպաքանակով, որոնց ընթերցողների թիվն անչափ մեծ էր։ Արտակարգ ժողովրդականություն էին վայելում ռուս և խորհրդային դասական գրողները։

Խորհրդաիրանական գրական կապերի ամրապնդման գործում մեծ դեր է կատարել «ВОКС»-ի օրգան «Փայամե նով» (Նոր պատգամ) գրականագիտական ամսագիրը՝

(պարսկերեն), որի էջերը գրեթե ամբողջովին տրամադրվել էին ռուս և խորհրդային գրողների ստեղծագործությունների մասսայականացմանը։ Ամսագրում պարբերաբար հրապարակվում էին նաև հայ գրողների ստեղծագործությունները։

Իրանահայ համայնքում անչափ մեծ և օգտակար գործ են կատարել Թեհրանում լույս տեսնող «Աշխատանք» և «Վերածնունդ» հայկական թերթերը, որոնց էջերում պատերազմի ամբողջ ընթացքում հոդվածներ էին տպագրվում ռազմաճակատում կռվող հայ ժողովրդի պանծալի զավակների սխրագործությունների մասին։ Այդ տարիներին Իրանական Ադրբեջանի և ընդհանրապես Իրանի հայ համայնքի զարթոնքի գործում անչափ մեծ և օգտակար գործ է կատարել նաև Վահն Ավթանդիլյանի, Բարկեն Զուգասզյանի, Վռամ Մխրաքյանի, Հակոբ Փափազյանի և Օնիկ Եգանյանի խմբագրությամբ 1943 թ. Թավրիզում հրատարակվող «Հակաֆաշիստ» (հետագայում՝ «Արևելք») թերթը։ Վերոհիշյալ թերթերի միջոցով իրանահայերը հաղորդակցվում էին ինչպես երկրի ներքաղաքական կյանքին, այնպես էլ միջազգային դրությանը և մայր հայրենիքի նվաճումներին։ Հայ ընթերցողն այդ թերթերի միջոցով պարբերաբար ծանոթանում էր տակավին երիտասարդ, շնորհալի գրողներ Հովհաննես Ղուկասյանի և Արիգ Ամագյանի հայրենասիրական գործերին։ «Վերածնունդ» և «Հակաֆաշիստ» թերթերում իր քաղաքական-հայրենասիրական հոդվածներով ու բանաստեղծություններով հանդես էր գալիս Հովհաննես Ղուկասյանը, մի շարք գրվածքների հետ միաժամանակ հրատարակելով իր «Բերդի հիշատակարան» (Միքայել Նալբանդյան), «Ջավանշիր» և «Ջոյա Կոսմոդեմյանսկայա» պոեմները։ Հատկապես վերջինը մեծ խանդավառությամբ ընդունվեց հայ հասարակայնության կողմից։ Ի դեպ, այդ պոեմի հրատարակությունից ստացված գումարը հեղինակը նվիրեց Խորհրդային Միության պաշտպանության ֆոնդին։

Պատերազմի տարիներին, երբ խորհրդային բանակում հայրենիքի համար հերոսաբար կռվում էին հազարավոր հայ

մարտիկներ, սփյուռքահայության ճնշող մեծամասնությունը տարբեր առիթներով նյութական և բարոյական սրտաբուխ ու առատաձեռն աջակցություն ցույց ավեց Մայր հայրենիքի բանակին: Նրանց հայրենասիրության լավագույն ապացույցը եղավ նաև «Սասունցի Դավիթ», ապա՝ «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուներ ստեղծելու նախաձեռնությունը:

Սփյուռքահայ առաջադիմական մամուլը լայնորեն լուսաբանում էր «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման համար ծավալված համահայկական կամպանիան, որի օգտին Թեհրանում հավաքած նվիրատվության ընդհանուր գումարը կազմեց 1216765[36], իսկ իրանահայության ամբողջ համայնքինը՝ 2177450 ռիալ[37]:

Ոգևորված 1944 թ. խորհրդային բանակի հաջողություններով և հայ զորավարների, սպաների ու մարտիկների սքանչագործություններով, իրանահայ երիտասարդները դիմում էին խորհրդային դեսպանատուն՝ խնդրելով թույլատրել կամավոր մեկնել խորհրդային բանակ և նրա շարքերում կռվել ֆաշնամու դեմ[38]:

Չնայած իրանահայության առաջադեմ ուժերը անձնական մասնակցություն չունեցան Հայրենական մեծ պատերազմին, այնուամենայնիվ, պատերազմի ընթացքում նրանք մեծ նվիրատվություններ կատարեցին Մայր հայրենիքի հաղթանակի համար: Այդ հայրենանվեր ձեռնարկումներից էր Թեհրանի հայության «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյան ստեղծման նախաձեռնությունը:

Հիշյալ տանկային շարասյան ֆոնդ ստեղծելու շարժումն սկսվեց 1944 թ. օգոստոսի 11-ին: Կազմվեց հանգանակությունը ղեկավարող հանձնաժողով, որի նախագահ ընտրվեց մեծ հեղինակություն վայելող նշանավոր բարեգործ Ռոման Բոգդանի Իսաևը (Ռոմանոս Եսայան):

Կենտրոնական հանձնաժողովը բացի մայրաքաղաքից իր գործունեությունը տարածել էր նաև երկրի մյուս հայաշատ քաղաքներում՝ Նոր Ջուղայում, Թավրիզում, Ղազվինում, Փեհլևիում, Մեշհեդում և Համադանում: Բացի նշվածներից, մի շարք այլ քաղաքներում, ինչպես Գորգանում, Ահվազում, Խորամաբադում և Խորամշահրում, այդ ֆոնդի օգտին ստեղծվել էին հանգանակության կամավոր խմբեր[39]:

Հանձնաժողովը սփյուռքահայ բոլոր գաղթօջախներին կոչ արեց միանալ և համագործակցել «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյան ֆոնդի համաժողովրդական շարժմանը: Իրանահայերն այդ ֆոնդին հատկացրին 2557342 ռիալ[40]:

1945 թ. հունվարին Թեհրանի կենտրոնական հանձնաժողովը հանգանակում է նաև այլ գումար՝ գեներալ Բաղրամյանին սուր նվիրելու նպատակով: Այն պատրաստվեց և Թեհրանի հայ շնորհալի վարպետների ձեռքով ոսկեպատվեց: 1967 թ. մայիսի 8-ին Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը այդ սուրը նվիրեց Հայաստանի հեղափոխության թանգարանին:

Իր հանգանակություններով իրանական ժողովուրդը նույնպես իր ներդրումն ունեցավ ֆաշիզմի ջախջախման գործում: Այդ նպատակով ստեղծվել էին համապատասխան կոմիտեներ: Թեհրանի նորոգման արհեստանոցի բանվորները գրում էին. «Իրանական բանվորները ոչ միայն իրենց աշխատանքով, այլև իրենց խնայած միջոցներով նույնպես օգնել են ֆաշիզմի դեմ պայքարող խորհրդային բանակին: Մենք հավաքել ենք ավելի քան կես միլիոն ռիալ՝ տանկային շարասյուներ ստեղծելու և ռազմաճակատում գտնվող խորհրդային զինվորների ու սպաների համար ծանրոցներ ուղարկելու նպատակով»[41]:

Պատերազմի տարիներին իրանահայ համայնքում երկու երկրների՝ ԽՍՀՄ-ի և Իրանի միջև մշակութային կապերի հաստատման և ամրապնդման, խորհրդային բանակին օգնելու համար կազմակերպված հանգանակության կամպանիային մեծապես օգնել և գնահատելի աշխատանք են կատարել Իրանում ԽՍՀՄ-ի հյուպատոսային կյորդները Մ. Ս. Մելքումյանը (Թեհրանում), Ս. Հ. Վարդանյանը (Սպահանում), Ս. Նավասարդյանը և Կ. Առուշանյանը (Թավրիզում):

Եվ իրանահայ համայնքի առաջադիմական շրջանները

ոսրի Իլան Խորհրդային Հայաստանի պաշտպանության համար, ապա միանգամայն այլ դիրք ընդունեցին Հ. Հ. դաշնակցության կուսակցության Իրանի մասնաճյուղի լիդերներից ոմանք, որոնք բյուրոյի կարգադրությամբ և միջնորդությամբ համագործակցեցին ֆաշիստական Գերմանիայի լրտեսական խմբերի հետ։

Ինչպես Ֆ. Ռումյանցևն է նշում, Խորհրդային Միության տարածքում տարբեր ձևի դիվերսիոն և ահաբեկիչ գործողություններ կատարելու համար «Աբվերի» լրտեսների կողմից հավաքագրվել էին նաև ադրբեջանական «Մուսավաթ» կուսակցության անդամները՝ էմին Ռասուլզադեի գլխավորությամբ, ինչպես նաև Ջաֆր Շամխալի ապակողմնորոշված կողմնակիցները[42]։

Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ և նրանից հետո ընկած ժամանակաշրջանում նրանց գործունեության վերաբերյալ հետաքրքիր և կարևոր տեղեկություններ են պարունակում Թավրիզում ֆաշիստական Գերմանիայի փոխհյուպատոս, Աբվեր-լյութվաֆե զինվորական հետախուզության նախկին փոխգնդապետ Հուլտուս Շուլցի 1960 թ. Թեհրանում հրատարակված հուշերը[43]։ Հեղինակը նկարագրում է պատերազմի տարիներին Իրանում գերմանական լրտեսական կազմակերպությունների գործունեությունը, որոնք համագործակցելով Իրանի ոչ դեմոկրատական կուսակցությունների հետ՝ հավաքում էին այն բոլոր տեղեկությունները, որոնք վերաբերում էին Խորհրդային Միության ռազմական քաղաքականությանն ու տնտեսությանը, Իրանի ազգային փոքրամասնություններին կառավարության նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքին։

Պատերազմի տարիների սիյուռքահայ մյուս գաղթօջախների նման իրանահայ համայնքը Խորհրդային Հայաստանի նկատմամբ ունեցած իր վերաբերմունքով բաժանված էր երկու հակադիր բևեռի։ Երկրում ծավալված քաղաքական իրադարձությունների հետևանքով ստեղծված նոր հարաբերությունները նպաստում էին հայրենասիրական առաջադեմ գաղափարներով սնվող կազմակերպությունների առաջացմանը, որոնց գործունեությունն ուղղված էր արևմտյան պետությունների քաղաքականությանը հարող հետադիմական գործիչների դեմ։ Վերջիններս ձգտում էին հակադիր պայքար մղել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի նորաստեղծ հասարակական կազմակերպությունների ու միությունների դեմ, որոնց գործունեությունն այս կամ այն չափով հակասում էին իրենց շահերին։

1943 թ. ստեղծվեց «Իրանի հայ երիտասարդական մշակութային միությունը»։ Սակայն նրան չհաջողվեց իր շարքերում ընդգրկել հայ երիտասարդության մեծամասնությանը և նրա անդամների թիվը չանցավ 30—40 հոգուց։ Իր գոյության մոտ երկու տարվա ընթացքում միությունը սահմանափակ թվով դասախոսություններից բացի աչքի ընկնող որևէ այլ գործունեություն չծավալեց։ 1945 թ. «Վերածնունդ» թերթի փետրվարի 28-ի համարում նշված է. «Այդ միության կողմից հրատարակված երկու աննշան գրքերի բովանդակությունից և ուղղությունից (մեկը հայերեն, մյուսը պարսկերեն) կարելի է պարզ հետևություն անել հրատարակողների ուղղության մասին»[44]։

1943 թ. անհատական նախաձեռնությամբ ստեղծվեց հայ ընդհանուր միության «Բազե» մարզական կազմակերպությունը։ 90 անդամ ունեցող այդ կազմակերպությունը, սակայն, ավելի շատ քաղաքական հարցերով էր զբաղվում, քան մարզական, որի հետևանքով նրա անդամներից շատերը հեռացան[45]։ Միությունը պատկանում էր այդ շրջանում Իրանում գոյություն ունեցող այն նորաստեղծ կազմակերպությունների շարքին, որոնք իրենց գործունեության և քաղաքական ուղղության հետևանքով ոչ մի շոշափելի հաջողություն չունեցան և կազմալուծվեցին։

1944 թ. սկզբներին հիմնադրվեց «Թեհրանի հայ մարմնամարզական միությունը», որը, սակայն, չկարողացավ ծառայել իր նպատակին[46]։

1943 թ. աշնանը ստեղծվեց «Հայ համալսարանական-

ների ընդհանուր միությունը» (Հ. Հ. Ը. Միություն), որի անդամների ճնշող մեծամասնությունը ուսանողներ էին։ Սակայն մտավորականներից կազմված այդ միությունը չկարողացավ ընթանալ ժամանակի իրանահայ երիտասարդության պահանջներից բխող ուղիով։ «Անկասկած,—գրում է իրանահայ մտավորական Մ. Պետրոսյանը,—դրանց մեջ կային և բազմաթիվ խելացի երիտասարդներ, որոնք հասկանում էին, թե ինչ է կատարվում։ Բայց մեր դպրոցներում տիրող անցյալի ոեժիմի ազդեցությունն այնքան ուժեղ էր, որ նրանք համարձակություն չունեին այդ մասին բացարձակ արտահայտվելու»[47]։

«Հ. Հ. Ը. Միության» ծրագիր-կանոնագրի համաձայն նրա աշխատանքները տարվում էին մասնագիտական բաժանմունքների միջոցով. դրանք էին՝ մարզական, գրական, ճարտարապետական, արվեստի, հայոց պատմության և բժշկական։ Միությունն ուներ նաև կենսրոնական հանձնախումբ, հրատարակչական բաժին և գրադարան։ Այն կազմակերպել էր համայնքի արվեստագետների աշխատանքների ցուցահանդեսներ և միջնակարգ դպրոցների ավարտական քննությունների համար դասընթացներ։ Միությունը թեհրանահայ չքավորության համար բաց էր արել բուժօգնության կետ և առամնաբուժարան[48]։

Թեհրանում համեմատաբար ուշադրության արժանի կազմակերպություններից էին նաև «Լույս և միտք», «Արշալույս», «Րաֆֆի», «Շանթ» և պատանեկան «Կայծ» մշակութային միությունները։ 1944 թ. հուլիսի 4-ին փոխադարձ համաձայնությամբ դրանք միավորվում են «Հայ պատանեկան մշակութային միություն» անունը կրող ընդհանուր կազմակերպության մեջ[49]։

1944 թ. օգոստոսի 17-ին կայացած միության ընդհանուր ժողովում ընտրվում է նրա առաջին վարչությունը։ 1946 թ. մարտի 11-ին միության հերթական ժողովում որոշում է ընդունվում կազմակերպությունն անվանել «Հայ երիտասարդական մշակութային միություն»[50]։

Կանոնադրության մեջ միության գործունեության վերաբերյալ մի շարք կարևոր կետեր ընդունելուց հետո ընդգծվում էր, որ երիտասարդական միությունը քաղաքական ոչ մի հոսանքի չի հարելու և զբաղվելու է միայն մշակութային խնդիրներով։

Քննարկվող ժամանակաշրջանում Իրանի մայրաքաղաքում գոյություն ունեցող առաջադիմական և հետադիմական երիտասարդական միությունների միավորման խնդիրը դարձել էր Թեհրանահայության հիմնական նպատակներից մեկը։ Դրա անհրաժեշտությունը հատկապես մեծանում էր հայրենադարձության պատճառով։ Արտասահմանի հետ մշակութային կապի Թեհրանի հայկական ընկերության «Մշակույթ» միությունը 1945—1946 ԹԹ. ձեռնամուխ եղավ այդ նպատակի իրագործմանը՝ բանակցություններ սկսելով մայրաքաղաքի մյուս երկու՝ «Հայ երիտասարդական մշակութային (նախկին պատանեկան) միություն» և «Հայ բարեգործական ընդհանուր միություն» կազմակերպություններին կից «Հայ երիտասարդական ընդհանուր միության» հետ։ Հենց սկզբից վերջինիս անդամներն ու նրա ղեկավարները միաձայն ընդառաջեցին «Մշակույթ» միության առաջարկին և միացան նրան[51]։

Չնայած «Հայ երիտասարդական մշակութային միության» անդամները նույնպես համաձայն էին միավորմանը, սակայն նրա վարչությունը խափանեց երիտասարդական երեք միությունների միավորման գործը։ Միավորվեցին միայն երկուսը[52]։ Սակայն «Վերածնունդ» թերթի հաղորդման համաձայն դաշնակցությանը հարող այդ միության շատ անդամներ նրանից հրաժարվեցին և միացան «Մշակույթին»[53]։

Հարկ է նշել, որ հայրենադարձության օրերին բազմաթիվ երիտասարդներ հեռացան այդ միությունից և հայրենադարձվեցին Խորհրդային Հայաստան։ Այդ է վկայում հենց նույն «Մշակույթի» հանդեսը, երբ գրում է. «...Ներգաղթի առեղծած խանդավառությունը իր անդրադարձն ունեցավ նաև միության մեջ, որի հետևանքով հուզումնալից ընդհա-

նուր ժողովներում եղան խմբական հրաժարումներ և տարաձայնություններ ներգաղթի ձևի և բնույթի շուրջը»[54]։

Այդ շրջանում դաշնակցության ազդեցությամբ գործող միությունների ներսում ծագած հակասությունները հետագայում իրենց բացասական հետևանքը թողեցին նրանց գործունեության վրա։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Իրանում ուշադրության արժանի գործունեություն էին ծավալել նաև հետևյալ կազմակերպությունները ու միությունները.

«Փերիայի կրթասիրաց միությունը» հիմնել են փերիացի ջուղայաբնակ երիտասարդները 1928 թ.։ Կանոնադրության համաձայն միության նպատակն էր. 1. օժանդակել գավառի հայաբնակ գյուղերի բնակչության կրթական, մտավոր և բարոյական զարգացման գործին. 2. նյութապես և բարոյապես օգնել Փերիայի գավառի հայ դպրոցներին. 3. քաջալերել այն բոլոր ձեռնարկումները, որոնք օգտակար կլինեն միության համար. 4. պարտադրել անդամներին՝ առնվազն 3—5 տարի օգնելու գյուղական դպրոցներին։ Կանոնադրության մեջ նշվում էր, որ միությունը զուտ կրթասիրական է և պարտադիր կերպով հեռու է մնալու կուսակցական և շահադիտական նկատառումներից։

Միության բեղմնավոր և ակտիվ գործունեության շնորհիվ շուտով գավառի Նամակերտ, Ղարղուն, Խոյգան, Բոլորան, Բժկերտ, Հադան և Հաղարջրիը գյուղերում հիմնադրվեցին մասնաճյուղեր, որոնցից շատերը գոյատևեցին մինչև 1950-ական թվականները, իսկ Նամակերտի մասնաճյուղը գործեց ավելի երկար[55]։

«Փերիայի հայոց հիվանդանոցի միությունը» ստեղծվել է 1942 թ.[56]։ Նկատի ունենալով Փերիայի բնակչության անմխիթար վիճակը՝ Նոր Ջուղայում բնակվող մի խումբ փերիացի հայ երիտասարդներ որոշում են օգնել նրանց՝ ստեղծելով հիշյալ միությունը, որի նպատակն էր. 1. գավառի կենտրոնական գյուղերից մեկում հիմնել հիվանդանոց. 2. հիվանդանոցում աշխատող բժիշկների միջոցով պարբերաբար կազմակերպել դասախոսություններ և խորհուրդներով

օգնել գավառի բնակչությանը, 3. հնարավոր բոլոր վայրերում հիմնել միության մասնաճյուղեր, 4. խրախուսել միության գործին նպաստող բոլոր նախաձեռնությունները[57]։

Այդ նպատակներն իրականացնելու համար հայաբնակ քաղաքներում կատարված հանգանակությունների շնորհիվ Փերիայի գավառի ամենամեծ գյուղում՝ Նամակերտում, կառուցվեց հիվանդանոց (1942), որն ուներ 12 մահճակալ և փոքրիկ դեղատուն՝ անհրաժեշտ նոր դեղատեսակներով։

Տասնմեկ տարվա ընթացքում (1942—1953) հիվանդանոցում բուժվել է շուրջ 60000 մարդ[58]։ Չնայած հիվանդանոցն անվանապես Փերիայի հայերի համար էր կառուցվել, սակայն, իրականում, նրա ծառայություններից օգտվել են նաև Փերիայում ապրող պարսիկները, լուռերը, ադրբեջանցիները, վրացիները և այլ ազգեր։ Հաստատությունը մշտապես արժանացել է շրջանի պետական իշխանությունների գովասանքին, հարկ եղած դեպքում ստացել նրա օժանդակությունը։

«Ջաբմահալի հայ ուսումնասիրաց միությունը» հիմնվել է 1930 թ. հոկտեմբերի 12-ին Աբադանում՝ չարմահալցիներ Մարտիրոս Մկրտումյանի, Սիմոն Իսրայելյանի, Մնացական Մատաթյանի, Մելքոն Իսրայելյանի, Սիմոն Ավետիսյանի և Սարգիս Մադաթյանի նախաձեռնությամբ։

Նորակազմ միությունը սկզբնական շրջանում կրում էր «Արոր» անունը, բայց քանի որ Իրանական Ադրբեջանում արդեն գոյություն ուներ համանուն այլ միություն, ուստի այն վերանվանվում է «Ջաբմահալ գավառի հայ ուսումնասիրաց միության»։ 1965—1967 թթ. գավառահայ կյանքի գոյությունը դադարում է, և միությունը ստանում է այժմյան անունը։ Մինչև 1963 թ. նրա կենտրոնն Աբադանն էր, որից հետո այն ենթարկվեց Թեհրանի մասնաճյուղին։

Միությունն ուներ շուրջ 600 անդամ՝ Ահվազի, Աղաջարիի, Բենդեր Մաշհուրի (Մահշահր), Գյավ-Սարանի, Անդիմեշքի, Համադանի, Բենդեր Շահփուրի և Թեհրանի մասնաճյուղերում։ Ջաբմահալ գավառի գրեթե բոլոր գյուղերում միությանը կից գոյություն ունեին մասնաճյուղեր[59]։

Միության ծրագիր-կանոնագիրը վերանայվել է 1932,

1944, 1958 և 1967 թվականներին։ Այն բաղկացած է 12 գլուխներից, 68 հոդվածներից, 24 ենթահոդվածներից։

Հիշյալ միության նպատակն էր. 1. «Զորավիգ և աջակից դառնալ հայ մատաղ սերնդի կրթադաստիարակչական գործին՝ նյութապես և բարոյապես օժանդակելով հայ ազգային դպրոցներին» (հոդ. 2), 2. «Հնարավորության սահմաններում նյութապես օժանդակել առաջադեմ հայ ուսանողներին՝ նրանց հնարավորություն տալով հետևելու հայրենագիտությանը և ծառայելու հայ մշակույթին» (հոդ. 3)[60]։

Թեհրանաբնակ չարմահալցիները «Ուսումնասիրաց միության» «Մշակույթի տան» կառուցման համար Թեհրանի հյուսիսային թաղամասերից մեկում գնել են 1120 քմ. հողամաս։ Կառուցվեց երեք հարկաբաժին, ընդարձակ ու գեղեցիկ սրահ՝ շուրջ 600 հանդիսականի համար, մարզական փորձերի ու խաղերի դահլիճ և հարակից այլ սենյակներ[61]։ Շենքի բացումը տեղի ունեցավ 1967 թվականին։

Միությունը հրատարակել է Ա. Սարյանի «Պատմություն Չարմահալ գավառի» ստվարածավալ գիրքը։

«Չարմահալի հայ բժշկական միությունը» հիմնվել է 1940 թ.՝ ջուղայաբնակ չարմահալցիների կողմից։ Միության Մամուռանում գտնվող հիվանդանոց-բուժարանը ամբողջ գավառում միակն էր։ Այստեղ ամենահեռավոր գյուղերից բուժվելու էին գալիս հայեր, պարսիկներ, լոռեր ու ադրբեջանցիներ։ Հիվանդանոցի բժիշկը պարբերաբար այցելում էր շրջանի գյուղերը և տեղում օգնություն ցույց տալիս այն հիվանդներին, որոնք ի վիճակի չէին գնալ Մամուռան։

«Բժշկական միությունն» իր հիմնադրման օրից սատնում էր «Չարմահալի ուսումնասիրաց միության» օժանդակությունը։ Չարմահալի բուժարան-հիվանդանոցի բուժանձնակազմը շուրջ հինգ ու կես տարի սպասարկում էր գավառի հողագործ բնակչությանը՝ արժանանալով գավառապետի ու նահանգապետի խրախուսանքին։

1945 թ. «Բժշկական միությունն» ընկնում է ֆինանսական ծանր կացության մեջ։ Հիվանդանոցի ամբողջ հոգսը ծանրա-

նում է «Ուսումնասիրաց միության» վրա, ուստի որոշվում է այդ երկու միությունը միացնել։ Որոշումը հաստատվում է «Ուսումնասիրաց միության» 9-րդ ընդհանուր ժողովում։

1946 թ. գավառի վեց գյուղերի բնակիչները հայրենադարձվեցին Խորհրդային Հայաստան, որից հետո բուժարան-հիվանդանոցն ընդմիշտ փակվեց[62]։

Մասջեդ Սուլեյմանի մեջ գործում էին հետևյալ միությունները. «Հայ երիտասարդաց մշակութային միությունը», որն ուներ երաժշտական, գրական և թատերական բաժիններ։ Միությունն ուներ 140 անդամ, իսկ կրտսերների ճյուղը՝ 14—17 տարեկաններից բաղկացած 120 անդամ[63]։

«Կանանց բարեգործական «Խաչ» միությունն» ուներ 95 անդամ, օգնում էր համայնքի կրթական և այլ միջոցառումներին[64]։

«Չարմահալի հայ ուսումնասիրաց միության» մասնաճյուղն ուներ 150 երկտող անդամ, իսկ «Փերիայի հայոց հիվանդանոցի միության» մասնաճյուղը՝ 56 անդամ[65]

Շիրազ քաղաքում գործում էր երկու միություն. «Հայ կանանց բարեգործական միությունը»՝ 30 անդամով և «Հայ երիտասարդաց միությունը», որը հիմնվել էր 1947 թ.։ Միությունն ուներ 500 կտոր գիրք ունեցող գրադարան[66]։

Թեհրանի հայ կանանց բարեգործական ընկերությունը հիմնվել էր 1907 թ.։ Սկզբում կրել է Կարմիր խաչ անունը։ Այն իր գործունեությունը շարունակել է մինչև 1921 թ., որից հետո կազմալուծվել է և ինը տարվա ընդմիջումից հետո՝ 1930 թ. կրկին վերստեղծվել այժմյան անունով։

Ընկերությունը շարունակ աճել է և դարձել տեղի խոշոր կազմակերպություններից մեկը։ Նրա ջանքերի շնորհիվ հիմնադրվել է մայրաքաղաքի առաջին մանկապարտեզը[67]։ Ընկերության նպատակն էր հանրային բարեգործությունը. նա ստեղծել է հատուկ ֆոնդ՝ չքավոր սաներին անունդով, հագուստով, գրենական պիտույքներով օգնելու համար։ Ընկերությունը Թեհրանի յուրաքանչյուր ազգային դպրոցում պահում էր 4—5 սան[68]։ Առաջին համաշխարհային պատերազ-

մի տարիներին մեծ օգնություն ցույց տվեց հայ գաղթականներին ու որբերին։

Երբ 1936 թ. հայկական դպրոցները փակվեցին, Թեհրանում և երկրի հայաբնակ այլ քաղաքներում «Հ. Կ. Բ. ընկերությունը» կազմակերպեց հայերեն մասնավոր դասընթացներ[69]։ Հասույթի հիմնական աղբյուրը տարեկան հանգանակություններն էին, որոնք կազմում էին շուրջ 40.000 թուման[70]։

«Հայ բարեգործական ընդհանուր միության» (Հ. Բ. Ը. միության) Թեհրանի մասնաճյուղը հիմնվել է 1936 թ. ապրիլին։ Այդ միությունը ծնունդ է առել թուրքական արհավիրքների օրերին, և նրա գլխավոր նպատակն է եղել ազգապահպանումը։ Նրա հիմնադիրներն էին Պողոս Նուպար փաշան և ուրիշներ։ Միությունը նպատակ ուներ օժանդակել հայ ժողովրդին և հայրենիքի զարգացմանը, օգնել նրանց նյութական և տնտեսական վիճակի բարելավմանը, խրախուսել վերոհիշյալ նպատակներն իրականացնելու ուղղությամբ կատարվող բոլոր միջոցառումները և այլն[71]։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին միությունն իր 750 հազար դոլար կազմող հանգանակություններով օգնեց ռազմաճակատում զոհված զինվորների երեխաներին[72], իսկ 1946 թ. զանգվածային հայրենադարձության շրջանում՝ ներգաղթողներին, հանգանակելով ևս մեկ միլիոն դոլար։ Բացի այդ այն հայրենադարձության համար հատկացրեց 70.000 դոլար[73]։

Միությունը 1946 թ. և դրանից հետո Թեհրանում մնացած աղքատ հայերի վիճակը բարելավելու ուղղությամբ[74] մեծ աշխատանք կատարեց։

Միության անդամների թիվը հասնում էր 520-ի։ Կանանց բաժանմունքը, որը Թեհրանի կանանց չորս կազմակերպություններից մեկն էր, իրև «Հ. Բ. Ը. միության կանանց մասնաճյուղ» զբաղվում էր չունևորների, որբերի և չքավոր աշակերտության խնամակալության գործով։ Մասնաճյուղն ուներ իր սեփական «Նուպար» դպրոցը[75]։

«Հայ կին միությունը» հիմնվել է 1939 թ.։ Նրա ստեղծման հիմնական առիթը հանդիսացավ հայկական դպրոցների փակվելը։ Միության անդամ դեռատի աղջիկները մանուկ սերնդին գաղտնի ուսուցանում էին մայրենի լեզու։ Միությունը զբաղվում էր իր անդամների ինքնազարգացման, դպրոցներին օժանդակելու խնդիրներով, ծառայում հայ դպրությանն ու մշակույթին։

1946 թ. հայրենադարձության ընդհատման հետևանքով գավառներից ու գյուղերից Թեհրան եկած հայերի համար նրանց տներում ու քաղաքային դպրոցներում միության անդամների ուժերով անց էին կացվում ուսումնական պարապմունքներ։

Միությունը ստանձնել էր «Արաքս» ազգային-քաղաքին դպրոցին օժանդակող մարմնի պարտականությունը[76]։

«Հայ կին միությունը» կազմակերպել է ցուցահանդեսներ՝ «Հայ կանանց ձեռնարվեստները», «Հայ կանանց պատմական տարազները» թեմայով և իրականացրել «Հայուհին և իր տարազը» պատկերազարդ ալբոմի հրատարակությունը։

«Հայ կին միության» բարոյական և նյութական օժանդակությամբ հիմնվել է Մարզարապատ քաղաքամասի «Անի» միությունը, որը զբաղվում էր նույն խնդիրներով։

«Թեհրանի հայ կանանց բարեգործական ընկերությունը» հիմնվել է 1971 թ. և կրել «Հայուհիների ընկերություն» անունը, որը մեկ տարվա գոյությունից հետո անգործության է դատապարտվել։ Այն վերակազմվել է 1981 թ. և բարեգործական ծավալուն աշխատանք կատարել՝ վերածվելով ներկայիս «Թ. Հ. Կ. Բ. ընկերությանը»։

Բացի վերը բերված միություններից, Թեհրանում գործում էին նաև «Արմեն», «Խանասար» մարզամշակութային և «Ալեքս» մարզական միությունները։ Ծավալուն աշխատանք էր կատարում «Իրանահայ գրողների», «Թեհրանի հայոց դպրոցների հայ ուսուցիչների», «Հայ միջնակարգ դպրոցների» և այլ միությունները, որոնց թիվը հասնում էր շուրջ 30-ի։

«Հայ կանանց գրության միությունը» հիմնվել է 1915 թ., Նոր Ջուղայում և անվանվել «Կարմիր խաչ»։ Այդ անունը

պահպանվել է մինչև 1932 թ., որից հետո այն ստացել է նոր անվանում[77]: Միության նպատակն էր՝ ա) օգնել չքավոր և անօգնական ընտանիքներին, հիվանդներին, որբերին, այրիներին, չքավոր աշակերտներին, աղնյալներին, պատերազմից տուժած զինվորներին և նրանց ընտանիքներին, առանց ազգային խտրականության: բ) Ինքնազարգացման միջոցով բարձր պահել միության անդամների բարոյական, մտավոր և ֆիզիկական մակարդակը, նրանց դարձնել լավ մայրեր և հավատարիմ քաղաքացիներ: գ) Համագործակցել նման նպատակներ ունեցող հայկական կամ տեղական մյուս բոլոր կազմակերպությունների հետ: դ) Նպաստել նոր սերնդի դաստիարակությանը: ե) Ծանոթանալ հայ կյանքի անցյալին ու ներկային: զ) Ունենալ սեփական գրադարան:

Ինչպես երևում է վերոհիշյալ կանոնադրությունից, կանանց այդ միությունը հետապնդում էր մշակութային և բարեգործական նպատակներ[78]:

Միության գործերը վարելու համար տարեկան ընդհանուր ժողովում գաղտնի քվեարկությամբ ընտրվում էր 7 հոգուց բաղկացած վարչական կազմ՝ երկու տարի ժամկետով[79]:

Միությունը 1960-ական թվականներին ունեցել է 46 անդամ: 1970 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ Նոր Ջուղայի «Հայ կանանց գթության միության» ծերանոցի բացումը[80]:

Նոր Ջուղայի «Մայրերի միությունը» կազմվել է 1918 թ.: Նրա նպատակն էր օգնել չքավոր հղի կանանց և օգնության կարիք զգացող չունևորներին: 1960-ական թվականներին այն ունեցել է 35 անդամ[81]:

«Փերիայի կրթասիրաց միությունը» զբաղվել է դաստիարակչական աշխատանքներով և հայրենասիրական այլ գործերով: Միությունը հսկել է գավառի դպրոցների աշխատանքները, հիմնել դպրոցներ, տրամադրել ուսուցիչներ, հայթայթել գրենական պիտույքներ: Գավառի հայության թվի նվազման հետևանքով միությունն իր աշխատանքները կենտրոնացրել է Ջուղայում ու Շահինշահրում և օգնել կարիքավոր դպրոցականներին նպաստներ հատկացնելուն[82]:

Նոր Ջուղայի «Հայ մշակութային միությունը» հիմնվել է 1942 թ.: Այն սկզբնական շրջանում հանդես է եկել որպես հոգաբարձության օժանդակող մարմին[83], իսկ 1962 թ.[84] դարձել է մշակութային միություն՝ մարզական, երաժշտական, թատերական բաժիններով: Նրա «Գուսան» երգչախումբը բաղկացած է 120 երկսեռ անդամից: Միությունն ունի 550 անդամ[85], գրադարան-ընթերցարան՝ շուրջ 2000 գրքով:

Նոր Ջուղայի «Հայուհիների բարեգործական ընկերությունը» հիմնվել է 1892 թ.: Այն գտնվում է թեմական առաջնորդի անմիջական հսկողության ու հովանավորության տակ: 1940 թ. վարչության հրավերով անց են կացվել հավաքներ, որոնց նպատակն էր նոր սերնդին դաստիարակել կրոնական ոգով[86]:

Թավրիզում գործում էին կանանց հետևյալ միությունները. 1915 թ. Թավրիզում հիմնվում է «Ատրպատականի հայ կարմիր խաչ» միությունը, որը զբաղվում էր գաղթականներին իրենց նախկին բնակատեղերում հաստատելու գործով:

1926 թ. այդ միությունը դառնում է ԱՄՆ-ի «Հայ կարմիր խաչ» կենտրոնի մասնաճյուղերից մեկը, իսկ 1944 թ., երբ կենտրոնի «Հայ կարմիր խաչը» վերանվանվում է «Հայ օգնության միության» (ՀՕՄ), Ատրպատականի մասնաճյուղը ևս վերցնում է այդ անվանումը:

Այն իր գոյության ընթացքում կրթական և բարեգործական մեծ աշխատանք է ծավալել Ատրպատականի շրջանում: 1936 թ. հայկական դպրոցները փակվելուց հետո միությունը բազմաթիվ հայ մանուկների համար կազմակերպել էր հայոց լեզվի դասընթացներ[87]:

ՀՕՄ-ի Ատրպատականի մասնաճյուղի աշխատանքները երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին որոշ չափով սահմանափակվեցին՝ նրա անդամների մեծ մասի Թեհրան փոխադրվելու պատճառով: 1947 թ. հուլիսի 20-ին վերակազմավորման նպատակով տեղի ունեցավ միության ընդհանուր ժողով, որտեղ ընտրվեց նոր վարչություն[88]:

Քանի որ Ատրպատականում մինչև 1956 թ. հայկական

պրոցները փակ էին, այդ պատճառով այստեղ ՀՕՄ-ը հիմնում է մանկապարտեզ և 4-ամյա դպրոց։ ՀՕՄ-ի Թավրիզի մասնաճյուղի անդամների թիվը հասնում էր 86-ի։ Վարչությունը բաղկացած էր 7 հոգուց։ Հետագայում Ռեզայիեում ևս հիմնվեց ՀՕՄ-ի մասնաճյուղ, որն ուներ 48 անդամ[89]։

«Հայ մշակութային «Արարատ» կազմակերպության» Թավրիզի մասնաճյուղը հիմնվել է 1953 թ.։ Այն ևս ունի իր մարզական, սկաուտական, երաժշտական ու թատերական բաժինները[90]։

Ուրմիայի «Արարատ» միությունը հիմնվել է 1974 թ.։ Նախկինում Ուրմիայի «Արարատ» միությունը կապված էր Թավրիզի համանուն կազմակերպության հետ։ Հետագայում, վարչության որոշմամբ, այն ուղղակի կապվեց Թեհրանի կազմակերպության հետ։ Միությունն ունի իր թատերախումբը, երգչախումբը և մարզամշակութային խմբակները, որոնք մասնակցում են քաղաքում կազմակերպվող տարբեր բնույթի պաշտոնական, ինչպես նաև մայրաքաղաքի կենտրոնական «Արարատ» կազմակերպության կողմից անցկացվող համահայկական մրցումներին[91]։

Դեռևս 1960-ական թվականների վերջերին Թավրիզում հիմնվել էր «Թավրիզի դպրոցների հայ նախկին սանուց միությունը» և «Թավրիզի հայ պատանեկան միությունը»։ Այդ երկու կազմակերպություններն էլ տեղավորված են Առաջնորդարանի շենքում[92]։

«Հայ մշակութային «Արարատ» կազմակերպությունը» (Հ. Մ. Ա. կազմակերպություն) իրանահայ համայնքի երիտասարդական խոշոր միությունն է։ Մինչև 1950 թ. այն կոչվում էր «Հայ երիտասարդական մշակութային միություն», սակայն երբ նրան միացան Թեհրանի «Միաք և արվեստ», «Հայրենիք» և «Իրանահայ մշակութային միություն» կազմակերպությունները, այն ստացավ ներկայիս անվանումը։ 1953 թ. հեղաշրջումից հետո միության վարչությունը, օգտվելով ստեղծված բարենպաստ պայմաններից՝ ամեն միջոց գործադրեց այն պասիվ վիճակից դուրս բերելու համար։ Փոխվեց նրա հավաքատեղին, իսկ

1962 թ. ապրիլի 6-ին ընդհանուր ժողովում փոփոխություն կատարվեց նաև նրա կառուցվածքի մեջ և այն վերածվեց կազմակերպության։ Վերջինս կազմված էր մի քանի միություններից ու խմբակներից, որոնց աշխատանքը ղեկավարում էր կենտրոնական վարչությունը։

Կազմակերպությունն ուներ հետևյալ միությունները՝ սկաուտական, մարզական, արվեստի (որը ստեղծվել է 1974 թ.՝ երաժշտական, թատերական և գրական միությունների միավորմամբ) և, վերջապես, երեցների միությունը։

«Սկաուտական միությունը» հիմնվել է 1951 թ. որպես բաժանմունք։ Բաժանված է հատվածների՝ 6-ից ավելի երիտասարդների մասնակցությամբ։ Նրա ծրագրի մեջ մտնում էին սկաուտական, մարզական, կազմակերպչական և ազգային հարցերին վերաբերող աշխատանքներ[93]։

«Մարզական միությունը» կազմվել է Հ. Մ. Ա. Կ.-ի հիմնադրումից անմիջապես հետո՝ որպես բաժանմունք։ Իր գործունեության հենց սկզբից պետության կողմից ճանաչվել է որպես «Արարատ» մարզական ակումբ»։

Միությունն ուներ վոլեյբոլի, բասկետբոլի, սեղանի թենիսի, մարմնամարզության, թեթև աթլետիկայի և լեռնադնացների արական ու իգական խմբեր։ Սկսած 1961 թ. «Արարատ» կազմակերպության մարզական միությունն ուներ հիմնական ֆուտբոլային թիմ, որը միշտ համարվել է մայրաքաղաքի լավագույն խմբերից մեկը։

1964 թ. ի վեր ամեն տարի կազմակերպվել են Իրանի համահայկական մրցումներ, որոնց մասնակցել են Թեհրանի տարբեր մարզակումբների և երկրի հայաշատ կենտրոնների շուրջ 1500 մարզիկներ։ Իսկ 1972 թ. սկսած միությունը դպրոցական արձակուրդների ժամանակ (մարտ ամսին) Թեհրանի հայկական դպրոցների աշակերտների մասնակցությամբ կազմակերպել է մրցություններ[94]։

Մինչև «Արարատ» մարզավանի[95] կառուցման ավարտը (1974) մրցումները հիմնականում անց էին կացվում պետական մարզադաշտում։ Մարզավանի կառուցումից հետո մարզական բոլոր միջոցառումները տեղի են ունենում այստեղ։

Միության գրական բաժանմունքը զբաղվում էր իր անդամների ինքնազարգացման, դասախոսություններ կազմակերպելու, հրատարակչական աշխատանքներով, ուներ գրադարան՝ շուրջ 1200 կոտոր գրքով[96]։

Երաժշտական բաժանմունքը կազմվել է միության հիմնադրումից անմիջապես հետո, ուներ 30-ից մինչև 120 անդամ ունեցող[97] երգչախմբեր։

Թատերական բաժանմունքը հիմնադրվել է 1944 թ.։ Այդ բաժանմունքը, որը նախկինում գործում էր երկարատև ընդմիջումներով, հետագայում զգալիորեն աշխուժացրեց իր գործունեությունը։ Բեմադրվել են «Իմ սիրտը լեռներում է», «Հայկական հարսանիք», «Ապահարզանի սյուրպրիզները», «Շնիկով տիկինը», «Մուսա լեռան քառասուն օրը» և այլ գործեր։

Երեցների միությունը ստեղծվել է 1964 թ.՝ նպատակ ունենալով համախմբել կազմակերպության նախկին անդամներին։ «Արարատ» կազմակերպությունը Իրանի գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում ունի իր մասնաճյուղերը։

Նման մեծ ու ծավալուն կազմակերպություն է նաև «Հայ մշակութային «Սիփան» միությունը», որը գործում է հայկական վեց դպրոց ունեցող Թեհրանի Սասուն թաղամասում։

Ամփոփելով վերը թվարկված հին ու նորաստեղծ հասարակական կազմակերպությունների գործունեությունը՝ նշենք, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, չնայած իրենց սկզբունքային տարաձայնություններին, այնուհանդերձ ըրանք նեցուկ են հանդիսացել համայնքի երիտասարդության շրջանում հայապահպանման, մայրենի լեզվի ամրապնդման, կրթության բարելավման, ազգային մշակույթի ու գրականության բարգավաճման գործում։ Հատկանշական է այն հանգամանքը, որ հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նորաստեղծ այդ միություններից շատերն աշխուժացրեցին իրենց գործունեությունը՝ բարոյական անունդ ստանալով մայր հայրենիքից։ Հաշվի չառնելով որոշ անհատների կողմից հայրենիքի ու հայրենադարձության

նկատմամբ ոչ բարյացակամ վերաբերմունքը՝ նրանք ամեն ջանք գործադրեցին բարոյապես ու նյութապես օգնելու հայրենադարձներին։ Հայրենիքի հետ հաղորդակցվելու նպատակով մամուլի էջերում պարբերաբար նյութեր էին տպագրվում Խորհրդային Հայաստանի առօրյայի ու մշակութային կյանքի վերաբերյալ։

Բ. ՀԱՅ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ԴԵՐԸ ԻՐԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ («ԹՈՒԴԵ») ՄԵՋ

Արտասահմանյան երկրների կոմունիստական և բանվորական կուսակցությունների շարքերում ներգրավված հայ ժողովրդի առաջադեմ զավակները, որոնք ակտիվորեն մասնակցում և օժանդակում են այդ երկրների հայ համայնքների առաջադիմական ուժերի պայքարին, ինչպես նաև տրվյալ երկրի ազգային-ազատագրական ու դեմոկրատական շարժումներին, բավական մեծ թիվ են կազմում։

Իրանահայ համայնքում նույնպես հայ ազատախոհ գործիչները, երկրում բնակվող այլ ազգերի ներկայացուցիչների հետ համատեղ, իրենց իրավունքների և ազատության համար մշտապես պայքարել են բռնապետական կարգերի ու Արևմտյան պետությունների շահագիտական քաղաքականության դեմ։ Մարքսիզմ-լենինիզմի գաղափարախոսության տարածումը Իրանում ութ տասնյակ տարիների պատմություն ունի։

Իրանում դարասկզբին մարքս-լենինյան գաղափարախոսության առաջին տարածողներից էին նաև հայ մտավորականներ Հովսեփ Կարախանյանը[98], Դավիթ Նազարբեկյանը (Գևորգյան)[99], Արշավիր Չիլինգարյանը[100], Սեդրակ Միրզոյանը (Բանվորյան)[101], Տիգրան Դերվիշը (Հակոբյան), Սեդրակ Ավագյանը, Վռամ Փիլոսյանը և ուրիշներ, որոնք 1905 թ. Թավրիզում ստեղծում են սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն[102]։ Այդ կազմակերպության անդամներից նրանք, ովքեր ուսանել էին Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանների իրավաբանական ֆակուլտետներում, արդեն ծանոթ էին մարքսիստական գրականությանը և մշտա-

կան նամակագրություն ունեին Գ. Վ. Պլեխանովի հետ, որը նրանց տեսական ցուցումներ էր տալիս։

Իրանի սոցիալ-դեմոկրատական շարժման այդ սկզբնական ժամանակաշրջանը պետք է համարել ինքնուրույն գործադրման փուլ։ Թավրիզի սոցիալ-դեմոկրատների շարքերը 1908 թ. համալրվեցին Անդրկովկասից եկած, ռուսահայտնյան առաջին հեղափոխությանը մասնակցած փորձառու սոցիալ-դեմոկրատներով, որոնց թվում էր Վ. Ա. Խաչատրյանցը (Վասո)։ Նրանց փորձը մեծ ազդեցություն թողեց Թավրիզի հայ սոցիալ-դեմոկրատների գործունեության վրա։

Անգլիական և ռուսական իշխանությունները ձգտում էին խափանել Թավրիզի հեղափոխական շարժումները։ 1909 թ. ռեակցիոն ուժերին հաջողվում է շրջափակել Թավրիզը։ Զբաղցած առաջացած սովին, հեղափոխական մարտիկները անձնուրաց շարունակում էին պաշտպանվել։ Սակայն «Թավրիզի սոված բնակչությունից», շահական զորքերից, թալանից ու վայրագություններից ռուսահպատակներին պաշտպանելու պատրվակով 1909 թ. ապրիլին գեներալ Անարսկու հրամանատարությամբ ռուսական զորքերը մտան Թավրիզ։

Դա հանգեցրեց հեղափոխական շարժումների սահմանափակմանը։ Բացի այդ, ցարական կառավարությունը տեղյակ լինելով Թավրիզի հակաֆեոդալական հեղափոխությանը Անդրկովկասի ՌՍԴԲԿ-ի անդամների օգնության մասին, պահանջեց ռուս հպատակներին արտաքսել Իրանից։ Հետևանքը եղավ այն, որ Կովկասից եկած հեղափոխականները ստիպված էին թողնել Իրանը։ 1909 թ. հեղափոխական շարժումների կենտրոն է դառնում Գիլանի նահանգը։

Անդրկովկասից եկած հեղափոխականները, այդ թվում նաև ՌՍԴԲԿ-ի անդամները, միանալով Թավրիզի հայ սոցիալ-դեմոկրատներին՝ պայքար ծավալեցին Իրանում սահմանադրական կարգերի հաստատման համար, որոնցից շատերը զոհվեցին։

Իրանի ազգային-քաղաքական զարթոնքին մեծապես նպաստեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որի ազդեցության ներքո երկրի գրեթե բոլոր շրջաններում բռնկվեցին ազատագրական շարժումներ՝ ուղղված անգլիական իմպերիալիզմի դեմ։ Այդպիսի բնույթ էին կրում 1918 թ. Ֆարսում դաշղայիների, 1919 թ. Աղրբեջանում Խիաբանիի, 1920—1921 թթ. Գիլանում Միրզա Քուչեկ խանի, 1921 թ. Խորասանում Մոհամմադ Թաղի խան Փեսիանի գլխավորությամբ բռնկված ազգային շարժումները, որոնք մեծ նշանակություն ունեցան Իրանի բազմազգ ժողովուրդների քաղաքական ինքնագիտակցության աճի համար։

Այդ ժամանակաշրջանում Իրանի ազատագրական շարժումների ծավալման, մարքսիստական գաղափարների տարածման գործում, բացի իրանական արտագնաց բանվորներից, որոնք ապրելով և աշխատելով Անդրկովկասի և Ռուսաստանի քաղաքներում, պայքարի զգալի փորձ էին ձեռք բերել։ Մեծ է եղել Հյուսիսային Իրանում գտնվող ռուսական զորամասերում գործող այն բոլշևիկների դերը, որոնք վերհիշյալ շրջաններում առաջին կոմունիստական բջիջների առեղծման ուղղությամբ որոշակի աշխատանք կատարեցին։ Նրանք կազմակերպեցին զինվորների դեպուտատների խորհուրդներ, որոնք արձագանքում էին Ռուսաստանում և Անդրկովկասում կատարվող դեպքերին։

Փետրվարյան հեղափոխության օրերին Սալմաստի շրջանի զորամասերում ակտիվ աշխատանք էր ծավալել Ալեքսանդր Շահսուվարյանը (հետագայում ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար)[103]։ Թավրիզի սոցիալ-դեմոկրատների հայկական խմբակի անդամ (հետագայում Երևանի պետական համալսարանի դոցենտ, արևելագետ-պատմաբան) Տիգրան Հակոբյանի տվյալների համաձայն այդ օրերին ինչպես տեղական կազմակերպությունները, այնպես էլ հայկական սոցիալ-դեմոկրատական խմբակը սերտ կապերի մեջ էին Թավրիզի կայազորի զինվորների դեպուտատների խորհրդի հետ։

Բացի Տ. Հակոբյանից խմբակի ակտիվ անդամներից էին Դավիթ Նազարբեկյանը, Համբարձում Էլչիբեկյանը[104], Հարություն Օհանյանը[105], Արզուման Նազարբեկյանը[106],

Արշակ Սարգսյանը[107],, Մ. Միխայլովը, Ա. Բաբաևը, Հ. Օտյանը և ուրիշներ[108]։

Թավրիզի հայկական խմբակը մշտապես զինվորների դեպուտատների խորհրդի ղեկավարներից տեղեկություններ էր ստանում Ռուսաստանում ու Անդրկովկասում կատարվող իրադարձությունների մասին։ Շուտով խմբակում տեղի է ունենում սահմանազատում։ Նրա շարքերից հեռանում են աջ տարրերը, և խմբակն իրեն դրսևորում է որպես բոլշևիկյան կազմակերպություն[109]։

Չնայած խմբակը գտնվում էր անլեգալ պայմաններում, սակայն նա բացահայտ գործունեություն էր ծավալել։ Պայքարելով տեղական բուրժուազիայի ազգայնամոլ քաղաքականության դեմ, խմբակի անդամներն իրենց հրապարակային ելույթներում պրոպագանդում էին մարքսիզմ-լենինիզմի գաղափարները։

Այդ շրջանում նման կազմակերպություն կար նաև Թեհրանում, որտեղ բուրժուական գաղափարախոսության և հետադիմականների դեմ պայքարողների շարքերում էր գտնվում հին բոլշևիկ Գառնիկ Ղազարյանը[110]։

1921 թ. Թավրիզի բոլշևիկյան (նախկին սոցիալ-դեմոկրատական) կազմակերպության ներկայացուցիչ Դ. Նազարբեկյանը մասնակցել է Իրանի կոմկուսի Նախիջևանում կայացած կոնֆերանսին։

Ադրբեջանում և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Թավրիզի հայ բոլշևիկյան կազմակերպությունը կապեր է հաստատում Բաքվի և Երևանի նման կազմակերպությունների հետ։ Նրա ներկայացուցիչները 1921 թ. լինում են Խորհրդային Հայաստանում, հանդիպումներ ունենում Ա. Մռավյանի և այլ գործիչների հետ[111]։

Ռեակցիայի ուժեղացման հետևանքով շուտով բոլշևիկյան կազմակերպության անդամների համար դրությունը խիստ ծանրանում է։ Նրանցից շատերը 1922 թ. ստիպված թողնում են Իրանը և հաստատվում Խորհրդային Հայաստանում։

1920—1921 թթ. Գիլանում բռնկված ապստամբությանն

անմիջական մասնակցություն է ունեցել Իրանի կոմունիստական կուսակցության հիմնադիրներից մեկը՝ Սուլթանզադեն (Ավետիս Միքայելյան)[112]։ Նա մասնակցել է 1920 թ. Բաքվում կայացած Արևելքի ժողովուրդների համագումարին։ Լինելով Կոմինտերնի ակտիվ գործիչներից մեկը՝ 1920-ական թվականների կեսերին նա մասնակցել է II (ընտրվել է նրա գործկոմի կազմում), III և IV կոնգրեսներին[113]։ Տեսաբան, տնտեսագետ, պատմաբան ու արևելագետ Սուլթանզադեն թողել է մի շարք մենագրություններ և հոդվածներ։

Վերջին տասնամյակներում հրատարակված մի շարք աշխատություններում 1917—1921 թթ. Գիլանում ծավալված շարժման պարտությունը վերագրվում է Սուլթանզադեի և նրա մի քանի զինակիցների ձախ դիրքորոշմանը։

Իրանում ծավալված այդ շարժումներին նվիրված իր աշխատության մեջ Հ. Եգանյանը գրում է. «...վերջին երկու տասնամյակների ընթացքում որոշ պատմաբանների աշխատություններում, հենվելով էհսանոլլախանի, Սուլթանզադեի և ազգային-ազատագրական շարժումների մյուս գործիչների հետագա հակատագրից, մեծացվել և չափազանցվել են թույլ տրված սխալները։ Միևնույն ժամանակ մինչև վերջ չի մերկացվել Քուչեկ խանի մանրբուրժուական, պահպանողական էությունը, այն դեպքում, երբ տատանումները վերջնականապես նրան գցեցին ռեակցիայի գիրկը, և նա չարաշահորեն սպանեց կոմունիստ ղեկավարներին»[114]։

1920 թ. Ա. Սուլթանզադեն Թավրիզ է ժամանում. նա որպես Իրանի կոմպարտիայի պատգամավոր զեկուցում է Կոմինտերնի Կոնգրեսի աշխատանքների մասին՝ նշելով կուսակցության հերթական խնդիրները[115]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցությամբ Գիլանում ծավալված ազգային-ազատագրական շարժումներին ակտիվորեն մասնակցել են Ներսես Ներսիսյանը (որը հետագայում կուսակցական ղեկավար աշխատանք է կատարել Խորհրդային Հայաստանում ու Տաջիկըս-

ատանում), Պողոս Բաբայանը, Ռուբեն Պարոնյանը (պրոֆեսոր-վիրաբույժ) և ուրիշներ[116]։

Ռեզա շահի 16-ամյա իշխանության վերջին տարիներին ամրապնդվեցին ֆաշիստական Գերմանիայի հետ իրանի բարեկամական կապերը, երկրի ներսում ուժեղացավ հալածանքը առաջադիմական կուսակցությունների և կազմակերպությունների նկատմամբ։

Իրանում պաշտոնապես արգելվում էր առաջադեմ կուսակցությունների և արհմիություններ գործունեությունը։ 1933 թ. նոյեմբերին Ռեզա շահի պահանջով մեջլիսի կողմից 1931 թ. հաստատված կոմունիստական գաղափարախոսության պրոպագանդան արգելելու մասին օրենքի[117] համաձայն դատի են տրվում կոմունիստական և արհմիութենական կազմակերպությունների 53 ակտիվիստ։ Մեղադրյալների շարքում էր իրանի կոմունիստական կուսակցության ղեկավար, ականավոր գիտնական, Թեհրանի համալսարանի պրոֆեսոր, «Դոնյա» (Աշխարհ) տեսական հանդեսի խմբագիր դոկտոր Թաղի էրանին։

Դեռ 1931 թ. վերը նշված չարաբաստիկ օրենքի հրատարակման օրերին ձերբակալվեցին կուսակցության Կենտրոնական կոմիտեի մի շարք անդամներ ու կազմակերպության ակտիվ գործիչներ, որոնց թվում էր նաև կուսակցության Կենտկոմի անդամ Արտաշես Հովհաննիսյանը։ Ձերբակալվածներից շատերը (Հեջազին, Ալի Շարղին, Երվանդ Եղիկյանը և ուրիշներ) Ռեզա շահի դահիճների ձեռքով դաժանաբար սպանվեցին բանտերում[118]։

1941 թ. հոկտեմբերին ռազաշհյան զնդաններից ազատված Իրանի կոմունիստական կուսակցության գործիչների ջանքերով ու ղեկավարությամբ ստեղծվեց Իրանի ժողովրդական կուսակցությունը (Թուդե), որի շարքերում ընդգրկվեցին երկրի բանվորության, գյուղացիության ու մտավորականության առաջադեմ ուժերը։ Կուսակցությունն իր առաջադիմական հայացքներով ու քաղաքական կայուն սկզբունքներով նոր երևույթ էր Իրանի պատմության մեջ։ Նա Իրանի միակ կուսակցությունն էր, որը խորապես դատապարտում

էր ազգային ճնշումը, հետևողականորեն պաշտպանում իրանի ընչազուրկ մասսաների իրավունքները։ Կուսակցությունն իր նահանգային կոմիտեները ստեղծեց Գիլանում, Մազանդարանում, Իրանական Ադրբեջանում, Խորասանում և Սպահանում։

1942 թ. ժողովրդական կուսակցությունը, որն իր շարքերում արդեն ուներ չորս հազար անդամ, Թեհրանում գումարեց իր առաջին անլեգալ կոնֆերանսը։ Այն որոշում ընդունեց պայքարել ֆաշիզմի ու ներքին հետադիմական ուժերի դեմ։ Կոնֆերանսն ընտրեց 15 հոգուց բաղկացած ղեկավար կոմիտե[119], որի կազմում էր նաև Արտաշես Հովհաննիսյանը։

Կուսակցության ծրագիրը պահանջում էր պահպանել Իրանի տարածքային ամբողջականությունը, ազգային անկախությունը, պետության դեմոկրատական ղեկավարումը, բնակչության իրավունքները։ Կուսակցությունը պայքարում էր խաղազության ու դեմոկրատիայի, 8-ժամյա բանվորական օրվա, պետական հողերը գյուղացիներին անհատույց հանձնելու, ագրարային ռեֆորմների իրականացման համար[120]։

Այն ազգային հարցի լուծման գործում հենում էր հետևյալ սկզբունքներից. ապահովել Իրանում բնակվող ազգությունների լիակատար իրավահավասարությունը, ճանաչել Իրանի ազգային փոքրամասնությունների իրավունքները երկրի հասարակական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում, ստեղծել ժողովուրդների, հատկապես ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքի այնպիսի կարգ, որպեսզի ուսումնական բոլոր հաստատություններում ապահովվի դասավանդումը մայրենի լեզվով, նրանց տնտեսական ու ազգային մշակույթի առաջընթացը խթանելու նպատակով հատկացվեն վարկ ու միջոցներ[121]։

Ժողովրդական կուսակցությունը դարձավ երկրի ամենամասսայական քաղաքական կազմակերպությունը։ Կուսակցությունն իր առաջին համագումարի նախօրյակին, որը կայացավ 1944 թ. ամռանը, ուներ ավելի քան 25 հազար ան-

դամ, որի 75%-ը բանվորներ էին, 23%-ը՝ մտավորականներ, իսկ 2%-ը՝ գյուղացիներ։ Կուսակցության անդամների 20%-ը կազմում էին ազգային փոքրամասնությունները[122]։

Ժողովրդական կուսակցությունն իր ստեղծման օրից լայն գործունեություն էր ծավալել միապետական կարգերի և արտաքին ոտնձգությունների դեմ։ Մեծ աշխատանք էր կատարվում խորհրդային Միության հետ բարեկամական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ։

Կուսակցության առաջին նախաձեռնություններից մեկը հայկական «Դավիդյան» միջնակարգ դպրոցի նախկին դիրեկտոր Մաթևոս Մելիքյանի մահվան առիթով 1942 թ. ապրիլի 12-ին Թեհրանում կազմակերպված միտինգն էր։ Այդ միտինգում ելույթներով հանդես եկան կուսակցության անդամները և ժողովրդի առաջադեմ ներկայացուցիչները[123]։

Ժողովրդական կուսակցության հիմնադրման գործին անմիջականորեն մասնակցել են նաև հայերը։ Նրանցից էր, օրինակ, դեռևս 1922 թ. Իրանի նախկին կոմունիստական կուսակցության անդամ Ա. Հովհաննիսյանը, որը տասնմեկ տարի անընդմեջ գտնվում էր բանտում։

Ա. Հովհաննիսյանը մասնակցել է կուսակցության «Մարդում», «Ռահբար» և «Ռազմ» թերթերի հրատարակման աշխատանքներին, իսկ 1942 թ. կարճ ժամանակով խմբագրել է «Մարդում» թերթը[124]։

Գնահատելով Ա. Հովհաննիսյանի երկար տարիների քաղաքական գործունեությունը, Իրանի աշխատավորները, ինչպես նաև իրանահայ համայնքը, նրա թեկնածությունն են առաջադրում մեջլիսի 14-րդ նստաշրջանում դեպուտատ ընտրվելու համար։ Իրանում ծավալված դեմոկրատական շարժումներից և իրանական ժողովրդի ԽՍՀՄ-ի նկատմամբ ունեցած համակրանքից սարսափած՝ Իրանի իշխող շրջանները, որոնք ոչ հեռու անցյալում համագործակցում էին ֆաշիստական Գերմանիայի հետ, այժմ սկսում են հակվել դեպի Անգլիան և ԱՄՆ-ը։

1943 թ. սեպտեմբերին Իրան է ժամանում անգլիացի-

ների կամակատար Սեյիդ Զիա էդ-դինը, որը 1921 թ. Իրանից փախչելով՝ բնակություն էր հաստատել Պաղեստինում։ Նրա Իրան վերադառնալու կապակցությամբ անգլիացիների պատվերով հետադիմական թերթերը մեծ ազմուկ բարձրացրին՝ նրան հորջորջելով որպես «ազգային մեծ գործիչ և հայրենասեր»։ Վերադարձից կարճ ժամանակ անց Սեյիդ Զիան Յազդ քաղաքից ընտրվում է Իրանի մեջլիսի 14-րդ նստաշրջանի դեպուտատ։ Նա գնում է հրատարակվող մի քանի թերթեր, ինչպես նաև ձեռնարկում նոր թերթերի հրատարակման գործը։ Այնուհետև ստեղծում է իր «Վաթան» (Հայրենիք) կուսակցությունը, որի կազմի մեջ են մտնում ֆաշիստահետադիմական տարրերը՝ օտարերկրացիների հետ կապերի մեջ գտնվող կալվածատերեր, վաճառականներ, պետական պաշտոնյաներ, ծախու լրագրողներ և այլն։

Մեջլիսի 14-րդ նստաշրջանի հետադիմական դեպուտատները համախմբվելով Սեյիդ Զիայի շուրջը՝ ստեղծում են ռեակցիոն խումբ և, ազդելով մեջլիսի աշխատանքների վրա՝ իրենց դիրքն օգտագործում են երկրում գոյություն ունեցող բոլոր առաջադիմական կազմակերպությունների, հատկապես Իրանի ժողովրդական կուսակցության դեմ պայքարելու, ինչպես նաև հակախորհրդային պրոպագանդա ծավալելու համար։

Մեջլիսի 14-րդ նստաշրջանի ընտրությունների նախօրեին, երբ առաջադիմական և հետադիմական ուժերի միջև թեժ պայքար էր ծավալվել, Իրանի ժողովրդական կուսակցության հայ ընտրական կենտրոնական հանձնախումբը կոչ էր անում ձայն տալ Իրանի «Թուդեհ» կուսակցության կողմից ներկայացված երկու հայ թեկնածուների՝ Արտաշես Հովհաննիսյանի և Ղազար Սիմոնյանի օգտին, որոնք գոտեպընդված բռնապետության դեմ մղած իրենց անցյալի պայքարով՝ պարսիկ կուսակից պատգամավորների ֆրակցիայի հետ համատեղ կազմելու էին ընդհանուր ճակատ՝ պաշտպանելու կեղեքված իրանցիների և ճնշված փոքրամասնությունների իրավունքները։

Իրանական ռեակցիան, համագործակցելով հետադիմական շրջանների հետ, գործադրեց ճնշման, կաշառքի ու խաբեության բոլոր միջոցները՝ խափանելու ժողովրդական կուսակցության կողմից առաջադրված թեկնածուների ընտրությունը մեջլիսում։

Թավրիզում հրատարակվող «Հակաֆաշիստ» թերթը 1944 թ. հունվարի 21-ի համարում նկարագրում է ժողովրդական կուսակցության կողմից մեջլիսի պատգամավորության թեկնածու առաջադրված Ղազար Սիմոնյանի թեկնածությունը խափանելու նպատակով կալվածատերերի կողմից Աբաթի և Սպահանի հայաբնակ շրջանների գյուղացիության վրա գործադրված ճնշումներն ու բռնություններ։ Թերթում կարդում ենք. «Իզուր մեղադրանքներ, գանակոծություն, բանտարկություն, սպառնալիքներ, հետապնդումներ, որ առիթ է ավել հարյուրավոր գյուղացիների քաղաքում ապաստանելուն»։ Բռնությունն ու ճնշումը հասել էր այն աստիճանի, որ Նեմագարդ գյուղում պետության ներկայացուցիչը հայ ընտրական հանձնախմբին պարտադրել էր առանց քվեները հաշվելու արձանագրել, որ 1787 ձայնից 1646-ը ստացել է Ալիք Աղայանը (իշխանությունների կողմից առաջադրված թեկնածուն)։ Նա ժանդարմերիայի միջոցով արձանագրությունը չստորագրողներին սպառնում էր զրկել անից և ունեցվածքից։ Երվանդ Աբրահամյանն այդ կապակցությամբ գրում է, որ Ղազար Սիմոնյանը «համարյա շահեց «Թուդեի» համար այն տեղը, որ հատկացված էր կենտրոնական և հարավային գավառների քրիստոնյա փոքրամասնությունների համար»[125]։ «Այդ գյուղերի հայ բնակչությունը,— նշում է Ե. Աբրահամյանը,— 1943 թ. ընտրությունների ժամանակ իրենց կալվածատերերի հարկադրմամբ քվեարկել է հօգուտ հակաթուդեական թեկնածուի»[126]։

Այնուամենայնիվ, մեջլիսի 14-րդ նստաշրջանի ընտրություններին մասնակցած մոտ երկու միլիոն ընտրողներից Իրանի ժողովրդական կուսակցության թեկնածուները ստացել էին ավելի քան 150 հազար ձայն։ Կուսակցության անդամներից 8-ին, որոնց թվում էր նաև Ա. Հովհաննիսյանը, հաջողվեց ընտրվել մեջլիսի դեպուտատ[127]։

1945 թ. հունվարին Ա. Հովհաննիսյանը մեջլիսում հանդես է գալիս ընդարձակ ելույթով, դիմակազերծ անելով ռեակցիոն հայտնի դիվանագետ ու գրող Ալի Դաշտիին, որը Ա. Հովհաննիսյանին մեղադրում էր դավաճանության մեջ, պնդելով, թե իբր վերջինս Իրանական Ադրբեջանում հակաիրանական գործունեություն է ծավալում, որ Հովհաննիսյանը հայ է, հետևաբար՝ անհարազատ տարր[128]։

Ա. Հովհաննիսյանի ելույթը մեծ արձագանք գտավ Իրանի աշխատավորության շրջանում։ Հետադիմական մամուլը նրան մեղադրում էր կալվածատերերի դեմ ընթացող ապստամբության կոչ անելու համար։ Ա. Հովհաննիսյանն իր ելույթներից մեկում ասել էր. «Կառավարության կազմը պիտի դիկտատորական տարրերից, գողերից և երկրի դավաճաններից մաքրագործվի, և քանի դեռ այդ մաքրագործումը տեղի չի ունեցել, ինչքան էլ գեղեցիկ ծրագիր մշակվի, միևնույն է, այն դատապարտված է անհաջողության։

Ներքին պատգամավորները ժողովրդի ծառաներն են, հետևաբար ամեն ինչից առաջ պետք է, որ գյուղացիության և բանվորության շահերը նկատի առնվեն, հողը գյուղացիներինն է ...»[129]։

Ա. Հովհաննիսյանը կազմակերպչական մեծ աշխատանք էր ծավալում իրանահայերի շրջանում՝ Թեհրանում, Ռեշտում, Թավրիզում ստեղծելով հայկական մշակութային միություններ։ Մեջլիսում իր գործունեության կարճ ժամանակամիջոցում նա մոտիկից զբաղվում էր նաև իր ընտրողներին՝ հայերին ու ասորիներին հուզող հարցերով։ Դրանցից էր ազգային դպրոցների վերաբացման հարցը, որոնք Ռեզա շահի կարգադրությամբ 1936 թ. փակվել էին։

1944 թ. հունիսի 28-ին Ա. Հովհաննիսյանը ժողովրդական կուսակցության մեջլիսի մի ուրիշ պատգամավորի՝ Ե. Քամբախշի հետ հայկական կրթական մի շարք խնդիրների լուծման և հատկապես Թավրիզի Արամյան թատրոնը և

դպրոցները հայերին վերադարձնելու համար ներկայանում է Իրանի լուսավորության մինիստրություն։ Այնտեղ նա ասում է. «...Իհարկե, մեր պաշտոնական լեզուն Իրանում պարսկերենն է, և անհրաժեշտ է, որ այդ լեզուն հայերը ևս սովորեն, բայց այդ լեզվի ուսուցումը չպետք է արգելք լինի հայոց լեզվի կանոնավոր դասավանդմանը, հատկապես տարրական դպրոցներում։ Ռեզա շահը բռնի կերպով այդ լեզուն արգելեց, և ներկայումս էլ դեռ նույն սխալը շարունակվում է, թեև լուսավորության նախարարությունը Ատրպատականի առաջնորդին հայտնել է, որ օրական երկու ժամ հայերեն դասավանդումը դպրոցներում թույլատրվում է, այն էլ դպրոցական ժամերից դուրս, անհրաժեշտ է, որ այդ ժամերը պաշտոնական ծրագրի մաս կազմեն»։ «Ադամյան թատրոնը կառուցել է հայ ժողովուրդը,— ասում է նա,— և այդ թատրոնն անօգտագործելի թողնելը լուսավորությունը խեղդելու մի քայլ է...»[130]։

Ժողովրդական կուսակցության աշխատանքներին գործուն մասնակցություն են ունեցել նաև Ղազար Սիմոնյանը և Բագրատ Ավագյանը (Խավարի)։ Ղ. Սիմոնյանը կուսակցության օրգան «Մարդում» թերթի խմբագրական կոլեգիայի անդամ էր։ Կուսակցության հիմնադրման և իրանահայ համայնքի հասարակական-քաղաքական գործունեության մեջ մեծ է եղել նաև ժողովրդական կուսակցության Թեհրանի քաղհոմի անդամ Բագրատ Ավագյանի դերը։ Նա 1923 թ. Ֆրանսիայում ուսանելիս ընդունվում է ֆրանսիական կոմունիստական կուսակցության շարքերը, ակտիվ մասնակցություն ունենում կուսակցության հայկական սեկցիայի գործունեությանը։ Նա եղել է անդրկովկասյան ուսանողական միության քարտուղար։ 1926 թ. վտարվել է Ֆրանսիայից։ 1931 թ. Ղազվինում մասնակցել է Իրանի կոմունիստական կուսակցության անլեգալ աշխատանքներին։

Իրանի ժողովրդական կուսակցության շարժումներին անմիջական մասնակցություն է ունեցել Վարդան Ղուկասյանը, որը բազմիցս ենթարկվելով ֆիզիկական խոշտանգում-

ների՝ մնացել է իր հայացքներին ու գաղափարներին հավատարիմ։ Նրա զինակիցն էր Վաղուշ Հովհաննիսյանը։

Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի պարտությունից հետո ազգային-ազատագրական շարժումները մեծ ծավալ են ստանում Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրներում։ Դեմոկրատական շարժումների նոր վերելք է սկսվում նաև Իրանում, որոնց հիմնական կենտրոններն են դառնում Իրանական Ադրբեջանը և Քրդստանը։

Տարբեր ազգություններով բնակեցված գավառներում, բացի ֆեոդալական ճնշումներից, տնտեսական և քաղաքական հետամնացությունից, առկա էր նաև ազգային ճնշումը։

Մահմեդական կրոն դավանող ազգերի ու ցեղերի լեզուները համարվում էին պարսկերենի բարբառներ։

Իրանի բոլոր ազգային փոքրամասնությունները, այդ թվում և ադրբեջանցիներն ու քրդերը, զրկված էին դեմոկրատական ամենաստորրական իրավունքներից։

Ինչպես հայտնի է, 1945 թ. դեկտեմբերին Իրանական Ադրբեջանի դեմոկրատական կուսակցությունը ակտիվ գործունեություն ծավալեց ժողովրդի լայն շրջաններում։ 1945 թ. հոկտեմբերին նրա շարքերը համալրեցին Իրանի ժողովրդական կուսակցության Իրանական Ադրբեջանի մարզային կոմիտեի ավելի քան 40 հազար անդամներ։ Իրանական Ադրբեջանի դեմոկրատական կուսակցությունը ինքնավարություն պահանջեց։ 1945 թ. վերջերին տեղի ունեցավ ազգային մեջլիսի դեպուտատների ընտրություն, որով և հիմնադրվեց Իրանական Ադրբեջանի ինքնավար Հանրապետությունը[131]։ Կարճ ժամանակ անց նրա դեմոկրատական կուսակցությունը վերածվեց ազգային դեմոկրատական մասսայական կուսակցության՝ իր մեջ ներգրավելով բնակչության տարբեր խավերի առաջադեմ ներկայացուցիչներին։ 1946 թ. Թավրիզում լույս տեսնող «Ադրբայիջան» թերթի հունվարի 23-ի հաղորդման համաձայն 1945 թ. վերջերին վերոհիշյալ դեմոկրատական կուսակցությունն ուներ 70 հազար անդամ. նրանցից 6 հազարը բանվորներ էին, 56 հազարը՝ գյուղա-

ցիներ, 2 հազարը՝ մտավորականներ, 3 հազարը՝ տնայնագործներ և արհեստավորներ, 2 հազարը՝ վաճառականներ, 500-ը՝ կալվածատերեր և 100-ը՝ հոգևորականներ[132]։

Ջ. Փիշևարիի գլխավորությամբ ազգային կառավարությունն սկսեց կենսագործել իր դեմոկրատական ծրագիրը. գյուղացիները հող ստացան, բանվորներն անցան 8-ժամյա աշխատանքային օրվա, ինքնավար հանրապետության տարածքում բնակվող բոլոր ազգություններին տրվեց իրավահավասարություն, կրթությունը դարձավ պարտադիր, երեխաներն ստացան մայրենի լեզվով անվճար ուսման հնարավորություն, սկսվեց գործել Թավրիզի համալսարանը։

1946 թ. փետրվարի 11-ին «Թավրիզի հայ կուլտուրական միության» սրահում հավաքված բազմության առջև հանդես եկավ վարչապետ Ջ. Փիշևարին։ Նա իր զեկուցման մեջ անդրադարձավ ազգային կառավարության կատարած աշխատանքներին ու նրա ապագա գործունեությանը[133]։

1946 թ. սեպտեմբերի 11-ին Ջ. Փիշևարին «Վերածնունդ» թերթի թղթակցի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ ասաց. «Մեզ մոտ խտրականություն չի դրվում հայերի և մահմեդականների միջև։ Հայերը մշտապես հավատարիմ ծառայել են պետությանը և բոլոր կարևոր բնագավառներում աջակցություն ցույց տվել։ Մենք հայերին, ինչպես նաև այլ փոքրամասնություններին, հնարավորություն ենք տվել ունենալու իրենց նախնական դպրոցները (քանի որ այսօրվա դրությամբ նրանք միայն դա ունեն), բոլոր առարկաները դասավանդեն և քննություններն անցկացնեն իրենց մայրենի լեզվով, ստանան պետական վկայական, սակայն վեցերորդ դասարանից սկսած նրանք պետք է ուսանեն ազգբեջաներեն և պարսկերեն։ Մենք պատրաստ ենք մահմեդական դպրոցների բյուջեի հաշվին հոգալ հայկական դպրոցների բոլոր ծախսերը, սակայն լրացուցիչ ծախսերը պետք է կատարվեն իրենց միջոցներով։

Նրանց է վերադարձվել դպրոցների և թատրոնի բոլոր շենքերը, «Արամյան» թատրոնի վերանորոգման ծախսերի մի մասը հատկացվելու է մեր միջոցներից, տալիս ենք 30000

ռւբլ, բացի այդ, շաբաթական մի օր ֆիլհարմոնիայի շենքն անվճար տրամադրվելու է հայերին։

Մենք շատ գոհ ենք մեր հայ եղբայրներից և նրանց կատանք հավասար իրավունքներ»[134]։

Հաջողությամբ պսակվեց նաև Իրանի քրդերի պայքարը։ 1945 թ. հոկտեմբերին Մահաբադ քաղաքում կայացավ Քրդրըստանի դեմոկրատական կուսակցության առաջին համագումարը, որը նույնպես պաշտոնապես հայտարարեց ազգբեջանցիների, հայերի, ասորիների և մյուս ազգերի հավասար իրավունքների մասին[135]։

Իրանի առաջադեմ ուժերը, այդ թվում նաև իրանահայ համայնքի մեծամասնությունը, պաշտպանում էին ազգբեջանական և քուրդ ժողովուրդների պայքարը։

Իրանական Ադրբեջանում դեմոկրատական կարգերի հաստատման և ամրապնդման գործում իրենց անմիջական մասնակցությունն են ունեցել նաև իրանահայ համայնքի առաջադեմ ներկայացուցիչները։ Նրանցից է դեռևս 1905 թ. մարքս-լենինյան գաղափարների տարածող, Թավրիզի հայ սոցիալ-դեմոկրատական խմբակի հիմնադիր, 1931 թ. Իրանի կոմունիստական կուսակցության Թավրիզի քաղաքային կոմիտեի անդամ, նվիրված հեղափոխական Դավիթ Նազարբեկյանը։ Նա 11 տարի գտնվում էր ողաշահյան զրկանքներում։ 1941 թ. բանտից ազատվելով նա շարունակում է իր աշխատանքը «Թուդեհ» Ադրբեջանի մասնաճյուղում (եղել է Թավրիզի կոմիտեի անդամ, հետագայում ընդգրկվել այդ կուսակցության կենտկոմի և կառավարության կազմում)։ Դ. Դևորգյանը միաժամանակ հասարակական մեծ աշխատանք էր տանում հայ բնակչության շրջաններում։

Դեմոկրատական կարգերի հաստատման գործում մեծ է եղել նույն կուսակցության Կենտրոնական կոմիտեի անդամ, գնդապետ Արամ Ջաուիկյանի և նրա կրտսեր եղբայր Իշխանի դերը, որոնք ևս պայքարել են բռնապետական կարգերի դեմ։

Իրանական Ադրբեջանի Սալմաստ շրջանում կուսակցու-

Բյան կազմակերպիչներից է եղել Աբսեն Նախչյանը (Շըխյան)[136]։

Իրանական Ադրբեջանի դեմոկրատական շարժումների անմիջական մասնակիցներից էր այդ տարիներին Իրանի արհմիությունների միացյալ կենտկոմի անդամ Ռուբեն Նավասարդյանը։ 1943 թ. ժողովրդական կուսակցության անդամ, մարքսիստական գաղափարներով տոգորված այդ հեղափոխականը կուսակցության հանձնարարությամբ Իրանի տարբեր քաղաքներում կազմակերպել է արհեստակցական միություններ։ Իրանական Ադրբեջանում դեմոկրատական շարժումները ճնշվելուց հետո Նավասարդյանը ձերբակալվում և երկու տարով աքսորվում է Շիրազ (Նեյրիզ ագի լիճը)[137]։

1945 թ. Իրանական Ադրբեջանում դեմոկրատական կարգերի հաստատման համար լայն գործունեություն է ծավալել տեղի գյուղացիությունը։ «Արևելք» թերթն իր համարներում արձանագրում էր Միանեի, Սարաբի և հայաբնակ Մարաղայի շրջանում ոստիկանության դեմ ապստամբած գյուղացիության շարժումները։ Թերթը հաղորդում էր, թե ինչպես փինաթափ անելով ժանդարմներին՝ գյուղացիներն իրենց ձեռքըն են վերցնում իշխանությունը[138]։

Այդ ազատագրական շարժումներում ընդգրկված հայերի թիվը բավական մեծ էր։ Ե. Աբրահամյանը գրում է. «Ադրբեջանի հայ և ասորի բնակչությունը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Ադրբեջանի ապստամբությանը, որն ուղղված էր կենտրոնական իշխանության դեմ։ Կառավարական տանկերի և ապստամբած կամավորների միջև 1945 թ. դեկտեմբերին Ուրմիայի շրջանում տեղի ունեցած ծանր մարտերի ժամանակ 55 սպանվածներից 41-ը տեղի ասորիներ ու հայեր էին»[139]։

1946 թ. Իրանում կրկին մեծ թափ են ստանում բանվորական շարժումները։ Մայիսի 1-ին Աբադանում, Աղաջարիում և երկրի հարավային մի շարք շրջաններում տեղի են ունենում բանվորների համերաշխության մասսայական ցույցեր։ Ինչպես վկայում է «Վերածնունդ» թերթը, Աբադանի

պատմության մեջ դա առաջին դեպքն էր, որ մայիսմեկյան ցույցին մասնակցում էին տարբեր ազգությունների 60 հազար ներկայացուցիչներ։ Ցույցարարները կրում էին պարսկերեն, հայերեն, արաբերեն, հնդկերեն լեզուներով գրված տրանսպարանտներ[140]։ Աբադանի նավթարդյունաբերության բանվորների ցույցը բոնկվեց մայիսի 4-ին, իսկ մայիսի 10-ին՝ Աղաջարիի գործադուլը։ Հունիսի 8-ին հարավի նավթագործ բանվորները կրկին գործադուլ հայտարարեցին[141]։

Նավթագործ բանվորների ցույցերից վախենալով՝ անգլո-իրանական նավթային ընկերության վարչությունը խոստացավ բանվորների վիճակը բարելավել, սակայն խոստումը չկատարեց։ Իրանի հետադիմական ուժերն իրենց հերթին սկսեցին հանդես գալ նավթարդյունաբերության բանվորների և ցույցերի ու գործադուլների կազմակերպիչների դեմ։ Բանվորներին աշխատանքից հեռացնելու և աշխատանքային պայմանները չբարելավելու դեմ որպես բողոքի նշան 1945 թ. հուլիսին նավթարդյունաբերության ձեռնարկություններում բոնկվեց համընդհանուր գործադուլ, որին մասնակցում էին տարբեր ազգությունների մոտ 100 հազար բանվորներ։

Գործադուլի հենց առաջին օրերին անգլիական գործակալները Աբադանում արաբներին հրահրեցին հարձակվել բանվորների վրա։ Սպանվեց 46 և վիրավորվեց 174 մարդ։

Իշխանությունները գործադուլը համարեցին անօրինական, և Խուզիստանում ռազմական դրություն հայտարարվեց։ Հազարավոր ակտիվիստներ հեռացվեցին աշխատանքից, շատերը ձերբակալվեցին։ Դրա հետևանքով բանվորական շարժումները հարավում թուլացան[142]։

1946 թ. վերջերին Իրանի հետադիմական ուժերի գործունեությունն ուժեղացավ։ Հարձակումներ էին կատարվում առաջադեմ գործիչների ու հասատատությունների վրա։

Վարչապետ Ղավամ-էս-Սալթանեն (1946 թ. հունվար—1947 թ. դեկտեմբեր), որը մինչ այդ խուսանավում էր հետադիմական ու դեմոկրատական ուժերի միջև, բանվորական շարժումները ճնշելուց հետո իրեն դրսևորեց որպես

ժողովրդի, դեմոկրատական շարժման և խորհրդաիրանական բարեկամության կատաղի թշնամի։

1946 թ. հունիսի 23-ին բանվորական կազմակերպություններին ուղղած իր հայտարարության մեջ Ղավամը նրանց մեղադրում էր հասարակական կարգը խախտելու և իշխանությունների ներքին գործերին միջամտելու մեջ։ Հայտարարությունը առիթ հանդիսացավ դեմոկրատական կազմակերպությունների դեմ առավել ուժգին պայքար ծավալելու համար։ Սկսվեցին բացահայտ հարձակումները ժողովրդական կուսակցության անդամների ու կազմակերպությունների վրա։ Արգելվեցին միտինգները, ժողովները, դեմոկրատական թերթերի հրատարակումը[143]։

1946 թ. հոկտեմբերի վերջերին Թեհրանի հետադիմական թերթերը պահանջեցին Իրանական Ադրբեջանի դեմ բանակ ուղարկել։ Նոյեմբերի 17-ին Թեհրանում պաշարված դրություն հայտարարվեց։ Դեկտեմբերի 10-ին Ղավամի հրամանով բանակը մտավ Ադրբեջան, և այնտեղ հայտարարվեց ռազմական դրություն։ Սկսվեց արյունոտ դատաստան Ադրբեջանի դեմոկրատական կուսակցության առաջնորդների ու բանվորական ։ շարժումներին մասնակցած բնակչության նկատմամբ[144]։

Զինված հրոսակախմբերը փողոցներում բացահայտորեն գնդակահարում էին առաջադեմ մարդկանց և կողոպտում նրանց ունեցվածքը։ 1947 թ. հուլիսի 5-ին «Մարդում» թերթի հաղորդած տեղեկությունների համաձայն կարճ ժամանակամիջոցում Ադրբեջանում գնդակահարվել ու կախաղան էին բարձրացվել հազարավոր մարդիկ։

Այդ ծանր օրերին սպանվեցին նաև բազմաթիվ հայ հեղափոխականներ, որոնց թվում էին Հարություն Հայրապետյանը, ժողովրդական կուսակցության հիմնադիրներից Արսեն Շախյանը[145]։ 25-ամյա Սուրեն Հարությանի մարմինը 1946 թ. Ահար քաղաքի մոտակա գյուղերից մեկում կատր-կատր արվեց ու նետվեց գյուղի ավազի ջրհորը[146]։ Զոհվեցին նաև Ադրբեջանի ժողովրդական շարժումների մասնակից, ուրմիացի Արշակ, Հովսեփ Հովսեփյաններ[147] և ուրիշներ։ Դեմոկրատական շարժման մասնակիցներից շատերին հաջողվեց հայրենադարձվել Խորհրդային Հայաստան։

Դեմոկրատական շարժումները ճնշելու նպատակով Իրանի վարչակարգը և անգլո-ամերիկյան իշխանությունները դիմում էին բոլոր միջոցներին։

Հետպատերազմյան շրջանում ազգրեջանական և քրդական դեմոկրատական շարժումները ճնշելուց հետո էլ Իրանի կառավարությունը ժողովրդական շարժումներին վերջ տալու նպատակով շարունակում էր օժանդակություն ստանալ արևմտյան պետություններից, հատկապես ԱՄՆ-ից։ Բանվորների գիտակցությունը մթագնելու նպատակով մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունները թարգմանվում էին բովանդակության և խմաստի աղճատումներով ու աղավաղումներով։

Իշխանության գլուխ անցած Հաքիմին (1947 թ. դեկտեմբեր—1948 թ. հունիս) հայտնի էր իր մոլի ատելությամբ դեպի դեմոկրատական շարժումները։ Նրա օրոք նոր հարձակումներ են սկսվում դեմոկրատական ուժերի դեմ։ Թերթերն ու ռադիոն սուր պայքար էին ծավալել նաև Խորհրդային Միության դեմ։

Դեմոկրատական կազմակերպությունների և առաջադեմ ուժերի նկատմամբ կիրառվող հետապնդումներն ու բռնությունները զժգոհություն էին առաջացնում երկրի բնակչության շրջանում։

1948 թ. ապրիլի 23—26-ը Թեհրանում կայացավ Իրանի Ժողովրդական կուսակցության II համագումարը, որն ընտրեց կուսակցության Կենտրոնական կոմիտեի նոր կազմ։ Կուսակցության գլխավոր քարտուղար ընտրվեց Ռեզա Ռադմանեշը։

1949 թ. փետրվարի 4-ին շահի դեմ «Փարչամե իսլամ» (Իսլամի դրոշ) թերթի թղթակցի կողմից մահափորձ կատարվեց։ Այն վերագրելով Իրանի Ժողովրդական կուսակցությանը՝ իշխանությունները վերջինիս հայտարարեցին օրենքից դուրս։ Թեհրանում և այլ քաղաքներում ու շրջաններում ռազմական դրություն հայտարարվեց[148]։ Արգելվեց բոլոր դեմոկ-

բատական թերթերի ու հանդեսների հրատարակումը։ Միայն Թեհրանում փակվեց 73 անուն թերթ, որը կազմում էր ամենօրյա հրատարակությունների 94%-ը[149]։ Ավերվում էին ժողովրդական կուսակցության շենքերը։ Թեհրանում և գավառներում ձերբակալվեցին դեմոկրատական շարժումների ավելի քան հազար մասնակիցներ։ Մահվան դատավճիռ կայացվեց Իրանի ժողովրդական կուսակցության բացակա առաջնորդների դեմ, որոնց թվում էր նաև Ա. Հովհաննիսյանը։

Չնայած բոլոր հալածանքներին՝ 1950—1951 թթ. երկրում հակապետական շարժումը կրկին նոր թափ ստացավ։ Ժողովուրդը պահանջում էր ազգայնացնել նավթարդյունաբերությունը։ Մեծ պայքար ծավալվեց անգլո-իրանական նավթային ընկերության դեմ, որը դաժանորեն շահագործում էր ժողովրդին, կողոպտում նրա ազգային հարստությունը։ Ամբողջ երկրում տեղի էին ունենում ժողովներ և միտինգներ, որոնց մասնակիցները պահանջում էին երկրից վտարել անգլիացիներին։ 1950 թ. մարտի 9-ին Թեհրանում կայացավ ռազմական դրության դեմ ուղղված ցույց, որին մասնակցում էին 20 հազար կանայք ու երեխաներ[150]։

Նման ցույցեր էին տեղի ունենում նաև Շիրազում, Բաբոլում, Համադանում և մյուս քաղաքներում[151]։ Իրանի ժողովուրդը պահանջում էր կրճատել ռազմական ծախսերը՝ փոխարենն ավելացնելով լուսավորության և առողջապահության նպատակների համար հատկացված միջոցները, բարելավել խորհրդային Միության հետ հարաբերությունները[152]։

1951 թ. ապրիլի 29-ին իշխանության գլուխ անցավ ազգային բուրժուազիայի ղեկավար Մ. Մոսադեղը, որի առաջնահերթ խնդիրը դարձավ վերացնել Անգլո-իրանական նավթային ընկերությունը[153]։

Նավթարդյունաբերության ազգայնացման համար ծավալված շարժման մեջ գլխավոր դեր էր խաղում Իրանի կիսալեգալ ժողովրդական կուսակցությունը, որը հակաանգլիական պայքարի հուն օրերին իր բոլոր ուժերով պաշտ-

պանում էր Մոսադեղի կառավարությունը։ Սակայն վերջինս միացյալ ճակատով արևմտյան պետությունների դեմ պայքար մղելու փոխարեն, երկրի հասարակական անվտանգության և ռազմական դրության վերաբերյալ ընդունած օրենքներով ավելի շատ պայքարում էր բանվորական ու գյուղացիական կազմակերպությունների դեմ։

Հենց Մոսադեղի իշխանության օրոք՝ 1953 թ. մարտի 28-ին, դեմոկրատական երիտասարդական կազմակերպության միտինգը խափանելու նպատակով ոստիկանության կողմից կազմակերպված բռնությունների զոհ դարձան բազմաթիվ ազատատենչ երիտասարդներ։ Նրանց թվում էր և Նազար Սարգսյանը[154]։

Նավթարդյունաբերական շրջաններում արհեստակցական միությունների կազմակերպման աշխատանքները կանգնեցնելու նպատակով Թեհրանից և Դեզֆուլից օժանդակ զորք ուղարկվեց։ 1953 թ. օգոստոսի 6-ին Մասջեդ Սուլեյմանում զինված ուժերի և բանվորների միջև տեղի ունեցած ընդհարումների ժամանակ զոհված երեք բանվորներից մեկը Մ. Գրիգորյանն էր[155]։

1949—1953 թթ. Իրանում տեղի ունեցած հակաանգլիական, դեմոկրատական շարժումը երկրի ժամանակակից պատմության մեջ նոր փուլ հանդիսացավ, որը լուրջ հարված հասցրեց դարեր շարունակ Իրանի տնտեսական և քաղաքական վիճակը տնօրինող Անգլիայի գաղութային քաղաքականությանը։ Չնայած պարտությանը, այն հսկայական ներգործություն ունեցավ ասիական մյուս երկրների և, հատկապես, արաբական արևելքի մի շարք երկրների ժողովրդական շարժումների վերելքի վրա։

1953 թ. օգոստոսյան հեղաշրջումից հետո Իրանում հաստատվեց շահի անսահմանափակ դիկտատուրան և Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքական տիրապետությունը։

Հեղաշրջումն իր հետ բերեց արյունախում ՍԱՎԱՔ-ի դաժան ռեժիմ, ոստիկանական տեռոր։

1953 թ. հեղաշրջումից հետո գեներալ Ֆ. Զահեդին, անց-

նելով կառավարության գլուխ՝ անմիջապես դիմեց առաջադիմական ու դեմոկրատական ուժերի դեմ ուղղված մասսայական ճնշումների։ Կուսակցություններն ու կազմակերպությունները փաստորեն լուծարքի ենթարկվեցին։

Հիշյալ ժամանակաշրջանում հատկապես ուժեղ հարձակումներ էին սկսվել «Թուդե» ժողովրդական կուսակցության դեմ։ Իշխանությունները քաջ գիտակցում էին, որ իրենց հետագա գործողությունների ճանապարհին խոչընդոտ հանդիսացող հիմնական ուժը ժողովրդական կուսակցությունն էր լինելու։

Իրանի ժողովուրդների դեմոկրատական շարժումները ճնշելու ծանր ժամանակներում մեծապես տուժեցին նաև իրանահայության առաջադիմական ուժերը։ Վարդան Սալախանյանը, Գալուստ Ջախարյանցը, Արսեն Հովհաննիսյանը և շատ ուրիշներ մնայուն տեղ գրավեցին Իրանի ազատագրական շարժումների պատմությունը կերտող հերոսների անունների կողքին։

Իրանի ժողովրդական կուսակցության ղեկավար գործիչներից էր Գագիկ Հովհաննիսյանը[156]։ Գ. Հովհաննիսյանը 1941 թ. մտնում է ժողովրդական կուսակցության երիտասարդական կազմակերպության շարքերը, իսկ 1943 թ. տեղափոխվում է Թեհրան և մասնակցում կուսակցության ընդհատակյա գործունեությանը։ Ընդհատակում աչքի ընկնող գործունեությունը մեծ ծավալ է ստանում 1953 թ. ռեակցիոն հեղաշրջումից հետո Իրանում ստեղծված ծանր քաղաքական պայմաններում։ Միապետական ռեժիմի պայմաններում, բանտերում խոշտանգումների հետևանքով նրա կրծքավանդակը վնասվել էր։ Նա իր ընդհատակյա կուսակցական գործունեությունը շարունակում էր մինչև իսլամական կարգերի հաստատումը, հանդես գալով Թաբաթաբայի ազգանունով։

1953 թ. օգոստոսյան պետական հեղաշրջումից հետո լայն գործունեություն ծավալեց իրանական ոստիկանությունը։ ՍԱՎԱՔ-ը ստեղծվել էր ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզական վարչության անմիջական նախաձեռնությամբ։ Այն

ՍԱՎԱՔ-ին զինել էր հետախուզական միջոցների վերջին նորույթներով, իսկ ԱՄՆ-ի Ֆեդերալ հետաքննչական բյուրոն ՍԱՎԱՔ-ին տրամադրել էր ներքին հակառակորդների դեմ պայքարելու անհրաժեշտ միջոցներ[157]։

ՍԱՎԱՔ-ը ստանալով ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզական վարչության նորագույն տեխնիկան, հետագայում նաև Իսրայելի օժանդակությունը՝ հարցաքննությունների և խոշտանգումների ժամանակ կիրառում էր ամենադաժան մեթոդներ։

Հակառակ ոստիկանական տեռորին ու ահաբեկումներին, ժողովուրդը և ազգային ընդդիմադիր ուժերը շարունակում էին պայքարն իշխող դաժան իրավակարգի դեմ։ Հեղաշրջումից հետո նրանց կողմից կազմակերպված առաջին խոշոր ցույցը տեղի ունեցավ 1953 թ. նոյեմբերի 14-ին, որին մասնակցում էին ազգային բոլոր ուժերը՝ Ազգային ճակատը («Ջեբհեյե մելլի»), ժողովրդական կուսակցությունը և այլն։ Ոստիկանությունը կրակ բացեց, և փողոցները ծածկվեցին դիակներով ու վիրավորներով։ Այդ ժամանակ գոհվեց Իրանի Արհեստակցական բանվորական կազմակերպության ակտիվ գործիչ Ավետիս Մեսրոպյանը, որը Իրանի ժողովրդական կուսակցության ակտիվ անդամներից էր[158]։

1953 թ. հեղաշրջումից հետո գաղտնի ոստականության և զինվորական հետախուզական վարչության կողմից ձերբակալվեց կուսակցության ակտիվ աշխատող Օհան Յարեջանյանը, որին ոստիկանությունը հետապնդում էր դեռևս 1948 թվականից։ Նա մահացավ բանտում՝ ենթարկվելով ամենադաժան խոշտանգումների։ Մահից հետո նրա դիակը չհանձնեցին ընտանիքին[159]։

Այդ ծանր ժամանակների նահատակներից էր նաև անձնազոհ հեղափոխական Զավեն Զախարյանը[160]։

Վարդան Սալախանյանի և Մահմուդ Քուչեք Շոշթարու մահվան 26-րդ տարելիցի առթիվ Իրանի ժողովրդական կուսակցության օրգան «Նամեյե Մարդոմ» թերթի 1980 թ. մայիսի 8-ի համարում լույս տեսած «Երկու արյունոտ ասպղ ժողովրդական ազատագրման ղրոշի վրա» հոդվածում բա-

ցահայտվել են այն սարսափելի տանջանքները, որոնց են-թարկվել էին նրանք։

Բնութագրելով ժամանակի բանտերի ու բանտարկյալների վիճակը՝ ժողովրդական կուսակցության անդամ Ռուբեն Նավասարդյանը գրել է, որ հարցաքննության ընթացքում «...բացի զրկից ու թանաքից օգտագործվում էին նաև այլ առարկաներ՝ մարակ, ծանրաքաշ ձեռնաշղթաներ, մետաղե շիկացած սաղավարտ, այրելու բարակ մետաղաձողեր ...»[161]։

Իրանի հեղափոխության անդամներից էր նաև Խորեն Ղարախանյանը։ 1955 թ. հոկտեմբերի 23-ին կուսակցության անդամ Խորեն Ղարախանյանը բանվորների ներկայությամբ սպանվեց մի ոստիկանի կողմից։ Աղբյուրները վկայում են, որ Խ. Ղարախանյանի սպանության գործում որոշակի դեր են ունեցել հետադիմական ուժերը[162]։ «Փյունիկ» շաբաթաթերթը նրա մասին գրել է. «Խորեն Ղարախանյանի և նրա մարտական ընկերների հիշատակը ապրում է և կապրի Իրանի բանվոր դասակարգի և երախտապարտ ժողովրդի հիշողության մեջ»[163]։

Ահաբեկչական խմբի զոհ են դարձել նաև ժողովրդական կուսակցության երիտասարդական կազմակերպության ղեկավարներ Արամայիս Սարգսյանը և Ջահանգիր Բաղդասյանը[164]։ Դրանց թվումն է 1958 թ. զոհված «Թուդեհ» անդամ, նկարիչ-գծագրող Վարազ Պետրոսյանը, որը 18 տարեկանից մտել էր հիշյալ կուսակցության երիտասարդական կազմակերպության շարքերը։ Նա իր ակտիվ աշխատանքի շնորհիվ շուտով ընտրվում է երիտասարդական կազմակերպության շրջանային կոմիտեի անդամ, իսկ 1947 թ. նույն կազմակերպության առաջադրանքով սկսել է գործել «Թուդեհ» կուսակցության շարքերում։ 1949 թ. «Թուդեհի» գործունեության արգելումից հետո Վ. Պետրոսյանը պայքարը շարունակում է ընդհատակում։ Շուտով նա ձերբակալվում է և դատապարտվում մեկ տարվա բանտարկության։ Բանտում Վ. Պետրոսյանն իբրև բողոքի նշան, նկարում է ուսերի վրա օձեր կրող Զահաքի[165] պատկերը։ 1953 թ. հեղաշրջումից

հետո ոստիկանության հետապնդումներից ազատվելու համար նա ստիպված մեկնում է Սպահան, բայց ապարդյուն։ Շուտով նա կրկին վերադառնում է Թեհրան։

Ազատագրական շարժումների աչքի ընկնող դեմքերից էր ժողովրդական կուսակցության անդամ Գալուստ (Կոլյա) Զախարյանցը, որը հայտնի էր նաև Բահրամ, Յալդա, Թիրաժե և Մուրադ կեղծանուններով։ Ժողովրդական կուսակցության ստեղծման առաջին իսկ օրից նա անդուլ պայքար էր մղում բռնապետական կարգերի դեմ[166]։

1953 թ. օգոստոսյան հեղաշրջումից մի քանի ամիս անց, երբ երկրում քաղաքական ծանր մթնոլորտ էր ստեղծվել, Գ. Զախարյանցը հանդես եկավ մի հոդվածով, որտեղ մանրամասն քննարկում էր քաղաքական հեղաշրջման էությունը, ժողովրդական կուսակցության հետագա գործունեությունը, հանգամանորեն վերլուծում երկրի հասարակական-տնտեսական կացությունը[167]։ Պատահական չէ, որ երկու տարի շարունակ ամբողջ ոստիկանական ապարատը Ալի Զիբայիի գլխավորությամբ հետապնդում էր նրան։ Վերջապես, 1955 թ. ամռանը նա մատնությամբ ձերբակալվում և տեղափոխվում է գաղտնի տանջարաններից մեկը։ Գ. Զախարյանցի ձերբակալության հաջորդ օրվա լուսաբացին գրնդապետ Ալի Զիբային, դուրս գալով տանջարանից, հայտարարեց «մեռավ, բայց անունն անգամ չասաց»[168]։ Ալի Զիբային հայտարարել է նաև, թե շահի կարգադրությամբ՝ Զախարյանցի նման անձանց գործերը չպետք է մուտք գործեն դատարան, քանի որ նրանք իրենց հայտարարություններով աշխարհում աղմուկ են բարձրացնում և մեզ անհանգստություն պատճառում»[169]։ Անհետացրին անդամ նրա մարմինը։

1958 թ. դասավանդման պահին, աշակերտության ներկայությամբ ահաբեկման է ենթարկվում ժողովրդական կուսակցության անդամ, 55-ամյա Սամվել Հովհաննիսյանը։ Նա հայկական «Քուշեշ» դպրոցի դիրեկտորն էր, սակայն հետագայում, նկատի ունենալով Ս. Հովհաննիսյանի քաղա-

քական հայացքները՝ վարչակարգը պաշտոնազրկեց նրան, թողնելով նույն դպրոցում որպես տեսուչ[170]։

1958 թ. բռնապետական վարչակարգի դահիճներին զոհ է դարձել անվանի հեղափոխական Արամայիս Ղարախանյանը[171]։ Նույն թվականի ապրիլի 22-ին կախաղան են բարձրացվել ևս երկու հերոսներ՝ Արսեն Հովհաննիսյանը և Հուշանգ Փուր Ռեզվանին։

Իրանի ժողովրդական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ և ազգային հերոս Խոսրով Ռուզբեհը, հեղափոխական Մոբաշերը և նրանք, ովքեր աշխատել են հայազգի մարտիկ Արսեն Հովհաննիսյանի հետ, բնութագրել են նրան որպես անձնազոհ, խիզախ և ամբողջովին կուսակցության գաղափարներին նվիրված մի անձնավորություն[172]։ Բռնության ու ահաբեկման օրերին, երբ կուսակցությունը գտնվում էր նյութական ծանր վիճակում, նա իր ամբողջ ունեցվածքը, որը մոտ 10 հազար թուման էր կազմում, տրամադրել էր կուսակցությանը։ Ա. Հովհաննիսյանը մինչ այդ մերժել էր ընդհատակ անցնելու մասին կուսակցության առաջարկը։ Իշխանությունների կողմից կուսակցության շարքերին անցած իրանական բանակի սպաների գաղտնի կազմակերպության հայտնաբերումից հետո պարզվում է, որ Արսենն առնչություն ուներ դրա հետ։ Մինչ այդ նա աքսորվել էր Խարք կղզի, սակայն նրան բերում են Թեհրան, ենթարկում խոշտանգումների և սպանում[173]։

Ըստ եղած տվյալների 1957 թ. մինչև 1977 թ. Իրանում բնակվող տարբեր ազգությունների ավելի քան 360.000[174] լավագույն զավակներ սպանվել են շահի դահիճների ձեռքով[175]։

Շահական միապետության տապալումից հետո Իրանի տարբեր քաղաքներում բացվեցին ցուցահանդեսներ՝ նվիրված երկրի ազատության ու անկախության ճանապարհին զոհված հերոսների հիշատակին։

«Փյունիկ» շաբաթաթերթն իր 1979 թ. 1-ին համարում անդրադարձել է նման մի ցուցահանդեսի, որը կազմակերպվել էր Թեհրանի պոլիտեխնիկական համալսարանում։

Թերթը գրում է. «Ցուցահանդեսում, որտեղ արտացոլվել է Իրանի ժողովուրդների միասնական պայքարը միապետության և իմպերիալիզմի դեմ, իրենց արժանի տեղն են գրավել նաև հայ հեղափոխականները, որոնք հերոսաբար մարտնչեցին Իրանի հեղափոխության հաղթանակի համար, ենթարկվեցին բարբարոսական տանջանքների, չարչարանքների և կյանքի գնով ապացուցեցին, որ հավատարիմ են մնացել իրենց որդեգրած գաղափարներին և ժողովրդի շահերին»։

1979 թ. ապրիլի 14-ին, շահական ռեժիմի տապալումից անմիջապես հետո, Իրանի ժողովրդական կուսակցության զոհված հայ անդամների հիշատակը հարգելու նպատակով քաղաքական ու առաջադիմական տարբեր կազմակերպությունների հարյուրավոր պարսիկ և հայ ներկայացուցիչներ հավաքվել էին Թեհրանի հայկական հին «Դուլաբ» գերեզմանատանը։

Այդ առթիվ ժողովրդական կուսակցության ուղերձում գրված էր. «Այս մարտիկ-հերոսները Իրանի պատմության ամենասև օրերին, երբ միապետությունն ամեն ձևով կեղեքում էր, հանդիստ չգտան։ Ջարդափելով բանտերից, մահապատիժներից և գնդակահարություններից՝ նրանք համախմբվեցին և իրենց ուսերի վրա տարան իմպերիալիստների, ռեակցիայի և ինքնակալության դեմ մղվող մի անհավասար, սակայն խիզախությամբ ու հերոսությամբ լի ժողովրդի հզոր պայքարը։ Այս հերոսների գործը ոչ միայն մեր ժողովրդի խանդավառ պայքարի օրինակ է հանդիսանում, այլև միջազգային նշանակություն ունի»[176]։

Այսպիսով, իրանահայության առաջադեմ ներկայացուցիչներն իրենց արժանի ավանդն են ներդրել շահական դաժան բռնապետության դեմ իրանական ժողովրդի մղած հերոսական պայքարում։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին սփյուռքահայության մեծամասնության ջերմ վերաբերմունքը խորհրդային Միության նկատմամբ, ինչպես նաև բարեկամական կապերի հաստատումը մայր հայրենիքի հետ, մտահոգեց դաշնակցության որոշ ղեկավար գործիչներին։ Արդեն պատերազմի վերջերին, հատկապես հետպատերազմյան տարիներին, նրանք հանդես եկան Սփյուռքի և Հայրենիքի (այդ թվում նաև եկեղեցու) հետ բարեկամական կապերի ամրապնդման դեմ։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին էջմիածնի Մայր Աթոռը, որն անվերապահորեն հանդես եկավ ֆաշիզմի դեմ և հետպատերազմյան շրջանում ակտիվորեն մասնակցեց խաղաղության համաշխարհային շարժմանն ու գործնական դիրք գրավեց հայրենադարձության ժամանակ, մեծ հեղինակություն էր վայելում Սփյուռքի Հայաստանյաց եկեղեցիների մեջ, որոնք սփյուռքահայության շրջաններում բացի հոգևոր գործունեությունից նաև քաղաքացիական դեր էին կատարում։

Էջմիածնի Մայր Աթոռի գրաված դիրքը միանգամայն հակասում էր իրանահայության որոշ խավի գործունեությանը։

Անթիլիասի հոգևոր շրջանները մինչև 1956 թ. Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսության հետ գործում էին համաձայն։ Սակայն հետադիմական գործիչների քաղաքականության հետևանքով 1956 թ. արտասահմանյան մի շարք թեմեր, ինչպես նաև Իրանի, Հունաստանի, ԱՄՆ-ի եկեղեցիների մի մասն անցան Կիլիկիայի կաթողիկոսության ենթակայության տակ։

Անջատման նախադրյալները կային դեռևս 1920 թ., երբ Հայաստանում խորհրդային կարգեր էին հաստատվել։ Էջմիածնի Մայր Աթոռի նկատմամբ վերաբերմունքի մասին «Լրաբերը» գրում էր. «Այդ ատելության դրդապատճառը էջմիածնի դեմ հակակրոնությունը կամ հա-

կահեղեղյականությունը չէ, այլ այն, որ էջմիածինը կը դանվի խորհրդային Հայաստանի մեջ։ Վերցուցեք այդ տաճարը Հայաստանեն տարեք ու դետեղեցեք ուրիշ հակախորհրդային երկրի մը՝ ըսենք՝ Ամերիկայի մեջ, և այն ատեն տեսեք, թե հակաէջմիածնականը ինչպիսի երկյուղած լուսավորչական կը դառնայ»[177]։

Այդ տարիների դաշնակցական օրգան «Ալիք» թերթն ամբողջական էջեր էր նվիրում Կիլիկիայի կաթողիկոսության մեծարմանը։ Մայր Աթոռի հակառակորդները փորձում էին Թեհրանի թեմական խորհուրդն ամբողջությամբ իրենց կողմնակից դարձնել։ Խախտելով հայ եկեղեցու կանոնները և անտեսելով կաթողիկոսի բացառիկ իրավունքները, 1952 թ. Թեհրանի թեմական խորհրդի միջոցով նրանք իրենց նպատակները ձեռքերպելու համար Իրանի հայկական երեք թեմի համագումար հրավիրեցին։

1950-ական թվականների վերջերին իրանահայ համայնքըն անջատվեց Մայր Աթոռից, և գաղութի թեմերը ձեռքերեցին իրենց իրավական կապը Անթիլիասի հետ։ 1958 թ. մայիսի 28-ին ԱՄՆ-ի սենատում Անթիլիասի ներկայացուցիչը հանդես եկավ երկու եկեղեցիների անջատումն արդարացնող զեկուցումով[178]։

Սփյուռքահայության սրտհվածությունը վերացնելու և հայ եկեղեցին քաղաքական պայքարի ոլորտից դուրս բերելու նպատակով 1963 թ. հոկտեմբերին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն այցելեց Երուսաղեմ[179], *որտեղ հանդիպում ունեցավ Բեյրութից ժամանած Խորեն կաթողիկոսի հետ։ Չնայած Անթիլիասի անջատ գործունեությանը, էջմիածնի Մայր Աթոռը շարունակում է մեծ աշխատանք տանել փոխհարաբերությունների մեղմացման և երկու եկեղեցիների սերտացման ուղղությամբ։*

1965 թ. Կիլիկիայի կաթողիկոսությունը հաստատեց իր նոր կանոնադրությունը, որի 32-րդ և 33-րդ հոդվածներն հակադրվում էին Մայր Աթոռի իրավասություններին։ Ըստ 32-րդ հոդվածի՝ Անթիլիասին ենթակա թեմերի շարքում նշվել և օրինականացվել են Թեհրանի, Ատրպատականի և

Իրանահնդկական թեմերը[180]։ Իսկ 33-րդ հոդվածով Անթիլիասին իրավունք էր վերապահվում իր իրավասության տակ առնել նորանոր թեմեր[181]։

Դ. ՈՉ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Ինչպես սփյուռքահայության մյուս հատվածների, այնպես էլ իրանահայության կյանքում որոշակի դեր ունեն նաև հայ կաթոլիկ, հայ ավետարանական-բողոքական և այլ փոքր կրոնական համայնքները։

Դեռևս 1605 թ. շահ Աբասի բռնագաղթի ժամանակներից Իրան փոխադրված հայ զանգվածների մեջ կային կաթոլիկ հայեր՝ Շահրիմանյան ընտանիքի գլխավորությամբ։ Հետագայում, եվրոպական գաղութատիրական կապիտալի հետ արևելյան երկրներ, այդ թվում և Պարսկաստան են թափանցում պապական եկեղեցուն և այլ դավանանքների պատկանող միսիոներներ, որոնք արտահայտում էին գաղութատիրական տարբեր երկրների շահերը։ Միսիոներների հատուկ ուշադրությանն էին արժանացել Պարսկաստանի քրիստոնյա բնակչության մեծամասնությունը կազմող հայերը, որոնց ձեռքում էր գտնվում երկրի արտաքին առևտրի նշանակալից մասը։

Հատկանշական է այն, որ այդ շրջանի հայ հոգևորականները անհաշտ պայքար էին մղում կաթոլիկ միսիոներների քաղաքականության դեմ։ Միսիոներները որոշակի հաջողություն ունեցան արևելյան քրիստոնյաների մոտ, սակայն իրանահայության շրջանում նրանք իրենց նպատակին չհասան։ Այդ են վկայում օտարերկրյա և հայ հեղինակներից շատերը[182]։

Մեկ դար անց, աֆղանների արշավանքների հետևանքով պապական եկեղեցու քարոզիչների գործունեությունը խափանվում է, և կաթոլիկ միսիոներները հեռանում են Պարսկաստանից։

Սկսած 1835 թ. կրկին մեծ թվով կաթոլիկ քարոզիչներ են երևան գալիս Պարսկաստանում, որոնք լայն գործունեություն են ծավալում հայաբնակ վայրերում։ Համեմատաբար

մեծ ծավալ էր ընդունել ֆրանսիական միսիոներների գործունեությունը, որոնք հայ և ասորի երեխաների համար Թեհրանում, Թավրիզում, Սալմաստում, Նոր Ջուղայում և Սպահանում մի քանի դպրոցներ էին հիմնել[183]։ Հատկանշական է, որ առանձին հայկական դպրոցներ չունեցող հայաբնակ վայրերում հայ երեխաները հաճախում էին միսիոներական դպրոցներ[184]։

Հայ երիտասարդության շրջանում իրենց դավանանքը տարածելու նպատակով դարիս սկզբներից սկսած հայ կաթոլիկները աշխույժ գործունեություն էին ծավալում հատկապես Իրանի նավթարդյունաբերական շրջաններում, որտեղ աշխատելու համար երկրի կենտրոնական շրջաններից մեծ թվով հայ երիտասարդներ էին տեղափոխվել։ 1930-ական թվականներին Նոր Ջուղան ուներ շուրջ 100 հայ կաթոլիկ ընտանիք, իսկ 1960-ական թվականներին նրանց թիվը նվազեց 3/4-ով՝ հասնելով 25-ի[185]։ Նրանք Նոր Ջուղայում ունեին իրենց տարրական վեցամյա դպրոցը և մանկապարտեզը։ Այդ դպրոցը 1934 թ. հրամանով փակվեց։ Նոր Ջուղայում գործում էր «Հայ կաթոլիկե կանանց աղքատախնամ ընկերությունը», որը հիմնվել էր 1941 թ., որից հետո ստեղծվեց նաև Թեհրանի համանուն ընկերությունը[186]։

1960-ական թվականների սկզբներին հայապահպանման ու մշակութային նպատակներով և «Վասն կրոնի ու հայրենյաց» նշանաբանով Թեհրանում հիմնվեց «Ավարայր» հայ կաթոլիկե երկսեռ երիտասարդական միությունը, որն ուներ 150 անդամ։

1939 թ. սկսած Թեհրանում գործում էր «Մարիամ կույսերի կրթական հաստատությունը», որտեղ հայերենը դասավանդվում էր իբրև օտար լեզու։ Այդ միջնակարգ դպրոցը 1981—82 ուսումնական տարում ուներ 1624 աշակերտ[187]։

Ինչպես նախկինում, ներկայումս էլ հայ կաթոլիկ և տարբեր կրոնական միաբանություններին պատկանող քարոզիչներն ու նրանց ուսումնական հաստատությունները ջանք չեն խնայում իրենց դավանանքը տարածել իրանահայ համայնքում, մասնավորապես աշակերտության շրջանում։ 1971 թ. «Մա-

րիամ կույսերի կրթական հաստատությունն» արձանագրել է աշակերտների ավելի մեծ թիվ (հատկապես հայահոծ թաղերում), որով վտանգի տակ է դրվում համայնքի ազգային դպրոցների գոյությունը[188]։

Նյութապես ապահովված հայ կաթոլիկական համայնքը, որը օժանդակություն էր ստանում Վատիկանի և նրա դեսպանների կողմից, Իրանի հյուսիսային մասի ծովափնյա շրջանում կաթոլիկական Առաջնորդարանին պատկանող 26 հազար քառ. մետր տարածության վրա 1971 թ. բացեց «Հայ-քաշեն» մանկապատանեկան ճամբար, որից ամառային արձակուրդի ժամանակ կարող էր օգտվել 200 հայ կաթոլիկ պատանի[189]։

1973 թ. հայ կաթոլիկ կույսերը և նրանց օժանդակող «Տիկնանց մխիթյոնը» Թեհրանում հիմնում են «Սանուց տուն» կոչվող որբանոցը[190]։

Թեհրանի հայ կաթոլիկների համայնքը կազմակերպվել է 1934 թ.։ Այն եկեղեցական վարչություն չուներ, իշխանությունը կենտրոնացված էր ժողովրդապետի ձեռքին։ Կաթոլիկների թիվը Թեհրանում հասնում էր 1200-ի[191]։ Այստեղ էր գտնվում նրանց պատրիարքական փոխանորդությունն ու Առաջնորդարանը։

Հարկ է նշել, որ դեռևս 1860 թ. Ատրպատականի կաթոլիկ հայերը, որոնք Թավրիզում ունեին իրենց կենտրոնը, բնակվում էին նահանգի տարբեր քաղաքներում և մի շարք հայաբնակ գյուղերում դպրոցներ ունեին։

Թավրիզում Լազարյան լատին միաբանության կազմակերպությունը սկսել է գործել 1900 թ.։ 1910 թ. այն կառուցել է իր եկեղեցին։ Հայ կաթոլիկների թիվը Թավրիզում հասնում էր 100-ի[192]։

Իրանում կրթական-միսիոներական նշանակալից աշխատանք են կատարում իրանաբնակ բողոքականները։ Իրև կրոնական տարր Իրանի հայ բողոքականները հարյուրամյա պատմություն ունեն։ Նրանց հնագույն կենտրոնը Թավրիզն էր, որտեղ նրանք աշխատում էին ամերիկացի միսիոներների

հետ։ Այնուհետև համայնքներ են ստեղծվել Համադանում, Թեհրանում և Սուլթանաբադում։

XX դ. սկզբներին Թեհրանը դարձավ բողոքական բոլոր համայնքների կենտրոնը։ Հայ բողոքական եկեղեցին վարչական կառուցվածքով անկախ էր, սակայն ամերիկացի, ռուս, պարսիկ, քուրդ և հրեա բողոքականների համայնքների հետ կցված էր Իրանի ավետարանական-բողոքական եկեղեցիների միությանը։

Հայ բողոքականները 1960-ական թվականների սկզբներին ունեցան իրենց համայնքի ընտրովի խորհուրդը, որի 17 անդամներից 2-ը հոգևոր դասի ներկայացուցիչներ էին։ Բացի այդ, Թեհրանում գործում է նաև հայ բողոքականների խորհուրդը՝ 7 անդամով։ Այդ վարչական մարմինները կոչված են հանրային, կրթական, կրոնական և այլ կարիքների դեպքում օգնելու հայ բողոքականներին[193]։

Ղավամ-օս-Սալթանե թաղամասի միսիոներական կենտրոնին կցված հայ բողոքականներին տրամադրված է մի սրահ՝ շաբաթական մեկժամյա աղոթքի համար, որտեղ հավաքվում են մեծ մասամբ Թեհրանի շուրջ 200-ի հասնող բողոքականները[194]։

Թեհրանի համայնքն ունի իր երկսեռ վեցամյա դպրոցը և «Հայ ավետարանական երիտասարդաց միությունը»։ Բացի Թեհրանից, մոտ 250 անդամից բաղկացած համայնք է ստեղծվել Նոր Ջուղայում, որտեղ դեռևս 1875 թ. կառուցվել են նրանց ժողովարանը և «Անուշիրվան» վեցամյա տարրական դպրոցը։ Բողոքականների փոքր համայնքներ կան Թավրիզում, Արաքում և Համադանում։ Նրանց ընդհանուր թիվը Իրանում հասնում է շուրջ 1500-ի[195]։

Իրանցի ժամանակակից պատմաբան Էհսայիլ Ռայինը գրում է. «Տարիներ է, ինչ ամերիկացի բողոքական կազմակերպությունները կրոնական լայն գործունեություն են ծավալել Իրանում։ Մի խումբ իրանցիների համոզվածությամբ դրանք «կրոնի և քրիստոնեության տարածման» անվան տակ քննդրմացիոն և քաղաքական աշխատանք են կատարում, քանի որ Ղավամ էս-Սալթանե փողոցում գտնվող ավե-

տարանական եկեղեցին հիսուն տարի եղել է մայրաքաղաքում բնակվող անգլիական պաշտոնյաների և շոտլանդական մասոնական ժողովարանների կենտրոն։ Հենց այդ պատճառով էլ ամերիկացիներն աշխատում են որքան հնարավոր է քրիստոնեությունը տարածել Իրանում։ Հայ բողոքականների հատվածը Իրանում,— շարունակում է հեղինակը,— նույնպես ամերիկացիների գործունեության արդյունքն է, որը սկիզբ է առել տարիներ առաջ և արդյունավետ եղել ամերիկացի քարոզիչների համար»[196]։

Որոշակի թվով հայ գալստականներ (շաբաթականներ) իրենց ժողովատեղերով և քարոզիչներով գտնվում են Թեհրանում և Թավրիզում։ Թեհրանում նրանց թիվը (հայերը և օտարազգիները միասին) հասնում է 100-ի, իսկ Թավրիզում՝ 30-ի[197]։

Ինչպես Էսմայիլ Ռայինն է արձանագրում, գալստականները Իրանում բավական մեծ կազմակերպություն ունեն, որոնք ֆինանսավորվում են ամերիկյան միջոցներով[198]։

Իրանում համեմատաբար փոքր թիվ են կազմում հայ ուղղափառներն ու ունիթորները։ Առաջիններին պատկանող շատ քիչ հայեր բնակվում են Ատրպատականում, իսկ ունիթորները, որոնք Սեֆյան դինաստիայի շրջանում իրանահայ համայնքում ասիմիլյատորական մեծ գործունեություն էին ծավալել, այժմ կորցրել են իրենց հեղինակությունը, և նրանց հարող հայերի թիվը շատ քիչ է։

Ե. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Սփյուռքահայությունն ի դեմս Խորհրդային Հայաստանի գտավ իր հույսի հենարանը և անվերապահորեն բռնեց նրվիրական հայրենիք վերադառնալու ուղին։

Հայրենական մեծ պատերազմի ավարտից հազիվ մեկ տարի անց, երբ դեռ հսկայական աշխատանք էր պահանջվում նրա պատճառած վերքերը բուժելու համար, երբ զոհերի հիշատակը դեռ վառ ու կենդանի էր, Մայր Հայրենիքն իր դռները բացեց տարագիր հայերի առջև։

Հայրենադարձությունը հասարակական-քաղաքական կարևոր իրադարձություն էր նաև իրանահայության՝ մասնավորապես գյուղաբնակ հայ բնակչության համար։

Հայ ժողովուրդը մեծ խանդավառությամբ ընդունեց սփյուռքահայության հայրենադարձության մասին Խորհրդային կառավարության որոշումը, որը փրկության ուղի բացեց արտասահմանի հայության համար։ Այդ որոշմանը ցնծությամբ արձագանքեց Թավրիզում հրատարակվող «Արևելք» թերթը։ 1945 թ. դեկտեմբերի 2-ին ներգաղթի մասին ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշումը անմիջապես տարածվեց Թավրիզի հայկական շրջաններում։ Բոլորը ըշտապում էին հայկական այգի։ «Այգու բացօթյա բեմում ծածանվում են կարմիր լոզունգները,— գրում էր «Արևելք» թերթը,— Խորհրդային Միության ղեկավարների պատկերների շուրջ երևում են «Փառք հայ ժողովրդի փրկիչներին» և «Միայն խորհրդային իշխանությունը լուծեց հայկական խնդիրը» լոզունգները։ Նվագախումբը կատարում է Խորհրդային Միության հիմնը»[199]։

Գաղութահայության լավագույն հատվածը, որ մտահոգված էր իր ժողովրդի ճակատագրով, խորապես գիտակցեց խորհրդային կառավարության որոշման հույժ կարևոր նշանակությունը և եռանդուն աշխատանք սկսեց այդ ուղղությամբ՝ ամեն կերպ օժանդակելով հայրենադարձության մեծ գործին։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 1946 թ. զանգվածային հայրենադարձությունը իրականացվելու էր նաև Իրանից, այստեղ ստեղծվեց հայրենադարձության աջակցող անդրանիկ կոմիտեներից մեկը։ Ներգաղթին աջակցող Կոմիտեն կազմված էր 31 հոգուց, որի պատվավոր նախագահն էր Իրանահնդկական թեմի առաջնորդ, եպիսկոպոս Վահան Կոստանյանը։ Նախագահ ընտրվեց Ռոման Իսաևը, փոխնախագահներ՝ Հայկ Գարագաշը, Ղազար Սիմոնյանը և Աշոտ Խանջյանը, պատասխանատու քարտուղար՝ պրոֆ. Գր. Աբգալյանը, գանձապահ՝ Հովհաննես Բարսեղյանը։ Կենտկոմի կազմում էին նաև Բագրատ Ավագյանը, պրոֆ. Գ. Հակոբյանը, Արտուշ Այրիյանը և Սեդրակ Ավագ-

յանը։ Հանձնախմբի անդամներ էին Սուրեն Սևոյանը, Խաչիկ Աբրահամյանը, Անուշ Եգանյանը և ուրիշներ[200]։

Ներգաղթին աջակցող Կոմիտեն Երևան ուղարկած գրության մեջ խոր երախտագիտություն էր հայտնում հայրենադարձության վերաբերյալ խորհրդային կառավարության որոշման կապակցությամբ, որը արտասահմանի հայերին նորից իրենց հայրենիք վերադառնալու հնարավորություն էր ընձեռում[201]։

Իրանի հայերի ներգաղթին աջակցող Կոմիտեն լեռազոր մարմին էր, որը պետք է զբաղվեր Իրանից հայերի հայրենադարձության խնդրով, բացառությամբ Իրանական Ադրբեջանի, որն իր կոմիտեն ուներ և արդեն ձեռնամուխ էր եղել այդ աշխատանքներին։

Թեհրանի հանձնախումբն իր բաժանմունքներն ուներ Համադանում, Դաղվինում, Էնզելիում, Մեշհեդում, Արաքում, Ռեշտում, Ահվազում, Նոր Ջուղայում և երկրի մյուս հայաբնակ շրջաններում։

1946 թ. փետրվարի 16-ին Թավրիզի հայ հասարակայնության ժողովն ընտրեց Իրանական Ադրբեջանից հայերի հայրենադարձությունը կազմակերպող 15 հոգուց բաղկացած ներգաղթի կոմիտե՝ Բաբկեն Դորուխչյանի նախագահությամբ, քարտուղար ընտրվեց Հրաչ Հովհաննիսյանը։ Միաժամանակ ենթակոմիտեներ ստեղծվեցին նահանգի տարբեր շրջաններում։

1946 թ. ապրիլի 4-ին Նոր Ջուղայի հայրենադարձության ենթակոմիտեի նախագահ ընտրվեց Լևոն Հովհաննիսյանը, պատասխանատու քարտուղար՝ վաղարշակ Սուքիասյանը, պատվավոր նախագահ՝ եպիսկոպոս Վահան Կաստանյանը։ Ստեղծվեց նաև ֆինանսների և տրանսպորտի սեկցիա[202]։

Նոր Ջուղայի ենթակոմիտեի պարտականությունների մեջ էր մտնում նաև Փերիայի, Քյարվանդի և Ջարմահալի շրջանների հայերի հայրենադարձության կազմակերպումը։ Արաքի ենթակոմիտեի հիմնական պարտականությունն էր

քաղաքամերձ Բուրվարի, Գյափլա, Քյամարա և Քյազազ շրջաններից հայրենադարձություն կազմակերպելու գործը։

Իրանի բոլոր հայկական համայնքներում սկսվեց հայրենդարձվողների ցուցակագրումը, այդ թվում էին Իրանական Ադրբեջանի հայերի ավելի քան 90 %-ը[203]։

Նույն խանդավառությունն էր տիրում երկրի բոլոր համայնքներում։ Փերիայում ցուցակագրվողների թիվն այնքան մեծ էր, որ սկզբում որոշվեց նախընտրություն տալ միայն հողագործի և չքավոր գյուղացիներին, սակայն, ի վերջո, ցուցակագրեցին ամբ գյուղերի բոլոր հայերին[204]։

Ստեղծված կոմիտեները լայն աշխատանք ծավալեցին նաև հայրենադարձության ֆոնդ ստեղծելու ուղղությամբ։ Հայրենասեր հայերից յուրաքանչյուրն իր հնարավորության սահմաններում նյութապես օգնում էր ազգակիցներին։ Մեծ ժամեղակություն ցույց ավեց հատկապես Ջարմահալ գավառը՝ ապահովելով այդ գավառի բնակչության փոխադրման բոլոր ծախսերը։ Արդանում գործի անուրդից ստացված 29470 ռիալ գումարը ամբողջությամբ տրամադրվեց մյուս շրջաններից ներգաղթողներին[205]։

Այդ հայրենասիրական գործին մասնակցում էին նաև երեխաները։ Այդ առիթով «Վերածնունդ» թերթը մեջբերում էր կատարել Թավրիզում հրատարակվող «Արևելք» թերթից, որտեղ արձանագրված էր տասը հայ փոքրիկների նախաձեռնությունը։ Հետևելով իրենց ծնողների օրինակին՝ նրանք կազմակերպել էին ցերեկույթ, բեմադրել մանկական պիեսներ, համերգներ տվել, որոնցից ստացված գումարը, որ կազմել էր մոտ 4 հազար ռիալ, տրամադրվել էր հայրենադարձության ֆոնդին[206]։

Իրենց տարագիր հայրենակիցներին օգնելու և միջոցներ հատկացնելու նպատակով խորհրդային Հայաստանում նույնպես նվիրատվության աշխատանքներ տարվեցին։ Հայրենիքում հավաքված գումարն անցնում էր 25 միլիոն ռուբլուց[207]։

Մինչև 1946 թ. հայրենադարձությունը Փերիան ուներ 24 հայաբնակ գյուղ։ Հայրենիք վերադարձավ 8 գյուղերի բնակչությունը՝ հետևյալ քանակով.

Աղյուսակ 8

Ներգաղթած գյուղեր

Գյուղանուն	Տնտեսություն	Արական	Իգական	ընդհ. շունչ
Ադիգան	46	171	158	329
Ագնավուլ	61	239	205	444
Բժկերտ	38	136	123	259
Դաջան	44	121	114	235
Ոսկիգալա	47	160	162	322
Մազրաբադ	30	85	92	177
Մուզան	4	20	18	38
Սելբարդի	39	102	103	205
Ընդամենը՝	309	1034	975	2009[208]

Այս տվյալներին պետք է ավելացնել նաև գավառի մյուս գյուղերից հայրենադարձված 374 ընտանիքները (2395 անձ, որից 1237-ը արական և 1158-ը՝ իգական սեռի)[209]։

Ջարմահալ գավառի հայաբնակ 9 գյուղերից 6-ը հայրենադարձվեց։ Ահա դրա վիճակագրական պատկերը.

Աղյուսակ 9

Անուն	Տնտեսություն	Շունչ
Վերին Քոնաքք	60	280
Ցածի Քոնաքք	34	139
Լիվասյան	40	160
Մամուռան	30	155
Աղբուլաղ	55	280
Սինազան	35	251
Ընդամենը՝	254	1265

Վերջին օրերին նրանց միացան քաղաքներից եկած 11 չարմահալցիներ և ընդհանուր թիվը դարձավ 1276[210]։

Լ. Մինասյանի տվյալներով Իրանական Ադրբեջանից հայրենադարձվեց 5328, Արաքից՝ 5942, Թեհրանից՝ 626, Ղազվինից՝ 359, Համադանից՝ 22, Մեշհեդից՝ 61, Նոր Ջուղայից՝ 1537, Քյարվանդից՝ 1320, Բախթարանից՝ 30 մարդ[211]։

Պաշտոնական աղբյուրների համաձայն 1946 թ. զանգվածային հայրենադարձության ժամանակ ամենամեծ տոկոսը պատկանում էր Իրանին (20597 մարդ)[212]։

Դեռևս 1946 թ. մայիսի 10-ին Թեհրանից խորհրդային Հայաստան մեկնեց հայրենադարձություն ավետող 11 երիտասարդից կազմված ուսանողական մի խումբ։

Եվ այսպես, տարագիր հայության համար սկսվեց վերածնության նոր շրջան։ Առաջին քարավանը մեկնեց Սուլթանաբադից, շուտով նրան հետևեցին Թավրիզը, Սպահանը, Թեհրանը և մյուս շրջանները։

1947 թ. Իրանից ներգաղթած հայերի թիվը, անշուշտ, ավելի մեծ կլիներ, եթե իրանական կառավարությունը, հրաժարվելով իր նախնական համաձայնությունից՝ չարգելեր հայրենադարձությունը, որի հետևանքով հնարավոր չեղավ իրականացնել 1947 թ. մոտ 25 հազար իրանահայերի խորհրդային Հայաստան հայրենադարձվելու մասին Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթն իրականացնող կոմիտեի որոշումը։

1946 թ. նոյեմբերի 8-ին Իրանի ներգաղթին աջակցող հանձնախումբն իր ընդհանուր ժողովում մանրամասն քննության առավ մինչ այդ կատարված աշխատանքի արդյունքները։ Նիստին մասնակցում էին ներգաղթի նախապատրաստական աշխատանքներն ավարտելու և իրանահայերին հայրենիք ճանապարհելու նպատակով խորհրդային Հայաստանից Իրան ժամանած Ռուբեն Քալանթարը և Ռուբեն Ղազարյանը, որոնք մեծ աջակցություն ցուցաբերեցին հայրենադարձության գործին և նպաստեցին դրա հաջող իրականացմանը[213]։

ՀԽՍՀ կառավարության հայրենադարձության գծով լիազոր Ռ. Քալանթարը բարձր գնահատեց Ռոման Իսաևի, հայրենադարձության կոմիտեի, նրա զանազան սեկցիաների ու բոլոր ենթակոմիտեների կատարած անձնվեր աշխատանքը, ինչպես նաև «Աշխատանք» և «Վերածնունդ» օրաթերթերի, Թեհրանի «Մշակույթ» երիտասարդական ընդհանուր միության, մյուս կազմակերպությունների և անդամների նվիրվածությունը հայրենադարձության գործին[214]։

Որքան ծավալվում էր հայրենադարձների հոսքը Խորհրդային Հայաստան, այնքան ավելի հայ թերահավատ տարրերից ոմանք ձգտում էին որոշակի տրամադրություններ ստեղծելու ազգի միավորման ու վերականգնման այդ վեհ գործին և «զգուշության» ու «խոհեմության» դասեր էին տալիս։ Այդ նպատակով էլ դիմում էին զանազան միջոցների։ Նրանք Թավրիզի շրջանի Գյուրջի գյուղի բնակիչների անունից 1946 թ. Իրանի վարչապետ Ղավամ-օս-Սալթանեին և Խորհրդային դեսպանությանը կևդծ հեռագիր ուղարկեցին, որտեղ ասված էր, թե «Իրանահայերը չեն փափագի Հայաստան երթալ, քանի որ իրենք Իրան ծնած են և կսիրեն զայն»[215]։ Երբ հիշյալ գյուղի բնակիչները տեղեկացան այդ հեռագրի մասին, խորհրդային դեսպանին դիմեցին հետևյալ հայտարարությամբ. «Խոր ցավով իմացանք, որ չորս հոգու ստորագրությամբ գրգռիչ հեռագրեր ուղարկված են վարչապետին և սովետ դեսպանատուն։ Մենք բոլորս սրտանց հաղորդում ենք, որ վաղուց երազել ենք ներգաղթել դեպի մայր հայրենիք։ Մենք ամբողջ գյուղով դիմել ենք ներգաղթի կոմիտեին, առաջին հերթին և մեր ծախսերով ճանապարհվելու Հայաստան։ Մենք բոլորս հավատացած ենք, որ մեզ չեք մերժի Խորհրդային Հայաստան ներգաղթելու»[216]։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նկատելի փոփոխություններ կատարվեցին Իրանում գոյություն ունեցող կուսակցությունների, այդ թվում նաև դաշնակցական կուսակցության գործունեության մեջ։ Դա մի կողմից պայմանավորված էր միջազգային կյանքում ստեղծված քաղաքական նոր դիրքորոշումներով, իսկ մյուս կողմից՝ հայերի զանգվածային հայրենադարձությամբ։ Հետևանքը եղավ այն, որ որոշ գործիչներ փոխեցին իրենց հայացքները Խորհրդային Հայաստանի նկատմամբ և հայրենադարձվեցին մայր հայրենիք։

Համաձայն ուսումնասիրվող շրջանում հրատարակվող հայկական մամուլի, նման փաստեր են արձանագրվել Իրանի հայաբնակ, հատկապես Սալմաստ, Հավթվան, Մահլամ, Փայաջուկ, ինչպես նաև Փերիայի շրջանի Դովլաթաբադ

և Քրդեր գյուղերում, որոնց բնակիչները ցանկություն հայտնելով վերադառնալու Խորհրդային Հայաստան[218], պայքարում էին հայրենադարձության վերաբերյալ Խորհրդային Միության որոշման հանդեպ թերահավատ տարրերի դեմ։

Զանգվածային հայրենադարձության շրջանում իրանական ժողովրդի առաջադեմ խավը բարոյական աջակցություն ցույց տալով հայրենաբաղձ հայերին և անդրադառնալով երկրի տնտեսական ու մշակութային կյանքի բարգավաճման ու առաջընթացի գործում հայերի մատուցած մեծ ծառայություններին ու ներդրումներին, բազմիցս հանդես էր գալիս հոդվածներով և գործնական օգնություն ցուցաբերում հայրենադարձության կոմիտեներին։

Տառապյալ հայերի և հայրենադարձության խնդրին անդրադարձան պարբերաբար հրատարակվող մի շարք թերթեր։ Դրանցից էր, օրինակ, «Իրանեն մա» թերթը, որտեղ տպագրված «Հայերը Հայաստան են գնում» ծավալուն հոդվածում մանրամասն խոսվում էր հայերի ներգաղթի կազմակերպման կարևորության, այն տառապանքների ու զրկանքների մասին, որ նրանք կրել էին օտարության մեջ։ Հոդվածում ընդգծվում էր հայրենադարձության հոգեբանական և բարոյական հսկայական նշանակությունը, որով և հերքվում էին ներգաղթի սխալ մեկնաբանությունները ու նրա շուրջը ծավալված չարախոսությունները[219]։

Ինչպես արդեն նշել ենք, երկրում ստեղծված քաղաքական որոշակի հանգամանքների պատճառով 1947 թ. Իրանից հայերի զանգվածային հայրենադարձությունն ընդհատվեց։ Սակայն այն, որոշ ընդմիջումներով, շարունակվեց նաև հետագա տարիներին։ 1958 թ. անհատական հրավերներով մշտական բնակություն հաստատելու նպատակով տասից ավելի ընտանիքներ վերադարձան Խորհրդային Հայաստան[220]։

Ավելի քան մեկ տասնամյակ տևած (1950—1961) անհատական հայրենադարձության փորձն ապացուցեց, որ ներգաղթի այդ եղանակը չի կարող բավարարել բազմահազար սփյուռքահայերին վերադառնալու Հայրենիք։ Ուստի, ըն-

դառաջելով նրանց ցանկությանը, Խորհրդային Հայաստանի կուսակցական ու պետական ղեկավար մարմինների միջնորդությամբ ԽՄԿԿ Կենտկոմը և ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը 1961 թ. օգոստոսի 12-ին որոշում ընդունեցին նոր զանգվածային հայրենադարձության մասին[221]։

Այդ որոշումը, որպես կարևոր քաղաքական միջոցառում, լայն արձագանք գտավ Սփյուռքում։

Իրանում ԽՍՀՄ դեսպան Ն. Պեգովի հաղորդման համաձայն նոր զանգվածային հայրենադարձության լուրն իրանահայերն ընդունեցին մեծ խանդավառությամբ։ Կրկին սկսվեց տեղի հայերի հոսքը խորհրդային դեսպանատուն։ Ընդամենը երկու օրվա ընթացքում ավելի քան 2000 մարդ ցուցակագրվեց Խորհրդային Հայաստան մեկնելու համար[222]։

Անհրաժեշտ է նշել, որ Իրանից հայերի ներգաղթը Խորհրդային Հայաստան մշտապես լուրջ խոչընդոտների է հանդիպել, հատկապես 1953 թ. երկրում տեղի ունեցած հակադեմոկրատական հեղաշրջումից հետո ընկած ժամանակաշրջանում, երբ Իրանում իսպառ վերացան առաջադիմական կուսակցությունները ու կազմակերպությունները, և ստեղծված ռեակցիոն վարչակարգը հակախորհրդային դիրք գրավեց։ Չնայած այն հանգամանքին, որ այն արտաքուստ զանգվածային հայրենադարձությանը դեմ չէր, գործնականում պատկերը միանգամայն հակառակն էր։ ՀԽՍՀ ներկայացուցիչներին չէր թույլատրվում մեկնել հայաբնակ վայրերը, ձգձգվում էր իրանական հպատակությունից դուրս գալու ձևակերպումը, մեկնողներին արգելվում էր իրենց հետ վերցնել ամբողջ ունեցվածքը։ Հպատակությունից դուրս եկած հայերը անվտանգության մարմինների կողմից ենթարկվում էին խոչընդոտների և հետապնդումների, նրանց պարտադրվում էր սահմանափակ ժամկետում՝ 7—10 օրվա ընթացքում հեռանալ Իրանի սահմաններից։ Այդ էր պատճառը, որ նախատեսված 3000-ի փոխարեն 1962 թ. հայրենադարձվեց ընդամենը 58 մարդ[223]։

Չնայած այդ ամենին, խորհրդային դեսպանատան հետևողական ջանքերի շնորհիվ հաջողվեց Իրանից վերադարձնել մեծ թվով հայերի։ 1962—1967 թթ. ընթացքում Իրանից հայրենիք վերադարձավ 2699 մարդ[224]։

Հ. Մելիքսեթյանի բերած փաստերի համաձայն 1962—1982 թթ. ընթացքում 30 երկրներից հայրենադարձված 6795 ընտանիքից (կամ 31920 մարդուց) ամենամեծ թիվը բաժին ընկավ իրանահայերին (5039 ընտանիք՝ 24283 մարդ)[225]։

Այսպիսով, չնայած իրանական կառավարության հարուցած սահմանափակումներին ու խոչընդոտներին, հայրենադարձության ընթացքում ամենամեծ ներգաղթը կատարվեց Իրանից։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՄՇԱԿՈՒՅԹ

Ա. ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԻՐԱՆՈՒՄ

Սփյուռքում հայապահպանման գործում մեծ դեր են կատարել հայկական դպրոցները։ Իրանահայ մտավորականությունը, թեկուզ անբարենպաստ պայմաններում էլ, եռանդ չի խնայել պահպանելու գաղթօջախի դպրոցները և կուլտուրլուսավորական մյուս հաստատությունները։

Կովկասի, Հնդկաստանի և այլ երկրների հայ մշակութային օջախների օրինակով իրանահայ համայնքում առաջին դպրոցները սաեղծվել են XIX դարի առաջին կեսերին. Նոր Ջուղայում՝ 1833 թ., Թավրիզում՝ 1835 թ., իսկ Թեհրանում՝ 1870 թ.։ Մինչև այդ, ինչպես վկայում են աղբյուրները, իրանահայ համայնքում գոյություն են ունեցել «խալիֆայական» դպրոցներ, որոնք սկիզբ են առել դեռևս XII—XIII դարերում։ Այս դպրատուն-վարժարանները տեղավորված էին եկեղեցիների ու վանքերի խցերում և կրոնական բնույթ ունեին։

Համայնքում դպրոցի գոյության հարյուրամյակը նշվեց 1936 թ. (հիմք ընդունվեց Թավրիզի 1835 թ. «Արամյան» դպրոցի հիմնադրման տարին, չնայած առաջին դպրոցը բոսաեղծվել է Նոր Ջուղայում)։

Ինչպես արդեն նշել ենք, պետության կողմից այլազգիներին «պարսկացնելու» քաղաքականության իրագործման նպատակով 1936 թ. վերացվեց հայկական դպրոցների ինքնավարության իրավունքը։ Վարչակարգի հրահանգով փակվեցին հայկական բոլոր դպրոցները, բռնագրավեցին նրանց պատկանող շենքերն ու սեփականությունը[1]։

1939 թ. սաեղծվեց հայկական դպրոցների շրջանավարտների խումբը, որն իր շուրջը համախմբեց մոտ 200 դպրոցահասակ երեխաներ։ Նրանք դասավանդում էին հայոց լեզու, պատմություն, զրականություն, կազմում դասագրքեր, անվճար գրենական պիտույքներ տալիս աշակերտներին[2]։

Այդ նույն ժամանակ նման աշխատանք են կատարել հոգեբանական գիտությունների թեկնածու Հյուրի Խաչատրյանը և դերասան, թատերագիր Երվանդ Մանարյանը։

Թավրիզի կանանց կազմակերպությունների ջանքերով սաեղծված խմբակները գոյատևեցին մի ամբողջ տասնամյակ։ Նման խմբակներ էին բացվել նաև Նոր Ջուղայում և հայաբնակ այլ վայրերում։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին առաջացած նպաստավոր պայմաններն Իրանի կառավարող շրջաններին ստիպեցին թույլ տալ ազգային դպրոցներին վերսկսել ուսումնական պարապմունքները։ Հայկական դպրոցները բացվեցին 1942—1943 թթ.։ Սակայն իրականում դրանք հայկական էին միայն աշակերտների կազմով։ Դասավանդումը կատարվում էր պարսկերենով, իսկ մայրենի լեզվի ուսուցումը դուրս էր ծրագրից և հիմնական դասացուցակից, բստ որում, տարրական դպրոցներում շաբաթական 12, իսկ միջնակարգում՝ 6—7 ժամ[3]։

Թավրիզի ազգային դպրոցները փակ մնացին 20 տարի և միայն 1956—1957 թթ. կրկին վերսկսվեցին պարապմունքները[4]։

Գավառական քաղաքներում, որտեղ չկային ազգային դպրոցներ, հայ աշակերտները հաճախում էին ոչ հայկական դպրոցներ։ Նրանք զրկված էին հայոց լեզվի և հարակից առարկաների ուսուցումից։

Հետպատերազմյան շրջանում առաջացած հակախորհրդային քաղաքական մթնոլորտն ազդեց նաև Մայր հայրենիքի հետ իրանահայերի մշակութային բոլոր կապերի խզման վրա։ Մինչդեռ արտասահմանի հայության հետ մշակութային կապի կոմիտեի հրավերով աշխարհի բոլոր ծայ-

րամասերից հարյուրավոր սփյուռքահայ ուսուցիչներ հայրենիք են գալիս իրենց որակավորումը բարձրացնելու, ստանում դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներ, ուսումնասիրում հայրենի դպրոցների աշխատանքների փորձը։ Իրանահայ համայնքը, հայրենիքի հետ սահմանամերձ լինելով հանդերձ, իր ուսուցիչներին որակավորման համար ուղարկում էր Մերձավոր Արևելքի երկրներ։

1970-ական թվականներին Թեհրանի հայոց ազգային դպրոցների կենտրոնական հոգաբարձությունը մայրաքաղաքի և այլ շրջանների ուսուցիչների համար կազմակերպեց սեմինար, որտեղ քննարկվեցին հայոց լեզվի դասավանդման և դպրոցական դասագրքերի հետ կապված հարցեր[5]։

Իրանում հայկական դպրոցների նյութական վիճակը ծանր էր, որովհետև միջոցները հիմնականում գոյանում էին ուսման վարձից, ունևոր մարդկանց նվիրատվություններից, կառակներից և այլն։

Իրանի հայկական դպրոցներում ուսուցումը տարվում է արևելահայերենով։ Կրթությունը եռաստիճան է՝ տարրական (վեցամյա, իսկ գյուղերում՝ քառամյա), ուղեցույց (կիսամիջնակարգ՝ իննամյա) և միջնակարգ (տասներկուամյա)։ Ազգային դպրոցներն ունեն իրենց գրադարանները։ Դպրոցներին կից գործում են մանկապարտեզներ։

Իրանի ազգային դպրոցների թիվը 1960-ական թվականների կեսերին 50 էր, որոնցից 23-ը՝ Թեհրանում, իսկ 27-ը՝ երկրի մյուս նահանգներում[6]։ Միայն Թեհրանում սովորողների թիվը կազմում էր 10000[7]։

Քանի որ Թեհրանն ավելի ուշ է դարձել հայաբնակ քաղաք, այնտեղ հայկական դպրոցներն ավելի ուշ են հիմնադրվել։ Հանրակրթական առաջին՝ Հայկազյան դպրոցը Թեհրանում բացվեց 1870 թ. փետրվարին (Դարվազե Ղազվին թաղում), այդ ժամանակ այստեղ բնակվում էր մոտ 200 հայ ընտանիք։ Դպրոցը հիմնադրել են արևմտահայ մտավորականներ Միքայել Մարգարյանը, Շարլ Բազիրկյանը և Հովսեփ Դասպարյանը։ Նրանք ձգտում էին ուսումը դարձնել անվճար, դրանով իսկ պայքարելով միսիոներների դեմ, որոնք

իրենց ուսմունքի տարածման համար իրականացնում էին անվճար ուսուցում և սովորողներին տրամադրում գրենական պիտույքներ։

Մինչև Հայկազյան դպրոցի հիմնադրումը, 1850-ական թվականներից սկսած, Թեհրանի հայ համայնքի փոքրաթիվ երեխաները հաճախում էին եկեղեցիներում տեղավորված խալիֆայական դպրոցները։ Սկզբնական շրջանում Հայկազյան դպրոցը նույնպես տեղավորված էր եկեղեցում։ 1884 թ. «Ուսումնասիրաց միությանը» հաջողվում է դպրոցի համար կառուցել առանձին շենք։

Դպրոցի հինգ դասարաններում դասավանդվում էին հայոց լեզու, գրականություն, ֆրանսերեն և պարսկերեն։ Հայկազյանը նոր տիպի առաջին դպրոցն էր Թեհրանում։ Այդ օրերին այն գրավել էր պետական և օտարերկրյա դեսպանների ուշադրությունը։

Հայկազյան դպրոցից հետո Թեհրանում բացվում են ամերիկյան և ֆրանսիական դպրոցներ, իսկ պարսկական ժամանակակից դպրոցները սաեղծվել են ավելի ուշ[8]։

Գնալով մեծ թափ էր ստանում Թեհրանի հարավային թաղերի հայ բնակիչների տեղափոխությունը քաղաքի հյուսիսային՝ Հասանաբադ թաղամասը, որի հետևանքով անհրաժեշտություն է դառնում այդտեղ ևս ունենալ հայկական դպրոց։ Արդեն 1903 թ. շենքի մի մասի շինարարության ավարտից հետո բացվում է երեք դասարան՝ որպես Դարվազե Ղազվինի դպրոցի մասնաճյուղ։ Այդ թվականին նորաբաց դպրոցի աշակերտության թիվը հասնում էր 79-ի՝ 49 տղա և 30 աղջիկ։

Հարկ է նշել, որ Թեհրանի երկու թաղերի Հայկազյան դպրոցները մինչև 1906—1907 թթ. արական էին, սակայն ունեին նաև աղջիկների առանձին դասարան, ուր տեղական սովորության համաձայն աշակերտուհիները դպրոց էին հաճախում չադրայով։ Շուտով դպրոցի ուսուցիչների և հոգաբարձության ջանքերի շնորհիվ վերացվում է չադրայի գործածությունը, որից հետո դասարանները միացվում են, և դպրոցը հայտարարվում երկսեռ[9]։

Քանի որ քաղաքում հայ բնակչության հոսքը դեպի հյուսիս շարունակվում էր, ուստի Հայկազյան դպրոցն իր Քուշհշ անունը կրող մասնաճյուղն է բացում Նագերի պողոտայի վրա։ Այն 1932—1933 ԹԹ. հնդհահայ Դավիթ Դավթյանի միջոցներով վերակառուցվում է և անվանվում նրա անունով՝ Քուշհշ-Դավթյան դպրոց։ 1950—1951 ուսումնական տարում դպրոցի տարբեր շենքերում տեղավորված արական և իգական բաժիններում սովորում էր շուրջ 1550 աշակերտ[10]։ Հետագայում՝ 1957—1958 ԹԹ. հայ բնակչության միջոցներով կառուցվում է դպրոցի քառահարկ շենքը, որն իր ուսումնական անհրաժեշտ հարմարություններով այդ քաղաքում կառուցված մյուս դպրոցներից լավագույնն էր։

Քուշհշ-Դավթյան կիսապետական միջնակարգ դպրոցն իրանահայության ուսումնական խոշոր հաստատություններից մեկն է, որի ուսուցիչների աշխատավարձը վճարվում է մեծ մասամբ պետական միջոցներից[11]։

1954 թ. բարեգործ Մարգար Սարգսյանի միջոցներով կառուցվում է Մարիամյան դպրոցը, որի նորակառույց եռահարկ շենք են տեղափոխվում Քուշհշ-Դավթյան դպրոցի իգական դասարանները։ Երկար տարիներ այս կենտրոնական երկու միջնակարգ դպրոցների տեսուչն էր Թեհրանի համալսարանի դասախոս, դոկտոր Հովհաննես Ախնազարյանը։ 1956—1957 ուսումնական տարում վերոհիշյալ դպրոցների աշակերտության թիվը 2261 էր[12]։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին երկրի գավառներում ստեղծված անտեսական ծանր պայմանների հետևանքով հայ բնակչությունը ապրուստի միջոց որոնելու նպատակով տեղափոխվում է մայրաքաղաք ու բնակություն հաստատում Թեհրանի հյուսիսային ծայրամասերում՝ Բեհջաթաբադում, Ֆիշերաբադում, Ամջադիեում։ 1942 թ., երբ Բեհջաթաբադում կառուցվեց «Մաքթաբ» դպրոցը, այդտեղ կար 400 հայ ընտանիք։ 1943 թ. դպրոցն անվանափոխվեց Դանայի։ Այստեղ սովորում էր մինչև 220 աշակերտ (70-ը՝ անվճար)[13]։ 1950—1951 ուսումնական տա-

ղում դպրոցի երկսեռ աշակերտների թիվը հասել էր 600-ի[14]։

25 տարիների ընթացքում կրթական այդ օջախում ուսանողին մի քանի հազար երեխա, սակայն 1968 թ. սեպտեմբերին նյութական դժվարությունների և աշակերտների թվի նվազման հետևանքով այն միացվեց «Արաքս» ազգային դպրոցին, որի նորակառույց շենքը կարող էր բավարարել երկու դպրոցների պահանջները[15]։

Հայրենիք մեկնելու համար գավառներից Թեհրան եկած հազարավոր գյուղացիներ 1947 թ. հայրենադարձության արգելման հետևանքով բնակություն հաստատեցին քաղաքի հյուսիսային շրջաններում։

Մի խումբ կրթասեր գյուղացիներ ուսուցիչ Խորեն Տեր-Վրույրյանի աջակցությամբ 1948 թ. վերջերին վարձու մի տան մեջ հիմնադրեցին դպրոց՝ այն անվանելով Շահազիզ։

1958 թ. սալմաստահայ բարերար, հանգուցյալ Իսրայել Սահակյանի ընտանիքը Հիշմաթիե թաղամասում կառուցեց տարրական և միջնակարգ Իսրայել-Սահակյան դպրոցի եռահարկ շենքը[16], որին միացավ տասը տարի գոյատևած Շահազիզ տարրական դպրոցը՝ 1050 երկսեռ աշակերտով և մանկավարժներով։ Դպրոցի գոյության ընթացքում (1948—1961) տարրական դասարանն ավարտել է շուրջ 500 աշակերտ[17]։

1951 թ. Թեհրանի Արամ (Աբովյան) դպրոցի հոգաբարձության նախաձեռնությամբ տեղի ունեցավ նորաստեղծ դպրոցի բացումը։ Այն բաղկացած էր Ա, Բ, Գ դասարաններից, ուներ հարակից մանկապարտեզ և նախակրթարան, որտեղ սովորում էին մոտ 160 երկսեռ աշակերտ։ Դպրոցն ուներ նաև երեկոյան բաժին, որտեղ կրթություն էր ստանում 70 պատանի[18]։

Ավելի ուշ Դարվազե Ղազվին թաղամասում բացվեց «Բաֆֆի» դպրոցը, որը հետագայում վերանվանվեց «Նոր Անի»։ Դպրոցի շենքը կառուցվում է Ջեյթուն թաղամասում (Մաջիդիե)՝ բարեգործ Հովիկ Էդգարյանի հատկացրած հողակտորի վրա[19]։

1954 թ. Մաջիդիե թաղում հիմնվեց «Արարատ» օրիորդաց դպրոցը։ Սասուն թաղի ամենահին հայկական դպրոցը «Նաի-

րին» էր, որը հիմնվել էր 1955 թ.՝ իբրև տարրական դպրոց։ Հետագայում՝ 1974 թ., Աբրահամ Սողոմոնյանի քառահարկ շենքի կառուցումից հետո այն կոչվեց նրա անունով։

Թեհրանի հայոց Թունյան տարրական դպրոցը գտնվում է քաղաքի հյուսիս-արևելյան մասում ընկած նարմաք հայահոծ թաղամասում։ Այն հիմնադրվել է 1957 թ., երվանդ Թունյանի միջոցներով։ 1968 թ. հոգաբարձության ջանքերով և թաղամասի հայ համայնքի միջոցներով ավարտվում է դպրոցի հոահարկ նոր շենքի կառուցումը։

Թունյան ազգային դպրոցի աշակերտության թվական պատկերը նրա գործունեության առաջին տասնամյակում հետևյալն է.

Աղյուսակ 10

Ուս. տարի	Աղջիկ	Տղա	Ընդամենը
1957—58	67	73	140
1958—59	126	154	280
1959—60	242	278	520
1960—61	334	379	713
1961—62	487	538	1025
1962—63	554	638	1192
1963—64	606	668	1274
1964—65	704	739	1443
1965—66	808	817	1625
1966—67	801	827	1628

1966—67 ուս. տարում ուսուցչական կազմը տեսուչներով հանդերձ բաղկացած էր 61 հոգուց։ Դպրոցն ուներ վեց դասարան և նախակրթարան[20]։

Հայոց վեցամյա Իրան-Փիրուզ երկսեռ դպրոցը հիմնվել է 1966 թ.[21]։

1970—71 ուսումնական տարում Թեհրանում գործում էին տասնմեկ տարրական և միջնակարգ ազգային դպրոց, մեկ մանկապարտեզ։

Թեհրանի հայ բնակչության աճի հետևանքով դպրոցական շինարարությունը մեծ թափ է ստանում։ 1970 թ. կառուցվեց «Հովհաննես Թումանյան» միջնակարգ երկսեռ դպրոցը, 1973 թ.՝ «Վաչե Հովսեփյան», իսկ 1975 թ.՝ «Մազիար» («Շանթ») դպրոցները։

Բացի ազգային դպրոցներից Թեհրանում կային նաև մասնավոր դպրոցներ (1970—1971 թթ. նրանց թիվը վեցի էր հասնում)[22], որտեղ, պետական ծրագրերի շրջանակներում, առարկաները դասավանդվում էին հայերենով. գործում էին նաև անգլերեն կամ ֆրանսերեն խմբակներ։

Մասնավոր դպրոցներից ամենահինը Բուստանն էր, որն ուներ նախակրթական, ուղեցույց և օրիորդաց միջնակարգ բաժանմունքներ։ Սանդուխտ դպրոցը հիմնվել է 1946—1947 ուսումնական տարում. այստեղ սովորում են հայ, պարսիկ, հրեա, այլ ազգի պատկանող աշակերտներ։ 1955 թ. «Թեհրանի կանանց բարեգործական միությունը» հիմնադրեց Նուբար դպրոցը։ Հետագա տարիներին Թեհրանում ստեղծվեցին նաև Բերսաբե, Բաֆֆի, Փարթովի, Թաբան, Սեթայեշ, Ալիշան դպրոցները։

Դեռևս 1910 թ. Թեհրանում գործում էր Մարգարիտ Սարվարյանի մանկապարտեզը, որը սկզբից ևեթ դրված էր ամենալավ հիմքերի վրա։ Հայ մանուկների դաստիարակության գործին նվիրված Մ. Սարվարյանի ջանքերի շնորհիվ մանկապարտեզը մեծ վերելք ապրեց և անվանվեց «Մարգարիտ Սարվարյանի մանկական պալատ»։ Մանկական պալատին կից գործում էր նաև վեցդասյա վերոհիշյալ Բուստան դպրոցը, որտեղ սովորում էին գլխավորապես այդ հաստատության մանկապարտեզն ու նախակրթարանն ավարտած հայ մանուկները։

1950-ական թվականների սկզբներին մանկական պալատի աշակերտության ընդհանուր թիվն անցել էր 600-ից, իսկ գիշերօթիկ բաժնի հետ հասնում էր շուրջ 650-ի[23]։

Բերսաբե մանկապարտեզը հիմնվել է 1931 թ., ուներ տարրական բաժանմունք։ Մանկապարտեզի հիմնադիր Բերսաբե Հովսեփյանը 1955 թ. Թեհրանի հյուսիսային շրջանում հիմնադրեց մի այլ մանկապարտեզ և վեցամյա տարրական դպրոց։ 1944 թ. բացվեց Թումանյան մանկապարտեզ-նախակրթարանը[24]։

Թեհրանի ուսումնական մասնավոր հաստատությունները գործում են պետական համապատասխան մարմինների պաշտոնական թույլտվությամբ: Իրանահայ համայնքում կրթական գործի բարելավման շնորհիվ հայկական դպրոցների թիվը գնալով ավելանում էր:

1970-ական թվականների սկզբներին Թեհրանի Առաջնորդարանի և ազգային դպրոցների աշակերտության նախաձեռնությամբ բացվեցին նաև երկու դպրոց՝ Եփրեմ խանի և հայ նշանավոր մտավորական ու դիվանագետ Հովհաննես խան Մասեհյանի անուններով:

Աւտրպատականի Առաջնորդարանը Թավրիզում գնեց մի դպրոց՝ նրան տալով Ներսես արք. Մելիք-Թանգյանի անունը: Իրանահնդկական թեմի Առաջնորդարանը, Նոր Ջուղայի և Հարավային համայնքի հայերը գնեցին երկու դպրոց, իսկ Թեհրանի Զարմահալ գավառի ուսումնասիրաց միության ակումբը՝ մեկ դպրոց:

Գորգանի հայ համայնքը Ղորուղ գյուղում գնեց մի դպրոց:

Բացի վերոհիշյալներից, անհատ բարեգործները ևս իրենց մասնակցությունն են ցուցաբերել հայկական դպրոցների առեղծման գործին: Նրանցից են Սահակյան եղբայրները (Սաւան ընկ.), Գուրգեն և Վազգեն Սարգսյանները, Ռոբերտ Գրիգորյանը[25]: Հարյուրավոր իրանահայեր իրենց կարողության սահմաններում մասնակցել են այդ շարժմանը:

Ահա մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Թեհրանի դպրոցների առկա վիճակը.

Ս. Սարգիս եկեղեցու շրջան — Արաքս՝ տարրական և ուղեցույց, Կյուլբենկյան՝ տարրական, Դոհար՝ ուղեցույց, Մարի Մանուկյան՝ միջնակարգ:

Խանասար (Բահար թաղամաս) — Ռոստոմ՝ տարրական և ուղեցույց, Ալիք (Մովչ)՝ տարրական, Արամ՝ տարրական և ուղեցույց:

Սասուն (Վահիդիե, Զարքեշ, Նարմաք) թաղամաս — Նաիրի՝ տարրական և ուղեցույց, Իրան—Փիրուզ՝ տարրական,

Թունյան՝ տարրական և ուղեցույց, Թովմասյան՝ միջնակարգ, Սողոմոնյան՝ միջնակարգ:

Սարդարապատ և Զեյթուն (Հեշմաթիե և Մաջիդիե) թաղամաս — Սահակյան՝ տարրական և ուղեցույց, Արարատ՝ տարրական և ուղեցույց, Շանթ (Մազիար)՝ տարրական, Նոր Անի՝ ուղեցույց:

Քաղաքի կենտրոնական շրջան — Մարիամյան՝ միջնակարգ, Քուշեշ (Վաչե Հովսեփյան)՝ տարրական և ուղեցույց, Ալիշան՝ տարրական և ուղեցույց, Քուշեշ-Դավթյան՝ միջնակարգ[26]:

Այսպիսով, նշված շրջանում Թեհրանում մասնավորներից բացի կար 29 դպրոց: Դրանցից 13-ը տարրական էին, 11-ը՝ ուղեցույց, իսկ 5-ը՝ միջնակարգ:

Իրանում հայ երեխաները, բացի ազգային դպրոցներից, սովորում էին նաև ամերիկյան, ֆրանսիական և այլ միսիոներական դպրոցներում: Թեհրանում գործում էին արական Սան Լուի և իգական՝ Ժաննա դը Արկ ֆրանսիական դպրոցները: Միսիոներները ջանք չէին խնայում երիտասարդների շրջանում ուժեղացնել Արևմուտքի ազդեցությունը: Այդ ուղղությամբ բավական ընդարձակ գործունեություն էր ծավալել Մարիամ կույսերի հաստատությունը: Այն 1981—1982 ուսումնական տարում ունեցել է 1624 աշակերտ[27]:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեծ թվով հայ աշակերտներ էին սովորում այդ դպրոցներում, նրանց ծնողական խորհուրդների ներկայացուցիչները մասնակցում էին հայկական ազգային կենտրոնական հոգաբարձության ներկայացուցչական ժողովին:

1605 թ. շահ Աբասի բռնագաղթից հետո Պարսկաստանում, հատկապես Աւտրպատականում, մեծ գործունեություն ծավալած կաթոլիկ եկեղեցու աշխատանքները խոչընդոտելու նպատակով էջմիածնի, Տաթևի, Վարագի կրթական-կրոնական կենտրոններից հանդես եկան կորովի և գիտուն քարոզիչներ: Նրանցից Պողոս վարդապետը մեկնեց Թավրիզ, որտեղ Ղալա թաղի եկեղեցու բակում հիմնեց կանոնավոր գործող պաշտոնական դպրանոց, որը գոյատևեց 120 տարի

(1670—1790)։ Մինչև ժամանակակից դպրոցների ստեղծվելը Թավրիզում մշտապես գործել են նաև այլ դպրատներ։

Թավրիզի դպրանոցում 1836—1838 թթ. դասավանդել է Մեսրոպ Թաղիադյանը, իսկ ավելի ուշ՝ Րաֆֆին և ուրիշներ։

1851 թ. Թավրիզի հայ անվանի մարդկանցից կազմվում է «Ծերակույտ-խորհրդարան», որը կրթական գործին զարկ տալու նպատակով 1851—1852 թթ. Ղալա թաղի եկեղեցու տարածքում հիմնում է Ներսիսյան (Ներսես Շնորհալու անունով) դպրոցի երկհարկանի շենքը։ Այն 1875 թ. վերանվանվեց Արամյան[28]։ Դպրոցի բացումը տեղի ունեցավ 1852 թ. սեպտեմբերին։ Դպրոցն ուներ 60 աշակերտ, իսկ հաջորդ տարում նրանց թիվը հասավ 100-ի[29]։

Թավրիզում օրիորդաց դպրոցի ստեղծման գործը մեծ դժվարությունների հետ էր կապված, քանի որ հետադիմական հոգևորականությունն ու բնակչության մի մասը դեմ էին իգական սեռի կրթությանը։

Այդ առիթով Րաֆֆին 1877 թ. Թիֆլիսի «Մշակին» հաղորդագրած իր նամակում քննադատում էր տեղի որոշ հոգաբարձուներին, որոնք դեմ էին աղջիկների ուսումնառությանը։ Այդ թղթակցության կապակցությամբ Թավրիզում դժգոհություն է առաջանում, որի հետևանքով ուսումնական տարին դեռ չավարտված Րաֆֆին, որը դասավանդում էր Արամյան դպրոցում, հեռանում է Թավրիզից[30]։

Այնուամենայնիվ, 1879 թ. օգոստոսին Ղալայում «Ա-վարայրյան» միության անդամների ջանքերով հիմնվում է օրիորդաց դպրոց։ 1887 թ. Թումանյան եղբայրները այդ դպրոցի համար կառուցում են նոր շենք և անվանում Աննայան, որից հետո Ղալայի ազգային դպրոցները կոչվեցին Արամյան—Աննայան։

Թավրիզի Լիլավա թաղամասում անցյալ դարի 70-ական թվականներին Հայկազյան և Սևան առևտրական ընկերությունների կողմից հիմնվեց Հայկազյան արական դպրոցը։ 1879 թ. հոկտեմբերին այստեղ բացվեց նաև օրիորդաց դըպրոց, որի աշխատանքները ծավալվեցին այն բանից հետո, երբ 1895 թ. բարեգործ Գրիգոր Թումանյանը ի հիշատակ իր

վաղամեռիկ դստեր Թամարի, կառուցեց Թամարյան նոր տիպի դպրոցի եռահարկ շենքը[31]՝ 13 լուսավոր և ընդարձակ դասարաններով ու մեկ սրահով։ Դրանից հետո Լիլավայի այդ կրթօջախները կոչվեցին Հայկազյան—Թամարյան երկսեռ դպրոցներ։

Այսպիսով, 1870—1880-ական թվականներին Թավրիզի հայկական համայնքում դպրոցական կյանքը վերելք ապրեց, ստեղծվեցին այնպիսի ուսումնական հաստատություններ, որոնք իրենց գոյության ամբողջ շրջանում իրանահայության համար դարձան կրթական հիմնական օջախները և ավելին բազմաթիվ մտավորականներ և ուսուցիչներ։

Հայկազյան արական դպրոցը 1902 թ. Պարսկաստանի միակ միջնակարգ դպրոցն էր, որը 1903 թ. ավեց 10 շրջանավարտ[32]։

1909 թ. հիմնվեց միջնակարգ թեմական-կենտրոնական դպրոցը, իսկ Հայկազյան-Թամարյան դպրոցները դարձան տարրական։

Վերոհիշյալ դպրոցներից բացի Թավրիզում գործում էր նաև ամերիկյան Մեմորիալ արական միջնակարգ դպրոցը, որտեղ սովորում էին բազմաթիվ հայ աշակերտներ։

Տասնամյակներ ի վեր Թավրիզում գոյություն է ունեցել նաև ամերիկյան օրիորդաց միջնակարգ դպրոցը. կային արական և իգական կաթոլիկ դպրոցներ, որտեղ նույնպես բազմաթիվ հայ երեխաներ են սովորել։

1936 թ. Թավրիզի հայկական դպրոցները փակվեցին։ Այս դրությունը, ինչպես վերը նշվեց, շարունակվեց շուրջ 20 տարի։ Այդ ընթացքում Թավրիզի Հայկազյան—Թամարյան—Մ. Սահակյան դպրոցների շենքն օգտագործվեց պարսկական Սաադի դպրոցի համար։ Սակայն 1956 թ. ազգային դպրոցների վերաբացվելուց հետո այդ շենքն այլևս չվերադարձվեց հայկական դպրոցին[33]։

Միացյալ ազգային Հայկազյան—Թամարյան—Մ. Սահակյան դպրոցներից բացի Թավրիզում գործում էին նաև երկու արական՝ Անուշիրվան և իգական՝ Իբն-Սինա ու ավետարանական նոր տարրական դպրոցները։ Սրանց աշակերտների

մի մասը հայեր էին։ Վերջին երկու դպրոցներում հայոց լեզու չէր դասավանդվում, իսկ Անուշիրվանում այն ուսուցանվում էր որպես արտածրագրային առարկա[34]։

Գավառներում հայկական դպրոցները ստեղծվել են XIX դարի վերջին քառորդում։ Այդպիսի դպրոցներ կային Սալմաստի մի շարք գյուղերում՝ Հավթվանում, Փայաջուկում, Ղալասարում և այլ վայրերում։ 1881 թ. Սալմաստում, օրինակ, դպրոցների հիմք է դրվում[35]։

Ղարադաղի գյուղերում՝ Աղաղանում, Ուղանում և այլուր առաջին դպրոցները բացվեցին 1890-ական թվականներին։

1918 թ. Ղարադաղի հայաբնակ գյուղերի բնակչությունը ոտնատակ ծանր պայմանների պատճառով զանգվածաբար գաղթեց Թավրիզ, որտեղից նրանց մեծամասնությունը 1921 թ. կրկին վերադարձավ Ղարադաղ։ Նույն թվականին ամերիկյան միսիոներների օգնությամբ Ղարադաղի հայաբնակ գյուղերում իրենց աշխատանքը վերսկսեցին վեց դպրոց, որոնք, սակայն, գոյատևեցին հազիվ վեց տարի։

Աղաղան, Յուրգյութին և Ղշլաղ գյուղերի դպրոցների տեսուչ Միհրան Գրիգորյանի 1930 թ. կազմած վիճակագրության համաձայն Ղարադաղ գավառի 22 հայաբնակ գյուղերն ունեին 14 հայկական դպրոց[36]։

1950-ական թվականների սկզբներին Թեհրանում և այլ քաղաքներում բնակվող ղարադաղցիների միջոցներով Ղարադաղի գյուղերում դպրոցական շենքեր են կառուցվում։ Նրանց հաջողվում է ստեղծել «Ղարադաղի հայրենասիրաց միությունը», որի ջանքերով 1954—1955 թթ. գավառի Սրղն, Վինա, Ողան և Ուրգության գյուղերում կառուցվում է չորս դպրոց։ Հայկական դպրոցների կառուցման շարժառիթը եղավ 1953 թ. ղարադաղցի մի ճարտարապետի նախաձեռնությունը. նա իր միջոցներով Ղարագլուխ գյուղում կառուցեց դպրոցի շենք, որտեղ սովորում էին նաև հարևան գյուղերի հայ երեխաները։

1885 թ. Մարաղայի եկեղեցում ստեղծվում է հայկական դպրոց, որի համար 1890-ական թվականներին կառուցվում է նոր շենք։ Համայնքում կրթության զարգացման ուղղությամբ մեծ աշխատանք էր կատարում Թավրիզի հայ կանանց բարեգործական ընկերությունը, որի ջանքերով դպրոցներ են բացվում Ուրմիայի, Մակուի, Ղարադաղի և Բարդուզի գավառների մի շարք քաղաքներում ու գյուղերում[37]։ Աշխատանքներ էին կատարվում Մարաղայի և, մանավանդ, Սուլդուզի Թրքախոս հայության համար դպրոցներ հիմնելու ուղղությամբ։

Մարաղայի դպրոցը հիմնվել է 1899 թ.։ Այն ուներ երկու բաժանմունք՝ արական և իգական։ Աղբյուրների վկայությամբ, դեռևս 1876 թ. քաղաքի մի շարք շենքերի մեծ սենյակները վերածվել էին դասարանների, որտեղ ուսուցանվում էր հայերեն[38]։

Մարաղայի դպրոցում է սովորել խոշոր հեղափոխական Ավետիս Միքայելյանը՝ Սուլթանզադեն։ Մինչև վերջերս Մարաղայում գործում էր Խալֆայան հայկական դպրոցը։

Ուրմիան նախկինում չուներ հայկական դպրոց. հայ երեխաները սովորում էին պարսկական դպրոցներում, իսկ դասերից հետո մասնակցում էին քաղաքի եկեղեցու երկու դասարաններում օրական մեկ ժամ տևող հայոց լեզվի դասերին։

Քանի որ գյուղերից հայ բնակչության հոսքը դեպի քաղաք շարունակ ավելանում էր, ուստի 1963 թ. Ուրմիայում կառուցվեց վեցդասյան Անուշիրվան դպրոցը, որը հետագայում վերանվանվեց Մասիհա։ 1966—1971 թթ. աշակերտության թվի ավելացման շնորհիվ բացվեց դպրոցի ուղեցույց բաժինը (կառուցվեց երկրորդ հարկ և սրահ)[39]։

Առաջին համաշխարհային պատերազմն իր բացասական ազդեցությունը թողեց Իրանի հյուսիսային շրջաններում գտնվող հայկական դպրոցների վրա։ Սալմաստում գործող երբեմնի 11 դպրոցներից մնացել էին 3-ը (Հավթվանում, Փայաջուկում և Մահլամում). Ուրմիայի գավառի 33 գյուղերից ոչ մեկում հայկական դպրոց չկար, իսկ Ղարադաղի 21 գյուղերից միայն 10-ը[40] հայկական դպրոց ունեին։

Ամրապատականի դպրոցների մշակութային միությունների մեծամասնությունը դեռևս 1870-ական թվականներից ու-

նին գրադարաններ։ Թավրիզի Ղալա Թաղի դպրոցի գրադարանը ամենախոշորներից մեկն էր. ուներ շուրջ 8200 կտոր գիրք։ Հետագայում դրա հիման վրա ստեղծվեց «Կուլտուրական միության» գրադարանը։

1889 թ. քաղաքի Լիլավա թաղամասում հիմնվեց Խաչատուր Աբովյանի անունը կրող գրադարանը, որը 1902 թ. ուներ 1377 գիրք։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո դպրոցական գրադարաններից բացի Թավրիզում գործում էին «Վրեժ» և «Կուլտուրական միության» գրադարան-ընթերցարանները։ Վերջինս ուներ շուրջ 4000 կտոր գիրք։ Դրանց կեսից ավելին հայերեն էին[41]։

1924 թ. հիմնվեց ժամանակին մի քանի հարյուր անդամ ունեցող միջդպրոցական աշակերտական կազմակերպության «Ռոստոմ» գրադարանը՝ շուրջ 4000 գրքով, իսկ 1930-ական թվականներին՝ «Դասպար» գրադարանը, որին միացվեցին «Վրեժ» և «Կուլտուրական միության» գրադարանները՝ շուրջ 18000 գրքով (12000-ը հայերեն)։

1948 թ. Թավրիզում գործում էր «Ռոստոմ-Դասպար» գրադարան-ընթերցարանը։ Այն ուներ մատենադարանային բաժին, որտեղ կենտրոնացվել էին գրքերի ու պարբերականների հազվագյուտ հրատարակություններ[42]։

Դարասկզբին հայկական գրադարաններ բացվեցին նաև Ուրմիա, Մարաղա, Խոյ և Արդաբիլ քաղաքներում։

Գյուղական վայրերում գրադարանները ստեղծվել են գպրոցների հետ մեկտեղ, ընդ որում առաջինը 1886 թ. Հավթվանում (Ատրպատական) հիմնադրված «Գրասիրաց գրադարանն» էր։ 1889 թ. զոհվում է այդ գրադարանի հիմնադիր, XIX դարի վերջի հայկական ազգային-ազատագրական շարժման մասնակից Վարդան Գոլոշյանը։ Նրա անունը հավերժացնելու նպատակով գրադարանը վերանվանվում է «Գոլոշյան գրադարան»[43]։

Թավրիզի մոտ գտնվող Մուժամբար գյուղը նույնպես ունեցել է իր գրադարանը։

Միայն 1903—1905 թթ. Սալմաստի նահանգում հիմնադրվել էր յոթ գրադարան։

1967 թ. Թավրիզում հիմնադրվեց «Մելիք Թանգյան» թանգարանը։ Այդ նպատակով դեռևս 1965 թ. իրանահայ թեմի շրջաններում սկսվում է հին ու արժեքավոր իրերի հայթայթումը։ Նախապես այդ գործով զբաղվում էր դոկտոր Գառնիկ Խաչատրյանը, իսկ հետագայում ընտրվում է հինգ հոգուց բաղկացած վարչություն։

1966 թ. թանգարանին հանձնվեցին Արշակ խան Գորոյանի շուրջ 700000 ռիալ արժողություն ունեցող հնություններով լի 26 սնդուկները։ Թանգարանն ունի ավելի քան 2000 ցուցանմուշ, որոնք տեղ են գտել նորակառույց ընդարձակ սրահում։

1968 թ. թանգարանի վարչությանը մեծ դժվարությամբ հաջողվեց ս. Ստեփանոս վանքի տարածքից թանգարան տեղափոխել երեք հնամենի խաչքար[44]։

Նոր Ջուղան իր հիմնադրման սկզբից ունեցել է դպրոց, ավելի ճիշտ՝ դպրատուն։ Առաջին դպրոցը հիմնվել է Ամենափրկիչ վանքում՝ խաչատուր Կեսարացու կողմից։ Այն ժամանակի առաջադեմ ու կատարյալ ուսումնական հաստատություն է եղել։

Ժամանակակից հարմարություններ ունեցող առաջին դպրոցը Նոր Ջուղայում հիմնադրվեց 1833 թ. մադրասցի բարեգործ Գրիգոր Սամյանի միջոցներով[45]։

1843 թ. կալվածատեր Հարություն Աբգարյանը ս. Աստվածածին եկեղեցու բակում հիմնում է «Հայկական հայրենասիրական» դպրոցը, որը գործում էր շուրջ 40 տարի։ 1853 թ. ս. Մինաս և ս. Ստեփանոս եկեղեցիներին կից բացվեցին դպրոցներ, որոնք ծառայեցին 30 տարի[46]։ Նույն թվականին դպրոցներ են հիմնվում Նոր Ջուղայի Ջարսու և Դավրեժ թաղերում[47]։ 1883 թ. վերոհիշյալ դպրոցները միավորվեցին՝ ստեղծելով Ազգային կենտրոնական դպրոցը, որի շենքը կառուցվել էր 1880 թ. Ճավայի, Բիրմայի և Հնդկաստանի հայերի նյութական օգնության շնորհիվ[48]։

1858 թ. Մանուկ Հորդանյանի միջոցներով Նոր Ջուղա-

յում բացվեց գաղութի առաջին իգական դպրոցը[49]։ Այնե 1892 թ. միացվեց Ազգային կենտրոնական դպրոցին՝ վերանվանվելով Ազգային երկսեռ դպրոց[50]։ Մինչև 1893 թ. այդ դպրոցում ուսումն ու բոլոր դասագրքերը անվճար էին[51]։

1901—1905 թթ. մոսկվաբնակ բարեգործ Գևորգ Քանանյանի միջոցներով և նրա կնոջ՝ Վարվառայի ջանքերով Նոր Ջուղայում հիմնադրվում են Գևորգ Քանանյան երկդասյան երկհարկանի դպրոցը և մանկապարտեզը[52]։

Նոր Ջուղայում գործում էին Կաատարինյան իգական և Շահ Աբաս արական կենտրոնական դպրոցները։

1970-ական թվականների սկզբներին Նոր Ջուղայի հայկական դպրոցներն ունեին 1450 աշակերտ[53]։

Իրանահայ համայնքի հին կրթօջախներից է Արաքի (Սուլթանաբադ) հայոց երկսեռ Շարաֆ դպրոցը։ Հոգաբարձության ջանքերով, կրթասեր ազգաբնակչության նվիրատվություններով և հայ առևտրական տների նյութական օժանդակությամբ 1920—1921 թթ. կառուցվում է լուսավոր ու հարմարավետ մի դպրոց[54]։

Նման դպրոցներ են հիմնադրվել գաղութի գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում՝ Աբադանում (Ադաբ), Ահվազում (Քարուն), Ղազվինում (Բաֆֆի), Համադանում (Նուր)։ Ազգային դպրոցներում են սովորել Ռեշտի, Էնզելիի, Մեշհեդի և այլ հայաբնակ քաղաքների հայ երեխաները։

Փերիա և Չարմահալ գավառներում կրթական գործը զարգացել է XIX և XX դդ. սահմանագծում։

Չարմահալ գավառում մինչև 1900-ական թվականները ուսումը ցածր հիմքերի վրա էր դրված։ Գրաճանաչ մարդիկ շատ քիչ էին։ Միայն հարուստների երեխաներն էին կրթություն ստանում։ Չարմահալի, ինչպես նաև Փերիայի հայաբնակ գյուղերում դպրոցներ հիմնելու գործում մեծ դեր են խաղացել Բագրատ և Եղնիկ վարդապետները։ Նրանց ջանքերի շնորհիվ 1904—1905 թթ. ուսումնական տարում դպրոցներ են հիմնվել Վերին Քոնարքում, Լիվասյանում և Մամուռքայում, իսկ 1908 թ.՝ Սիրաքում (Հայրիկյան դպրոցը)։

1906 թ. Նոր Ջուղայի հայկական դպրոցներում սովորում

էին 35 չարմահալցի տղաներ։ Երջանավարաններից ոմանք վերադառնում էին իրենց գյուղերը՝ ուսուցչության։

1920-ական թվականներին հայ գյուղացիության ջանքերով դպրոցներ են ստեղծվում նաև գավառի մյուս գյուղերում։ Արդեն 1930—1935 թթ. Չարմահալ գավառի հայ ուսումնասիրաց միությունը իր վրա վերցրեց դպրոցների հոգսը։ Այդ ժամանակաշրջանից սկսած գյուղացի շատ երիտասարդներ մեկնում են Կալկաթա՝ Հայոց մարդասիրաց ճեմարան, որն արտասահմանյան հայտնի հայ կրթական օջախներից մեկն էր[55]։

Կրթության վիճակը վատ էր նաև Փերիայում։ Գյուղացիության մեծամասնությունն անգրագետ էր։ Գրագետ տղամարդկանց թիվը դարիս երկրորդ տասնամյակում 7% էր, իսկ կանանցը՝ անհամեմատ շատ ավելի պակաս։ Գյուղերում չկային կանոնավոր դպրոցներ, իրենց կոչմանն արժանի ուսուցիչներ[56]։ Դարասկզբին այնտեղ նույնպես բացվում են դպրոցներ։

1944—1945 ուսումնական տարում գավառի 26 հայաբնակ գյուղերից 20-ն ունեին իրենց դպրոցները՝ 44 ուսուցիչներով, իսկ աշակերտության թիվը հասնում էր 1957-ի[57]։

Լ. Մինասյանի կազմած Փերիա գավառի դպրոցական ցանկի համաձայն 1945—1946 ուսումնական տարում (մինչև հայրենադարձությունը) գավառի 31 գյուղերում սովորում էր 1140 աշակերտ, որոնցից 192-ը աղջիկ էր[58]։

1963—1964 և 1965—1966 ուսումնական տարիներին գավառի դպրոցները օժանդակություն են ստացել Կյուլպենկյան հաստատության կողմից։ Հարկ է նշել, որ այդ դպրոցների հայ ուսուցիչները տեղացիներ էին։ Նրանցից շատերը սովորել էին Ջուղայի դպրոցներում։

1936 թ. քաղաքների հայկական և օտարազգի դպրոցները կառավարության որոշմամբ փակվեցին, սակայն գավառների դպրոցները փակ մնացին միայն 1940—1942 ուսումնական տարիներին։ Դրանից հետո բացվեցին Փերիայի շրջանի՝ Նամակերտ, Սանգիբարան և Բոլորան գյուղերի դպրոցները, որոնք ամբողջապես գտնվում էին կըր-

թության մինիստրության տնօրինության տակ։ Վերոհիշյալ երեք դպրոցներում դասավանդումը կատարվում էր պետական ծրագրով, առանց հայերենի ուսուցման։ Հետագայում կրթության մինիստրությունը ազգային փոքրամասնություններին, այդ թվում և հայերին, թույլ տվեց կրոնի անվան տակ յուրաքանչյուր դասարանում, այն էլ արտադասարանական ժամերին, շաբաթական տասը ժամ հայոց լեզու սովորել։ Այդ կարգը ուժի մեջ մնաց մինչև Իրանի 1978—1979 թթ. հեղափոխությունը։

Հարկ է նշել, որ այդ երեք դպրոցները բացվելուց հետո պետության կողմից անվանափոխվեցին. Նամակերտի Հովնանյանը կոչվեց նախ Մելլի, ապա՝ Սասուն, Սանգիբարանի Պողոս Անդրեասյան դպրոցը՝ Խոռամ, իսկ Բալորանի Հայրիկյանը՝ Նագեր[59]։

1941—1943 թթ. ուսումնական տարիներում գավառի մյուս դպրոցները նույնպես փակ էին։ Հետագայում նրանք ևս վերաբացվեցին, բայց հայոց լեզվի ուսուցչական կազմի մակարդակը շատ ցածր էր։

Վերջին տարիներին պետականացվեցին և պարսկական անուններ ստացան նաև Ղարունի, Միլակերտի, Սվարանի դպրոցները։

1962 թ. հետո մյուս ոչ պետականացված դպրոցներում պաշտոնավարում էին «Ուսման բանակաիինները»։ Այդ շրջանում դպրոցներ կառուցվեցին նաև գավառի մինչ այդ դպրոց չունեցող գյուղերում, 1966—1967 ուսումնական տարում Փերիայի բոլոր գյուղերն ունեին պետական դպրոցներ[60]։

Վերջին տասնամյակներում Փերիայի գավառի միայն երեք գյուղերի երեխաներն էին դասաժամերից դուրս հայերեն սովորում։ Ուսուցիչները հիմնականում տեղի շրջանավարտներն էին։

Բ. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՀՐԱՆԻ ԵՎ ՍՊԱՀԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Հայ և պարսիկ ժողովուրդների մշակութային կապերը, լեզվի և գրականության փոխազդեցությունները դարերի վա-

ղամուխյան ունեն։ Այս իմաստով էլ Իրանում հայագիտական ամբիոնի բացումը հրատապ խնդիր էր դարձել։ 1930-ական թվականներին հայագիտական ամբիոնի ստեղծման անհրաժեշտության մասին են խոսել խոշոր գիտնական, ակադեմիկոս Սաիդ Նաֆիսին և ուրիշներ։

Հայագիտական ամբիոնի ստեղծման անհրաժեշտությունը ժամանակին բացահայտվել էր նշանավոր հայ լեզվաբան, պահլավերենի հմուտ մասնագետ-իրանագետ Ռուբեն Աբրահամյանի արժեքավոր ուսումնասիրություններում։

Դեռևս 1935 թ. Ռ. Աբրահամյանի[61] ջանքերի շնորհիվ Թեհրանի համալսարանում հիմնվել էր հին պարսկերենի և պահլավերենի ամբիոն։ Գիտնականը երկար տարիներ զբաղվել է պարսկերենի պատմության պարբերացման հարցերով։ 1965 թ. Երևանում հրատարակվեց Ռ. Աբրահամյանի հիմնական աշխատությունը՝ «Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարանը», որտեղ պահլավական համարժեքների դիմաց տրված են հայկական փոխառյալ բառերը։ Նա զբաղվել է նաև թարգմանությամբ. պարսկերենից թարգմանել է Բաբա Թահեր Օրիան Համադանիի և Ֆիրդուսիի ստեղծագործություններից, իսկ պահլավերենից՝ «Արտա Վիրապ նամակ» և «Յուշատի Ֆրիան» երկերը։

1960 թ. Իրանի շահ Մոհամմադ Ռեզա Փեհլևիի անմիջական թույլտվությամբ Սպահանի համալսարանին կից բացվեց հայագիտական ամբիոն։ Այդ գործում իրենց անմիջական մասնակցությունն ունեին Սպահանի համալսարանի դեկան, դոկտոր Ամիր Աբաս Ֆարուղին և Թեհրանի պետական համալսարանի գերմաներեն լեզվի ու գրականության ամբիոնի վարիչ Հովհաննես Հախնազարյանը։ Նրանք կազմել էին կրթության մինիստրությանն ուղղված զեկուցագիր, որտեղ նշված էր իրանագիտության համար հին և նոր հայերենի ուսումնասիրության նշանակությունը[62]։

Յոթ տարի անց՝ 1967—1968 ուսումնական տարվա սկզբին, Թեհրանի պետական համալսարանի գրական ֆակուլտետին կից ստեղծվեց հայոց լեզվի ու գրականության ամբիոն։ Արդի հայերենի և գրաբարի դասավանդման գոր-

ծր ստանձննց նույն ֆակուլտետի երկարամյա դասախոս Հովհաննես Հախնազարյանը։

Հենց առաջին տարվանից հայագիտական ամբիոնը մեծ հետաքրքրություն առաջացրեց թեհրանաբնակ հայ և պարսիկ երիտասարդության շրջանում։ 1967—1968 ուսումնական տարվա առաջին կիսամյակում բաժինն ուներ 22 ուսանող, որոնց գերակշռող մասը պարսիկներ էին[63]։ 1968—1969 ուսումնական տարում ուսանողների թիվը հասավ 34-ի[64]։

Ի դեպ, եթե Սպահանի համալսարանի հայագիտական ամբիոնի առջև խնդիր էր դրված պատրաստել հայոց լեզվի ու գրականության ուսուցիչներ, ապա Թեհրանի համալսարանում հիմնադրված հայագիտական բաժինը գիտական նպատակներ էր հետապնդում։ Հայագիտական բաժնի խընդիրներից էր հայերեն և իրանական հին ու արդի լեզուների փոխադարձ կապերի ու առնչությունների ուսումնասիրությունը։ Շրջանավարտները պետք է կարողանային օգտվել Իրանի հին, միջնադարյան և, նույնիսկ, նոր շրջանի պատմության մասին հայ պատմագիրների հաղորդած արժեքավոր տեղեկություններից, որոնք բացակայում են իրանական պատմագրության մեջ կամ աղավաղված են։ Ինչպես հայտնի է, հայ մատենագրությունը հազվադյուտ աղբյուր է Իրանի, մանավանդ նրա նախաիսլամական շրջանի կրոնները, աղանդները և քաղաքական պատմությունն ուսումնասիրելու համար։

Հայագիտական բաժնում ուսումնասիրության կարևոր հարցեր են իրանական հին կրոնի՝ զրադաշտականության, ինչպես նաև մանիքեական աղանդի մասին հայ ոսկեդարյան գրականության մեջ պահպանված ամենահնագույն տեղեկությունները, V դ. հայ մեծ իմաստասեր Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց», Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և հայկական պատմական այլ աղբյուրներ։

Բարձր գնահատելով հայագիտական բաժինների աշխատանքը՝ Սպահանի համալսարանի դեկան, դոկտոր Ամիր Աբաս Ֆարուղին իր մի ելույթում ասել է. «Իրականում մենք նպատակ ունենք հայագիտությանն այնքան զարկ տալ, որ

ֆակուլտետը հանդիսանա ոչ միայն հայոց լեզվի դասավանդման կենտրոն, այլև կարողանա լավագույն կերպով ծառայել արևելագիտությանը, և աշխարհի, և Իրանի պատմության դասավանդմանը»[65]։

Սպահանի հայագիտական ամբիոնը մինչև 1964—1965 ուսումնական տարին եռամյա էր, որից հետո ստեղծվեց նաև նախապատրաստական մեկամյա բաժին, և հաստատությունը դարձավ քառամյա։

Սկզբնական տարիներին այստեղ սակավ էր հայ ուսանողների թիվը, սակայն հետագայում նրա նկատմամբ հետաքրքրությունն ավելացավ։ Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ հայագիտական ճյուղի շրջանավարտները ստանում էին պետական դիպլոմ՝ լիսանսի (բաքալավր) աստիճան։ Արդեն 1965 թ. հայագիտական բաժնում սովորում էին ավելի քան 60 հայ աղջիկներ։ 1968 թ. նրանց թիվը հասավ 70-ի[66]։ Ուսանողներն այս բաժնում անցնում էին հայոց լեզու, գրականություն, պատմություն և բարձրագույն ուսումնական հաստատության ծրագրով հարակից հայագիտական առարկաներ։

Սպահանի համալսարանի դիրեկցիան 1960 թ. պաշտոնական գրությամբ դիմեց Էջմիածնին, Հայաստանի լուսավորության մինիստրությանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեին և մի շարք թերթերի խմբագրությունների՝ խնդրելով, որ նրանք իրենց հայագիտական ճյուղի գրադարանը հարստացնելու համար ուղարկեն գրքեր, հանդեսներ և թերթեր։ Այդ դիմումները լայն արձագանք գտան խորհրդային Հայաստանում։ Առաքվեցին ավելի քան քսան անուն հայերեն թերթ և հանդես, գիտական արժեք ներկայացնող գրքեր և այլն[67]։ Այնպես որ հայագիտական բաժնի գրադարանը 1971 թ. ուներ շուրջ 1500 գիրք[68]։

1963 թ. Սպահանի համալսարանի հայագիտական ամբիոնը ավեց իր անդրանիկ շրջանավարտները, որոնք բոլորը՝ հայ թե օտարազգի, իրենց ավարտական ռեֆերատները գրել էին հայերեն։

Սպահանի համալսարանի հայագիտական բաժնի մտա-

հոգուբյունը եղել է մասնագետ դասատուների և հայագնացների պակասը, որոնց թիվը Իրանում շատ սահմանափակ էր։

Հարկ է նշել, որ չնայած հայագիտական այդ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտները պետական դիպլոմ ունեին, նրանցից ոչ մեկին Իրանի կրթության մինիստրությունը աշխատանքի չէր տեղավորում՝ պատճառաբանելով, որ հայոց լեզուն Իրանի դպրոցների ծրագրի մեջ չի մտնում։

Այսպիսով, հայագիտական բաժնի շրջանավարտները, որպես հայոց լեզվի կամ գրականության ուսուցիչ, աշխատում էին միայն հայկական դպրոցներում։

Գ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրանահայ գաղութը ընդհուպ մինչև XIX դարի երկրորդ կեսը սեփական գրականություն չուներ։ XVII դարի սկզբներից Նոր Ջուղա, Ջարմահալ, Փերիա և այլ հայաբնակ շրջաններում մեծ զարգացում էր ապրում աշուղական արվեստը։ Դա պարսկահայ աշուղական գրականության ծաղկման ամենափայլուն շրջանն էր։ Չնայած այդ ժամանակաշրջանում գաղութում հայ մշակույթը մեծ վերելք էր ապրում, սակայն գրականությունը, մասնավորապես բանաստեղծությունը, մրնացել էր գուսանական քնարերգության մակարդակին։

Այս շրջանում էր, որ գրական աշխարհում լայն ճանաչում ստացան Ղուլ Էգաջ, Ղուլ Արծրունի, Բաղր-օղլի և Ամիրօղլի աշուղները, որոնք իրենց երգերով պարսկահայ աշուղական պոեզիայի սկզբնավորողները եղան։ Նրանց երգերն արժեքավորվեցին իրենց ժողովրդական ոգով, արվեստով ու պատկերավորությամբ[69], գրում է Ա. Երեմյանը։

Պարսկահայ գուսանական պոեզիայի մեջ իր ստեղծագործություններով առաջնակարգ տեղ է գրավում Հարթուն օղլին (Հովհաննես Հարությունյան)։ Նրա տաղերն ընդգրկում են սիրո, պանդխտության, կրոնաբարոյական, երգիծական և այլ թեմաներ։ Իր երգերով լայն ճանաչում էր գտել չարմահալցի գուսան Ալլահվերդին։ Սիրային տաղերի հետ

մեկտեղ մեծ տարածում էին գտել բարոյախոսական թեմաներով գրված նրա ստեղծագործությունները, որոնց մեջ ծաղրի էին ենթարկվում ժամանակի հասարակական կյանքի հոռի բարքերը[70]։

Նոր շրջանի ճանաչված գուսաններից էին Միսկին Մաթեոսը, Մարտիրոս Մանուկյանը, Միսկին Ստեփանը և ուրիշներ։

XIX դարի երկրորդ կեսին Իրանի նոր կազմավորվող բուրժուազիայի շահերն արտահայտող գրականությունն իր ազդեցությունը թողեց զարգացում ապրող իրանահայ գրականության վրա։ Ակնհայտ էր նաև ռուսական, եվրոպական, հայկական մյուս գաղթօջախների և, հատկապես, կովկասահայ գրականության ուժեղ ազդեցությունը։

Այդ շրջանում իրանահայ գրականության զարգացման առանձնահատկություններից մեկը թարգմանական գրականության աշխուժացումն էր, որ նշանակալից չափով նպաստեց իրանահայության մշակութային կյանքի վերելքին։ Թարգմանական գրականության բնագավառում խոշոր դեր խաղացին թարգմանիչներ Հովհաննես Մասեհյանը, Հովսեփ Միրզայանը և ուրիշներ։

Մասավորական, դիվանագետ Հովհաննես խան Մասեհյանը տիրապետում էր անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, արաբերեն, պարսկերեն լեզուներին։ Պարսիկ պատմաբան Աբաս Ալի Սալեհին իր «Մեր հայրենակից քրիստոնյա հեղինակավոր գործիչները» աշխատության մեջ նշում է, որ Մասեհյանը պարսկերեն է թարգմանել նաև «Ռոմեո և Ջուլիետը»[71], Ալեքսանդր Դյումայի, Պյեռ Լոթի և Չարլզ Դիկկենսի մի քանի երկերը։ Սակայն Մասեհյանի անզուգական թարգմանությունների ոսկեպսակն են կազմում Շեքսպիրի ստեղծագործությունները՝ «Համլետ», «Արքա Լիր», «Ռոմեո և Ջուլիետ», «Օթելլո», «Վենետիկի վաճառականը», «Մակբեթ», «Ամառային գիշերվա երազը», «Ոչնչից մեծ աղմուկ», «Հուլիոս Կեսար», «Ինչպես կամենաք», «Անտոնիոս և Կլեոպատրիա», «Կորիոլան» և «Փոթորիկ»։

Հայ թարգմանական գրականության ավանդների ար-

ժանավոր ժառանգորդ Հ. Մասեհյանը նաև հրապարակախոս-լուսավորիչ էր։ Նրա ջանքերով 1894 թ. հունվարի 2-ին Թիֆլիսում լույս է տեսնում «Շավիղ» պարսկահայ առաջին շաբաթաթերթը[72]։

Անցյալ դարի վերջին քառորդում թարգմանական լայն գործունեություն ծավալեց Հովսեփ Միրզայանը։ Նրա առաջին թարգմանական գործերից են Վալտեր Սկոտի «Լճակի լեդին» և «Կղզիաբնակ լորդը»։ Հիշյալ թարգմանությունները տպագրվեցին Թիֆլիսում գործող հրատարակչական ընկերությունների կողմից։ Այդ շրջանում գտնվելով Թիֆլիսում՝ Միրզայանը թարգմանում է Լերմոնտովի «Դևը» պոեմը, Բ. Լիտտոնի «Պոմպեյի վերջին օրը» վեպը։ Վերադառնալով Թեհրան՝ Հ. Միրզայանը թարգմանում է Մոլիերի «Ժլատը», Բայրոնի «Կորսարը»։ Հետագա տարիներին նա թարգմանում է էդ. Ռոստանի «Սիրանո դը Բերժերակ» թատերգությունը։

Սկսած 1913 թ. նա թարգմանում է Սաադիի, Հաֆեզի, Բաբա Թահեր Օրիանի, Օմար Խայամի լավագույն ստեղծագործությունները։ Նրա թարգմանություններից են Մանուկ Մարտինի օգնությամբ լույս տեսած Ֆիրդուսու «Շահնամեից» երեք հատված և Ռաբինդրանաթ Թագորի մի քանի բանաստեղծություններ։

Մինչև 1961 թ., Իրանի հայ գրողների միության կազմակերպվելը, իրանահայ գրողները երբեմն աշխատել են իրարից անջատ, երբեմն էլ միասնաբար։ 1920-ական թվականներին Թավրիզում, Թեհրանում և մյուս քաղաքներում ստեղծվեցին գրական զանազան միություններ՝ իրենց հրատարակչություններով։ Սակայն դրանք հարատևել չկարողացան։ 1935 թ. հիմնադրվեց «Նոր էջ» գրական միավորումը, որը ընդմիջումներով հարատևեց մինչև 1970-ական թվականները։ Նրա մեջ միավորվեցին հիմնադիր անդամներ Դևը, Հրանտ Ֆալյանը, Աշոտ Ասլանը, Արա Տեր-Հովհաննիսյանը, Գալուստ Խանենցը, Արշավիր Մկրտիչը, Արմեն Գևսը։ Ավելի ուշ միավորման անդամ դարձան Զորայր Միրզայանը և Ռ. Բենը (Ռուբեն Հովհաննիսյան)։

Իրանահայ արդի գրողներից շատերը՝ եղիա Հայպետը, Հրանտ Ֆալյանը, Սողոմոն Մելիք-Հակոբյանը, Հովհաննես Մարդը, Լևոն Բզնունին, Գևորգ Դարֆին և ուրիշներ տարբեր ժամանակներում ուսանել են Թիֆլիսում։ Մինչև վերջին համաշխարհային պատերազմը իրանահայությունն իր մտավոր սնունդը ստանում էր Կովկասից, կապված էր Թիֆլիսի հայ մտավորականության հետ։

Մեծ է Դևի (Մարգար Ղարաբեգյան)[73] ներդրումը իրանահայ մշակույթի, հատկապես գրականության ու արվեստի գործում։ Նրա առաջին գործը լույս է տեսել 1923 թ. «Գաղափար» թերթում (Թեհրան)։ Այնուհետև նա սկսել է աշխատակցել իրանահայ, սփյուռքահայ և Մայր Հայրենիքի պարբերականներին. հիմնականում գրել է չափածո գործեր։ Նրա ստեղծագործություններում մի առանձին ուժով ու կարոտով է հնչում հայրենասիրական թեման։ 1947 թ. Թեհրանում լույս տեսավ Դևի բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Իմ երգերը» վերնագրով։ 1963 թ. Հայաստանի պետական հրատարակչությունը լույս ընծայեց նրա բանաստեղծությունների ժողովածուն՝ «Այս երկար ճամփան» խորագրով։ Գրքում զետեղված է Դևի հայրենաշունչ երգերի մի շարք՝ «Դեպի Երևան», «Բուժքույրեր», «Գազել հայրենական», «Իմ երկրի գովքը» և այլն, որոնցում բանաստեղծն արտահայտել է իր հայրենակարոտ ապրումները, գովերգել վերածնված Հայաստանի ստեղծագործ աշխատանքը։ Մեկ տասնամյակ հետո՝ 1973 թ. բանաստեղծի ծննդյան 70-ամյակի և գրական-ստեղծագործական բեղմնավոր գործունեության 50-ամյակի առթիվ «Հայաստան» հրատարակչությունը կրկին լույս ընծայեց նրա հատընտիրը՝ «Սփյուռքահայ գրողներ» մատենաշարով։

Դևի քնարական երգերի գլխավոր մոտիվը գեղեցիկ ու անկաշառ սերն է։ Ներթափանցելով մարդու ներաշխարհը՝ Դևը ցույց է տալիս նրա հոգու գեղեցկությունը, վիշտն ու թախիծը։ Դևի ստեղծագործությունը կրում է Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի և Վ. Տերյանի քնարերգության խոր կնիքը։ Նրա բանաստեղծությունները խիստ երաժշտ-

տական են, և դրանց մի մասը Նիկոլ Գալանտերյանը և այլ կոմպոզիտորներ վերածել են երգի։

Իրանահայ ժամանակակից գրողների շարքում որոշակի տեղ ունի Գալուստ Խաննոցը (Գալուստ Խանյան)[74]։ Նրա առաջին գործը լույս է տեսել «Պարսկահայ տարեցույցում» (1928)։ Աշխատակցել է «Վերածնունդ», «Բոբոխ» թերթերին և «Նոր էջ», «Շիրակ» ամսագրերին, ինչպես նաև գաղութահայ այլ հանդեսների։ Թարգմանություններ է կատարել պարսիկ դասական և արդի բանաստեղծներից։ 1957 թ. առանձին գրքով լույս է տեսել նրա բանաստեղծությունների «Ամբողջ սրտով» ժողովածուն։

1964 թ. Թեհրանում հրատարակված «Իրանահայ արդի գրողներ» ժողովածուում տպագրվել են նրա «Ուրախություն», «Հորս նկարի առջև», «Տրամություն», «Ինչ անեմ» և այլ բանաստեղծություններ։ 1972 թ. «Նոր էջ» տարեգրքի 17-րդ համարն ամբողջովին նվիրված էր Խաննոցի ստեղծագործություններին։ 1983 թ. Հայրենիքում «Սփյուռքահայ գրողներ» մատենաշարով լույս տեսավ Խաննոցի «Հրաշալի զորություն» բանաստեղծությունների ժողովածուն՝ Վահագն Դավթյանի խմբագրությամբ և առաջաբանով։ «Կյանքի հակասությունները խորապես ապրող և գեղեցիկ երազին, մարդկային բարձր իդեալներին ապավինած բանաստեղծ է Գալուստ Խաննոցը»[75],— գրել է Վ. Դավթյանը։ Բանաստեղծի ստեղծագործության լեյտմոտիվը հայրենիքի նկատմամբ ունեցած մեծ սերն ու կարոտն են։

Զորայր Միրզայանը[76] Սփյուռքի ականավոր բանաստեղծներից է։ Լինելով չափազանց հարուստ գիտելիքների տեր, նա թողել է գրական մեծ ժառանգություն՝ բանաստեղծություններ, թարգմանություններ, գրականագիտական ուսումնասիրություններ։ Նա տիրապետում էր հին ու նոր մի քանի լեզուների։ Գիտեր պարսկերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն. անձամբ ծանոթ էր Ռաբինդրանաթ Թագորին, որի վկայությամբ Միրզայանը նրա ամենաերիտասարդ թարգմանիչն էր։

Բանաստեղծի գրչին են պատկանում Դոստոևսկու «Հե-

ղիկը», «Նետոչկա Նեզվանովա» ստեղծագործությունների, Ֆրեյդի «Տոտեմ և Տաբու» ուսումնասիրության, Խայամի քառյակների, Լորկայի, Էլիոտի, Էլյուարի, Թագորի բանաստեղծությունների, Կոկտոյի «Տարօրինակ ընտանիքը» պիեսի, Քոլդուելի պատմվածքների թարգմանությունները և այլն։ Նրա ուսումնասիրություններից են «Աբու Ալի Սինայի կյանքը» և «Պարսից գրականության պատմություն» գրականագիտական մեծարժեք, ծավալուն աշխատությունը, որն առ այսօր անտիպ է։

Նրա հոր՝ Հովսեփ Միրզայանի թարգմանությամբ վերջերս Թեհրանում հրատարակված Օմար Խայամի քառյակների գրքին որպես հավելված կցվեցին Զորայր Միրզայանի թարգմանած 30 քառյակները։ Նա անձնական սերտ կապեր է ունեցել ժամանակակից պարսիկ անվանի գրողների, այդ թվում նաև Սադեղ Հեդայաթի հետ, մեծ աշխատանք է կատարել պարսիկներին հայ, իսկ հայերին՝ պարսիկ ժամանակակից գրողների ստեղծագործություններին ծանոթացնելու ուղղությամբ։ Զ. Միրզայանը հաճախակի զրական հանդիպումներ էր կազմակերպում՝ այդ նպատակով օգտագործելով պարսկերեն հրատարակվող պարբերականներն ու «Նոր էջ» հանդեսը։

Զորայր Միրզայանը ոչ միայն առաջնակարգ գրականագետ ու թարգմանիչ էր, այլև մեծ ճանաչում գտած տաղանդավոր բանաստեղծ։ Կենդանության օրոք հրատարակվել է նրա մեկ ժողովածուն՝ «Թաց մայթ» վերնագրով։ 1965 թ. իրանահայ գրողների «Նոր էջ» տարեգրքի 14-րդ համարը նվիրված է նրան. բանաստեղծություններից բացի տպագրվել էին նաև հեղինակի մի շարք պատմվածքներ։

1985 թ. Հայրենիքում հրատարակված «Սփյուռքահայ գրականություն» ժողովածուում զետեղվել են Զ. Միրզայանի 66 բանաստեղծությունները և համառոտ կենսագրությունը։ Նրա բանաստեղծություններն աչքի են ընկնում բովանդակության խորությամբ ու գեղարվեստական պատկերավորությամբ։ Ինքնատիպ ոճով գրված նրա արձակ գործերում իշխում են լեզվի պարզությունը, գունեղ պատկերներն ու

իրականության ճշմարտացի վերարտադրությունը։ Նրա ստեղծագործություններում զգացվում են Վ. Տերյանի և Ե. Չարենցի բանաստեղծական լեզվի մաքրությունն ու հմայքը։ «Նամակ Հայաստան գտնվող բարեկամիս (Դևին)», բանաստեղծության մեջ արտահայտվել են հեղինակի հայրենասիրությունը, սերն ու նվիրումը հայրենիքին, նրա անհուն կարոտը.

Երբ գու դառնաս մեր երկրից, կհամբուրեմ աչքը քո,
Որը մեր լույսն է ծծել առավոտից-երեկո,
Կհամբուրեմ կոպը քո, ուր մի անդորր գորովով
Արարատյան, միգուցե, ցողն է հպել գիշերով։

Արա Տեր-Հովհաննիսյանը[77] աշխատակցել է Թեհրանի «Վերածնունդ», «Սիլուռք», «Այգ», «Արարատ» թերթերին և «Արմենուհի», «Արփի», «Երջանիկ» ու մի շարք այլ ամսագրերի։ Նա հայերեն է թարգմանել պարսիկ ժամանակակից գրողների ստեղծագործությունները, ինչպես նաև հայ գրողներին՝ պարսկերեն։ Նրա գրչին են պատկանում Ալ. Շիրվանզադեի «Արտիստը» վիպակը և Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի պարսկերեն թարգմանությունները։ Նա հայերեն հրատարակել է «Հուշեր երգահան Նիկոլ Դալանդերյանի մասին» գիրքը։ 1964 թ. Թեհրանում հրատարակված «Իրանահայ արդի գրողներ» ժողովածուում տեղ են գտել նրա «Ծաղկավաճառը», «Հին պարտեզում», «Ջեմ մոռանա» և այլ չափածո գործեր։ Արան ճանաչված է նաև որպես երգիչ։

1985 թ. Երևանում հրատարակված «Սիլուռքահայ գրականություն» ժողովածուում ընդգրկվել են արդի իրանահայ ճանաչված բանաստեղծ Վարանդի (Սուքիաս Հակոբի Քյուրքչյան)[78] ստեղծագործությունները։ Փոքր հասակից նա հետաքրքրություն է ցուցաբերել դեպի նկարչությունը, ուսանել է հայ և օտարազգի նկարիչների մոտ։ Վարանդը գրել սկսել է 1967 թ. և արդեն մեկ տասնամյակի ընթացքում տպագրվել է հայկական և պարսկական պարբերականներում. լույս է ընծայել բանաստեղծությունների յոթ ժողո-

վածու՝ «Արևի ճամփով» (1972), «Արշավանք» (1973), «Հոլովույթ» (1975), «Հողմ հրոց» (1978)՝ նվիրված է Ե. Չարենցի ծննդյան 80-ամյակին, «Արևաքար» (1978), «Շիրխորն ու շահը» (1979) և «Միդհարատա» (1980)։ Նրա տեքստերով գրված քանիից ավելի երգերը լայն տարածում են գտել համայնքում։ Վարանդի ոճը անպաճույճ է, աչքի է ընկնում պարզությամբ ու հստակությամբ։ Լինելով նաև նկարիչ՝ նա իր բանաստեղծություններում կարողացել է ստեղծել գույների բազմազանություն, զգացմունքների ու պատկերների ներդաշնակություն։ Վարանդի ստեղծագործությունների մեջ ակնհայտ է Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Պ. Սևակի և Հ. Շիրազի քնարերգության աղերսությունը։

Ինչպես արդի մի շարք իրանահայ գրողների, այնպես էլ Վանանդի ստեղծագործությունները համակված են արևելյան քնարերգությանը հատուկ առողջ կենսափիլիսոփայությամբ։

Գևորգ Դարֆին (Գևորգ Հովհաննիսյան-Խուդոյան)[79] իրանահայ դրամատուրգներից է։ Առանձին գրքով լույս են տեսել նրա «Սիամուշ և Սուդաբե», «Արդարության ճանապարհին», «Ողջույն քեզ, Միլան» թատերգությունները։ 1963 թ. լույս է տեսել նրա հինդ գործողությամբ «Մեսրոպ Մաշտոց» դրաման՝ նվիրված Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին։ Այն արժանացել է Թեքեյան մշակութային ընկերության (Բեյրութ) մրցանակին։ 1964 թ. լույս տեսան նրա «Վահան և Ռազմադուխտ» և «Անքավելին» թատերգությունները։

Գ. Դարֆին հայտնի է նաև որպես բանաստեղծ և թարգմանիչ։ 1967 թ. լույս է տեսել նրա «Հարազատ էջեր» բանաստեղծությունների ժողովածուն։ Նրա թարգմանական գործերից հայտնի են «Ռիչարդ Երրորդ», «Տրիստան և Իզոլդա», «Լիռնի փոստատարը», «Ջոհաբերումի գիշեր», «Աննա Քրիսթի», «Սիդը» և այլն։

Անվանի բանաստեղծներից է Արամ Գառոնեն (Արամ Տեր-Բաղդասարյան)։ Նրա գրչին են պատկանում 1924 թ. հրատարակված «Հրաժեշտ» պոեմը և «Բանաստեղծություն-

ներ» ժողովածուն, 1926 թ. լույս տեսած «Արա և Շամիրամ» և այլ ստեղծագործություններ, որոնց մեջ զգալի տեղ են գրավում հայրենիքի կարոտի ու թախծի տրամադրությունները։

Իրանահայ գրողների այդ սերնդին են պատկանում նաև Լևոն Բղնունին և ուրիշներ։ Համայնքի գրական կյանքում հանրածանոթ դեմք էր Արտավազդ (Արտո) Գ. Ավագյանը, որը հայտնի է Ադիբ կամ Ադիբ Խավարի[80] գրական անունով։ Նա մեծ տաղանդի տեր էր, գիտեր լատիներեն, հբրայերեն, պարսկերեն, գրաբար, ֆրանսերեն, իտալերեն, ռուսերեն, էսպերանտո և այլն։ Թղթակցել է «Վերածնունդ» և «Բոբոխ» թերթերին, որոնց էջերում տպագրվել են նրա արդիական թեմաներով և երգիծական բնույթի բանաստեղծությունները, պատմվածքներն ու թարգմանությունները։

Ադիբն աշխատակցել է նաև Թեհրանում հրատարակվող «Ժուռնալ դը Թեհրան» պարբերականին, որտեղ տպագրվել են նրա մի շարք պատմվածքները։ Նա օժտված էր բացառիկ ձայնով։ Որպես երգիչ հանդես է եկել բեմում[81]։ Ադիբը կազմել է պարսկերեն-ֆրանսերեն բառարան, ունի էլ երկու այլ բառարաններ[82]։

Արամ Երեմյանը[83] բացի մանկավարժությունից մեծ մասամբ զբաղվել է բանասիրությամբ։ Նա նույնպես մի շարք գեղարվեստական ստեղծագործությունների հեղինակ է։ Աշխատակցել է «Մշակ», «Հորիզոն», «Վերածնունդ», «Սիոն» և այլ թերթերի ու պարբերականների։ Լույս է ընծայել «Իդեալիստը», «Կասանդրա», «Պատանի արտիստը» գեղարվեստական գործերը։ Ա. Երեմյանին են պատկանում իրանահայ աշուղներին նվիրված եռահատոր մի ուսումնասիրություն և հայ արվեստի վերաբերյալ մի շարք աշխատություններ։

1946 թ. Ա. Երեմյանը «Վերածնունդ» թերթի խմբագիր Հայկ Գարագաշի հետ որպես իրանահայության ներկայացուցիչ[84] մասնակցել է Խորհրդային Հայաստանի գրողների միության II համագումարին։

Արժանի է հիշատակել իրանահայ գրողների միության

նախկին անդամ Հովիկ Էդգարյանի[85] անունը։ Նա երկար տարիներ եղել է գրողների միության քարտուղարության և նախագահության կազմում։ Հ. Էդգարյանը հրատարակել է մի շարք աշխատություններ։ Մաշտոցի անվան Մատենադարանի անօրինությունը բարձր գնահատելով Հ. Էդգարյանի ծառայությունները հայ մշակութային արժեքները կորցրածից փրկելու և հայրենիք ուղարկելու գործում՝ նրան շնորհել է Մեսրոպ Մաշտոցի հուշամեդալ[86]։

Դ. ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ ՊԱՐՍԿԵՐԵՆ

Դարերի ընթացքում հայ մատավորականությունը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել պարսիկ ժողովրդի պատմության, լեզվի և գրականության նկատմամբ և դրանց նվիրված գիտական ուսումնասիրություններով հարստացրել մեր պատմագրությունը, բանասիրությունն ու գեղարվեստական գրականությունը։ Դրանք հիմք հանդիսացան, որպեսզի հետագայում պարսիկ խոշոր գիտնականներն ու հետազոտողները ըստ արժանվույն գնահատեն հայ պատմագրությունն ու հայկական աղբյուրները, որոնք պարսից պատմության և մշակույթի ամենատարբեր խնդիրների վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ են պարունակում։

Իրանի մատավորականները և գիտնականները, ինչպես ակադեմիկոս Սաիդ Նաֆիսին, պրոֆեսորներ Մոհամմադ Թաղի Մոսթաֆավին, Աբաս Մեհրին (Շուշթարի), Էբրահիմ Փուր-Դավուդը և ուրիշներ, իրենց հոդվածներում ու ելույթներում բարձր են գնահատել հայ միջնադարյան պատմագրության կարևոր աղբյուրագիտական-ճանաչողական նշանակությունը։

Դեռևս 1930-ական թվականներին Սաիդ Նաֆիսին (1893—1966) «Շարդ» (Արևելք) ամսագրի էջերում տպագրած «Նախաիսլամական Իրանի պատմության աղբյուրները և հայ պատմիչները» հոդվածում նշել է, որ Իրանի տվյալ ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ գրեթե չկան գրավոր փաստեր, իսկ պահլավերենով գոյություն ունեցող

նյութերը կրոնական բնույթի աղքատիկ տեքստեր են. «... Սակայն հայ ժողովուրդը,— գրում է Սաիդ Նաֆիսին,— ավելի քան 1500 տարի առաջ, Արշակունիների թագավորության շրջանից սկսած, ունեցել է հարուստ պատմագրություն, որը արժեքավոր աղբյուր է Իրանի Արշակունիների և Սասանյանների թագավորության պատմությունը լուսաբանելու համար»[87]:

Նաֆիսին հայկական մատենագրությունը, լեզուն և գրականությունը համարում էր ոչ միայն հայ ժողովրդի, այլև պարսիկ ժողովրդի պատմության հավասար աղբյուրներ:

1948 թ. Թեհրանում Հայկ Դարագաշի խմբագրությամբ հրատարակվող «Վերածնունդ» թերթի 2000-րդ համարի լույս ընծայման կապակցությամբ Նաֆիսին գնահատելով թերթի գործունեությունը պարսիկ և հայ ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում՝ գրում է. «...երիտասարդության օրից մինչև այժմ, միշտ էլ Թեհրանի բոլոր պարսիկներից ավելի լավ եմ ծանոթ հայկական գրական և գիտական շրջաններին և չեմ կարծում, որ որևէ մեկը հայ մտավորականության հետ իմ չափ մերձեցում ու շփում ունեցած լինի և իմ չափ ծանոթ լինի հայ հին ու նոր գրականությանը: Ես դա իմ կյանքի պարծանքներից մեկն եմ համարում, որովհետև այդ միջոցով նկատել եմ հայերի շաղկապումը այս երկրի պատմության ու գրականության հետ»[88]:

Ականավոր գիտնականը պարսից պատմությունը լիովին վերականգնելու համար անհրաժեշտ էր գտնում Իրանում զարկ տալ հայագիտական գործին, առաջարկում ստեղծել հայագիտական ամբիոններ, որոնք մեծապես կնպաստեին պարսից պատմագիտության զարգացմանը:

Թվելով Հովհաննես Միմիկոնյանի, Սեբեոսի, Թոմա Արծրունու, Ստեփանոս Ասողիկի, Կիրակոս Գանձակեցու, Գրիգոր Խլաթեցու, Առաքել Դավրիժեցու և հատկապես Մովսես Խորենացու անունները՝ Սաիդ Նաֆիսին առաջարկում էր նրանց գործերը թարգմանել պարսկերեն:

Ակադեմիկոս Սաիդ Նաֆիսու և այլ պատմաբանների

հրատարակած հոդվածներն ու ելույթները մեծ հետաքրքրություն առաջացրին Իրանի մտավորականության շրջանում: Արդեն 1952 թ. Աբրահամ Հովսեփյանը, համագործակցելով էբրահիմ Դեհգանի հետ՝ Մ. Խորենացու «Հայոց պատմությունից» թարգմանում է «Հայկի և Բելի կռիվը» հատվածը: Այս ուղղությամբ երկրորդ և ավելի խոշոր քայլը 1968 թ. «Սասնա ծռեր» էպոսի պարսկերեն թարգմանությունը էր: Հայկական դյուցազնավեպը թարգմանել են Գևորգիս Ազասին և դոկտոր Ալեքսանդր Պատմագրյանը՝ ձեռքի տակ ունենալով Գարեգին Սրվանձտյանի, Մանուկ Աբեղյանի, Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Լևոն Սուրմելյանի հրատարակությունները, Ֆրեդերիկ Ֆեյդիի ֆրանսերեն թարգմանությունը, ինչպես նաև վիպերգի խորհրդային Հայաստանում հրատարակված առանձին պատումները:

Պարսիկ պատմաբանների ուշադրությանն է արժանացել նաև իրանահայ նշանավոր գործիչների գործունեությունը: Պատմաբան Աբաս-Ալի Սալեհին բարձր գնահատելով Մալքում խանի, Եփրեմ խանի և Հովհաննես խան Մասեհյանի ծառայությունները՝ 1966 և 1968 թթ. հրատարակում է «Մեր հայրենակից քրիստոնյա խոշոր գործիչները» գիրքը[89]:

Իրանի հայ համայնքի պատմությամբ զբաղվել են պատմաբան Ալի Ջավահերջալամը և ժամանակակից պատմաբան Էմայիլ Ռայինը: Վերջինիս անդրանիկ գիրքը նվիրված է Իրանում առաջին տպարանի հիմնադրմանը: Հեղինակն իր աշխատության մեջ բարձր է գնահատել Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում առաջին տպարանի հիմնադիր Խաչատուր Կեսարացու ծառայությունը:

1970 թ. հրատարակվում է Է. Ռայինի «Հայ իրանցիները»[90] աշխատությունը, որտեղ շարադրված է իրանահայ համայնքի համառոտ պատմությունը:

Է. Ռայինը XIX դարի երկրորդ կեսի Իրանի բուրժուական խոշոր գաղափարախոս Մալքում խանի (Հովսեփ Հակոբի Մելքումյան) կենսագիրն է: 1971 թ. Թեհրանում հրատարակված «Միրզա Մալքում խանի կյանքը և քաղաքական

գործունեությունը» աշխատության մեջ հեղինակը բնութագրելով նրա տեղը Իրանի հասարակական-քաղաքական մըտքի պատմության մեջ՝ գրում է. «Վերջին հարյուրամյակում Իրանի քաղաքական գործիչների շարքում Մալքում խանը եթե ոչ ամենահռչակավորը, ապա, անկասկած, ամենափառաբանվածն է»[91]։

Իրանցի ընթերցողին Մեծ եղեռնի վերաբերյալ հավաստի տեղեկություններ և լուսաբանումներ տալու նպատակով 1975 թ. է. Ռայինը փաստական հարուստ նյութերի հիման վրա լույս է ընծայել «Հայերի ջարդը» ուսումնասիրությունը։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և հատկապես 1960-ական թվականներին իշխանության լիբերալացման շրջանում երկրում ստեղծված հասարակական-քաղաքական բարենպաստ պայմանները իրանահայ մի շարք մտավորականների և պարսիկ անվանի գրողների ու գրականագետների՝ Նազեր Նազերփուրին, Սայեհին, Ահմադ Շամլուին, Աբդոլհոսեյն Ջալալիին, Թեմուր Գորգինին և ուրիշներին հնարավորություն են տվել դասական և ժամանակակից հայ գրականության լավագույն երկերը թարգմանաբար ներկայացնել պարսիկ ընթերցողներին։ Դրանք հրատարակվել են առանձին գրքերով և անթոլոգիաներով, ինչպես նաև «Արմաղան», «Խուշեր», «Սոխան», «Փայամե Նավին», «Բաղե Սաէբ», «Ջոնգ» և այլ ամսագրերի էջերում։

1969 թ. մեկը մյուսի հետևից լույս է տեսել Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված երեք ժողովածու։ Դրանցից է պարսիկ ժամանակակից նշանավոր բանաստեղծներ Նազեր Նազերփուրի, Հ. Սայեհի թարգմանությամբ և իրանահայ բանաստեղծներ Գ. Խանենցի և Ռ. Բենի համագործակցությամբ Թեհրանում լույս տեսած «Հուշամատյան Թումանյանի» արժեքավոր ժողովածուն (1969)։ Մյուսը՝ «Հովհաննես Թումանյան» ժողովածուն է, որը թարգմանել է Ալեք Խաչատրյանը (1968)։ Ժողովածուներում տեղ են գտել Թումանյանի «Փարվանա», «Ախթամար» և «Անուշ» պոեմները։ Երրորդը Հրանտ Դուկասյանի թարգմանած «Անուշ» հատընտիրն է, որը լույս է տեսել Սպահանում

(1969)։ Ժողովածուում զետեղված են դասական, ժամանակակից խորհրդային և սփյուռքահայ գրողներ Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Հ. Հովհաննիսյանի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի, Ալ. Ծատուրյանի, Շ. Կուրդինյանի, Ե. Չարենցի, Գ. Սարյանի, Հ. Շիրազի, Հ. Սահյանի, Գ. Էմինի, Մ. Կապուտիկյանի, Վ. Դավթյանի, Պ. Սևակի, Մ. Մեծարենցի, Պ. Դուրյանի, Մ. Իշխանի (Բեյրութ), Ա. Գառոնեի և Զ. Միրզայանի ստեղծագործությունները։

Թումանյան եղբայրների անօրինությամբ Թեհրանում ստեղծված «Գրական միության» նախաձեռնությամբ որոշվել է իրանցի ընթերցողներին պարբերաբար ծանոթացնել հայ գրականության, պատմության ու մշակույթի հետ։ Այդ նպատակով հերթականությամբ առանձին գրքերով լույս են տեսել Գրիգոր Զոհրապի «Տատնյոթ պատմվածքները», Վահան Թոթովենցի «Կյանքը հին Հռոմեական ճանապարհի վրա» և Մկրտիչ Արմենի «Հեղնար աղբյուր» ստեղծագործությունները։

1963 թ. հրատարակված Գրիգոր Զոհրապի պատմվածքների ժողովածուի առաջաբանը գրել են թարգմանիչ Ա. Բերնարդին և պարսիկ գրականագետ, դոկտոր Ալիասղար Սադր Հաջ Սեիդ Ջավադին։ Ժողովածուում տեղ են գտել Զոհրապի «Փոթորիկը», «Ճիտին պարտքը», «Կարծեմ թեն», «Մագդաղինեն», «Ճեյրանը», «Մյուսը», «Զաբուղոն», «Ոեհանը», «Կատակը», «Ֆուրթունան», «Կապիկը», «Խնդուքը», «Սխալը» և «Անհավատարիմը»։

1964 թ. Թումանյան եղբայրների նախաձեռնությամբ պարսկերեն հրատարակվում է խորհրդահայ անվանի գրող Վահան Թոթովենցի «Կյանքը հին Հռոմեական ճանապարհի վրա» վիպակը, որը թարգմանել էր Հարփրիկ Թամրազյանը։ Պարսիկ գրականագետ, դոկտոր Ռեզա Բարահանին գրքի առաջաբանում գրում է. «Այս թարգմանությունը նշանակալից մի քայլ է պարսիկ ժողովրդին հայ գրականությանը ծանոթացնելու գործում։ Հուսով ենք, որ թարգմանությունների միջոցով հնարավորություն կունենանք հայ գրականությանն ավելի լավ ծանոթացնելու»[92]։

1965 թ. հիշված գրական հասարակությունը լույս է ընծայել Մկրտիչ Արմենի «Հեղնար աղբյուրը»՝ Երվանդ Փափազյանի թարգմանությամբ։ Գիրքը բացվում է հեղինակի՝ պարսիկ ժողովրդին ուղղված ողջույնի և երախտագիտության խոսքով։

Իրանում հրատարակվող բազմաթիվ թերթեր ու ամսագրեր իրենց էջերը սիրով են տրամադրում հայ հեղինակների ստեղծագործություններին։ Միայն 1967 թ. «Խուշե» հանդեսը Ալեք Խաչատրյանի թարգմանությամբ իրանցի ընթերցողներին է ներկայացրել մի շարք գրողների գործեր։

«Ծանոթանանք հայ գրականությանը» ընդհանուր խորագրի տակ պարբերաբար տպագրվել են Պ. Դուրյանի, Մեծարենցի, Սիամանթոյի, Հ. Հովհաննիսյանի, Ալ. Ծատուրյանի, Շ. Կուրղինյանի, Վ. Տերյանի ստեղծագործությունները, ինչպես նաև Եղիշե Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմը։

«Խուշե» հանդեսը 1967 թ. ներկայացրել է նաև Գեղամ Սարյանի, Հովհաննես Շիրազի, Համո Սահյանի բանաստեղծությունները՝ Ալեք Խաչատրյանի թարգմանությամբ։ Սկսած 1966 թ. «Խուշեն» իր էջերում շարունակաբար տպագրել է Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը։ «Բազե սաէբ» բանաստեղծական անթոլոգիայում 1967 թ. տեղ է գտել Վահագն Դավթյանի «Կանաչ հրդեհը»՝ Հրանտ Ղուկասյանի թարգմանությամբ։ Վերջինիս են պատկանում Սիամանթոյի բանաստեղծությունների, Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի, Ռուբեն Սևակի, Դանիել Վարուժանի հատընտիրների, իրանահայ բանաստեղծներ Զորայր Միրզայանի, Գալուստ Խանենցի, Ռ. Բենի և ուրիշների ստեղծագործությունների թարգմանությունները։ Հովհաննես Շիրազի «Բիբլիական» պոեմի Հ. Ղուկասյանի պարսկերեն թարգմանության առթիվ բանաստեղծ, քննադատ Ահմադ Շամլուն, դիմելով «Խուշեի» ընթերցողներին, որի էջերում տպագրվել էր այն, գրում է, որ այդ պոեմը «Հայ ժողովրդի հոգու ճիչն է, ժողովուրդ, որ տարիներ շարունակ անարդարացի տառապել է զազիր ու հանցագործ օտարների ճիրաններում,

ճիչն է մի ժողովրդի, որը 1600 տարի առաջ ստեղծած և ցայսօր հարատևած իր գրով ստեղծել է գրականություն ու բարձր մշակույթ»[93]։

Պարսիկ ընթերցասեր հասարակության շրջանում բարձր են գնահատվել Պարույր Սևակի ստեղծագործությունները։ 1968 թ. առաջին անգամ «Խուշե» ամսագրում Ալեք Խաչատրյանի թարգմանությամբ լույս տեսավ «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին» բանաստեղծությունը, որը տեղ գտավ նաև նույն թվականին Թեհրանում հրատարակված «Վշտի գյուղացիներգություն» խորագիրը կրող հայ պոեզիայի անթոլոգիայում։ 1969 թ. հայ բանաստեղծության վերը հիշատակված «Անուշ» հատընտիրում տպագրվել են Պ. Սևակի տասից ավելի բանաստեղծություններ (թարգմանիչ՝ Հրանտ Ղուկասյան)։

1972 թ. Ալեք Խաչատրյանի թարգմանությամբ «Մայրական հայ բանաստեղծության մեջ» հատորյակում տպագրվեց Պ. Սևակի «Մոր ձեռքերը» բանաստեղծությունը։

1968 թ. Թեհրանում հրատարակվող «Բազե սաէբ» անթոլոգիայում տեղ է գտել Պ. Սևակի «Միանգամից» բանաստեղծությունը, որը Հրանտ Ղուկասյանը վերածել է արձակ բանաստեղծության։ Գրականագետ Աբգոլհոսեյն Ջալալյանը, օգտվելով Հ. Ղուկասյանի ազատ թարգմանությունից, այն վերածել է չափածոյի և 1969 թ. հրատարակել «Բազե սաէբ» ժողովածուի մեջ։ 1978 թ. պարսիկ ընթերցողներին ներկայացվեց Պարույր Սևակի մոտ երեսուն բանաստեղծություններից կազմված ժողովածուն՝ «Անդրանիկի զանգակատուն» ընդհանուր խորագրով։

Վերջին երեք տասնամյակում իրանական պարբերականներում իրանցի և հայ մտավորականների, գրականագետների ու թարգմանիչների կողմից հրատարակվում են հայ գրականության, արվեստի, լեզվի, պատմության, գիտության և առանձին հայ դասական գրողների մասին բազմաթիվ հոդվածներ և գրքույկներ[94]։

Սփյուռքահայ իրականության մեջ թատրոնը կարևոր դեր է խաղացել հայ մշակույթի պահպանման ու մասսայականացման գործում: Իրանահայ համայնքում այն սաղմնավորվեց մեկ դար առաջ, երբ առաջացան դպրոցական և սնային թատերական առաջին խմբերը: Այնուհետև թատրոնները մասնավորականության կողմից ստեղծվեցին ընկերություններ ու միություններ: Երկրի հյուսիսային շրջաններում՝ Ռեշտում, Թավրիզում և մյուս հայաբնակ համայնքներում առաջացան սիրողական խմբեր, որոնց ներկայացումներին մասնակցում էին նաև Կովկասից հյուրախաղերի եկած հայ դերասանները:

1888—1890 թթ. Թավրիզում ու Թեհրանում հաջողությամբ խաղացանկով հանդես են եկել Ս. և Ա. Սաֆրազյանները: Մի շարք պիեսների բեմադրությունների հետ մեկտեղ ներկայացրել են նաև «Պեպոն»՝ Ա. Փանվելյանի աղբրբջանեբեն թարգմանությամբ:

Իրանահայ համայնքի թատերական կյանքի աշխուժացմանը մեծապես նպաստեցին հայ բեմի տաղանդավոր դերասաններ Աբելյանի, Մանվելյանի, Սիրանույշի, Ոսկանյանի, Արմենյան-Դուրյանի, Ժամենի, Հովհաննիսյանի և այլոց հյուրախաղերը Իրանում:

Թատրոնի նկատմամբ իրանահայության հետաքրքրությունը մեծացել է նաև զանազան սիրող-դերասանների, մասնավորապես Մանվել Մարությանի և Կոստանյան ամուսինների գործունեության շնորհիվ:

1917 թ. Իրանում հյուրախաղերով հանդես է եկել նշանավոր դերասան Մ. Թաշչյանը, որը ելույթներ է ունեցել Թավրիզում, Թեհրանում, Նոր Ջուղայում և Աբադանում:

Իրանահայ թատրոնի զարգացման գործում որոշակի դեր են խաղացել դերասաններ Մ. Մարությանը և Հայկ Գարագաշը:

Վահան Աղամալյանը որոշ ժամանակ Թավրիզի բեմում հանդես գալուց հետո 1929 թ. մշտապես հաստատվեց Թեհրանում՝ շարունակելով իր բեմական գործունեությունը: Նա երկար տարիներ մասնակցել է «Կոմիտաս» երգչախմբի աշխատանքներին[95]:

Իրանահայ թատրոնի զարգացման գործում մեծ և արդյունավետ ներդրում ունի Վ. Փափազյանը, որը 1934 թ. օգնել է պարսիկ և հայ դերասաններին՝ բարձրացնելու իրենց կատարողական արվեստը:

Հետագայում Սփյուռքի հայ թատրոնը գրեթե բոլոր վայրերում, այդ թվում նաև Իրանում, աստիճանաբար զրկվելով դերասանական կարող ուժերից՝ կորցնում է իր երբեմնի նշանակությունը: Շնորհալի պրոֆեսիոնալ դերասաններին փոխարինող սիրողներին չի հաջողվում նույն բարձրության վրա պահել հայ թատրոնը ու գոհացնել հանդիսատեսի պահանջը:

Իրանահայ թատրոնի անկումը սկսվել էր դեռևս Ռեզա շահի իշխանության շրջանում, երբ վարչակարգը բացահայտորեն խոչընդոտում էր իրանահայ մշակութային կյանքի առաջընթացը:

Իրանում հայկական թատրոնին մեծ ծառայություններ են մատուցել Ս. Արզումանյանը, ամուսիններ Ռուբեն և Լիդա Աթայանները, Մ. Մանուկյանը, Իշխան Ղարիբյանը (ՀԽՍՀ ժողովրդական արտիստ) և ուրիշներ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին բարենպաստ պայմաններ ստեղծվեցին երկրի հայաբնակ քաղաքներում ստեղծելու մշակութային կազմակերպություններ, որոնց թատերախմբերը ի վիճակի եղան իրենց շուրջը համախմբել սիրողական լավագույն ուժերին:

Սակայն հետպատերազմյան շրջանում շատ քաղաքներում, ինչպես նաև Թեհրանում, հայկական ներկայացումները կրում էին պատահական բնույթ, որովհետև դրանք կազմակերպվում էին անհատական նախաձեռնությամբ:

Այնուամենայնիվ, այդ շրջանում սիրողների ուժերով Թեհրանում ստեղծվեցին նոր թատերախմբեր, վերակազմվում էին հները, որոնց ներկայացումները տեղի էին ունենում միությունների զբաղեցրած շենքերում:

Ժամանակագրական առումով իրանահայ գաղութի հայ թատրոնը ունեցել է հետևյալ պատկերը՝ 1880 թ. Թեհրանի Դարվազե Ղազվին հայաբնակ շրջանի դպրոցում թատերական ներկայացումների համար ստեղծվեց համապատասխան բեմ: 1881 թ. Թեհրանում հիմնվեց «Հայ թատրասիրաց ընկերությունը»[96]:

1930 թ. մարտին «Սիրուս» թատրոնում Թեհրանի Հայկազյան դպրոցի նախկին աշակերտական միությունը բեմադրեց Լ. Տոլստոյի «Կրեյցերյան սոնատը»[97]:

Նույն ամսին «Սիրուս» թատրոնում Մարգարիտ Սարվարյանը բեմադրեց «Միմիչ կամ անառակ Միտրատուրա» ռուսերենից թարգմանված կատակերգությունը[98]:

1930 թ. ապրիլին վերոհիշյալ թատրոնում ներկայացվեց Տիգրանյանի «Անուշ» օպերան, որի կազմակերպիչը հայկական դպրոցի ուսուցիչ Պ. Գրիգորյանն էր: Անուշի դերը կատարում էր Փերի Աղաբաբովան:

1945 թ. փետրվարին Փերիայի հայ հիվանդանոցի միության Թեհրանի մասնաճյուղի նախաձեռնությամբ Նադերի թատրոնում բեմադրվում է «Կորրադոն», որը մեծ խանդավառությամբ ընդունվեց Թեհրանի թատերասեր հասարակության կողմից[99]:

1950 թ. պարսկական «Ֆիրդուսի» թատրոնում ռեժիսոր, դերասան Հրանտ Ստեփանյանի ղեկավարությամբ բեմադրվեց Ալ. Շիրվանզադեի «Արմենուհին»: Ներկայացմանը մասնակցում էր հայազգի դերասանուհի Իրեն Ջազյանը: Դրաման թարգմանել էր Անդրանիկ Հովհաննիսյանը: Նա հայտնի է «Ավերակների վրա», «Ջար ոգի» և այլ դրամաների թարգմանություններով, որոնք բեմադրվել են Ռեշտի «Գիլան» թատրոնում: Պարսիկ հասարակությունը մեծ խանդավառությամբ էր ընդունել Ալ. Շիրվանզադեի այդ ստեղծագործությունների բեմադրությունը:

Սակայն հետպատերազմյան շրջանում Թեհրանի հայ համայնքի թատերական կյանքը նոր հունի մեջ դնելու ջանքերը ապարդյուն անցան: 1950-ական թվականներին մայրաքաղաքի թատերական խմբերը որոշեցին միավորվել, որը

կնպաստեր իրանահայ թատրոնի վերականգնմանը: Սակայն այդ միավորումը տևեց ընդամենը երկու տարի, որից հետո նրանք ցրվեցին ու մնացին իրրև առանձին խմբեր: Այդ խմբերից էին «Բ. Ե. Ա. Բ.» և «Ադամյան» ընկերությունները, 1954 թ. ստեղծված «Շանթ» խումբը և 1955 թ. ստեղծված «Թեհրանի հայկական դրամատիկական խումբը»: Նորաստեղծ խմբերից յուրաքանչյուրը հանդես է եկել մեկական ներկայացումով[100]:

1960-ական թվականներին Շիրազում տեղի ունեցած իրանական արվեստի փառատոնի ժամանակ Ա. Հովհաննիսյանի բեմադրած պարսիկ դրամատուրգ Աբաս Նալբանդյանի «Նորին խոր ու լայն ուսումնասիրություն երկրաբանական 25-րդ շրջանի քարաշերտերում» պիեսը արժանացավ մրցանակի[101]:

Այդ փառատոնին մասնակցող իրանահայ արվեստագետների հաջողություններն առավելապես նկատելի էին երաժշտության բնագավառում:

Թավրիզի հայ թատրոնը ծնունդ է առել 1879 թ., երբ Մեսրոպ քահ. Փափազյանի նախաձեռնությամբ այստեղ տրվեց առաջին ներկայացումը: Միակ կին դերակատարը Մ. Փափազյանի դուստր Աշխենն էր, որն ուսուցչուհի էր իգական դպրոցում:

Թատրոնի սաղմնավորման շրջանում հիմնականում բնորդվում էին այնպիսի գործեր, որոնց մեջ կանացի դերեր չկային, իսկ եթե լինում էին, ապա դրանք տղամարդիկ էին կատարում[102]: Ներկայացումները հիմնականում կրում էին կրոնապատմական բնույթ:

Այդ շրջանում ներկայացումներ էին տրվում նաև Արամյան և Լիլավայի դպրոցների ուսուցիչների ուժերով:

1895 թ. Գրիգոր Թումանյանի կառուցած Թամարյան դպրոցի շենքն ուներ կոկիկ թատերասրահ ու հարմարավետ բեմ, որտեղ պարբերաբար ներկայացումներ էին տրվում:

Թատերասրահներ կառուցվեցին նաև Սալմաստում, նախ՝ Ղալասար և ապա Հավթվան գյուղերում, իսկ ավելի ուշ՝ Փայաջուկում: Սրանք ունեին ուսուցիչներից ու բնակչության

այլ խավերի ներկայացուցիչներից կազմված թատերական խմբակներ։

1913 թ. Թավրիզում կառուցվեց «Արամյան» թատերասրահը, որտեղ ներկայացումներ էին տրվում շուրջ երկու տասնամյակ։

Այդ տարիներին զանազան թատերախմբերի խաղացանկերում տեղ էին գտել եվրոպական, ռուս և հայ հեղինակների ընտիր դրամաները, այդ թվում նաև Գ. Սունդուկյանի, Ա. Շիրվանզադեի ստեղծագործությունները։ Եվրոպական հեղինակներից հիմնականում բեմադրվում էին Մոլիերի կատակերգությունները։

Հատկանշական է, որ տարվա ընթացքում բեմադրվող սակավաթիվ պիեսները թարգմանվում էին ադրբեջաներեն (որը տեղի բնակչության խոսակցական լեզուն էր)։ Այդ բեմադրություններին ներկա էին լինում թագաժառանգը և նահանգապետը։ Թագաժառանգը երբեմն նախասիրած ներկայացումները կրկնել էր տալիս պալատում[102]։

1916 թ. Թավրիզում հիմնված «Կուլտուրական միությունը» նույնպես ուներ իր թատերասրահը, որտեղ տարիներ շարունակ անց էին կացվում բազմաթիվ թատերական միջոցառումներ։

Նոր Ջուղայում թատրոնը սկիզբ է առել 1886 թ., երբ մի խումբ երիտասարդներ Բեգլար Աղայանի ղեկավարությամբ տնային պայմաններում, 26 հանդիսականների համար ներկայացրին «Խեչոյի թուղը» վոդևիլը։

1888 թ. մի խումբ թատերասեր երիտասարդների նախաձեռնությամբ համայնքում առաջին անգամ կազմակերպվեց «Թատերասիրաց ընկերություն» միությունը։ Նրա վարչությունն իր առջև խնդիր էր դրել թատրոնին նոր ուղղություն տալ՝ բեմադրելով Իրանի կյանքը պատկերող պիեսներ։ Բացի այդ, աշխատանքներ էին կատարվում բեմադրություններին կանանց մասնակից դարձնելու ուղղությամբ։ Ընկերության անդամներին հաջողվեց գրական հայերենով բեմադրել Գ. Սունդուկյանի «Պեսոն»։

Դարիս առաջին տասնամյակում ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ մացնելու շնորհիվ Նոր Ջուղայում թատերական գործը քիչ թե շատ բարելավվում է։ Մինչև 1930-ական թվականները համայնքը պարբերաբար բեմադրում էր զանազան պիեսներ և ընդունում հյուրախաղերի եկած դերասանների։ 1917 թ. Նոր Ջուղա եկան Աբովյանը և Քնարիկը, որոնք բեմադրեցին «Արշին-մալ-ալան» և «Մաշտի իբադը»։ 1920 թ. Նոր Ջուղայում հանդես եկավ դերասան Սանամյանը՝ ներկայացնելով «Նամուսը», «Օթելլոն» և այլ գործեր։ Նույն թվականին Ալ. Ներսիսյանի մասնակցությամբ, առաջին անգամ բեմադրվեցին Հ. Թումանյանի «Անուշը» և Բաֆֆու՝ պիեսի վերածված «Խնեները»։

1921 թ. թատերական կյանքի խոշոր իրադարձությունը պետք է համարել Կոստանյան ամուսինների հետ Սիրանույշի հյուրախաղերը, որը գլխավոր դերերով հանդես եկավ «Անհայտ կինը», «Մեդեա», «Համլետ», «Զավակ», «Տրիլբի», «Մելիքի աղջիկը» ներկայացումներում։ Սիրանույշի մեկնելուց հետո Կոստանյան ամուսինները շարունակեցին իրենց ներկայացումները Նոր Ջուղայում՝ բեմադրելով «Աշուղ Ղարիբ», «Աշխարհի դատաստանը», «Դարաբաղի ասպղագեսը», «Անգլիացի փեսացուն» և այլ պիեսներ։

1926 թ. Նոր Ջուղա հյուրախաղերի եկան Ջափուռատյան ամուսինները, որոնք ներկայացրեցին «Սոս և Վարդիթեր», «Անչափահաս», «Երեխա» և այլ պիեսներ[104]։

1930-ական թվականների կեսերին վարչակարգի ազդահալած քաղաքականության հետևանքով անկում է ապրում նաև Նոր Ջուղայի թատերական կյանքը։

Հարկ է նշել, որ Մանարյան ամուսինները (Երվանդ և կինոռեժիսոր Արման Մանարյանների ծնողները) ևս իրենց ներդրումն են ունեցել իրանահայ թատրոնի զարգացման գործում։ Նրանք դեռևս 1930 թ. Սուլթանաբադ քաղաքում նորաստեղծ «Հայուհեաց կրթասիրաց միության» նախաձեռնությամբ ազգային դպրոցի սրահում բեմադրեցին «Աշխարհի դատաստանը» պիեսը։ Ներկայացմանը մասնակցում էր նաև տեղի սիրողական խումբը։ Քրիստափոր Մանարյա-

նը կատարում էր Վասիլի Սեմյոնովիչի, իսկ Ժենյա Մանարյանը՝ Անաստասիայի դերը։

Իրանահայ թատրոնին իր ծառայությունն է մատուցել նաև դերասան Արմեն Մկրտումյանը՝ հանդես գալով հիմնականում Խուզիստանի շրջանում ու Նոր Ջուղայում[105]։

Շուրջ տասը տարի «Արմեն» թատերախումբը շնորհալի դերասան Արշավիր Ղարիբյանի ղեկավարությամբ ելույթներ է ունեցել Նոր Ջուղայում, Թեհրանում, Շահինշահրում և այլ հայաբնակ քաղաքներում։ Արշավիր Ղարիբյանը միաժամանակ եղել է բեմադրիչ։ Չնայած նա չուներ մասնագիտական կրթություն, սակայն բնատուր տաղանդը նրան հրնարավորություն էր տալիս հաղթահարել թատերական արվեստի բազում դժվարությունները և երիտասարդ կատարողների օգնությամբ հանդիսատեսին ներկայացնել այնպիսի աշխարհահռչակ դրամատուրգների ստեղծագործությունները, ինչպիսիք Իբսենն ու Բրեխան են։ Թատերախմբի խաղացանկում հիմնականում տեղ է գտել աղգային դրամատուրգիան։ Հանդիսատեսները ջերմությամբ են ընդունել Ալ. Շիրվանզադեի «Չար ոգին», որտեղ Գիժ Դանիելի դերում հանդես է եկել Արշավիր Ղարիբյանը[106]։

Դարասկզբին Փերիայում նույնպես աշխուժանում է մշակութային կյանքը։ Դավառի առաջին ներկայացում-հանդեսը տեղի է ունեցել 1904 թ. հունիսին, Նամակերտ գյուղի դպրոցի նորակառույց սրահում՝ նվիրված հայկական գրերի ստեղծման 1500-ամյակին։ Նույն տարվա դեկտեմբերին տեղի է ունեցել նաև ամանորին նվիրված ներկայացում-հանդես[107]։ Երգերից ու արտասանություններից բացի բեմադրվել են «Արշին-մալ-ալան», «Աշուղ Ղարիբ», «Ուշ լինի, նուշ լինի», «Քաջ Նազար», ինչպես նաև երգիծական գործեր՝ «Խեչոյի թուզը», «Շունն ու կատուն»։ Հանդես-ներկայացումներին մասնակցել են նաև պարախմբերը։

1945—1950 թթ. Խոյգան գյուղն ուներ քառաձայն երգչախումբ։ Այստեղ մեծ հանդես է կազմակերպվել՝ նվիրված Խ. Աբովյանի ծննդյան 150-ամյակին։

Արվեստագետ Արամայիս Աղամալյանը իրանահայերի

շրջանում մեծ համբավ ձեռք բերեց որպես թատերական բեմադրիչ։ Նա իր ողջ կյանքը նվիրեց հայ արվեստին ու թատրոնին, դարձավ ոչ միայն իրանահայ գաղութի, այլև պարսիկ ժողովրդի ճանաչված արվեստագետներից մեկը։

Հայաստանում նկարչական տեխնիկումն ավարտելուց հետո Արամայիս Աղամալյանը որոշ ժամանակ աշխատեց որպես դեկորատորի օգնական, այնուհետև 1930 թ. մեկնեց արտասահման։ Բեռլինում նա հաճախում է գեղարվեստական դպրոց, ապա մեկնում Միլան, իսկ կարճ ժամանակից հետո տեղափոխվում Փարիզ։ Այստեղ նա հնարավորություն է ստանում ծանոթանալու նաև բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ու Փարիզի հայ արվեստագետների հետ։ Երեք տարի Փարիզում մնալուց հետո Ա. Աղամալյանը 1934 թ. հաստատվում է Իրանում։ Մեկ տարի հետո, 1935 թ., նա Նոր Ջուղայում բեմադրում է «Սիավուշ և Սուդաբե» (հեղինակ՝ Գևորգ Դարֆի), «Փարիզի շրջմոլիկը», «Քին» դրամաները։

1939—1940 թթ. Աղամալյանը մեկնում է Թավրիզ, որտեղ Եփրատ Բարոյանի և Արման Հովսեփյանի (հետագայում մեծ ճանաչում գտած դերասան Արման) հետ ձեռնամուխ է լինում թատերական կյանքի զարգացմանը՝ 7 տարվա ընթացքում բեմադրելով շուրջ 11 ներկայացում։ Դրանք են՝ «Նամուս», «Հին ասեղածներ», «Սիավուշ և Սուդաբե», «Ռուս մարդիկ», («Սասունցի Դավիթ» տանկային շարասյան օգտին, ռուսերեն լեզվով), «Կորրադո», «Պատվի համար», Պեպո», «Թղթամոլի վախճանը» (վերջին երեքը՝ Եփրատ Բարոյանի հետ), «Հրեուհի», «Աշխարհի գատաստանը», «Բոռ» (Եփրատ Բարոյանի հետ)։

1946 թ. Աղամալյանը տեղափոխվում է Թեհրան, որտեղ համագործակցելով Թեհրանի երիտասարդ արվեստասիրաց թատերախմբի հետ, բեմադրում է երեք թատերգություն՝ «Սառա» (հեղինակ՝ Սամվել Խաչիկյան), «Պատվի համար», «Կարապի երգը»։

Աշխատակցելով ուրիշ գործող թատերախմբերի հետ՝

նա բեմադրում է «Ոսկե Մարին», «Պաղպաղասար աղբարը», «Մեծապատիվ մուրացկանները»[108]։

Օպերան Թավրիզի արվեստասեր բնակչության համար ուրախալի երևույթ էր, որի նախաձեռնողը հայերն էին։ 1935 թ. թավրիզահայ արվեստասերների ուժերով «Շիր-օ-խորշիդ» սրահում պարսկերեն ներկայացվեց Տիգրանյանի «Անուշ» օպերան (երգերը թարգմանել էր Թավրիզի Կենտրոնական հայկական դպրոցի պարսկերեն լեզվի ուսուցիչ Ախգարին)։

Անուշի դերում հանդես եկավ Ելենա Ավետիսյանը, Սարոյի դերերգը կատարում էր Ա. Մանուկյանը, Մոսիինը՝ Լևոն Գրիգորյանը[109]։

Իրանահայ մի շարք արվեստագետներ՝ Արամայիս Աղամալյանը, Արմանը, Սամվել Խաչիկյանը և ուրիշներ նշանակալից դեր են խաղացել նաև իրանական կինոարվեստի կազմավորման ու զարգացման գործում, հանդես գալով որպես բեմադրիչներ ու դերասաններ։

Իրանում «Աբի-Ռաբի» անունը կրող առաջին համր կինոկատարերգությունը նկարահանվել է 1920 թ., ռեժիսոր Հովհաննես Օհանյանի կողմից[110]։ Կինոբեմադրիչ, դերուսույց և դերասան Հ. Օհանյանը ծնվել է 1900 թ. Մեշհեդում։ Կրթությունը ստացել է Մոսկվայում. վերադառնալով Թեհրան՝ նվիրվել է կինոարվեստին։ Հ. Օհանյանը իր գործընկերների հետ հիմնում է Իրանում կինոարվեստի առաջին դպրոցը, որտեղ սկսում է դասավանդել նաև ինքը։ Հ. Օհանյանը նյութական ծանր վիճակի և պարսկերենին չտիրապետելու պատճառով հանդիպել է մի շարք դժվարությունների, շարունակ հալածվել։ 1960-ական թվականների սկզբներին նա «Սեթարեե սինամա» թերթում հանդես է գալիս ժամանակակից կինոնկարների մասին գրած հոդվածով, որը մեծ ու դրական արձագանք գտավ համայնքի և, մասնավորապես, մասնագետների շրջանում։ Հ. Օհանյանի վաստակը կինոարվեստում բարձր է գնահատվել միջազգային ֆեդերացիաների կողմից։ Կինոարվեստի միջազգային ֆեդերացիան նրան պարգևա-

տրել է հատուկ շքանշանով և պրոֆեսորի կոչում շնորհել[111]։

Կինեմատոգրաֆիան Իրանում զարգացավ 1920-ական թվականների վերջերին, երբ ոմն Բաբախան Մոնթազերին փոքր ապարատով սկսեց նկարահանել վավերագրական կինոնկար[112]։

Արդեն 1950-ական թվականների առաջին կեսին իրանական կինոարվեստում լայն գործունեություն ծավալեցին Մաջիդ Մոհսենին և Սամվել Խաչիկյանը, որոնք գրեթե մի ամբողջ տասնամյակ ստեղծեցին մի շարք կինոֆիլմեր։ Ինչպես նշում է արվեստագետ Ալի Նաջաֆին, Իրանում կինոարվեստի սկզբնավորումը պետք է վերագրել ռեժիսոր Ս. Խաչիկյանին[113]։

Իրանական կինոարվեստի ամենանշանավոր դեմքերից է Արմանը։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նպաստավոր պայմաններ են ստեղծվում թատերական կյանքի առաջընթացի համար։ Դա բեմական արվեստի նոր շրջան էր, երբ հայ տաղանդավոր դերասաններ Արմանը, Արամայիս Աղամալյանը, Եփրատ Բարոյանը և ուրիշներ ըստ կրսեցին պարբերաբար ներկայացումներ տալ։ Արմանը Ուրմիա քաղաքում հիմնադրում է «Կուլտուրական միությունը», որին կից գործում էր թատերախումբը։ Մեկը մյուսի հետևից բեմադրվում են «Ուշ լինի, նուշ լինի», «Աշխարհի դատաստանը», «Նամուս» ստեղծագործությունները, որոնց մեջ հիմնականում հանդես են գալիս նրա ընտանիքի անդամներն ու հարազատները։

Հետագայում Արմանը Թեհրանում մասնակցում է մի շարք ներկայացումների (հատկապես Կոստանյանի խմբում)։ Ծանոթանալով Սամվել Խաչիկյանի հետ՝ նա մասնակցում է վերջինիս «Սառա» և «Գորշ վարագույրներ» թատերգությունների բեմադրությանը, որոնք մեծ ընդունելություն գտան[114]։

Այդ տարիներին Արմանն իր թատերասեր գործընկերների հետ արդեն հիմնադրել էր «Թեհրանի երիտասարդ ար-

վետասիրաց թատերախումբը», որի կազմում ընդգրկվել էր 75 անդամ: Թատերախումբն ուներ իր խաղացանկը:

Թեհրանում Արմանի համբավը գրավում է «Դիանա» կինոստուդիայի տնօրեն Սանասարի ուշադրությունը, որը նրան հրավիրեց ստուդիա՝ նկարահանումների: Այստեղից էլ սկսվեց նրա առաջընթացը Իրանի կինոյում: Արմանը նկարահանվում է ռեժիսոր Ս. Խաչիկյանի «Շիրազի աղջիկը» ֆիլմում (որը «Գորշ վարագույրների» էկրանավորումն էր) գլխավոր հերոսի դերում: Այդ դերակատարումը մեծ ճանաչում բերեց նրան, և նա դասվեց լավագույն կինոդերասանների շարքը: Տաղանդավոր դերասանը նկարահանվել է նաև Ս. Խաչիկյանի «Արյուն և պատիվ», «Արկածների քառուղին», «Փոթորիկը մեր քաղաքում» կինոնկարներում: Ս. Խաչիկյանի սցենարով գրված «Գլխապտույտ» ժապավենի նկարահանման առիթով պարսիկ արվեստասեր հասարակությունը կազմակերպում է մեծարանքի երեկո[115]:

Արմանի ռեժիսորական տաղանդը դրսևորվեց հատկապես հայկական կինոնկարներ ստեղծելիս: Որոշ չափով օգտվելով Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունից՝ Արմանը ստեղծում է «Ծովի հարսը» հայկական կինոնկարը, որտեղ գլխավոր դերում հանդես է եկել ինքը, իսկ երգերը կատարում է իրանահայ հայտնի երգիչ Վիգեն Տերտերյանը[116]:

Արմանը նույնպիսի հաջողություն ունեցավ նաև կինոֆիլմերի երաժշտական ձևավորման բնագավառում: Իրանում առաջին անգամ Արմանը հատուկ երաժշտություն գրեց կինոյի համար: 1969 թ. նա մասնակցեց Մոսկվայում կայացած Միջազգային կինոփառատոնին, որտեղ ռեժիսոր Ս. Խաչիկյանի ցուցադրած «Մահվան ուղին» կինոնկարի գլխավոր դերակատարն էր, ֆիլմն արժանացավ հանդիսատեսի բարձր գնահատականին: Մոսկվայից վերադառնալիս Արմանը Երևանում հանդիպումներ ունեցավ հայ արվեստագետների ու կինեմատոգրաֆիստների հետ:

Նյութական և բարոյական դժվարին պայմաններում Ար-

մանը իրանական կինոարվեստի գոյության 26 տարիների ընթացքում ստեղծեց շուրջ 54 կինոնկար[117]:

Իրանի հայ կինոարվեստագետների մեջ ուրույն տեղ են գրավում Արփիկ Բաղդասարյանը և Արփի Հովհաննիսյանը: Ա. Բաղդասարյանի նկարահանած «Զախորդություն» և իրանական այլ կինոնկարները շահել են մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոնի ոսկե արծանիկը, իսկ Ա. Հովհաննիսյանի «Աղբյուր» ֆիլմը ճանաչվեց որպես լավագույն կինոժապավեններից մեկը[118]:

9. ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Անցյալ դարի երկրորդ կեսին հայ իրականության մեջ բուռն զարգացում ապրեց երգչախմբային արվեստը, որը նշանակալից տեղ էր գրավում նաև Իրանի հայության մշակութային կյանքում:

Թավրիզում մոտ հինսուն տարի առաջ գոյություն ուներ երաժշտասերների միություն, որի հիմնադիրն էր Թավրիզահայ ինքնուս երաժիշտ Արտաշես Տեր-Հովհաննիսյանը: Նրա աշակերտներից էր Լևոն Գրիգորյանը, որը շնորհակալ վաստակ ունի իրանահայության շրջանում երաժշտության զարգացման ու տարածման գործում:

Լ. Գրիգորյանը Պարսկաստանում ստեղծեց երաժիշտների շնորհալի սերունդ: Նա երգի և երաժշտության ուսուցիչ էր, հմուտ խմբավար և շնորհալի ջութակահար: 1904—1905 թթ. նա դասավանդում էր Ռեշտի հայկական, ապա Թավրիզի Հայկազյան-Թամարյան դպրոցներում[119]:

Լ. Գրիգորյանը երաժշտական սկզբնական կրթությունը ստացել է Թիֆլիսում՝ ուսանելով հայտնի ջութակահար Վասիլևի մոտ, այնուհետև կատարելագործվելու նպատակով 1910 թ. մեկնել է Բելգիա, որտեղ հաճախել է նշանավոր ջութակահար Թոմսոնի դպրոցը:

1912 թ. վերադառնալով Թավրիզ՝ Լ. Գրիգորյանը դասավանդում է թեմական դպրոցում: 1915—1916 թթ. Թավրիզում նա կազմակերպում է շուրջ 20 հոգուց բաղկացած նվագախումբ, որը գոյատևում է մինչև 1946 թ.: Նվագա-

խումբը մեծ համբավ էր վայելում քաղաքի երաժշտասեր հասարակայնության շրջանում[120]։

Հետագայում Լ. Գրիգորյանը տեղափոխվում է Թեհրան և այնտեղ ստեղծում «Գուսան» երգչախումբը, որը 1950—1951 թթ. միայն մի քանի համերգ տալուց հետո կազմալուծվում է։

Լ. Գրիգորյանի գրչին են պատկանում հայկական ժողովրդական և պարսկական մի շարք երգերի մշակումներ։ Նա առաջինն էր, որ թավրիզաբնակ պարսիկներին սովորեցրեց նվագել եվրոպական գործիքների վրա (ջութակ, դաշնամուր, սրինգ և այլն)։ Թավրիզում նա տարիներ շարունակ ձայնագրության և ջութակի դասեր էր տալիս գահաժառանգի զավակներին[121]։

Մեծ է Լ. Գրիգորյանի և նրա տոհմի վաստակը սիյուքահայ երաժշտական կյանքում։ Լ. Գրիգորյանի որդիները՝ Ռուբենը և Հաներին, ճանաչված ջութակահարներ են, իսկ նրանց կրտսեր եղբայրը՝ Զարեն, դաշնակահար։ Ռուբենը հետագայում դարձավ Թեհրանի սինֆոնիկ նվագախմբի դիրիժորը։ Նա նաև հրատարակել է պարսկական ժողովրդական երգերի իր մշակումների ժողովածուն[122]։

Ռ. Գրիգորյանը մի քանի տարի որպես տեսուչ աշխատել է Թեհրանի պետական երաժշտական հաստատությունում, եղել է երգչախմբի և նվագախմբիղեկավար, ստեղծել ինքնուրույն երաժշտական գործեր, կատարել հայկական, ինչպես նաև քրդական ժողովրդական երգերի մշակումներ, որոնց մի մասը 1952 թ. հրատարակել է։ Տեղափոխվելով ԱՄՆ՝ նա բնակություն է հաստատում Բոստոնում և անմիջապես հրավիրվում աշխատելու կոնսերվատորիայում որպես դասախոս-պրոֆեսոր։

Ռ. Գրիգորյանը կազմակերպել է նաև հայկական երգչախումբ, որը մեծ ճանաչում ուներ համայնքում։

Իրանահայ լավագույն ջութակահարներից էր Բաբկեն Թամրազյանը։ Նա ծնվել է Թավրիզում, նախնական երաժշտական կրթությունը ստացել Լևոն Գրիգորյանի մոտ։

Շուրջ հինգ տարի սովորելուց հետո 10 տարեկան Բաբկենին ծնողները ուղարկում են Թիֆլիս, որ ուսման զուգընթաց նա շարունակում է երաժշտական կրթությունը Թիֆլիսում, հայտնի ջութակահար Ֆիլբերդի մոտ։ Այնուհետև Բ. Թամրազյանն ընդունվում է Երևանի պետական կոնսերվատորիան՝ ուսանելով երգահան Անուշավան Տեր-Ղևոնդյանի մոտ։ 1933—1934 թթ. նա փայլուն ավարտում է կոնսերվատորիան։ Վերադառնալով Իրան՝ Բ. Թամրազյանը դառնում է Թեհրանի սիմֆոնիկ նվագախմբի առաջին ջութակահարը։ Նրա արվեստը բարձր են գնահատել խոշոր երաժիշտներ Ալ. Սպենդիարյանը, Անուշավան Տեր-Ղևոնդյանը, Ռոմանոս Մելիքյանը, Սալբիդոն Մելիքյանը, Արշակ Ադամյանը և ուրիշներ[123]։

Իրանահայ երաժշտական արվեստի հանրաճանաչ ներկայացուցիչներից էր Նիկոլ Գալանտերյանը։ Նա ծնվել է 1881 թ. Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքում։ Որոշ ժամանակ ապրել է Բուլղարիայում։ 1900—1903 թթ. սովորել է էջմիածնի Գևորգյան ճեմարանում և այն ավարտելուց հետո կրկին վերադարձել Բուլղարիա։ Մինչև 1910 թ. աշխատել է Բուլղարիայում, ապա՝ Թիֆլիսում։ 1910—1911 թթ. նա երաժշտություն է դասավանդել Սուխումիի մոտ գտնվող Յերևբևլա գյուղի հայկական դպրոցում։ Ինչպես վկայում է Ավ. Իսահակյանը, այստեղ Գալանտերյանը գրել է իր առաջին երգը։ Թիֆլիսում գտնվելու տարիներին նա Վ. Տերյանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի տեքստերով ստեղծում է մի քանի նոր երգեր, ինչպես նաև «Չարի վերջը» մանկական օպերան։ Ի դեպ, Գալանտերյանը համարվում է Տերյանի խոսքերով գրված լավագույն երգերի հեղինակներից մեկը։ Հետագայում Ն. Գալանտերյանը մշտական բնակություն հաստատեց Իրանում։

Ն. Գալանտերյանի ստեղծագործական ամենաբեղուն շրջանը սկսվում է 1920-ական թվականների կեսերից։ 1924—1932 թթ. նա գրում է մի քանի օպերա։ 1925 թ. երկրպագուների խնդրանքով տեղի է ունենում նրա առաջին համերգը, որից հետո Գալանտերյանը պարբերաբար[124] հանդես է գալիս համերգներով։ 1927 թ. Ն. Գալանտերյանը

գրում է իր առաջին լայնակտավ ստեղծագործությունը՝ Վ. Միրաքյանի «Լալվարի որսը» պոեմի հիման վրա ստեղծված օպերան։ Այն բեմադրվեց Թեհրանի զրադաշտականների ամառային թատրոնում։ 1931—1932 թթ. Ն. Գալանտերյանը գրում է Հովհ. Թումանյանի «Փարվանա» պոեմի թեմայով՝ համանուն և վրթ. Փափազյանի «Լուր-դա-լուր» պատմվածքի սյուժեով «Հովիվ» օպերաները։ Երգահանի մահվան պատճառով անավարտ է մնում «Անուշ» օպերան։ Նա հասցրեց գրել միայն նախերգանքն ու մի քանի հատվածներ։

Սակայն Ն. Գալանտերյանն ավելի շատ սիրված ու ճանաչված է իր քնարական երգերով ու ռոմանսներով, որոնց մեծ մասը՝ գրված Վ. Տերյանի, Մարգար Ղարաբեկյանի (Դև) և Արամ Երեմյանի տեքստերով, տեղ են գտել Երևանում հրատարակված «Երգարանում»[125]։

Ն. Գալանտերյանի անունը լայն ճանաչում ստացավ միայն նրա մահվանից հետո։ 1946—1947 թթ. Գալանտերյանի դուստրը՝ Սեդա Գալանտերյանը, երևան ուղարկեց նրա ստեղծագործությունների ձեռագրերը[126]։ Ն. Գալանտերյանին աշակերտել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Հովհաննես Բադալյանը։

Իրանահայ համայնքում հայտնի է վաստակաշատ երաժիշտ, երգահան և խմբավար Համբարձում Գրիգորյանի անունը։ Նա ծնվել է Թավրիզում, կրթությունը ստացել է Կենտրոնական թեմական դպրոցում։ Հ. Գրիգորյանն ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես պետական, այնպես էլ ազգային բազմաթիվ գործերում։ 1914—1915 թթ. նա աշխատում էր Ղազվինի հայկական դպրոցում որպես երաժշտության ուսուցիչ, իսկ 1917—1918 թթ.՝ Ռեշտում։ 1923 թ. Հեխոսլովակյան կառավարության թոշակով նա սովորում է Պրագայում, ապա, մոտ չորս տարի՝ Փարիզում։ Իրան վերադառնալուց հետո նա երկար տարիներ երաժշտություն է դասավանդում Քուշեշ-Դավթյան դպրոցում։ Մեծ է Հ. Գրիգորյանի վաստակը 1929 թ. 80 հոգուց բաղկացած «Կոմիտաս» երգչախմբի կազմակերպման գործում, որն իր հմուտ դեկա-

վարի շնորհիվ վայելում էր համայնքի սերն ու հարգանքը[127]։ Տասնամյակներ շարունակ երգչախումբը մեծ դեր է խաղացել հայ երգի տարածման գործում, նպաստել իրանահայության մշակութային կյանքի զարգացմանը։

Հ. Գրիգորյանի գրչին են պատկանում հարյուրից ավելի ստեղծագործություններ՝ խմբերգեր, մեներգեր, քնարական երգեր, ժողովրդական ու գուսանական երգերի մշակումներ։ Նա երգեր է գրել Ավետիք Իսահակյանի, Հովհ. Շիրազի և խորհրդային այլ բանաստեղծների խոսքերով։ Հ. Գրիգորյանը Կոմիտասի կյանքին ու գործունեությանը նվիրված ուսումնասիրության հեղինակ է[128]։

Թեհրանում գործում էին «Արմեն», «Հայերգ», «Գողթան» երգչախմբերը։ Թեհրանի ամենաերիտասարդ երգչախմբերից է «Անուշը», որիղեկավարն էր Հովիկ Գասպարյանը։ Բացի իր մշտական համերգներից, երգչախումբը ելույթներ էր ունենում նաև հեռուստատեսությամբ։ Նրա երգացանկում նշանակալի տեղ էին գրավում Կոմիտասի, Կարա-Մուրզայի, Սպիրիդոն Մելիքյանի, Ռոմանոս Մելիքյանի, Աշոտ Սաթյանի և ուրիշների խմբերգերը[129]։

Աշխարհի բազմաթիվ գաղթօջախներում, Իրանի քաղաքներում ու շրջաններում ունեցած ելույթների, ինչպես նաև հայրենասիրական գործունեության շնորհիվ Աշոտ Պատմագրյանը գարձել է Սփյուռքի ամենասիրված ու ճանաչված արվեստագետներից մեկը, երաժիշտ, որը լայնորեն ծանոթ է նաև հայրենաբնակ արվեստասերներին։

Ա. Պատմագրյանը ծնվել է Թավրիզում, սովորել տեղի Արամյան վարժարանում, ապա ուսումը շարունակել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ Նա ուներ երաժշտական բացառիկ ընդունակություններ։ Հայ երգի կոմիտասյան ավանդները շարունակելու ձգտումը Պատմագրյանին տանում է Գերմանիա, որտեղ նա սովորում է Բեռլինի Շտերնշես երաժշտանոցում և միաժամանակ հաճախում Ֆրիդրիխ Վիլհելմ Համալսարանի արվեստի պատմության ու գեղագիտության ֆակուլտետներին։

1926 թ. երիտասարդ երաժիշտը Փարիզում կազմակերպում է «Գուսան» երգչախումբը, որի համերգները մեծ ընդունելություն են գտնում հայ և օտար ունկնդիրների շրջանում: Ա. Պատմագրյանի փառքի ճամփաները ձգվում են մինչև Լոնդոն, Ալեքսանդրիա, Կահիրե, Երուսաղեմ, Բեյրութ, Հալեպ, Բաղդադ, ԱՄՆ և Լատինական Ամերիկայի երկրներ ու բազմաթիվ հայաշատ քաղաքներ: Այս բոլոր վայրերում նա կազմակերպում է համերգներ, հայ ժողովրդի զավակներին հասցնում ազգային երգը, նրանով պայքարում այլազգիների հետ ձուլվելու վտանգի դեմ:

Պատմագրյանի համերգների ծրագրերում Եկմալյանի, Կոմիտասի և այլ երգահանների ստեղծագործությունների հետ հնչում էին նաև սեփական խմբերգերը՝ «Յալալի», «Հարալե» և ուրիշներ: Նրա «Արտաս», «Իմ գարուն», «Օրոր», «Սիրերգ», «Դիլբար» և բազմաթիվ այլ մեներգերը մնայուն տեղ են գրավել սփյուռքահայ կատարողների երգացանկում, հնչում են նաև Երևանի ռադիոյով: Նա հեղինակ է մի շարք մանկական օպերաների, նվագախմբի և դաշնամուրի համար գրված ստեղծագործությունների[130]:

Դաշնակահարուհի Տանյա Խարատյանը երաժշտական սկզբնական կրթությունը ստացել է Մոսկվայում, ապա ավարտել Թիֆլիսի կոնսերվատորիան և աշխատել Փարիզում: 1930 թ. հաստատվելով Թեհրանում՝ նա սկսում է դաշնամուրի դասեր տալ: 1935 թ. նա դասավանդելու է հրավիրվում Թեհրանի կոնսերվատորիա: Տ. Խարատյանի շուրջ 400-ի հասնող աշակերտներից 25—30-ը կատարելագործված դաշնակահարներ են, դաշնամուրային արվեստի ուսուցիչներ: Տ. Խարատյանի մանկավարժական գործունեությունը բարձր է գնահատել հայ համայնքը[131]:

Իրանահայ ճանաչված երաժիշտներից են եղել երգահան Էմանուել Մելիք-Ասլանյանը և խմբավար Լորիս Ճրագնավորյանը, որոնք 1972 թ. արժանացել են Իրանի պետական շքանշանների[132]: Դեռևս պատերազմի տարիներին իր շնորհալի ելույթներով Թեհրանում մեծ ճանաչում էր ձեռք բերել դաշնակահար Վաչե Հասրաթյանը:

Դեռևս վաթսուն տարի առաջ, երբ Իրանում գոյություն չուներ գեղագիտական որևէ հասատատություն, Ելենա Ավետիսյանը Թավրիզում հիմնեց Իրանի առաջին պարի դպրոցը: Նա ժամանակին ժողովրդական օպերաների առաջին դերակատար-մեներգչուհին էր, բազմաթիվ դերերով հանդես էր եկել թատրոնում՝ ավելի քան կես դար հավատարիմ մնալով բեմին և իր նախասիրությանը: Հետագայում Ե. Ավետիսյանը տեղափոխվում է Թեհրան: 1960-ական թվականներին նրա աշակերտների թիվն արդեն հասնում էր 400-ի: Նրանք սովորում էին հայկական, իրանական և աշխարհի տարբեր ժողովուրդների պարեր՝ միաժամանակ հմտանալով նաև բալետային արվեստի մեջ:

Ե. Ավետիսյանը 1962 թ. հիմնեց Իրանի երգի-պարի առաջին անսամբլը[133], որի կազմում էին նրա 120 աշակերտներ[134]: Դպրոցը, որտեղ հաճախում էին հայ և պարսիկ աշակերտներ, գործում էր Իրանի մշակույթի և արվեստի մինիստրության կից[135]:

Իրանում պարարվեստի հիմնադիրներից է Սարգիս Ջանբազյանը: Նա ծնվել է 1912 թ. Բաթում քաղաքում, հետագայում մեկնել Լենինգրադ, մասնագիտացել թատերական պարարվեստի և ազգային պարերի բնագավառում: 1937 թ. գալով Իրան՝ կարճ ժամանակ անց հիմնել է բալետի գեղարվեստական ուսումնարան, որտեղ սովորել են ապագա բազմաթիվ տաղանդավոր արվեստագետներ: Բալետային և կովկասյան պարերի ուսուցմանը զուգահեռ նա ձգտում էր զարկ տալ նաև իրանական պարարվեստին: Ջանբազյանը Խորհրդային Միության հետ Իրանի մշակութային կապերի ընկերության (ВОКС-ի) անդամ էր: Տարբեր տոնակատարությունների կապակցությամբ նա մեծ սիրով հայուստ ծրագրեր էր մշակում: Ս. Ջանբազյանը ջանք ու եռանդ չի խնայել օգնելու պարարվեստի ուսումնարանի շենքի կառուցմանը[136]:

XVII դարում Իրանի հայկական գաղութն ունեցել է զարգացած գեղանկարչություն։ Նոր Ջուղայում էին համախմբվել երկրի ժամանակի լավագույն նկարիչները, գրքային մանրանկարչության, որմնանկարների և այլ ժանրերի վարպետները։ Նոր Ջուղայի նկարչական դպրոցը տվել է մի շարք հայտնի ու անհայտ մնացած շնորհալի նկարիչներ։ Այդ գեղանկարչական դպրոցում հատկապես բուռն վերելք ապրեց աշխարհիկ նկարչությունը, որը կրում էր եվրոպական և արևելյան արվեստների ուժեղ ազդեցությունը։ Հայ նկարիչներ Մինասը, Հովհաննես Մրքուզին, Բոգդան Սալթանովը, Հակոբ Ջուղայեցին և ուրիշներ իրենց նորաստեղծ ու ինքնատիպ արվեստով ճանաչում էին գտել ոչ միայն Իրանում, այլև նրա սահմաններից դուրս։ Ըստ պահպանված ավանդության, Ամենափրկիչ վանքի նկարների հեղինակը Հովհաննես վարդապետն է, որը Նոր Ջուղայի մշակույթի պատմության մեջ հայտնի է «Մրքուզ» (անարժան) մականունով[137]։

Մինասին են վերագրվում Շահ Աբաս Ա-ի պալատի որմնանկարների և մի շարք հայ խոջաների ապարանքների պահպանված նկարազարդումները[138]։

Բոգդան Սալթանովի պղնձե տախտակի վրա կատարած «Խորհրդավոր ընթրիքը» ստեղծագործությունը տեսնելուց հետո Ալեքսեյ Միխայլովիչ ցարը միջամտում է, որպեսզի Բոգդան Սալթանովը տեղափոխվի Մոսկվա։ Հետագայում նա Մոսկվայի պինակոթեկի առաջատար նկարիչներից մեկը դարձավ։

Մանրանկարիչ Հակոբ Ջուղայեցու վրձնին են պատկանում «Ալեքսանդր Մակեդոնացու պատմություն» և այլ հոյակապ մանրանկարները[139]։

Գեղանկարչական արվեստի բնագավառում նման վերելք ապրող գաղութը *XVII* դարի վերջերից սկսած ամբողջ երկու հարյուրամյակ լճացում ապրեց։ Գաղութի նկարչական կյանքն աշխուժացավ միայն *XIX* դարի երկրորդ կեսին, երբ

Հակոբ Հովնաթանյանի (1806—1881) համբավը լայն տարածում գտավ։ Նա իրանական արքունիքում ստացավ «Նաղշբաշի» («Նկարչապետ») տիտղոսը։

Արդեն դարիս 20-ական թվականներին Իրանի հայաշատ քաղաքներում ստեղծվեցին նկարիչների միություններ ու ընկերություններ։ Գաղութի գեղանկարչական արվեստի լավագույն ներկայացուցիչներից էր Անդրե Սևրյուգինը (Դարվիշ)։ Երիտասարդ տարիներին նա եղել էր եվրոպական մի քանի երկրներում, և նրա ստեղծագործություններում զգացվում էր Արևմուտքի արվեստի վարպետների ազդեցությունը։ Հարելով դասական ուղղություններին՝ գրքային մանրանկարչության ժանրին, Անդրե Սևրյուգինը 1920-ական թվականների կեսերին ձեռնամուխ է լինում Ֆիրդուսու «Շահնամեի» թեմաներով նկարների շարք ստեղծելու գործին։ Նրա ստեղծագործական կյանքի տասը տարիների արդյունք հանդիսացող այդ նկարները 1934 թ. ցուցադրվեցին Թեհրանում բացված ցուցահանդեսում, իսկ հաջորդ տարիներին՝ Բոմբեյում և Կալկաթայում։ 1936 թ. դրանք ցուցադրվեցին նաև Վիեննայում[140]։

Գաղութի գեղանկարչության զարգացմանը նպաստեցին նաև հայտնի արվեստագետ Սարգիս Խաչատրյանի երկու այցելություններն Իրան (1930—1931)։ Նա տեղի արքայական պալատների՝ Ալի Ղափուի, Չել-էլ Սուլթանի, Աշրաֆի աթոռանիստի, Նոր Ջուղայի հնագույն տների որմնանկարներն ուսումնասիրելու և վերարտադրելու համար իր շուրջն էր համախմբել մի խումբ հայ արվեստագետների։ Այդ անվանի արվեստագետի ներկայությունը Նոր Ջուղայում մեծ խթան հանդիսացավ երիտասարդ նկարիչների համար[141]։ Ս. Խաչատրյանը բնատուր տաղանդի ու երևակայության ուժով վերակերտում էր Սեֆյան Իրանի որմնանկարային արվեստի գրեթե ոչնչացած գլուխգործոցները։

Ս. Խաչատրյանի որմնանկարները երկու անգամ՝ 1932 և 1933 թթ. ցուցադրվեցին Փարիզում, 150 աշխատանքներ՝ Թեհրանում։ Նրա աշխատանքների պատճենների ցուցահանդեսներ են կազմակերպվել Նյու-Յորքում, Լոնդոնում, Կո-

պենհագենում, Ստոկհոլմում, Օսլոյում, Բեռլինում և Կահիրեում[142]։ Ս. Խաչատրյանի ստեղծագործության վրա որոշակիորեն նկատելի է իրանական արվեստի ազդեցությունը։

Հետպատերազմյան շրջանում ձևավորվեց իրանահայ արդի գեղանկարչությունը։

Ստեղծագործական իր վառ անհատականությամբ հատուկ տեղ է գրավում նկարիչ Ավագ Հայրապետյանը։ 1951 թ. նա մեկնեց Եվրոպա և մասնակցեց մի շարք ցուցահանդեսների՝ արժանանալով մեծ հաջողության։ Գույների ու երանգների ներդաշնակությամբ նրա ստեղծագործություններն ուրույն տեղ են գրավում ներկայիս իրանահայ գեղանկարչության մեջ։ Ա. Հայրապետյանի բնանկարներից առանձնապես ուշագրավ են «Ծառերով բնանկար» և «Պարսկական բնանկար» կտավները։ Դեռևս 1950-ական թվականներին նա ստեղծեց խաղաղությանը նվիրված մի շարք արժեքավոր ստեղծագործություններ, որոնցից հայտնի է «Ստորագրությունների հավաքումը ստոկհոլմյան կոչի տակ» կտավը։ Հայրապետյանի կենցաղային ժանրի լավագույն գործերից է «Թեհրանի շուկայում» նկարը[143]։

Նկարիչ և բանաստեղծ Դևը (Մարգար Ղարաբեգյան) իրանահայ գեղանկարչության խոշոր գեմքերից է։ Նա թե՛ իր արվեստանոցում և թե՛ Թեհրանի Հայկազյան դպրոցում դաստիարակել է բազմաթիվ նկարիչներ։ Նրա կտավներն ըստ արժանվույն գնահատվեցին 1946 թ. փետրվարին Իրանաասվեսական մշակութային կապի միության կողմից Թեհրանում բացված իրանական կերպարվեստի ցուցահանդեսում։ Նկատի ունենալով նրա երկար տարիների գործունեությունը՝ ժյուրին արժանի գտավ շքանշան շնորհել նրան։ Դևը Իրանի լուսավորության նախարարության որոշմամբ պարգևատրվեց Արվեստի շքանշանով[144]։

Նոր ջուղայեցի գեղանկարիչ Երվանդ Նահապետյանի ստեղծագործություններում վերարտադրվել է հասարակ մարդկանց անմխիթար կյանքը։ Նա բնապատկերների ֆոնի վրա ստեղծել է ողբերգական ու թախծոտ մարդկանց

անհրապույր միջավայրը։ Հատկապես աչքի է ընկնում նրա «Փողոց Սպահանում» կտավը։

Ե. Նահապետյանի համաքաղաքացի Սմբատ Կյուրեղյանն իր աշխատանքներում արտացոլել է գյուղական կյանքի բնորոշ պատկերները։ Այդ տեսակետից ուշագրավ են «Վարը», «Գյուղն ու գյուղացին» կտավները։ Կյուրեղյանն ունի նաև դիմանկարներ, որոնց մեջ դրսևորվել է նրա նուրբ դիտողականությունը։ Դրանցից է «Արաբի դիմանկարը»[145]։

Թավրիզաբնակ նկարիչ Աշոտ Քոլյանը հայտնի է որպես դիմանկարիչ և ստեղծել է ինքնամփոփ մարդկանց պատկերող մի շարք կտավներ։ Նրա տաղանդն ինքնատիպ ձևով դրսևորվեց նաև կիրառական արվեստի այնպիսի կարևորագույն ճյուղերից մեկում, ինչպիսին գորգագործությունն է։ Նկարչի էսքիզներում առավելապես նկատելի է հայկական գորգերի նմանությունը[146]։

Թեհրանի արվեստասիրաց դպրոցի շրջանավարտ էդվարդ Բալոյանը (գրաֆիկ) մրցանակ է շահել «Թամաշա» շաբաթաթերթի կողմից կազմակերպված հավաքական ցուցահանդեսում։ Մրցանակ շահած նկարը կոչվում է «Բանատրկյալներ»[147]։

Նկարիչ Միքայել Շահբազյանը բնանկարի ասպարեզում հետաքրքիր գործերի հեղինակ է։ Նրա վրձնին են պատկանում հայկական գյուղերի բանաստեղծական բնապատկերները։ Ուշագրավ են նաև նկարիչ Տիգրան Բաղիլի «Հոր դիմանկարը» և «Գյուղական տեսարան» կտավները։

Վերջին տասնամյակում արտասահմանյան երկրներում նկարչական կրթություն ստացած կամ արևմուտքի ազդեցությունը կրած նկարիչների մի ստվար մասը հետևում է մոդեռնիստական ուղղությանը։ Այդ նկարիչներից է կուբիզմին հարող Մարգո Գրիգորյանը, որի ճանաչված գործերից է «Աղջկա դիմանկարը»։ Նկարիչ Հարություն Մինասյանը հետևում է աբստրակցիոնիզմին, իսկ էդվարդ Այվազյանի համար երևույթները կառուցվում են գույների համադրությունների միջոցով։ Այդ ոճի հետևորդներից են Սեդրակ Նազարյանը[148] և ուրիշներ։

1970-ական թվականներին Թեհրանի ժամանակակից արվեստի թանգարանում ցուցադրված Արմենուհի Նահապետյանի «Հեղափոխության համար զոհվածները և ժողովուրդների սուգը» թեմայով ստեղծված ինը գեղանկարչական աշխատանքները դիտողների ուշադրության կենտրոնում են եղել: Բարձր գնահատականի են արժանացել նաև Արմինե Հովհաննիսյանի՝ տառապած մարդկանց պատկերող ստեղծագործությունները[149]:

Նկարիչ Աբրահամ Դուրգենյանը, որը մեծ աշխատանք է կատարել Նոր Ջուղայի շիրմաքարերի արձանագրությունների ու քանդակների վերականգնման ուղղությամբ, ուսումնասիրել է նաև Պերսեպոլիսի իրանական պատմական հուշարձանները ու աքեմենյան պալատների նշանավոր ավերակները, հայ և պարսիկ ժողովուրդների ճարտարապետական փոխառնչությունները և այլն[150]:

Սփյուռքահայ նկարիչների ստեղծագործություններին նվիրված Հայաստանի պետական պատկերասրահում բացված ցուցահանդեսում ուրույն տեղ ունեին Աբրահամ Դուրգենյանի և Հակոբ Վարգանյանի աշխատանքները[151]: Անգլիայի արվեստասեր հասարակության համար հայտնություն եղավ Գևորգյանի Լոնդոնի Հայ տանը կազմակերպված ցուցահանդեսը: Այստեղ ներկայացվել էին պատմական տապանաքարերի ընդօրինակումներ, XVII—XIX դդ. հայ խոջաների բնակարանների որմնանկարների վերարտադրություններ և գեղանկարչական աշխատանքներ, Սայաթ-Նովայի, Օմար Խայամի և այլ բանաստեղծների գործերի թեմաներով նկարներ[152]:

Իրանահայ արդի նկարիչների ստեղծագործությունները իրանական ժամանակակից արվեստի նմուշների հետ մեծ հաջողությամբ ցուցադրվել են նաև Միլանում:

Իրանահայ գաղութի ճարտարապետական հին հուշարձաններից է 1706 թ. Նոր Ջուղայում հիմնված Ամենափրկիչ վանքը: Ճարտարապետական այդ հուշարձանը բարձր պատերով ու շքեղ կամարներով մի շինություն է, որն ունի մզկիթ հիշեցնող գմբեթ: Հայկական ճարտարապետության

ոճով կառուցված տաճարի հատակից մեկուկես մետր բարձրության վրա սկսվող և մինչև գմբեթի ձեղունը[153] հասնող երկու դահլիճների ներքին պատերը զարդարված են կրոնական թեմաներով գունավոր յուղաներկ նկարներով և ոսկեգույն զարդաքանդակներով: Հոլանդական և իտալական ոճով կատարված այդ զարդաքանդակների հեղինակը XVII դարի հայ որմնանկարիչ Հովհաննես Մրքուզն է: Վանքի ոսկեզօծման ու նկարազարդման ծախսը կատարել է Խոջա Ավետիք Մարտիրոսյանը:

Նոր Ջուղայում կան հիշատակության արժանի ևս մի քանի ճարտարապետական հուշարձաններ, որոնցից է Բեթղեհեմի եկեղեցին: Այն կառուցվել է 1627—1635 թթ.՝ քաղաքի կենտրոնում: Տաճարն ամբողջությամբ զարդարված է որմնանկարներով, որոնք իրենց կատարման որակով ու արվեստով գերազանցում են Ամենափրկիչ վանքի որմնանկարներին[154]:

Իրենց մեծությամբ ու գեղեցիկ ձևավորումով հատուկ ուշադրության են արժանի ս. Ստեփանոս (1614), ս. Սարգիս (1659), ս. Գևորգ (1611), ս. Աստվածածին (1613) և ս. Մինաս (1659) եկեղեցիները:

1907 թ. Թադևոս Հարությունյանի («Նոր Ջուղայի պատմություն» գրքի հեղինակի որդին) միջոցներով կառուցվեց Նոր Ջուղայի մատենադարանի շենքը: 1931 թ. նկարիչ Սարգիս Խաչատրյանը ձևավորեց եռադահլիճը, մի քանի սենյակներ ունեցող նորակառույց թանգարան-մատենադարանը: Թանգարանում ցուցադրված իրերի մեջ առկա են մի շարք յուղաներկ նկարներ, որոնք պատկանում են իտալական նկարիչների վրձնին: Այստեղ է պահպանվում XV—XVI դարերի իտալացի նկարիչ Հաննիբալ Կարաչչիի «Հիսուսի հուղարկավորությունը» ստեղծագործությունը:

Թանգարանի արժեքավոր ցուցանմուշներից են «Քրիստոսը պսակը ձեռքին» և «Պողոս Առաքյալ» դիմանկարները, իսկ «Հայր Աբրահամ» օֆորտը մասնագետները վերագրում են Ռեմբրանդտին:

Թանգարանում առանձին բաժին են ներկայացնում հայ-

կական ասեղնագործության բազմազան նմուշները՝ թաշկինակներ, եկեղեցական զգեստներ և այլն, որոնց մեծ մասը ոսկեկար է. կան հին գորգեր, հայկական և պարսկական հին դրամների նմուշներ, Ջուղայի բնակիչներին բնորոշ տարազներով արձաններ, զարդանկարներ, մանրանկարներ և այլն[155], որոնք ազգագրական մեծ արժեք են ներկայացնում:

Հետաքրքիր են եկեղեցու սպասավորների խաչերով զարդարված հանդերձանքը, Աստվածաշնչի թեմաներով նկարները: Թանգարանի ուշագրավ նմուշներից են այն ինքնաշեն տառերն ու տպագրական մեքենան, որոնցով Խաչատուր Կեսարացին Իրանում տպագրել է առաջին գիրքը:

Մատենադարանն ունի 10.000 հնատիպ ու նոր գրքեր, որոնցից 6000-ը հայերեն են: Ձեռագրերի թիվը 683 է. դրանցից 34-ը գրված են մաղազաթի վրա: Գրականության մեծ մասը եկեղեցական բնույթի զանազան ավետարաններ, սաղմոսներ և քարոզագրքեր են:

Մատենադարանում է պահպանվում «Համատարած աշխարհացույցի» հայերեն քարտեզը, որը փորագրվել է իտալացի վարպետների ձեռքով և կազմվել է 1695 թ.՝ Ամստերդամում: Այդ հազվագյուտ քարտեզը ջուղայեցի վաճառականների նվերն է վանքին:

Մատենադարանի տպագիր գրքերից առավել ուշագրավ են 1640 թ. Խաչատուր Եպիսկոպոս Կեսարացու կողմից Պարսկաստանում (Նոր Ջուղա) և ընդհանրապես Միջին Արևվելքում տպված առաջին գիրքը՝ «Հարանց վարքը», 1512 թ. Վենետիկում տպված «Պարզաստումարը», հայերեն առաջին լրագրի՝ «Ազդարարի» ամբողջական հավաքածուն և այլ հազվագյուտ հրատարակություններ[156]:

ՎԵՐՋԱԲԱՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Մոհամմադ Ռեզա շահին հաջողվեց օտարերկրյա պետությունների օգնությամբ ճնշել պատմական նշանակություն ունեցող հեղափոխական երեք ալիքները (Ադրբեջանի և Քրդստանի դեմոկրատական շարժումը, Իրանի նավթային արդյունաբերության ազգայնացման համար մղվող պայքարը, 1962—1963 թվականների հոգևորականության շարժումները) և իր իշխանությունն ամրապնդել ամբողջ Իրանում:

Քաղաքական նոր հանգամանքներում Արևմտյան պետությունները, առաջին հերթին ԱՄՆ-ը, ձգտում էին Իրանում ամրապնդել իրենց դիրքերը, որն ավելի սրեց երկրում տիրող տնտեսական և սոցիալ-քաղաքական հգճաժամը: Այդ երկրների շահադիտական քաղաքականությունը կիրառվում էր «օգնության», «կոմունիստական վտանգից» Իրանը պաշտպանելու անվան տակ:

Շահը և նրա ընտանիքի անդամները Իրանի խոշոր կապիտալիստների շրջանում առաջատար տեղ էին գրավում և ուղղակի կամ անուղղակի մասնակցում իրականացվող բոլոր խոշոր եկամտաբեր ձեռնարկումներին:

Աշխատավոր ժողովրդի գերակշռող մեծամասնությունը զրկված էր գոյության ամենաանհրաժեշտ միջոցներից՝ սննդից, բնակարանից, բժշկական սպասարկումից: Հասարակության «վերնախավ» կազմող փոքրամասնությունը շահագործում էր ժողովրդին և շռայլում երկրի եկամուտը:

Ժողովրդական զանգվածների դժգոհությունը շահի հակաազգային բաղաքականությունից և Իրանում Միացյալ Նահանգների տնօրինությունից ծայրահեղ չափերի էր հասել:

1960-ական թվականների սկզբներին Իրանում ծավալվեց հակամիապետական և երկրում արտաքին մենաշնորհների դեմ սուր պայքար:

Համաժողովրդական խոշոր ընդհարումներից էին Թեհրանի, Թավրիզի, Ղոմի, Մեշհեդի, Շիրազի և այլ քաղաքների բնակչության 1963 թ. մայիսի «արյունոտ շաբաթվա» ելույթները, Խուզիստանի ու Սպահանի բանվորական ցույցերը:

1977 թ. հուլիսին Իրանի ազգային բուրժուազիայի «Ազգային ճակատ» կուսակցության ղեկավար Քարիմ Սանջաբին, կուսակցության անդամներ Շահիդուր Բախտիարը և Դարյուշ Ֆրուհարը բաց նամակով դիմեցին շահին, որով վկայակոչվում էին վերջինիս կողմից թույլ տրված քաղաքական ու տնտեսական սխալները: Խոսվում էր սահմանադրական օրենքների կոպիտ խախտումների, քաղաքական-տնտեսական վիճակի խարխլման մասին, որոնք երկրում հոսի ու ինֆլյացիայի առաջացման պատճառ էին դարձել:

Նամակի վերջում պահանջվում էր սահմանադրական օրենքների օբյեկտիվ կիրառում և շիական հիմունքներով գործող կառավարության ստեղծում[1]:

Հենվելով ժամանակակից տեխնիկայով զինված 700 հազարանոց[2] բանակի, ՍԱՎԱՔ-ի ու ոստիկանության վրա՝ շահն ամենևին հաշվի չէր առնում իր քաղաքական գծի դեմ ուղղված ընդադատությունը, համոզված լինելով, որ նման բանակի առկայության պայմաններում քաղաքական ոչ մի բնդվզում տեղի չի ունենա: Դժգոհությունները, սակայն, գրնալով մեծ ծավալ էին ընդունում:

Վարչակարգի դեմ ընդվզած առաջադեմ խավերի ու առաձնին գործիչների գործունեությունը խափանելու նպատակով կիրառված բռնությունն ու ՍԱՎԱՔ-ի օգնությամբ կազմակերպված պրովոկացիաները նպատակին չհասան: Ժողովրդական մասսաների և բնակչության բոլոր խավերի մեջ աճում էր դժգոհությունը, և շահական վարչակարգն այլևս անկարող էր կարգավորել երկրում ստեղծված քաղաքական ու տնտեսական դրությունը[3]:

1978 թ. հունվարի 9-ին Ղոմ քաղաքում հոգևորականության կոչով տեղի ունեցան ցույցեր, որոնց մասնակցում էին կրոնական ուսումնական հաստատությունների 4000 սաներն ու նրանց համախոհները, որոնք պահանջում էին վերացնել միապետությունը: Ցույցերն ավարտվեցին արյունահեղությամբ, սպանվեցին տասնյակ և վիրավորվեցին հարյուրավոր մարդիկ[4]:

Փաստորեն Ղոմում տեղի ունեցած դեպքերը Իրանի հեղափոխության սկիզբը հանդիսացան: Հակապետական հուզումները գնալով ծավալվում էին: Յուրաքանչյուր 40 օրվա վերջում Ղոմի գոհվածների հիշատակին Իրանի մեծ քաղաքներում տեղի էին ունենում ցույցեր: Թավրիզում կայացած ցույցի ժամանակ գոհվեց մոտ 400 մարդ[5]:

Համաժողովրդական հուզումների հետ միաժամանակ տեղի էին ունենում նաև գործադուլներ, որոնք ընդգրկում էին նավթային և այլ արդյունաբերական ճյուղերը, տրանսպորտը, կապը, բանկերը և մի շարք միհնարկություններն ու գերատեսչական հիմնարկությունները, այդ թվում նաև մասնավոր հաստատությունները:

Ցույցերի և գործադուլների հետևանքով վարչակարգը 1978 թ. սեպտեմբերի 9-ի լուսաբացին անսպասելիորեն ռազմական դրություն հայտարարեց, որի հետևանքով Թեհրանը վերածվեց սպանդանոցի: Զոհվեցին ավելի քան 5000 տղամարդ, կին ու երեխա: Այդ օրն անվանվեց «սև ուրբաթ»: Շատ զինվորներ հրաժարվում էին կրակ բացել ամբոխի վրա, նրանցից ոմանք գնդակահարում էին իրենց հրամանատարներին: Արյունահեղության ավարտից հետո Թեհրանում հրնչում էր «Մահ շահին և նրա ռեժիմին, մահ ամերիկյան իմպերիալիստներին» լոզունգը[6]:

Երկրի լիբերալ բուրժուազիայի մի մասը հոգևորականության հետ համատեղ պաշտոնական հայտարարություններում և լոզունգներում պահանջում էր իրավունքների ապահովում և առկա սահմանադրական օրենքների մեջ ազատությունների հնչակում: Նրանք դեմ չէին թագավորական կարգերի

պահպանմանը, սակայն գտնում էին, որ անհրաժեշտ է կիրառել «շահը պետք է կառավարի, այլ ոչ թե իշխի» սկզբունքը: Նշված լիբերալներից ոմանք, ինչպես այաթոլլահ Շարիաթմադարին և դոկտ. Սանջաբին, դեմ չէին անգամ Մոհամմադ Ռեզա շահի կառավարելուն, սակայն վերջինս պետք է իճհավատանորեն բացահայտեր իր թերությունները և իր կողմից թալանված հարստությունը վերադարձներ ժողովրդին: Ոմանք էլ, ինչպես Բազերգանը և նրա համախոհները, կողմնակից էին թագավորության գոյությանը իբրև հասարակական ավանդույթ, սակայն չէին ուզում հանդուրժել Մոհամմադ Ռեզա շահին, որն այնքան հանցագործություններ պատճառ էր դարձել. այլ կերպ ասած՝ թագավորական կարգերի պահպանման համար շահի վերացումն անհրաժեշտություն էր դառնում[7]:

1979 թ. իրանական ժողովուրդների ազատագրական պայքարում նախ դեմոկրատական կազմակերպությունների մեջ հաղթական հաստատությամբ ու կազմակերպվածությամբ աչքի էր ընկնում ժողովրդական կուսակցությունը, որն իր 37-ամյա գոյության ընթացքում ընդամենը ութ տարի է լեգալ գործունեություն ունեցել[8]:

Սկսած 1975 թ. իր չորսամյա ընդհատակյա գործունեության ընթացքում կուսակցությունը չկարողացավ ամբողջությամբ վերացնել տարիներ շարունակ վարչակարգի կողմից իրեն հասցված ծանր վերքերը: Այնուհանդերձ, միապետական կարգերի տապալման գործում նա իր ակտիվ մասնակցությունն ունեցավ:

Բացի ժողովրդական կուսակցությունից հակաշահական և արևմտյան պետությունների դեմ պայքար էին ծավալել նաև Իրանում լայն հանրաճանաչում գտած ֆիդայիների և մուջահիդների երկու կազմակերպությունները, որոնք իրենց մասնայականությամբ, կազմակերպվածությամբ և մարտունակությամբ գտնվում էին պայքարի առաջին գծում:

Իրադարձությունների ընթացքը երկյուղ էր առաջացրել ինչպես Խոմեյնու և հոգևորականության մյուս առաջնորդների, այնպես էլ ամերիկյան դիտորդների շրջանում: Այդ

առթիվ «Թայմ» հանդեսը գրել էր. «Զինվորականների և զինված բնակչության միջև բռնկված արյունալի բախումները Իրանի հաղթական կյանքում երևան հանեցին երկու կարևոր հանգամանք. մեկն այն էր, որ մարտնչող մարքսիստական ուժերը կարող էին ավելի զորեղ գտնվել, քան ենթադրվում էր, երկրորդը՝ Խոմեյնին ամբողջությամբ չէր առաջնորդում հեղափոխությունը, չնայած նա մեծ վարպետությամբ ուղղություն էր տալիս: Այաթոլլահը զենքի դիմելու ոչ մի կոչ չարեց: Մոլլաները փողոցներում ուղղակի ճգնում էին հասկացնել բոլորին, որ դեռ չի հասել զինված հեղափոխության պահը: Ավտոմեքենաները բարձրախոսներով շրջում էին ավիաբազայի շրջակայքում, հաղորդում ցուցարարներին ուղղված կոչը՝ ցրվել իրենց տները: Այն, որոշ աղբյուրների տվյալներով, հենց Խոմեյնու նպատակադրված ուղերձն էր ... սակայն բարձրախոսներից արտասանված բառերը խեղդվում էին բախումների և սանիտարական մեքենաների ազդանշանների մեջ»[9]:

Դեռևս 1960-ական թվականների վերջերին այաթոլլահ Խոմեյնին մտքեր էր հայտնում Իրանում իսլամական հանրապետություն ստեղծելու մասին, որը պետք է հիմնվեր ոչ թե հասարակության կողմից մշակված, այլ դարերում և շարիաթում հիշատակված հոգևոր օրենքների վրա:

Խոմեյնին անհանդուրժողաբար էր վերաբերվում «ոչ իսլամական» դեմոկրատիային, որը, նրա կարծիքով, անջատում էր հաղթականությունը կրոնից:

Երկրում հառնող դար տևած կամայականությունը, պետական գործիչների կաշառակերությունը, բնակչության տարբական իրավունքներից զրկելը, անաբեկելը, ճնշումը սպառել էին ժողովրդի համբերությունը և մեծ դժգոհությունների տեղիք տվել:

Առաջադիմական կուսակցությունների ու կազմակերպությունների բացակայության, դեմոկրատական ուժերը ճնշելու պայմաններում Իրանում գործող 80 հազար մզկիթներ[10] և նրանց ենթակայության տակ գտնվող հաստատությունները դարձել էին այն միակ վայրը, որտեղ կարելի էր խոսել երկ-

ռում տիրող միապետական կարգերի և Իրանում ատատամանման երկրների բարերի ու ապրելակերպի մասին, որը և օգտագործեց հոգևորականությունն իր դիրերն ամրապնդելու և իշխանությունը նվաճելու համար:

Հոգևորականության նպատակների իրականացմանը նպաստեց նաև երկրի լիբերալ բուրժուազիայի հաշտվողական հաղթականությունը, որն անզոր գտնվեց առաջնորդել ընկրկված հեղափոխությունը:

Բռնապետական նման վարչակարգի, արևմտյան պետությունների, հատկապես Միացյալ Նահանգների շահախնդիր հաղթականության դեմ բռնկված հեղափոխությանը մասնակցեցին երկրի բոլոր առաջադիմական ուժերը, հաղթական տարբեր հոսանքների և Իրանում ապրող այլ ազգերի ներկայացուցիչները, այդ թվում և հայերը: 1979 թ. փետրվարի 12-ը հռչակվեց հաղթանակի օր: Հոգևորականությունը, անտեսելով հեղափոխությանը մասնակցած մյուս ուժերին, իրագործեց իշխանությունը նվաճելու իր կողմից նախօրոք մշակված ծրագիրը և անմիջապես առաջին նշանակումները կատարեց պետության և կառավարման տարբեր օղակներում:

Իրանի ազգային փոխհամաձայնությունների շարքում առաջադեմ հայացքներ ունեցող մասը իր անմիջական մասնակցությունն ունեցավ երկրում ծավալված համաժողովրդական շարժումներին: 1978 թ. նոյեմբերին, ինչպես նաև հեղափոխության ընթացքում մի շարք քաղաքներում ձերբակիվզնցին ու կողոպտվեցին թե՛ պարսիկների և թե՛ հայերի խանութները, վաճառատները, ռեստորանները, կինոթատրոնները, հատկապես ոգելից խմիչքների ու երշիկեղենի առևտրով զբաղվող բազմաթիվ հայերի խանութներն ու գործարանները[11]:

Շահի և արևմտյան երկրների շահախնդիր քաղաքականության դեմ բռնկված ցույցերին, գործադուլներին ու գիված ելույթներին Իրանում ապրող հղերի, բելուչների, քուրմ-

մենների և ազգային մյուս փոքրամասնությունների հետ համատեղ մասնակցում էին նաև հայերը:

Ազատության համար մղվող պայքարում զոհվածների հուղարկավորության առթիվ կայանալիք ընդհանուր բողոքի ցույցերի նախօրյակին հատուկ հրամանագրով Թեհրանի ռազմական կոմենդանտ է նշանակվում գեներալ Ռեզա Ազիմին, որի պատասխանատվությունը տարածվում է նաև Թեհրանի հայաբնակ թաղամասերի վրա: Ազիմին հրամայում է ցույցերը ցրել զենքի կիրառմամբ, ինչի հետևանքով զոհվում է մեծ թվով մարդիկ: Ցույցերը ցրելու ժամանակ զոհվում է նաև հայ երիտասարդ Ռուբեն Ղազարյանը[12]:

Ռուբենի հուղարկավորության օրը՝ փետրվարի 14-ին, Թեհրանի հայ համայնքի ներկայացուցիչները, հոգևորականության հետ միասին, մասնակցում են նրա հոգեհանգստին: Հոգեհանգստի ավարտից հետո հազարավոր մարդիկ, հայերի գլխավորությամբ, ուղևորվում են Ռուբենի հուղարկավորության վայր: Ճանապարհին նրանց միանում են նաև մյուս ազգերի ներկայացուցիչները: Ռուբենի հուղարկավորության արարողությունը դարձավ հակակառավարական հզոր ցույց, որին մասնակցեցին հարյուր հազարավոր մարդիկ[13]:

Ռուբենի հուղարկավորության արարողությունից հետո հայերը ակտիվ մասնակցություն ունեցան Թեհրանի ռադիոկայանի գրավման գործողություններին: Ռադիոկայանը գրավվեց 1979 թ. փետրվարի 14-ին հեղափոխական ուժերի կողմից կատարված հզոր հարձակման ժամանակ[14]:

Հակաշահական այդ պայքարին ակտիվորեն մասնակցել է նաև Իրանի ուսանողության «Ջերիֆիայե ֆեդայիե խալք» կազմակերպության անդամ Մարտիկ Ղազարյանը, որն այդ հուզումների հետևանքով դարձավ[15]:

Ղազարյանի օրինակով Իրանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ազատախոհ գաղա-

փարներով տոգորված և չաճի զնդաններից ազատված առաջադեմ ուսանողները հայկական համայնքի բոլոր հաստատություններում, միություններում, դպրոցներում, թատերական խմբակներում, մարզամշակութային վայրերում, ինչպես նաև Նարմաֆ, Մաշիդիե և Հեշմաթիե հայկական բանվորական թաղամասերում հայրենասիրական և ազատագրական ծավալուն աշխատանք էին տանում:

1979 թ. փետրվարի 9—11-ի գինված ապստամբության օրերին հայաբնակ Նարմաֆ թաղամասի մոտ գտնվող Ֆարահաբադի ռազմական օդային ուժերի կրասեր հրամանատարական կազմը, որը հեղափոխության թեժ օրերին համակրանքով էր լցվել վարչակարգի դեմ բնդվզող կուսակցությունների և կազմակերպությունների նկատմամբ, ապստամբեց, և նրա գիշերային գինված գործողություններին մասնակից դարձան զորամասի շրջակայքում բնակվող բազմաթիվ հայ երիտասարդներ ու առանձին ընտանիքներ: Մաշիդիե և Հեշմաթիե հայկական թաղամասերի միջև գտնվող զորամասերը գրավելու գործողություններին իրենց անմիջական մասնակցությունն ունեցան թեհրանահայ երիտասարդները:

Այդ ընթացքում հեղափոխականների մոտ պակասում էր զինամթերքը, և կառավարական տանկերը թաղամի տարբեր մասերում նշում էին հակապետական ցույցերը: Բազմաթիվ հայ ընտանիքներ տանկերը հրկիզելու նպատակով պատրաստում էին դյուրավառ հեղուկներով լցված շշեր:

Իրանահայ համայնքի առաջադեմ ներկայացուցաչներն իրենց մասնակցությունն են ունեցել ժամանակավոր հեղափոխական կոմիտեների աշխատանքներին, հատկապես այն կոմիտեների, որոնք ստեղծվել էին հայկական Հեշմաթիե, Մաշիդիե և այլ թաղամասերում:

Թեհրանի և մյուս քաղաքների որոշ թաղամասերում ստեղծվել էին թաղերի պաշտպանության խմբակներ[16]: Հայկական թաղամասերում հայ երիտասարդներից կազմվել էին ճամանատիպ խմբակներ: Նրանց հիմնական խնդիրն էր թաղամասերի պաշտպանությունը, վիրավորների բուժումը և

բնակչության սննդով ապահովելը, իսկ բռնագրաված զենքերով պաշտպանվում էին զորքերի հարձակումներից: Այդ գինված ընդհարումների ժամանակ իրև կենտրոն օգտագործում էին հայկական դպրոցներն ու միությունները:

Հետագայում ելույթ ունենալով Իրանի մեջլիսում՝ հարավային իրանահայության պատգամավոր Հրաչ Խաչատրյանը նշեց, որ հայերի մեծամասնությունն իր ակտիվ դերն ունեցավ Իրանի հեղափոխական պայքարում[17]:

Բռնապետական կարգերի և արտասահմանյան երկրների շահադետ հաղթականության դեմ Իրանի մյուս ժողովուրդների հետ պայքարի ելած իրանահայ համայնքի ազատասեր մարտիկների մասին հարուստ տեղեկություններ կան պարսկական աղբյուրներում: Օրինակ՝ 1979 թ. հուլիսի 25-ին «Էթթելաաթ» թերթում տպագրվեցին հետևյալ տողերը. «Միապետական լծից ազատագրվելու և հասարակական ազատություն ձեռքբերելու համար Իրանի մյուս խիզախ ժողովուրդների հետ համատեղ ոտի ելավ նաև իրանահայ համայնքը և առաջ բերթացավ միջև միապետական Փեհլևիի ռեժիմի տապալումը: Իսկ դրանից հետո հեղափոխության ձեռքբերումների և հասարակական ու ազգային իրավունքների ամրապնդման գործում իր արդյունավետ մասնակցությունն ունեցավ»[18]:

1979 թ. փետրվարի 11-ին տապալվեցին 2500 տարվա վաղեմություն ունեցող շահական կարգերը, և Իրանը հրդչակվեց Իսլամական հանրապետություն:

1979 թ. հունիսին հրապարակվեց ժամանակավոր կառավարության և իրավագետների մասնակցությամբ կազմված սահմանադրության նախագիծը, որը քննարկվեց մամուլում: Նախագծի դեմ հանդես եկան ձախ և բուրժուադեմոկրատական կուսակցությունները: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ բարձր հոգևորականությունը չհամարձակվեց սահմանադիր ժողով հրավիրել, և առանց օրենսդրական իշխանությունների մասնակցության սահմանադրական օրենքի վերջնական քննարկման համար ստեղծվեց «Իրազեկների խորհուրդ» («Մաջլես-ե-խերբեգան»): Միաժամանակ հակասահմանադրական շարժումը նշելու նպատակով մշակեց մամուլի օրենք, որով

կտրականապես արգելվում էր «հակախալամական» նյութերի հրապարակությունը[19]:

Նոր սահմանադրության համաձայն, որը կազմված է դուրանի պատվիրանների և շարիաթի օրենքների հիման վրա, Իրանի իսլամական հանրապետությունը ներկայացնում է այնպիսի հասարակարգ, որը գրեթե ամբողջովին հիմնված է կրոնական դավանանքի վրա: Սահմանադրության համաձայն բոլոր օրենքները և որոշումները, ինչպես նաև սահմանադրական բոլոր հոդվածները պետք է համապատասխանեին իսլամի սկզբունքներին: Իսլամական հանրապետության ատվածաբանների պահանջով հաստատվում է «վելայաթե ֆաղիհ»*, այսինքն հոգևորական միաձնյա ղեկավարություն, իշխանության ղեկավար է նշանակվում երկրի բարձրագույն կրոնապետը:

Իսլամական հանրապետության ղեկավար գործիչները ազգային հարցում էական ոչ մի փոփոխություն չմտցրին:

Ինչպես նախկին, այնպես էլ այժմյան կառավարությունը առաջնորդվում է այն սկզբունքով, որ բազմազգ Իրանը փլուզումից փրկելու համար անհրաժեշտ է միայն կենտրոնացված հզոր պետական իշխանություն: Երկրում ազգային միասնության վերաբերյալ կոչերը դարձել էին իսլամական առաջնորդների, այդ թվում նաև Խոմեյնու բոլոր ելույթների ատաղձը: Վերջինիս հայտարարության համաձայն Իրանում բնակվող ոչ պարսիկ մահմեդականների՝ ադրբեջանցիների, լռերի, արաբների, բելուջների միջև ոչ մի տարբերություն չկա, քանի որ նրանք իրենց հոգևոր կապերով, մշակութային ավանդույթներով սերտորեն միացած մահմեդականներ են, միասնական համայնքի անդամներ[20]: Այդ շրջանում առաջնորդին փոխարինող այաթոլլահ Մոնթազերին պնդում էր շիաների և սուննիների հոգևոր միասնության գոյությունը և հայտարարում, որ «Ղուրանը կհանդիսանա իրանական ժողովրդի սահմանադրությունը»[21]: Սակայն շիա հոգևոր առաջնորդների ճարտգները չվերացրին դարեր շարունակ գոյություն ունեցող շիաների և սուննիների կրոնական հակասությունները:

Բոլոր ազգային փոքրամասնությունները, որոնք ակտիվ մասնակցություն էին ունեցել իսլամական կարգերի հաստատման համար ծավալված համաժողովրդական պայքարին, մեծ հույսերով սպասում էին երկրի նոր սահմանադրությանը: Սակայն հիմնական օրենքի սահմաններում ազգային փոքրամասնությունների իրավունքները չպաշտպանվեցին:

Հակառակ Քրդստանի, Իրանական Ադրբեջանի և Խուզիստանի մի շարք շրջաններում ծագած բնակչության խռովություններին՝ Իրանի նոր սահմանադրության մեջ ազգային իճճավարության վերաբերյալ ոչ մի կետ չմտցվեց: Ինչպես Իրանում գործող նախորդ սահմանադրությունը, այնպես էլ իսլամական հիմնական օրենքը երկրի բնակչության լեզվական և էթնիկական առանձնահատկություններին ոչ մի կարևորություն չտվեց՝ անտեսելով Իրանում գոյություն ունեցող ազգությունների:

Չնայած սահմանադրության 19-րդ հոդվածում նշված է, որ Իրանի ժողովուրդը, առանց ազգային կամ ցեղային խտրականության, ունի հավասար իրավունքներ, և գույնը, ցեղն ու լեզուն իրավունք չեն վերապահում որևէ խմբին վերադասելու մյուսներից, սակայն ազգություններ կամ ազգային բաժանումներ չի ճանաչում, ուստի երկրում բնակվող ոչ մահմեդական ազգերը ճանաչվում են որպես կրոնական փոքրամասնություններ և ոչ իբրև ազգային միավոր: Ազգային միավորի շրջանումը պետք է համարել այնպիսի պաշտոնական հաղթականություն, որը տասնամյակներ շարունակ վարել են Իրանի իշխանությունները:

Կրոնական փոքրամասնությունների իրավունքները տեղ են գտել հիմնական օրենքի 13-րդ, 15-րդ, 26-րդ և 64-րդ հոդվածներում: Վերոհիշյալ չորս հոդվածներից բացի հիմնական օրենքը պարունակում է նաև մի քանի ուրիշ ենթահոդվածներ, որոնց մեջ ևս կրոնական փոքրամասնությունների վերաբերյալ կետեր կան:

Շահական վարչակարգի անկումից հետո Իսլամական հանրապետության առաջնորդների կողմից երկրի հասարա-

կական-բաղաքական, տնտեսական և պետական, անգամ բաղաքացիների անձնական շահերի ոլորտում մահմեդական արխաիկ օրենքների թելադրանքով անողոքաբար հետապընդվում է այն ամենը, ինչ բացասական ներգործություն կարող է ունենալ գոյություն ունեցող վարչակարգի վրա:

Հետզհետե ի չիք դարձան մինչև Իսլամական հանրապետության հաստատումը երկրի ազգային-կրոնական փոքրամասնությունների իրավունքների պահպանման վերաբերյալ իսլամական առաջնորդների բոլոր հայտարարությունները: Հակառակ պատկեր սաացավ դեռևս Փարիզում այաթոլլահ Խոմեյնիի այն հայտարարությունը, ըստ որի հաղթանակից հետո «... փոքրամասնություններ ազատ կլինեն որոշելու իրենց ճակատագիրը՝ հարգելով Իրանի հողային ամբողջականությունը. նրանք բոլոր մահմեդական եղբայրների հետ կվայելեն հավասար օրենքներ, և նրանց կվերադարձվեն իրենցից կորզված իրավունքները»[22]: Անտեսվեցին ազգային-կրոնական փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ «Ռեյտեր» գործակալության հայտարարած այաթոլլահ Շարիաթմադարու բարձրագոչ խոսումները[23] և այլն:

1981 թ. նոյեմբերին հրապարակվում է Թեհրանի կրթական ընդհանուր վարչության 20 կետերից բաղկացած շրջաբերականը, որը հակասելով երկրի հիմնական օրենքի 15-րդ հոդվածին՝ արգելում է կրոնական փոքրամասնություններին, այդ թվում և հայերին, դպրոցներում դասավանդել մայրենի լեզու: Դրա հետևանքով հայկական դպրոցների ուսուցչական և վարչական կազմի զգալի մասը փոխարինվեց պարսիկներով:

Կրթական ասպարեզում առաջացած խոչընդոտները, սակայն, զարկ տվեցին համայնքի մշակութային կյանքի աշխուժացմանը: Վարչակարգն անտեսելով հիմնական օրենքի 19, 20, 23, 26 հոդվածները կրոնական փոքրամասնություններին, այդ թվում և հայերին երբեմն զրկում է որոշ պետական հիմնարկներում պատասխանատու աշխատանքից[24]:

Հայ կանանց պարտադրեցին աշխատանքի ժամանակ և հասարակական վայրերում մահմեդական կանանց օրինակով կրել երկարաթև հագուստ, գլուխը ծածկել շղարշով և այլ կարգի սահմանափակումներ:

Ստեղծված բաղաքական իրավիճակը հանդես է գալիս որպես պահպանողականների և հետադիմականների բաղաքական շահերին նպաստող հանգամանք և պատահական չէ, որ շիա կղերականները անցնելով իշխանության գլուխ՝ տապալված շահական վարչակարգի բուրժուական ապրելակերպի փոխարեն ոչ թե հաստատեցին իրանական ժողովրդի պահանջած դեմոկրատական կարգերը, այլ այն փոխարինեցին առաջադիմական վերափոխումներն արգելակող, պահպանողական, իր դարն ապրած բարոյական չափանիշներով:

Ստեղծված բաղաքական պայմանների հետևանքով նոսրանում է մինչ իսլամական կարգերի հաստատումը Իրանում բնակվող շուրջ 200 հազար հայ բնակչության թիվը:

АРМЯНСКАЯ ОБЩИНА ИРАНА
в 1941—1979 гг.

Резюме

Армянская община в Иране—одна из самых древних и крупных зарубежных армянских колоний. Еще в VI в. до н. э. в Иране имелось армянское население. Во времена Ахеменидов оно состояло, в основном, из исполнявших вассальные обязанности армянских войсковых частей, а также торговцев и ремесленников. Однако четко сформировалась иранская армянская колония лишь в период правления Сефевидов, когда были созданы постоянные епархии со всеми своими национальными и культурными атрибутами.

В годы первой мировой войны, вследствие организованного младотурками геноцида армян, сотни тысяч армян вынуждены были бежать из Западной Армении в разные страны, пополнив население имевшихся там армянских колоний. В этот период значительно расширился армянский спюрк (диаспора). Отметим, однако, что нынешние иранские армяне—в основном потомки армян, насильственно выселенных Сефевидами из Араратской долины в 1603 г.

Для рассматриваемого периода характерно угнетение крестьянства феодалами и шахской властью. Экономическое разорение крестьян вынуждало их к массовому переселению в город. Это привело к обезлюдению многочисленных армянских сел, исчезновению некоторых гаваров, населенных армянами. Изменилось соотношение численности городского и сельского населения колонии. Армянское население колонии, как и другие народности Ирана, представляло пеструю картину по своей социально-экономической структуре. Среди армян преобладали кустари-ремесленники, рабочие, служащие, мелкие торговцы и предприниматели. Сравнительно небольшой процент составляла крупная промышленная и торговая буржуазия. Значительным было количество интеллигенции—преподавателей, врачей, юристов, художников, писателей, журналистов. Неоспорим большой вклад армянского населения в развитие промышленности и сельского хозяйства, торговли, науки, искусства, культуры страны.

Временное пребывание в Иране частей Советской Армии (с 25 августа 1941 г.) придало национально-освободительному движению новый размах, в стране были созданы политические партии и демократические организации. Вновь стали издаваться прогрессивные газеты и журналы.

Советский Союз, проводивший в годы войны в отношении Ирана политику, способствовавшую стабилизации взаимоотношений между двумя странами, снискал уважение и симпатии иранского народа.

Деятельность прогрессивных слоев иранской армянской колонии в эти годы была проникнута теплыми чувствами к Советскому Союзу и матери-родине—Советской Армении, что было обусловлено также характером политики Советского Союза в Иране.

Представители армянского народа в рядах коммунистической и народной партии Ирана (Туде) активно участвовали в борьбе прогрессивных сил этой страны, а также в национально-демократических движениях.

В тяжелый период, когда демократические движения народов Ирана жестко подавлялись, в борьбе на-

родной партии участвовали, наряду с представителями других народностей, также прогрессивные силы иранских армян. Имена Вардана Салаханяна, Галуста (Кости) Захарянца, Арсена Ованнисяна и многих других заняли достойное место среди имен героев освободительного движения Ирана.

В годы войны продолжалась борьба между прогрессивными и реакционными силами внутри армянской общины Ирана.

С большим воодушевлением восприняли иранские армяне в конце 1945 года постановление правительства Советской Армении о репатриации зарубежных армян на родину. В массовой репатриации 1946 года больше всего было иранских армян—20597 человек.

Несмотря на чинимые иранской администрацией препятствия, благодаря последовательным усилиям советского посольства и в дальнейшем самый большой процент среди репатриантов—по персональным приглашениям и малыми группами—составляли иранские армяне.

Под благотворным влиянием очагов армянской культуры на Кавказе, в Индии и других странах, в иранской армянской колонии в первой половине XIX в., впервые создаются школы нового типа. Кроме национальных школ в Тегеране, других городах и гаварах имелись также частные школы, детские сады, библиотеки и музеи. Наряду с развитием иранской армянской литературы в этот период возникает и переводческая литература.

Важную роль в сохранении и популяризации армянской культуры в иранской армянской колонии сыграл театр. Представителями интеллигенции—поклонниками театрального искусства—создаются общества и союзы. Оживлению театральной жизни колонии весьма спо-

собствовали талантливые армянские артисты—Ов. Абелян, М. Манвелян, позже В. Папазян и другие. Неоспорим тот факт, что армянские артисты и кинематографисты весьма способствовали подъему национального театра и кино Ирана.

После падения в 1979 г. шахского режима, вождями Исламской республики преследуется все то, что может отрицательно повлиять на существующий режим в общественно-политической, экономической сферах, даже в сфере личных интересов граждан. Заметно игнорируются права национальных меньшинств, набирает силу национальная дискриминация.

В сложившейся политической ситуации численность армянского населения в стране, составлявшая до установления Исламской республики около 200 тысяч человек, постепенно сокращается.

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա Ր Ա Ջ Ա Բ Ա Ն

1 Պատմութիւն Առաքել Վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 57 և այլն։

2 Հ. Տեր-Հովհաննեսեան, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, Նոր Ջուղա, հ. 1, 1880, հ. 2, 1881։ Աշխատութիւնը աշխարհաբար թարգմանութեամբ վերահրատարակվել է մեկ դար հետո՝ համապատասխանաբար 1980, 1981 թվականներին։

3 Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ.։

4 *М. С. Иванов,* Очерк истории Ирана, М., 1952, с. 84.

5 Ա. Սարյան, Պատմություն Զարմահալ գավառի, Թեհրան, 1980, էջ 24։

6 Լ. Ա. Խուրշուդյան, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964։

7 Ս. Ե. Գասպարյան, Սփյուռքահայ գաղթօջախները այսօր, Երևան, 1962։

8 Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, հ. 1, 1964, հ. 2, 1967։

9 Կ. Լ. Դալլաքյան, Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում, Երևան, 1962, նույնի՝ Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից, Երևան, 1964, նույնի՝ «Արշակ Զոպանյան», Երևան, 1987։

10 Հ. Խ. Թոփուզյան, Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական շարժումներին, Երևան, 1968, նույնի՝ Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805—1952), Երևան, 1978, նույնի՝ Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841—1946), Երևան, 1986։

11 Ռ. Հ. Խաչատրյան, Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից, Երևան, 1960։

12 Ջ. Մ. Դասաբյան, Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից, Երևան, 1965, նույնի՝ Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության (1896—1970), Երևան, 1986։

13 Հ. Գ. Մելիխեթյան, Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915—1940), Երևան, 1975, նույնի՝ Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920—1980), Երևան, 1985։

14 Ն. Հ. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939—1958 թթ.), Երևան, 1967, նույնի՝ Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Երևան, 1982։

15 Տ. Ս. Գրամբյան, Ֆրանսահայ կոմունիստները դիմադրության տարիներին (1941—1944), Երևան, 1967, նույնի՝ «Они сражались за Францию», Ереван, 1981.

16 *В. Байбуртян,* Армянская колония Новой Джульфы в XVII веке, Ереван, 1969 г.

17 Բ. Ղուկասյան, Հայ-իրանական գրական առնչությունները 15—18-րդ դդ., Երևան, 1963։

18 Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը 17—18-րդ դարերում, Երևան, 1974։

19 Հ. Մատիրոսյան, Իրանահայ գաղութի պատմությունից, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», № 8, 1975։

20 Ս. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., հ. 1, հ. 2։

21 Հ. Մելիխեթյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920—1980), Երևան, 1985։

22 Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Ե., 1967։

23 Հ. Մովսիսյան, Հայ գրականությունը արդի պարսկական գրական մտքի գնահատմամբ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», № 8, 1975, էջ 386—405, նույնի՝ «Հայ գրողները պարսկերեն», «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», № 11, էջ 198, 295—346։

24 Լ. Միճասյան, Պատմություն Փերիայի հայերի (1606—1956), Անթիլիաս, 1971, նույնի՝ Նոր Ջուղայի ուղեցույց գրքույկ, Թեհրան, 1965։

25 Ա. Սարյան, նշվ. աշխ.։

26 Ա. Եղզարյան, Իրանի Զարմահալ գավառը, Թեհրան, 1963։

27 Ն. Դուրյան, Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968։

28 Ա. Երեմյան, Սպահանի Փերիա գավառը, Նոր Ջուղա, 1919, նույնի՝ Պարսկահայ նորագույն աշուղներ, Վիեննա, 1925, նույնի՝ Երգահան Նիկոլ Գալանտերյան, Թեհրան, 1947։

29 Հ. Աճեմյան, Պատմություն Արամյան ազգային դպրոցի, Թավրիզ, 1936, նույնի՝ Հիշատակարան և պատկերացույց Թեհրանի հայոց Խրայել Սահակյան ազգային տարրական և միջնակարգ դպրոցների, Թեհրան, 1961։

30 Տ. Աբգարյանց, Նոր Ջուղայի դպրոցները, Նոր Ջուղա, 1914։

31 Ա. Աբայան, «Սալմաստ» տեղագրական, վիճակագրական և ազգագրական տեղեկատու, Նոր Ջուղա, 1906։

32 اسماعیل رائین، ایرانیان ارمنی، تهران، ۱۳۴۹

33 عباسعلی صالحی، همم میهنیان نقش افرین مسیحی- شرح حال چهار نفراز مسیحیان ایرانی تهران، ۱۳۴۷

34 علی جواهر کلام «زنده رود» تهران، ۱۳۲۸

35 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیب ایران، تهران، ۱۳۲۸

36 ناظم الاسلام کرمانی، تاریخ بیداری ایرانیان، مجلد اول، تهران، ۱۳۲٤

37 حبیب لوی، تاریخ یهود ایران، تهران، جلد ۲-۱، ۱۳۳۵، جلد ۳، ۱۳٤۹

38 پیرو سرمس، حقوق بشر واشوریان ایرانی، تهران، ۱۳٤٤

39 غزیز دولت آبادی، تاریخچه مختصر جرائد ومجلاتی که در ایران بزبان ارمنی انتشار یافته است، مجله «هور» شماره ٤-۳، تهران، ۱۳۵۰ ص ۷۳-۷۹

40 محمد نفیشی زوزنامه‌های غیر فارسی ایران - مجله «سخن» شماره ٤ تهران، ۱۳۵۱، ص ٤۳۱

41 لطف السه هنر در کلیساهای جلفای اصفهان - مجله «مهر ومردم» شماره ٦۵ تهران، ۱۳٤۷، ص ۹۱

42 نقش ارامنه در پیکارهای اجتماعی وسیاسی ایران- «سروش» تهران شماره ۵-۸ ۱۳۵۸

43 *S. Հակոբյան, Իրանական Ադրբեջանի ռևոլյուցիոն շարժումների անցյալից, «Հին բոլշևիկների հիշողություններ», Երևան, 1961։*

44 *A. Аванесян,* Национально-освободительное движение в Иране в 1941—1953 гг. и некоторые вопросы идеологии, стратегии, тактики и партийного строительства народной партии Ирана «Туде» *(անտիպ).*

45 عبدالصمد کامبخش، نظری به جنبش کارگری وکمونیستی در ایران، بخش اول ۱۳۵۱

46 رحیم نامور، یادنامه شهیدان، ۱۳٤۳

47 شهیدان توده‌ای ازمهر ماه ۱۳۳۰ تاسیس حزب توده ایران تامرداد ۱۳٦۱ گردآوری رحیم نامور، هوشنگ حصاری، ژاله نوتاش، ۱۳٦۱

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 امار در ایران، تهران، ۱۳۳۹، ص۱۰۱

2 *С. И. Брук,* Население мира (этно-демографический справочник), М., 1981, с. 441.

3 نقش ارامنه در پیکارهای اجتماعی وسیاسی ایران ,, سروش ,, ۱۳۵۸ شماره ۵ص ۵۹

4 Նույն տեղում, էջ 31։

5 Ընդհանրապես Նոր Ջուղայի թեմ ասելով սովորաբար հասկանում են ոչ միայն Ատրպատականի սահմաններից դուրս՝ բովանդակ Իրանում հաստատված հայ համայնքները, այլև Հնդկաստանում և Հեռավոր Արևելքում հաստատված հայ գաղթօջախները։

6 مجله ,, هور ,, ۱۳۵۲ شماره ۲۸-۲۷، ص ٤-۱

7 Հ. Էլմար, Համառոտ ակնարկ Թեհրանի հայ համայնքի մոտիկ անցյալի մասին, «Բաֆֆի տարեգիրք», Ա տարի, 1969, Թեհրան, 1968, էջ 267։

8 Նույն տեղում, էջ 223։

9 «Վերածնունդ», 1939, հոկտեմբերի 3։

10 Ն. Թռաճգյան, Ատրպատական, Թիֆլիս, 1905։

11 «Վերածնունդ», 1944, 12 նոյեմբերի։

12 «Ամենուն տարեգիրքը», ե տարի, Բեյրութ, 1958, էջ 368։

13 Հ. Մարտիրոսյան, Հայերի տեղաբաշխումը Իրանում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» (Իրան), 1969, էջ 153։

14 «Ալիք», 1959, հունիսի 5։

15 «Ամենուն տարեգիրքը», ե տարի, Բեյրութ, 1958, էջ 368։

16 Հ. Մարտիրոսյան, Նշվ. աշխ., էջ 153։

17 «Ջահակիր», 1967, սեպտեմբերի 5։

18 مجله «هور» ۱۳۵۲ شماره ۲۸-۲۷ ص ۳

19 „Le Monde", 1979, մարտի 2։

20 «Ալիք», 1980, սեպտեմբերի 11։

21 «Ալիք», 1935, հուլիսի 26։

22 Նազար Գորոյանց, Պարսկաստանի հայերը, 1968, էջ 304։

23 Հ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 154։
24 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 79։
25 «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, Բեյրութ, 1958, էջ 384—385։
26 «Հայրենիք», 1980, մայիսի 30։
27 «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, Բեյրութ, 1958, էջ 387։
28 Նույն տեղում։
29 Նույն տեղում, էջ 388։
30 Նույն տեղում, էջ 388—389։
31 Տեղեկագիր Թեհրանի Հայոց Թեմի Թեմական խորհրդի գործունեության (26 մայիսի 1980 առ 31 հուլիսի 1982) ներկայացվում է Թեմի 10-րդ պատգամավորական ժողովին, Թեհրան, 1982, էջ 53։
32 «Ալիք», 1981, հուլիսի 30։
33 Տեղեկագիր Թեհրանի Հայոց Թեմի ..., էջ 54։
34 Նույն տեղում, էջ 55։
35 Ն. Գոռոյանց, նշվ. աշխ., էջ 309։
36 «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, Բեյրութ, 1958, էջ 389։
37 «Հայրենիք», 1980, մայիսի 30։
38 «Ալիք», 1981, հունվարի 26։
39 «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, Բեյրութ, 1958, էջ 389։
40 Տեղեկագիր Թեհրանի Հայոց Թեմի ..., էջ 57։
41 Հ. Մարտիրոսյան, Հայերի տեղաշարժումը ..., էջ 157։
42 Նույն տեղում, էջ 158։
43 «Ալիք», 1979, ապրիլի 26։
44 Տեղեկագիր Թեհրանի Հայոց Թեմի ..., էջ 58։
45 «Ալիք», 1979, սեպտեմբերի 18։
46 «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, 1958, էջ 381։
47 «Ալիք», 1980, նոյեմբերի 24։
48 Լ. Մինասյան, նշվ. աշխ., էջ 478։
49 Նույն տեղում, էջ 478։
50 «Ալիք», 1932, փետրվարի 10, 18։
51 «Ալիք», 1952, փետրվարի 5։
52 Լ. Մինասյան, նշվ. աշխ., էջ 479։
53 «Ալիք», 1952, փետրվարի 5։
54 «Ալիք», 1932, փետրվարի 10 և 18։
55 «Ալիք», 1952, փետրվարի 5։
56 Լ. Մինասյան, նշվ. աշխ., էջ 483։
57 Նույն տեղում, էջ 482։
58 Նույն տեղում։
59 «Ալիք», 1979, սեպտեմբերի 18։
60 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 102։
61 «Ամենուն տարեգիրքը», 1958, էջ 389։
62 Լ. Մինասյան, նշվ. աշխ., էջ 481։

63 Նույն տեղում։
64 «Ալիք», 1980, սեպտեմբերի 6։
65 «Ալիք», 1980, դեկտեմբերի 29։
66 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 82։
67 Ե. Ֆրանգյան, Ատրպատական, Թիֆլիս, 1905, էջ 175։
68 «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 123։ Նույն թիվն է տալիս նաև՝ Ա. Աբրահամյան, «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի», Հ. Բ, Ե., 1967, էջ 230։
69 «Ալիք», 1931, դեկտեմբերի 3։
70 «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, Բեյրութ, 1958, էջ 417—418։
71 „Le Monde", 1979, մարտի 2։
72 «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, Բեյրութ, 1958, էջ 433։
73 «Ալիք», 1960, օգոստոսի 21—24։
74 «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, էջ 433։
75 «Բաֆֆի տարեգիրք», Ա տարի, 1969, Թեհրան, 1968, էջ 347։
76 Ե. Ֆրանգյան, Ատրպատական, Թիֆլիս, 1905, էջ 175։
77 «Բաֆֆի տարեգիրք», էջ 408։
78 Նույն տեղում, էջ 414—415։
79 Վ. Միրզայան, Ատրպատականի Ղարադաղ գավառը, «Բաֆֆի տարեգիրք», Բ տարի, Թեհրան, 1970, էջ 340—341։
80 Նույն տեղում, էջ 341։
81 «Բաֆֆի տարեգիրք», Ա տարի, 1969, Թեհրան, 1968, էջ 415։
82 Վ. Միրզայան, նշվ. աշխ., էջ 341։
83 «Բաֆֆի տարեգիրք», Ա տարի, 1969, Թեհրան, 1968, էջ 414։
84 «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, էջ 434։
85 «Բաֆֆի տարեգիրք», Ա տարի, էջ 414։
86 «Վերածնունդ», 1934, սեպտեմբերի 1։
87 «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, էջ 463։
88 Լ. Մինասյան, Նոր Ջուղայի ուղեցույց գրքույկ, Թեհրան, 1965, էջ 6։
89 Amir Taheri, Deep Roots in the Land,—„The Armenian Review", 1969, vol. 22, № 2—86, p. 46.
90 „Le Monde", 1979, մարտի 2։
91 Լ. Մինասյան, Պատմություն Փերիայի հայերի, էջ 472։
92 Նույն տեղում, էջ 473։
93 Նույն տեղում, էջ 476։
94 «Ալիք», 1979, հունվարի 15։
95 «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, էջ 487։
96 Ա. Սարյան, նշվ. աշխ., էջ 635։
97 Ա. Սարյան, նշվ. աշխ., էջ 637։
98 Նույն տեղում, էջ 639—640։

99 Նույն տեղում, էջ 640:
100 Նույն տեղում, էջ 640—641:
101 «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, էջ 496:
102 «Ալիք», 1955, հունվարի 31:
103 «Ալիք», 1986, մայիսի 4:
104 «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, էջ 499:
105 Նույն տեղում:
106 «Ալիք», 1960, մայիսի 3:
107 «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, էջ 500:
108 «Ալիք», 1980, հոկտեմբերի 7:
109 «Արարատ» տեղեկատու, № 8, 1980, էջ 13:
110 «Ալիք», 1981, ապրիլի 28:
111 «Ալիք», 1979, օգոստոսի 25:
112 С. Брук, նշվ. աշխ., էջ 441:
113 نقش ارامنه در پیکارهای اجتماعی وسیاسی ایران ... ص ۵۹
114 „Le Monde“, 1979, մարտի 2:
115 Amir Taheri, նշվ. աշխ., էջ 45:
116 Amir Taheri, նշվ. աշխ., էջ 47:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1 مجموعه قوانین موضوعه ومسائل مصوبه دوره ششم تقنینه، تهران، ص ۳۱
2 مجموعه قوانین موضوعه ومصوبات دوره پانزدهم قانونگزاری، تهران، ص ۵۰
3 اسماعیل رائین، ایرانیان ارمنی، تهران، ۱۳۴۹، ص ۱۳۰ - ۱۲۹
4 Նույն տեղում, էջ 128—129:
5 «Հուր», 1971, № 2, էջ 6:
6 سرشماری عمومی نفوس ومسکن ابان ۱۳۴۵، جلد ۱۶۸، تهران، ۱۳۴۶، ص ۳
7 Հ. Մարտիրոսյան, Իրանահայ գաղութի պատմությունից ..., էջ 210, նաև՝ «Ամենուն տարեգիրքը», Ե տարի, Բեյրութ, 1958, էջ 499—500:
8 А. Шестаков, Политическая роль младшего офицерства в иранской революции (на примере иранских ВВС), «Иран» История и современность». сборник статей, М., 1983, с. 223.

9 Հղումը կատարվում է ըստ عبد الصمد کامبخش، نظری به جنبش کارگری و کمونیستی درایران بخش اول ۱۹۷۲ ص ۲۰۳
10 ف، جوانشیر، اقتصاد سیاسی ـ شیوه تولید سرمایه داری باذکر نمونه هائی ازرشد سرمایه داری در ایران-، تهران، ۱۳۵۷
11 Նույն տեղում, էջ 61:
12 А. Шамиде, Рабочее и профсоюзное движения в Иране после Второй мировой войны 1946—1953, Баку, 1965, с. 32.
13 «Հայկաշխատ» 1945, հոկտեմբերի 21:
14 А. Шамиде, նշվ. աշխ., էջ 34:
15 Ш. М. Бади, Рабочий класс Ирана, М., 1965, с. 69.
16 У. З. Шарипов, Бюджетный дефицит Ирана (бюджет государственного аппарата 1954—1962»), «Краткие сообщения Института народов Азии», 1964, № 77, с 79.
17 حمید صفری، زندگی ومبارزه طبقه کارگری ایران پس‌از کودتای ۲۸ مرداد ۱۳۳۲ «دنیا»، شماره ۳ ص ۵۶
18 «Փյունիկ», 1981, փետրվարի 2:
19 نظری اجمالی به تحولات اوضاع سیاسی واقتصادی کشور، «دنیا» ۱۳۴۳ شماره ٤، ص ۵۰
20 حمید صفری زندگی ومبارزه .... ص ۵۶
21 امار صعنتی سال ۱۳۵۱، تهران، ۱۳۵۱ ص ۳
22 „Iran Almanac and Book of Facts“, Tehran, 1972, p. 228.
23 Н. М. Мамедова, К вопросу о подготовке кадров в современном Иране, «Иран: (сборник статей), М., 1976, с. 38.
24 «دنیا» 1965, № 2, էջ 79:
25 «کیهان» 1972, ապրիլի 2:
26 Հ. Աճեմյան, Հիշատակարան և պատկերացույց Թեհրանի հայոց Խոսրովիկ Սահակյան սպղ. տարրական և միջնակարգ դպրոցների, Թեհրան, 1961, էջ 29:
27 «تهران اکونومیست» 1970, № 6, էջ 253:
28 „Ovana“ A Directory of the Armenian Diaspora, Beirut, 1980 թ., 52—63:

Տեղեկատուում արձանագրված հայ մասնագետ մտավորականների թիվը բավական ցածր է։ Հավաստի տեղեկությունների համաձայն հայ բժիշկների թիվը եղել է 300։

29 „Le Monde", 1979. *մարտի 2։*

30 بررسی بودجه خانوادها شهریه سال ۴۷ - ۱۳۴۶، تهران، ۱۳۴۸ ص ۱۱-۱۰

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում, էջ 120։

33 «کیهان» *1972, մարտի 16։*

34 «تهران اکونومیست» *1972, փետրվարի 7, 19։*

35 Նույն տեղում, էջ 3։

36 «Ալիք», 1951, հոկտեմբերի 4։

37 «Ալիք», 1979, մայիսի 22—23։

38 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, մ. 2-րդ, ե., 1949, էջ 329։

39 *Մանրամասն տե՛ս* А. Былова, Аграрное законодательство монархии Реза-Шаха,—«Материалы по национально-колониальным проблемам», 1936, № 34; *А. В. Башкиров,* Аграрное законодательство в Иране (1925—1941 гг.),—«Ученые записки института востоковедения АН СССР», т. VIII, М., 1953.

40 Լ. Մինասյան, Նշվ. աշխ., էջ 430։

41 Թումանյան ընկերությունը Վիեննա և Ողան գյուղերում կառուցել էր հարմարավետ տներ, իսկ Ողանում հիմնել մի դպրոց, որտեղ աշակերտներն անվճար ուսում էին առնում։ Դպրոցն ուներ նաև գրադարան։ «Բաֆֆի տարեգիրք», Բ տարի, Թեհրան, 1970, էջ 343։

42 Նույն տեղում։

43 «Ամենուն տարեգիրքը», 1958, էջ 431։

